




ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՅՈՒՆԻՔ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ



# ՍՅՈՒՆԻՔ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

2020

2020

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
GORIS STATE UNIVERSITY  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ГОРИСА



**ՍՅՈՒՆԻՔ**  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ  
2020

**СЮНИК**  
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЕЖЕГОДНИК  
2020

**SYUNIK**  
ARMENOLOGICAL YEARBOOK  
2020

ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN • 2020

ՀԻՄՆԱԴԻՐ  
«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

Տպագրվել է Գորիսի պետական համալսարանի  
գիտական խորհրդի որոշմամբ  
«Սյունիքի հոգևոր և  
նյութական ժառանգությունը» ծրագրի շրջանակում

Համարը հրատարակության է երաշխավորել **«Սյունիք»** հայագիտական  
փարեգրքի խմբագրական խորհուրդը

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Նախագահ՝ Արտուշ Ղուկասյան**, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր,  
ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Գլխավոր խմբագիր՝ Թեհմինա Մարության**, բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

**Անդամներ՝**

**Գևորգ Ստեփանյան**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Վանո Եղիազարյան**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Թամար Հայրապետյան**, բանասիրական գիտությունների դոկտոր  
**Հայկանուշ Մեսրոպյան**, բանասիրական գիտությունների դոկտոր  
**Համո Սուքիասյան**, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
**Սվետլանա Մանուչարյան**, բանասիրական գիտությունների թեկնածու  
**Լիլիթ Թունյան**, բանասիրական գիտությունների թեկնածու

**«Սյունիք» հայագիտական փարեգրք, № 1 2020 (14), Երևան, 2020,— 200 էջ:**

**«Սյունիք» հայագիտական փարեգրքի սույն համարում տեղ են գրել «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատողների, ոլորտի մասնագետների՝ Սյունիք-Արցախի հայագիտության հիմնահարցերին նվիրված ուսումնասիրությունները, ինչպես նաև Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի (ԳՊՀ, 2019 թ., հունիս) նյութերը, որոնք երաշխավորվել են խմբագրական խորհրդի կողմից:**

ISSN 2579–2547

© Գորիսի պետական համալսարան, 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

<b>ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ</b> — Հաբանդ–Ձագաձոր գավառի Սուրբ Գրիգորիս եկեղեցու տեղորոշման հարցի շուրջ.....	7
<b>ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ</b> — Ռոստոմ Թումանյանի կերպարը Ակսել Բակունցի ստեղծագործության մեջ.....	28
<b>ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ</b> — Ակսել Բակունցի «Բրուտի տղան» պատմվածքի ժողովրդագիտական և մշակութաբանական հենքը.....	39
<b>ՀԱՅՎԱՆՈՒՅ ՄԵՍՐՈՊՅԱՆ</b> — Հայերենի բարբառները Ակսել Բակունցի ստեղծագործություններում .....	51
<b>ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ</b> — Շուշիի հայերի 1920 թ. կոտորածների անդրադարձը «Սշակ» թերթում.....	59
<b>ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ</b> — Նոր էջեր 1828–1835 թթ. Շուշիում տպագրված գրքերի պատմությունից.....	69
<b>ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ</b> — Տեսիլը Ակսել Բակունցի պատմվածքներում .....	87
<b>ԳԱՅԱՆԵ ՇԱՐՈՒՆՑ</b> — Սյունյաց իշխանուհի Մինա խաթունի նվիրատվական ու շինարարական գործունեությունը .....	94
<b>ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ</b> — Դարձվածային միավորները Ակսել Բակունցի «Կարմրաքար» վեպում .....	103
<b>ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ</b> — Հայկական տարազի ու զարդարանքի արտացոլանքը Ակսել Բակունցի երկերում .....	116
<b>ԼԻԼԻԹ ԹՈՒՆՅԱՆ</b> — Ստալինյան հալածանքները և Սերո Խանզադյանի «Կոստի քեռին» պատմվածքի հիմքն ու գրության շարժառիթները.....	124

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

<b>ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ</b> — Նորահայտ դրվագներ Համո Սահյանի և Սիմոն Սիմոնյանի լիբանանյան առնչություններից.....	131
<b>ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ</b> — Դարաքիլիսայի հերոս հրետանավորը՝ Գուրգեն Տեր–Մովսիսյանը.....	143
<b>ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ</b> — Ձանգեզուրյան ազատամարտի արձագանքները 1919 թ.–ի ռուսալեզու մամուլում .....	166
<b>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b> .....	194

# СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ

<b>ГЕВОРГ СТЕПАНЯН</b> — К Вопросу о дислокации церкви Сб. Григориса Абанд–Дзагедзор гавара .....	7
<b>ВАНО ЕГИАЗАРЯН</b> — Образ Ростома Туманяна в произведении Акселя Бакунца .....	28
<b>ТАМАР АЙРАПЕЛЯН</b> — Народоведческие и культурологические предпосылки рассказа Акселя Бакунца “Сын Гончара” .....	39
<b>АЙКАНУШ МЕСРОПЯН</b> — Армянские диалекты в произведениях Акселя Бакунца .....	51
<b>ТЕЙМИНА МАРУТЯН</b> — Освещение публикаций газеты “Мшак” о массовых убийствах армянского населения в Шуши в 1920 году .....	59
<b>СТЁПА ПЕТОЯН</b> — Новые страницы из истории книг, напечатанных в Шуши в 1828–1835 гг. ....	69
<b>АРМЕН АВАНЕСЯН</b> — Видение в сториях Бакунца .....	87
<b>ГАЙАНЕ ШАБУНЦ</b> — Благотворительная и строительная деятельность сюникского княгини Мина Хатун .....	94
<b>СВЕТЛАНА МАНУЧАРЯН</b> — Фразеологические единицы в романе А. Бакунца “Кармракар” .....	103
<b>СВЕТЛАНА ПОГОСЯН</b> — Отражение армянского национального костюма и украшений в творчестве Акселя Бакунца .....	116
<b>ЛИЛИТ ТУНЯН</b> — Сталинские гонения и основа повести Серо Ханзадяна “Дядя Кости” и мотивы написания .....	124

## ПУБЛИКАЦИИ

<b>ТЕЙМИНА МАРУТЯН</b> — Новые эпизоды из ливанских отношений Амо Сагяна и Симон Симоняна .....	131
<b>ГРИША СМБАТЯН</b> — Гурген Тер–Минасян: герой–артиллерист Каракилисы .....	143
<b>ГЕВОРГЯН ГАМЛЕТ</b> — Отголоски Зангезурской освободительной войны в русскоязычной прессе 1919 года .....	166
<b>СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ</b> .....	196

# CONTENTS

## ARTICLES

<b>GEVORG STEPANYAN</b> — On the issue location of St. Grigoris Church of Haband–Dzagedzor province .....	7
<b>VANO YEGHIAZARYAN</b> — Rostom Toumanyán’s character in Aksel Bakunts’ creation .....	28
<b>TAMAR HAYRAPETYAN</b> — Folklore and cultural background of Aksel Bakunts’s story “The potter’s son” .....	39
<b>HAYKANUSH MESROPYAN</b> — Armenian dialects in works of Aksel Bakunts .....	51
<b>TEHMINA MARUTYAN</b> — The publications of “Mshak” newspaper about the massacres of the armenian population in Shushi in 1920 .....	59
<b>STYOPA PETOYAN</b> — New pages from the history of the books printed in Shushi in 1828–1835 .....	69
<b>ARMEN AVANESYAN</b> — Vision in Bakunt’s stories .....	87
<b>GAYANE SHABUNTS</b> — Donation and construction activities of Syunik’s princess Mina Khatun .....	94
<b>SVETLANA MANUCHARYAN</b> — Phrasal units in “Karmraqar” novel by Aksel Bakunts .....	103
<b>SVETLANA POGHOSYAN</b> — The reflection of armenian national costume and adornments in the works by Aksel Bakunts .....	116
<b>LILIT TUNYAN</b> — Stalin’s persecutions and the basis of Sero Khanzadyan’s story “Uncle Kostya” and the motives for writing .....	124

## PUBLICATIONS

<b>TEHMINA MARUTYAN</b> — New episodes from the lebanese relations of Hamo Sahyan and Simon Simonyan .....	131
<b>GRISHA SMBATYAN</b> — Gurgen Ter Movsisyan hero artilleryman of Karakilisa .....	143
<b>GEVORGYAN HAMLET</b> — The echoes of the Zangezour liberation war in the russian–language press in 1919 .....	166
<b>ABOUT THE AUTHORS</b> .....	198





# ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱԲԱՆԴ-ՁԱԳԵՁՈՐ ԳԱՎԱՌԻ Ս. ԳՐԻԳՈՐԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հոդվածը ներկայացվել է 15.10.2020 թ., գրախոսվել է 20.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածի նպատակն է փարաբնույթ սկզբնաղբյուրների հենքի վրա քննել Ս. Գրիգորիս եկեղեցու տեղորոշման հարցը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համապարփակ ուսումնասիրության միջոցով:

Փաստերի համադրմամբ լուսաբանվում է, որ Հաբանդ գավառի Վարաբակնի կամ Ձագեձորի հովտում գտնվող Հին Գորիս (տեղացիների կողմից անվանված Յերի (վերևի) Շեն, Վերին Շեն)՝ հնահիմք Գորայք-Գորէս-Գորիս (Կյորես) գյուղում IV դ. կառուցված, ներկայումս Ս. Հռիփսիմե անվամբ հայտնի եկեղեցին է, որն իրավամբ համարվում է Սյունիքի ճարտարապետական կարևոր հուշարձաններից մեկը:

Պատմագիտական գրականության մեջ թեև Ս. Հռիփսիմե եկեղեցու փայտանական հարցերի անդրադարձները բազմաթիվ են, սակայն առանձին քննության առարկա չեն դարձել վաղ միջնադարից հայտնի այս նշանավոր կառույցի՝ սկզբնապես Ս. Հռիփսիմե օձվելու մասին հանգամանքները:

Հոդվածում սկզբնաղբյուրների համադրմամբ հիմնավորված է այն իրողությունը, որ եկեղեցու սկզբնական անվանումը եղել է Ս. Գրիգորիս:

**Հիմնաբառեր՝** Սյունիք, Հաբանդ, Վարաբակնի կամ Ձագեձորի հովիտ, Գորայք-Գորիս, Ս. Հռիփսիմե, Ս. Գրիգորիս, Բարսեղ երեց, Սարգիս քահանա, Հովհաննես քահանա, Ավետարան, հիշատակարան:

Սյունյաց նվիրական լեռնաշխարհի բնապատմական գավառներից էր չքնաղ Հաբանդ (տարբ.՝ Համբանդ)<sup>1</sup> գավառը, որն իր լեռնակողմերով, դաշտահայաց բարձրություններով, անդնդահեղց ձորերով, փապարներով և բարձրադիր գետահովիտներով մի լեռնաստան է, որտեղ հնուց անտի իշխել է «...Հայկազունի ճիւղն Սիսակեանց»<sup>2</sup>: Գավառի գեղահրաշ անկյուններից մեկը Սյունիքի բարձրավանդակից մեղմ թեքությամբ դեպի հարավ իջնող Ձագեծորի (տարբ.՝ Ձագածոր)<sup>3</sup> հովիտն է, որի երկայնքով քար ու քարափներ քրքրելով սրընթաց հոսում է Վարարակնի գետը:

Վարարակնի կամ Ձագեծորի լեռնահովտի<sup>4</sup> բարձրադիր գոգավորության վրա՝ Վարարակն գետակի<sup>5</sup> վերին հոսանք Քրմագետ կամ Վերիշեն<sup>6</sup> վտակի ձախափնյա

<sup>1</sup> Հաբանդ գավառը Սյունիքի 8-րդ գավառն է: Ջրաղեցրել է 1325 կմ<sup>2</sup> (տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 109, 117, տե՛ս նաև **Գրիգորյան Գ.**, Սյունիքի թագավորությունը (X–XII դարեր), ՊԲՀ, Երևան, 2006, № 2, էջ 4): Արևելքից Հաբանդի սահմանը երիզվում էր Հակարի գետով, արևմուտքում սահմանակից էր Ծղուկին, հյուսիսից՝ Աղահեջքին, հարավից՝ Բաղք–Քաշունիքին (հետագայում՝ Բարգուշատ) և Բաղք–Աձնանիին: Հաբանդ գավառանվան ստուգաբանության և տեղագրության մանրամասն քննությունը տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (Ուրվագծեր), Երևան, 1968, էջ 209, տե՛ս նաև **Каргезян А., Топонима Абанд, ЛСԳ**, Երևան, 2000, № 1, էջ 160–165, տե՛ս նաև **նույնի՝ Сюник, Нахчаван и Гохтн, Ереван**, 2002, с. 25–31, տե՛ս նաև **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհին ըստ «Աշխարհացոյց»-ի (պատմաաշխարհագրական դիտարկումներ), ՊԲՀ, Երևան, 2003, № 1, էջ 131, տե՛ս նաև **Հախվերդյան Ս.**, Հաբանդ գավառանվան ստուգաբանության նոր փորձ (Պատմագիտական նոթեր. Սյունիք, Երևան, 2007, էջ 8–12):

<sup>2</sup> **Ստեփաննոսի Օրբելեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց ի յոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք **Կարապետ վարդապետ Շահնագարեանց**, հ. Բ, Փարիզ, 1859: Ծանօթագրությունք, էջ 371:

<sup>3</sup> Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը «Պատմութիւն Տանն Սիսական» աշխատության մեջ նշում է, որ Սիսակի տոհմից սերված Ձագ նահապետը Վարարակն գետակի հովիտը «...կոչէ յիր անուն զձորն Ձագեծոր...» (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** պատմութիւն Տանն Սիսական, ի յոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին**, Մոսկվա, 1861 (այսուհետ՝ **Ստեփաննոս Օրբելեան**, էջ 7): Հատկանշական է, որ XIX դարասկզբի ֆրանսիացի հայագետ Ժան Անտուան Սեն–Մարտենը «Պատմական և աշխարհագրական հիշատակությունները Հայաստանի մասին» (հ. II) աշխատության մեջ, որը հիմնականում վերաբերում է Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսական» երկի քննությանը, Հաբանդ գավառում նույնպես հիշատակում է Ձագ (Dsak) անվամբ ձորը (տե՛ս *Memoires historique at geographiques sur L'Armenie, J. A. Saint-Martin, t. II, Paris, 1819, p. 129*): Նշենք, որ Սյունիքում գյուղերի զգալի մասը տեղավորված է ձորերում, և նրանց անուններն էլ սկսում կամ վերջանում են «ձոր» գոյականի միացությամբ: Ինչպես, օրինակ, Կոռնիձոր, Հալիձոր, Այգեձոր, Առաջաձոր, Ձորաշեն և շատ ուրիշ շենաձորեր ու ձորաշեններ:

<sup>4</sup> Հովտի երկարությունն է 7–8 կմ, լայնությունը՝ 2–3 կմ:

<sup>5</sup> Վարարակն կամ Գորիս գետակը սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակից՝ Մեծ Իշխանասար լեռան (3550,4 մ) հարավ–արևելյան լանջից՝ Ակներ կամ Վարարակն հորդաբովա աղբյուրներից, հոսում դեպի հարավ՝ Գորիս քաղաքի միջով և Քարահունջ գյուղից հարավ–արևելք, դուրս գալով Արցախի Հանրապետության տարածք, ձախից միախառնվում է Որոտանին: Երկարությունը 29 կմ է (տե՛ս Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու–բառարան, Երևան, 2007, էջ 117): Հայր Ղևոնդ Ալիշանի տեղագրությամբ՝ «Վարարակ կոչէր յայնժամ գետակն այն, և գայր ի Ձագեծոր լեռնէ. առ աղբերօք նորին, որ արդ անշուշտ յանուն Ջանկեզորի կամ Կորեւի կոչի...» (**Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 261):

<sup>6</sup> Քրմագետ կամ Վերիշեն վտակը Վարարակնի ձախ օժանդակն է: Սկիզբ է առնում Աղոթաքարի լեռնանցքի Քոռ աղբյուրից և Վերիշեն գյուղի մոտ միախառնվում մայր գետին: Երկարությունը

կանաչապատ ձորամիջում և բլրալանջին, ընկած է Հին Գորիս (տեղացիների կողմից անվանված Յերի (վերևի) Շեն, Վերին Շեն)<sup>7</sup> հնահիմք Գորայք-Գորխ-Գորիս (Կյորես) գյուղը, որի տարեգրությունը անխզելիորեն կապված է Սյունյաց պատմության հետ և կազմում է նրա մի անբաժանելի մասը: Անվանի պատմաբան-բանասեր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, երջանկահիշատակ Մորուս Հասրայանը 1952 թ.-ի ամռանը Գորայք-Գորիս (Հին Գորիս, Վերին Շեն) գյուղում կատարած պատմահնագիտական հետազոտությունների տվյալների հիման վրա 1972 թ.-ին հեղինակած «Ձորաշէն-Գորու» ուսումնասիրությունում իրավամբ եզրահանգել է. «Ավելի քան 20 տարի առաջ որոշ հնագիտական հետազոտություններ կատարելով Վերին Շեն գյուղում և նրա հանդում, համոզվեցի, որ այդ բնակավայրը ևս, անհիշելի ժամանակների, հազարամյակների անցյալ ունի...»<sup>8</sup>:

Սյունիքը Հայաստանի մյուս նահանգների նման եղել է ռազմական բախումների թատերաբեմ՝ մեծապես տուժելով նվաճողների ասպատակություններից ու ավերիչ արշավանքներից: Այս ամենով հանդերձ՝ հնավանդ Գորայք-Գորիս գյուղը հնարավորինս կարողացել է պահպանել իր գոյությունը և շարունակել ծավալել ազգային մշակութակերտ գործունեություն՝ հնուց անտի հանդիսանալով Հաբանդ գավառի քաղաքակրթության բնօրրաններից:

Մատենագրական ու վիճակագրական աղբյուրները փաստում են, որ չնայած քաղաքական անկանոն ու անբարենպաստ պայմաններին՝ քրիստոնեության հաստատման ու տարածման սկզբնական շրջանում Վարարակնի կամ Ձագեձորի հովտի բնակավայրերն ապրել են հոգևոր-եկեղեցական աշխույժ կյանքով: Հոգևոր կյանքն ուղեկցվել է նյութական մշակույթի զարթոնքով. եկեղեցաշեն ծավալուն աշխատանք է կատարվել հովտում ընկած բնակավայրերում: Պատմական հիշատակությունները վկայում են, որ տարբեր ժամանակներում հովտի ամբողջ տարածքում կառուցվել են վանական համալիրներ, եկեղեցիներ ու մատուռներ: Թեև դրանց մեծ մասն ավերվել ու կործանվել է ասպատակությունների հետևանքով, այդուհանդերձ, մինչև մեր օրերը պահպանվել են եկեղեցիներ, մատուռներ, գեղաքանդակ խաչքարեր, ինչպես նաև վանքերի ու եկեղեցիների հետքեր:

Ձագեձորի հովտի հարուստ կենսագրություն ունեցող Գորայք-Գորիս գյուղի հնությունը փաստող լուռ ու անհերքելի վկան՝ Հայաստանում քրիստոնեության հաստատման առաջին տարիներին հեթանոսական տաճարի տեղում կառուցված Սյունիքի ամենահին միանավ, կիսաշրջանաձև, արտաքուստ շեշտված արսիդով, իր տեսքով Նոյյան տապանը հիշեցնող, տակավին IV դ. կառուցված, ներկայումս Ս. Հռիփսիմե անվամբ հայտնի եկեղեցին է, որն իրավամբ համարվում է Սյունի-

5 կմ է (տե՛ս Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան, էջ 135):

<sup>7</sup> Չպետք է շփոթել Ստեփաննոս Օրբելյանի՝ Աղահեջք գավառում հիշատակված «Վերին շէն» բնակավայրի հետ (Ստեփաննոս Օրբելյան, էջ 375): Աղահեջք գավառի տեղադրության մանրամասն քննությունը տե՛ս Карагезян А., К локализации гавара Кашатаг, ІСԳ, Երևան, 1987, № 1, էջ 40-45:

<sup>8</sup> Հասրայան Մ., «Ձորաշէն-Գորու» (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1109, ց. 1, գ. 46, թ. 2):

քի ճարտարապետական կարևոր հուշարձաններից մեկը<sup>9</sup>: Անտարակույս, եկեղեցին անցյալում ունեցած իր դերով եղել է միջնադարյան Հայաստանի Սյունյաց լեռնաշխարհի կրոնական, գիտակրթական ու մշակութային նշանավոր կենտրոններից մեկը, ինչի շնորհիվ Գորայք-Գորիսը մեծ ճանաչում էր ստացել: Սակայն վաղ միջնադարից հայտնի այս նշանավոր կառույցը սկզբնապես Ս. Հռիփսիմե օծվելու մասին տեղեկությունները բացակայում են ինչպես մատենագրական աղբյուրներում, այնպես էլ վիմական արձանագրություններում, համեմայն դեպս առ այսօր բացակայում է աղբյուրների որևէ անդրադարձ, որպիսիք հնարավոր է, կարող են հետագայում ի հայտ գալ: Ուստի աղբյուրագիտական առկա նյութի ընձեռած հնարավորության շրջանակում կփորձենք հստակություն մտցնել խնդրո առարկա հարցերի մեջ, մասնավորապես կանդրադառնանք ինչպես եկեղեցու տեղորոշման, այնպես էլ սկզբնապես Ս. Գրիգորիս կոչվելու հարցի հանգամանակից քննությանը, որոնք տարբեր պատճառներով անորոշ կամ թեական են մնացել և լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Անշուշտ, ի հայտ եկած նոր փաստերի (պատմա-աշխարհագրական, վիմագրագիտական, մատենագրական) սպառիչ ընդգրկմամբ վերջնականապես կճշգրտվեն, կարբագրվեն ու կամբողջացվեն ստորև բերվող մեր եզրահանգումները:

Այսպես, Ձագեծորի հովտում ուշ միջնադարում գործող եկեղեցիների ու մատուռների մասին արժեքավոր տվյալներ է հաղորդում ժամանակի հայտնի գրիչներից Բարսեղ երեցը, որին Առ. Դավրիժեցին բնութագրում է որպես «...ընտիր և առաքինագործ արեղա...»<sup>10</sup>: Նրա կողմից Մովսես վրդ. Տաթևացու աշակերտ Արիստակես վրդ. Շամբեցու պատվերով Գորայք-Գորիս գյուղում բոլորգրով 1625 թ. ընդօրինակված անդրանիկ՝ «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացույե (թերթ՝ 330, չգրված՝ 3աբ, 325բ-328բ, նյութը՝ թուղթ, մեծությունը՝ 26x19,5, փողերի քանակը՝ 35, կազմը՝ կաշեպատ փախտակ, սեղմած ձևերով, աստառը՝ ծաղկավոր քաթան: Պատրոհիկ-պահպանակ՝ 1, 2, 329 և 330. մագաղաթ, մեսրոպյան մեծ երկաթագիր, Առաքելոց թղթերից: Մանրանկարչությունը՝ զարդարանք՝ միջակ, խորան, ճակատազարդ, սկզբնապատերը՝ կարմիր թանաք: Վիճակը՝ շատ մաքուր և անարար»<sup>11</sup> մատյանի<sup>12</sup> հիշատակարանում ասվում է. «Գրեցաւ սայ ի յերկիրս

<sup>9</sup> Տնն Հասարթյան Մ., Հայաստանի արտաքուստ շեշտված արքիդով միանավ հուշարձանները, ԼՀԳ, Երևան, 1976, № 11, էջ 28, տես նաև Տեր-Մինասյան Ա., Պատմական Սյունիքի վաղ միջնադարյան հուշարձանները, ԼՀԳ, Երևան, 1986, № 1, էջ 63-64:

<sup>10</sup> Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց: Աշխատասիրութեամբ Լ. Խանլարյանի (այսուհետ՝ Առաքել Դարիժեցի), Երևան, 1990, էջ 225:

<sup>11</sup> Տնն Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), անտիպ ձեռագրացուցակ, Հ<sup>մ</sup> 134:

<sup>12</sup> Ձեռագրի ընդօրինակման համար զաղափար օրինակ է դարձել հայ գրչության նշանավոր կենտրոններից մեկում՝ Գանձասարի վանքում 1420 թ. գրիչ Ռ-ստակես քահանայի բոլորգրով գրչագրած Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցե-ը (տես Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՅՁՄՄ), հ. Ա: Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 1028), որի հիշատակարանում Արիստակես վարդապետը 1624 թ. նշել է հետևյալը. «Թ-վին Ռ-ՀԳ (1624) Մովսես վարդապետն գնաց Ասպահան, բազում բարութիւնս հաստատեաց: Եւ ես նուաստ ըմբոստակէս անապատին սեղանատունն շինեցի և գիրքս արիւնակել տուիե (Մատենադարան, ձեռ. Հ<sup>մ</sup> 4004, 1բ: Հմմտ. Հայերեն ձեռագրերի ԺԷ

**Ձագածորու ի գեալս որ կոչի Գորէս, ընդ հովանեաւ Ս. Գրիգորիս եւ Ս. Աստվածածնիս եւ Ս. Յակոբիս եւ Ս. Մարտիրոսիս, զի սոքա են մեզ բարեխօս, ի թվիս ՌՇԴ (1625)»<sup>13</sup>:**

Արդ, սույն ձեռագիր մատյանի գրչության հիշատակարանում վկայակոչված տեղեկությունները ուշադրության են արժանի հետևյալ նկատառումներով: Նախ՝ Ստեփաննոս Օրբելյանից հետո բանասիրությանը ցարդ հայտնի վաղագույն վկայությունն է Գորայք-Գորէսի մասին, երկրորդ՝ Գորայքը՝ «Գորէս» գրելաձևով ձեռագիր աղբյուրներում պահպանված թերևս ամենահին վկայությունն է, երրորդ՝ թվարկված սրբավայրերից Ս. Գրիգորիսը, հոգևոր կենտրոն լինելուց բացի, նաև գրչատուն էր, որտեղ ծաղկել են գիրն ու գրչությունը, չորրորդ՝ Ձագածորի հովտի գրչության վայր «Գորէս»-ը, որտեղ կյանքի է կոչվել և զարգացում ապրել գրչության և մանրանկարչության արվեստը, XVII դ. 20-ական թվականներին հանդես էր գալիս որպես հայ միջնադարյան մշակույթի կենտրոններից մեկը, և հինգերորդ՝ թվարկվում են Ձագածորի հովտում XVII դ. սկզբներին, նույնիսկ ավելի վաղ, գործող եկեղեցիներն ու մատուռները:

Տեղին է նշել, որ այս սրբավայրերը նույն հաջորդականությամբ շարունակաբար հիշատակվում են նաև ծնունդով «ի գեղջէն Գորիսոյն գրիչներ՝ Սարգսի և Հովհաննեսի (1667 թ.)<sup>14</sup>, ապա վերջինիս (1678 թ.) ընդօրինակված Ավետարանների հիշատակարաններում: Զորօրինակ, Սարգսի քահանա գրչի «Գորէս» գյուղում 1666 թ. բոլորգրով ընդօրինակված հերթական «Աւետարան»-ը (թերթ՝ 275, թուղթ, մեծությունը՝ 17x12, տողերի քանակը՝ 20, գրությունը՝ երկայուն, մանրանկարչությունը՝ կիսախորան, կազմը՝ կաշեպատ սովորաթուղթ՝ մետաղյա խաչով)<sup>15</sup>, որը հայտնի է եղել նաև «Բժշկարան» անունով, հիշատակարանում ասվում է. «Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս, որ և կոչեցաւ ի սուրբ բժիշկ ձեռամբ սուտանուն Սարգսի և եթ անարժան քահանայի, որ անուամբս եմ քահանայ և գործովս ոչ: Գրեցաւ ի յերկիրս Ձագածոր՝ ի գեալս որ կոչի Գորէս՝ ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս և Սուրբ Աստուա-

ղարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ: Կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 141): Այս տեղեկությունից հետևում է, որ Բարսեղ երեցը մատյանի ընդօրինակումը սկսել է 1624 թ.:

<sup>13</sup> Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակ, Հմր 134, տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ, էջ 188: Յավոք, Բարսեղ երեցի ընդօրինակված մատյանը ինչ–ինչ պատճառներով մեզ չի հասել. այն առկա չէ Մաշտոցյան Մատենադարանում: Հակված ենք կարծելու, որ ձեռագրի պատվիրատուն՝ Արիստակես վրդ. Շամբեցին, ծննդավայր այցելության ժամանակ, թերևս 1626–1627 թթ., տեղափոխել էր նաև իր իսկ պատվերով ընդօրինակված «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացոյ» մատյանը և այն որպես պաշտամունքային սուրբ մատուց նվիրաբերել էր Պարսկահայքի Զարևանդ գավառում, Արաքսի աջակողմյան վտակ Կարմիր գետի գետաբերանի շրջանում գտնվող հայկական Ստորին Դարաշամբ գյուղին մերձակա, հայ ժողովրդի ամենամոլորական ուխտավայրերից մեկին՝ մեծահռչակ և վեհաշուք Ս. Ստեփանոս Նախավկա վանքին (մոտակա Մաղարդ(թ)ա լեռան ստորոտի բարձրադիր վայրում գտնվելու պատճառով, վանքը հայտնի է նաև Մաղարդավանքի մենաստան անվամբ): Յավոք, Բարսեղ երեցի ընդօրինակված ձեռագրի հետագա ճակատագիրը և գտնվելու վայրը ներկայումս անհայտ է մնում, և այդ ուղղությամբ մեր որոնումներն առայժմ արդյունք չեն տվել:

<sup>14</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. ՀճՐ 8285, 290 ք:

<sup>15</sup> Տե՛ս ՅՁՄՄ, հ. Ա, էջ 1095:

ծածնիս, զի սոքայ են մեզ բարեխաւս և մեք յուսամք եւ ի թուականութեանս մերոյ ՌՃԺԵ. (1666) էր»<sup>16</sup>:

*Հովհաննես գրչի կողմից դարձյալ «Կորէս» գյուղում 1678 թ. գրչագրված «Աւերարան»-ի (թերթ՝ 265, նյութը՝ թուղթ, մեծությունը՝ 19,3x13, գրությունը՝ երկսույն, տողերի քանակը՝ 21–22, մանրանկարչությունը՝ ավերարանիչ 4, կիսահորան լուսանցազարդ, կազմը՝ կաշեպատ փախտակ, Ա. փեղկին՝ պղնձե խաչ, Բ. փեղկին՝ փլաք դռնակով, աստառը՝ կապույտ կտավ)*<sup>17</sup>, հիշատակարանում ասվում է. «Արդ գրեցաւ սուրբ կենսաբէր սուրբ Աւերարանս ձեռամբ սուրբանուն Յոհան ի թաւրերութեանս Հայոց ՌՃ և ԻԷ (1678) ...ի յերկիրս Ձագածորի ի գեօղս որ կոչի Կորէս, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Մարտիրոսիս և Սուրբ Յակօբիս, զի սոքայ են մեզ բարեխօս»<sup>18</sup>: Ինչպես տեսնում ենք, հիշատակարաններում թվարկվող սրբավայրերի շարքում բացակայում է Ս. Հռիփսիմե եկեղեցին:

Բնականաբար հարց է ծագում. թե ինչո՞ւ տարբեր ժամանակներում գրչագրված Ավետարանների հիշատակարաններում գրիչներից և ոչ մեկը չի նշում Ս. Հռիփսիմե եկեղեցին:

Նախ տեսնենք, թե ինչպիսի հաղորդումներ կան Ս. Հռիփսիմե եկեղեցու մասին: Նկատենք այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի եզակի այդ կառույցի մասին մեզ հասած մատենագրական աղբյուրները, այդ թվում նաև՝ Սյունյաց տան պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը ոչինչ չեն հաղորդում: Եկեղեցին Ս. Հռիփսիմե անվամբ վկայված չէ նաև կառույցի քարագիր հիշատակություններում: Որքան էլ զարմանալի է, եկեղեցու, հատկապես այն Ս. Հռիփսիմե անվանելու մասին տեղեկություններ չեն հաղորդում նաև տարբեր ժամանակներում Ձագածորի հովիտ այցելած ճանապարհորդ, տեղագիր ու ազգագիր հեղինակները (Սարգիս վրդ. Ջալալյանց, Երվանդ Լալայան, Եղիշե ավ. քին. Գեղամյանց (Հայկունի), Լեո, Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ–գիտնականներ Էռնեստ և Բելոնե Շանթր ամուսիններ, Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյան, Ստեփան Լիսիցյան, Գրիգորի Չուրսին և այլն): Առանց մատենագրական աղբյուրների և հատկապես վիճակական արձանագրության հիշատակման եկեղեցին Ս. Հռիփսիմե են անվանում Սյունիքի ճարտարապետության և հայկական վաղ միջնադարյան հուշարձանների պատմությունն ուսումնասիրած հեղինակներ Գեղամ Սարգսյանը<sup>19</sup>, Մուրադ Հասրաթյանը<sup>20</sup>,

<sup>16</sup> Մատենադարան, ձեռ. Հ<sup>Պ</sup> 3840, 273բ–274 ա:

<sup>17</sup> Տեն ՅՁՄՄ, հ. Ա, էջ 821:

<sup>18</sup> Մատենադարան, ձեռ. Հ<sup>Պ</sup> 2539, 265ա–266 բ:

<sup>19</sup> Տեն ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1457, թ. 25:

<sup>20</sup> Տեն Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, տե՛ս նաև նույնի՝ Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, տե՛ս նաև նույնի՝ Հայաստանի արտաքուստ շեշտված արսիղով միանավ հուշարձանները, ԼՀԳ, Երևան, 1976, № 11, էջ 27–41, տե՛ս նաև նույնի՝ Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, 2010, տե՛ս նաև նույնի՝ Հայկական ճարտարապետություն, Երևան, 2011:

Սուրեն Մնացականյանը<sup>21</sup> և Անուշ Տեր-Մինասյանը<sup>22</sup>: Եկեղեցու նախնական անվան և կառուցման ժամանակի հարցերն իրենց պարզաբանումը չեն ստացել նաև Վերիշենի դպրոցի աշխարհագրության և պատմության ուսուցիչներ Ա. Բաբայանի<sup>23</sup> Ժ. Միրումյանի<sup>24</sup> ուշագրավ ուսումնասիրություններում:

Արդ, ստորև բերվող սկզբնաղբյուրների համեմատական քննությունը ենթադրել է տալիս, որ Ս. Հռիփսիմե եկեղեցու նախնական անվանումը ամենայն հավանականությամբ եղել է Ս. Գրիգորիս: Անկասկած, եկեղեցին այդ մասին ունեցել է շինարարական արձանագրություն, սակայն էրբ է օձվել կամ ո՞ւմ կողմից, ցավոք, դեռևս հայտնի չէ:

Այժմ անցնենք եկեղեցին Ս. Գրիգորիս կոչելու հանգամանքներին: Այսպես, պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին Ս. Գրիգոր Ա Լուսավորչի թոռ, Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի երեց որդի, «Մանուկ» մականունն ստացած Գրիգորիսը եղել է քրիստոնեական վաղ շրջանի ամենավաղ գործիչներից, որ Հայոց Տրդատ III արքայի հանձնարարությամբ քարոզչական գործունեություն է ծավալել Հայոց ծայրամասային Փայտակարան և Արցախ նահանգներում, ապա Աղվանից ու Վրաց երկրներում և Մասքթաց աշխարհում<sup>25</sup>: Համաձայն պատմական սկզբնաղբյուրների՝ Մանուկ Գրիգորիսը Փայտակարան է գնացել այս քաղաքի վերակացուների խնդրանքով, որոնք, գալով Տրդատ III-ի մոտ, իրենց համար քարոզիչ են խնդրում Լուսավորչի սերնդից<sup>26</sup>:

Պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ՝ հոգևոր արժանիքնորով լի Գրիգորիսը դեռ պատանի «թեպետ և յանլիութիւն աուրցն»<sup>27</sup> մեծ եռանդով նվիրվում է առաքելական գործունեության: Թեև քրիստոնեությունը Հայաստանում արդեն պետական պաշտոնական կրոն էր, սակայն դարերով արմատացած հեթանոսությունը դեռևս խոր արմատներ ուներ, մանավանդ երկրի ծայրամասերում<sup>28</sup>: Ուստի, Գրիգորիսը Փայտակարան տանող ճանապարհին իր առաքելությանը համապատասխան աշխատանքներ էր տանում. շեններում և քաղաքներում քարոզում

<sup>21</sup> Տես **Մնացականյան Ս.**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982:

<sup>22</sup> Տես **Տեր-Մինասյան Ա.**, Պատմական Սյունիքի վաղ միջնադարյան հուշարձանները, ԼՀԳ, Երևան, 1986, № 1, էջ 58–65:

<sup>23</sup> Տես **Բաբայան Ա.**, Չագաձորի (Վերիշենի) Սբ Հռիփսիմե եկեղեցին որպես հնագույն գիտամշակութային կենտրոն, «Բան ու Գործ», Գորիս, 2010, օգոստոսի 20, № 15–16:

<sup>24</sup> Տես **Միրումյան Ժ.**, Վերիշենի Սբ Հռիփսիմե եկեղեցին: ԳՊՀ-ի միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածու, Գորիս, 2010, էջ 195–201:

<sup>25</sup> Տես **Փաւստոսի Բիզանդացոյ** Պատմութիւն Հայոց: Բնագիրը Ք. Պատկանեանի, թարգմ. և ծանոթ. **Ստ. Մալխասեանի** (այսուհետ՝ Փաւստոս Բիզանդ), Երևան, 1987, էջ 20, տե՛ս նաև **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ **Վարդգ Առաքելյանի** (այսուհետ՝ **Մովսէս Կաղանկատուացի**), Երևան, 1983, էջ 38–39, տե՛ս նաև **Մխիթարայ Այրիվանեցոյ** Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 19:

<sup>26</sup> Տես **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը և ներածությունը՝ **Մ. Արեղեանի** և **Ս. Յարութիւնեանի**, լրացումները՝ **Ա. Սարգսեանի** (այսուհետ՝ **Մովսէս Խորենացի**), Երևան, 1991, էջ 259:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Տես **Սվազյան Հ.**, Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, «Էջմիածին», 2003, № 2, էջ 40:

և սերմանում էր Սուրբ Ավետարանը, հաստատում և ամրապնդում էր քրիստոնեական հավատը, հիմնարկում և բարեկարգում էր եկեղեցիներ, ձեռնադրում քահանաներ, շրջում հեթանոսների մեջ և նմանվելով իր մեծանուն պապին՝ նրանց քրիստոնեական հավատի բերում<sup>29</sup>: Թեև մատենագրական աղբյուրներում ուղղակի վկայություններ չեն պահպանվել Սյունիքում Գրիգորիսի գործունեության մասին, այդուհանդերձ, առավել հավանական է կարծել, որ Փայտակարան տանող ճանապարհին ևս հեթանոսական տաճարների տեղում կանգնեցրել է փրկչական խաչի նշանը, հիմնարկել եկեղեցիներ, ձեռնադրել երեցներ և այլն: Այս դեպքերը ժամանակագրորեն համընկնում են Սյունյաց առաջին եպիսկոպոս<sup>30</sup> Գրիգորիսի պաշտոնավարման տարիներին (ըստ Ղ. Ալիշանի՝ Գրիգորիսը պաշտոնավորել է 320–366 թթ.)<sup>31</sup>:

Մանուկ Գրիգորիսը նույն առաքելությամբ Փայտակարանից անցել է Արցախ, ապա Կուր գետով Մեծ Հայքին սահմանակից Բուն Աղվանք և Մասքթաց աշխարհ<sup>32</sup>, ուր ստանձնել է Վրաց և Աղվանից կողմերի եպիսկոպոսությունը: Մովսես Կաղանկատվացու հաղորդմամբ՝ տասնհինգամյա Մանուկ Գրիգորիսը՝ «...ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն... Վրաց և Աղուանից աշխարհին...»<sup>33</sup>: Սակայն քրիստոնեության քարոզչությունը համարելով կազմակերպված դավադրություն՝ խավարամոլ ամբոխը Մասքթաց հեթանոս Սանեսան թագավորի հրամանով Գրիգորիսին կապում է վայրի ձիու պոչից և տանջամահ անում Դերբենդից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող մասքութների կենտրոնատեղի՝ Վատնյա կոչվող դաշտում<sup>34</sup> (ներկայիս Խաչմասի շրջանում)<sup>35</sup>: Գրիգորիսի նահատակությունը, Բ. Հարությունյանի ճշգրտմամբ, թվագրվում է Տրդատ III-ի վախճանին հաջորդող պահով՝ 330–331 թթ.–ին<sup>36</sup>: Նահատակված Գրիգորիսի նշխարները նրա աշակերտները բերում և ամփոփում են Արցախում՝ Ամարասի վանքում. «Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառն իւրեանց ի կողմանց Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գետն որ անուանեալ կոչի Ամարագ»<sup>37</sup>:

<sup>29</sup> Տե՛ս Փաստոս Բիզանդ, էջ 20, տե՛ս նաև Մովսես Կաղանկատուացի, էջ 37:

<sup>30</sup> IV դարից մինչև 839 թ. եպիսկոպոսանիստը եղել է Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքը:

<sup>31</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Միսական, էջ 20:

<sup>32</sup> Փաստոս Բիզանդ, էջ 20, տե՛ս նաև Մովսես Խորենացի, էջ 259, տե՛ս նաև Մովսես Կաղանկատուացի, էջ 14–15:

<sup>33</sup> Մովսես Կաղանկատուացի, էջ 36–37:

<sup>34</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 259–260, տե՛ս նաև Մովսես Կաղանկատուացի, էջ 38–39:

<sup>35</sup> Գրիգորիսի քարոզչական գործունեության մասին մանրամասն տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, ֆ 99, էջ 138–139; Мурадян П., Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 5–20; АКОПЯН А., Албания–Алуанк в грело–латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 124–145; Սվազյան Շ., Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, «Էջմիածին», 2003, № 2, էջ 39–46:

<sup>36</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Մաքթթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, ԼՀԳ, Երևան, 1981, № 6, էջ 76–77:

<sup>37</sup> Փաստոս Բիզանդ, էջ 26, տե՛ս նաև Անանուն, Կեանք եւ վարք Վաչագան արքայի: Առաջաբանը եւ քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի (Մատենագիրք Հայոց, հ. Գ, Անթիլիաս, էջ 2004, էջ 63),



Եկեղեցական ավանդության համաձայն՝ ավելի ուշ Աղվանից Վաչագան Բ Բարեպաշտ թագավորի օրոք (485–523 թթ.)<sup>38</sup> հայտնաբերվում են սրբի նշխարները: Վաչագան Բարեպաշտը, որ պատմության մեջ թողել է ազգանվեր ու եկեղեցասեր գործչի բարի համբավ և, Մովսես Կաղանկատվացու պատմելով, «եղև դուռն լուսոյ աստուածագիտութեան և բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս»<sup>39</sup>, նշխարների մեծ մասը թողնում է Ամարասում, իսկ մնացածը բաժանում Արևելից կողմանց եկեղեցական թեմերի միջև<sup>40</sup>:

Հատկանշական է, որ Հայոց վարքագրության մեջ խոր արմատներ ձգեց Գրիգորիս նահատակի պաշտամունքը: Նրա անվամբ սրբավայրերը սփռվեցին բոլոր այն վայրերում, որտեղ նա քարոզել կամ գործել է: Այսպես, նրա նահատակության վայրում կառուցվում է Ս. Գրիգորիս մատուռը<sup>41</sup>, իսկ 1916 թ.–ին՝ համանուն եկեղեցին<sup>42</sup>: Մատուռներ ու եկեղեցիներ կառուցվեցին նաև Արցախում (Ամարասի վանքի Ս Գրիգորիսի մատուռը (V դ.)), Վարանդայի Հերիեր (տարբ. Հրիեր) գյուղի Ս Գրիգորիս եկեղեցին (XVII դ.)<sup>43</sup>:

Արդ, ավարտելով աղբյուրագիտական տեղեկությունների այս համառոտ վերլուծությունը՝ բերված բոլոր փաստերով հանդեր, առանց ուղիղ աղբյուրագիտական հիմքերի, հավանական ենք համարում այն վարկածը, որ Սյունիքում, մասնավորապես՝ Հաբանդ–Ձագեձոր գավառի հնահիմք Գորայք–Գորիս գյուղում վաղ քրիստոնեական շրջանում՝ IV դարում կառուցված եկեղեցին նույնպես կոչվել է Ս. Գրիգորիս, որը թվագրությամբ համարվում է Վարարակնի կամ Ձագեձորի հովտի ամենավաղ եկեղեցական շինությունը: Այս ենթադրությանն է մեզ մղում թե՛ Բարսեղ և թե՛ Սարգիս ու Հովհաննես գրիչների հիշատակագրերում անխտիր կերպով Ս. Գրիգորիս եկեղեցին առաջինը նշելու հանգամանքը, ինչն, անտարակույս, պայմանավորված էր նրա՝ Ձագեձորի հովտում եղած եկեղեցիներից վաղագույն, ինչպես նաև ավագագույն և դպրության ու գրչության արդյունավետ կենտրոն լինելու իրողությամբ: Այն, որ եկեղեցին սկզբնապես կոչվել է ոչ թե Ս. Հռիփսիմե, այլ Ս. Գրիգորիս, փաստվում է նաև

---

տե՛ս նաև Ինձիձեան Ղ., Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ, Ա, Վենետիկ, 1835, էջ 16: Ի դեպ, Ս. Գրիգորիսի աջը պահվել է Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում:

<sup>38</sup> Տե՛ս Յակոբեան Ա., Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման մասին, «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հ. XXVI, Երեւան, 2008, էջ 83:

<sup>39</sup> Մովսէս Կաղանկատուացի, էջ 83:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78–86:

<sup>41</sup> Վատնյա դաշտի շրջակայքում, Սամուր գետից հյուսիս, Միլլախալի գյուղից (գտնվել է Դերբենդ քաղաքից 27 կմ հարավ, այժմյան Բելիջի գյուղի շրջակայքում) դուրս կառուցված է եղել Սբ Գրիգորիսի մատուռը (տե՛ս Հատուածք ի ձանապարհորդութեանց Ռոստոմ բէկի Երզնկեանց Հաղքատեցոյ ի Դաղստան, Լեւոն Արասովայ եւ մատուռն Սուրբ Գրիգորիս («Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1859, յունւարի 1, № 1, էջ 5–6): 1891 թ. դեկտեմբերի 6–ին Միլլախալի այցելած դերբենդցի ուսուցիչ Հարություն Մարաղյանցը գրում է, որ անցյալում զուտ հայաբնակ այդ գյուղը հայտնի էր Սուրբի գյուղ («Փիրի–քեանդ») անվամբ (տե՛ս Մարաղեանց Յար., Սուրբ Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի մատուռը, «Նոր–Դար», Թիֆլիս, 1891, յունւարի 12, № 5):

<sup>42</sup> Տե՛ս Геворкьян Д., Храм у истиков нашей веры, «НОЕВ ковчег», Москва, 2010, октябрь, № 10.

<sup>43</sup> Տե՛ս Բարխուտարեանց Ս., Արցախ, Բագու, 1895, էջ 68–69:

այն հանգամանքով, որ հուշարձանի վրա իսպառ բացակայում է Հռիփսիմյանների լեգենդը ներկայացնող որևէ պատկերաքանդակ: Տեղին նշենք, որ Ս. Հռիփսիմեան վամբ եկեղեցիները Հայաստանում թերևս սկսել են կառուցվել VII դարի սկզբներից միայն. հոյակերտ առաջին եկեղեցին կառուցվել է 618 թ.–ին Վաղարշապատում<sup>44</sup>:

Ձագեծորի հովտի այս հնագույն ու նշանավոր եկեղեցին բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների ասպատակություններին: Պատմությունն ավանդում է, որ Սյունիքը Հայաստանի մյուս նահանգների նման ևս եղել է ռազմական բախումների թատերաբեմ՝ մեծապես տուժելով նվաճողների (արաբներ, թուրք–սելջուկներ, մոնղոլ–թաթարներ, Լանկ–Թամուր, սրանց հետքերով կարակոյունլու և աղկոյունլու թուրքմեն քոչվոր ցեղեր) ավերիչ արշավանքներից: Իրար հաջորդող այդ արշավանքների հետևանքով բազմիցս ընդհատվել է Հաբանդ գավառի տնտեսական ու մշակութային վերելքը. մի շարք գյուղեր ամայացել են, իսկ բնակչությունը ստիպված է եղել գաղթել: Սյունյաց պատմության քաջագիտակ Կարապետ վրդ. Շահնագարյանցը<sup>45</sup>, որը 1859 թ.–ին եղել է Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի առաջին հրատարակիչը, իր հրատարակությանը կցած «Սինիք» խորագրով աղբյուրագիտական հարուստ տեղեկություններով ընդարձակ առաջաբանում գրում է. «...անդադար յարձակումք Սալջուկեանց, Պարսից, Թաթարաց եւ այլոց միշտ խոչընդոտն եղեն խորհրդոց նոցա. ուստի եւ նահանգս այս օր քան զօր անշքացաւ, եւ յամայութիւն դարձաւ»<sup>46</sup>:

Բազմաթիվ ավերածություններ տեսած Ս. Գրիգորիս եկեղեցին, ըստ հարավային դռան ճակատակալ քարի արձանագրության, հիմնովին վերակառուցվել է 1621 թ.–ին<sup>47</sup>:

<sup>44</sup> Տե՛ս **Մնացականյան Ս.**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, էջ 90–92:

<sup>45</sup> Կարապետ վրդ. Շահնագարյանցը 1843–1846 թթ. եղել է Երևանի թեմի Սյունյաց փոխանորդության առաջնորդ: Այդ տարիներին նա շրջագայել է Սյունիքում և հավաքած արժեքավոր նյութերի հիման վրա 1844–1845 թթ. գրի է առել Սյունիքի բովանդակ պատմությունը (տեղագրություն, բնակչության շարժնթաց, բուսական աշխարհ, արձանագրություններ, ավանդույթներ և այլն): Նրա վկայությամբ. «...ձեռնարկեալ էի յօրինակութիւն ընտիր պատմագրաց մերոց ի հռչակաւոր գրանոցի տեղոյն (Ս. Էջմիածնի), յորս յաւելի ապա և *գտեղագրութիւն* պատմութեամբ և աշխարհագրութեամբ հանդերձ Սիւնեաց աշխարհին ի ժամանակին յորում կացի տեսուչ յիշեալ վիճակին» (**Կոստանեանց Կ.**, Կարապետ վարդապետ Շահնագարեանց (կենսագրական ակնարկ), «Լումայ», Թիֆլիս, 1910, № 5–6, էջ 16): Աշխատությունը, որն, անշուշտ, ուշագրավ և սկզբնաղբյուրային արժեքավոր տեղեկություններ էր պարունակում, գողացվել և կորստի է մատնվել: Ինչպես այդ առիթով դառնացած գրել է Կարապետ վրդ. Շահնագարյանցը. «Այլ զայս ամենայն արդինս տասնամեայ երկանց իմ սրբապիղծ ձեռն մի անանուն յափշտակեաց ի միում վայրկեանի, և եթող զիս ի խոր տխրութեան» (նույն տեղում):

Այդ աշխատությունից բացի, Կարապետ վրդ. Շահնագարյանցը 1845 թ. հունվարի 5–ին Շինուհայր գյուղում կազմել է նաև «Գաւառական բառք Սիւնեաց հայոց քաղեաց ի կիրարկութենէ Հայոց» խորագրով բառացանկը՝ մեծ մասի նշանակությունների բացատրությամբ (տե՛ս **Մարգարյան Ալ.**, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 13–14):

<sup>46</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբելեան** արքեպիսկոպոսի Սիւնեաց ի լոյս ածեալ հանդերձ ծանօթագրութեամբք **Կարապետ վարդապետ Շահնագարեանց**, հ. Ա, Փարիզ, 1859, էջ 29:

<sup>47</sup> Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Հայաստանի արտաքուստ շեշտված արքիդով միանավ հուշարձանները, էջ 28:

Նախընթացում նշեցինք, որ եկեղեցին Ս. Գրիգորիսի անվամբ մի վերջին անգամ հիշատակվում է գորիսեցի Հովհաննես գրչի կողմից 1678 թ. գրչագրված «Աւետարան»-ի հիշատակարանում<sup>48</sup>: Եկեղեցու հետագա գործունեությանը վերաբերող մատենագրական ստույգ տեղեկություն չունենք: Այստեղից հետևում է, որ 1678 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում՝ թերևս XVIII դ. կեսերին, եկեղեցին մեկ անգամ ևս նորոգվել և վերածվել է (թեև այդ մասին եկեղեցին չունի արձանագրություն) և սրբագործվել է ոչ թե Տիրամոր՝ Մարիամ Աստվածածնի, Թադեոս կամ Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի կամ նրա թոռ Գրիգորիսի հետ կապված ավանդապատումով, այլ գոհացել են մեկ այլ սրբության՝ Ս. Հռիփսիմեի պատմությամբ, որից և եկեղեցին ստացել է նոր անուն՝ Ս. Հռիփսիմե: Եվ եթե այսպիսի ենթադրությունն ընդունելի համարվի, ապա մենք բոլոր հիմքերն ունենք եզրահանգելու, որ եկեղեցու նախկին՝ Ս. Գրիգորիս անվանումը մոռացության տրվելով՝ արդեն չի հիշատակվում մատենագրական հետագա աղբյուրներում: Այս եզրահանգման օգտին է վկայում այն փաստը, որ Սյունիքում Հայոց սրբերի շարքում Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերից մեծագույն պաշտամունք է տածվել գեղեցկագույնի՝ երկնավոր հարս Հռիփսիմե նահատակի հանդեպ: Եվ այս առումով Հայոց մտածողության մեջ խոր արմատներ ձգած Ս. Հռիփսիմե վկայուհու պաշտամունքը չափազանց հարազատ է եղել նաև Սյունիքում, մասնավորապես Հաբանդ գավառում, և ինչ-ինչ հիմքեր կան՝ գոնե իբրև վարկած ենթադրելու, որ նրան վերագրվող մասունքները XVII դ. սկզբներին տեղափոխվել են Սյունիք. վկայուհու անունով են օծվել կամ վերածվել մի շարք եկեղեցիներ, նրան են նվիրվել եկեղեցիների հիմնարկեքի հրաշապատում գրույցներ<sup>49</sup>: Դրա խոսուն վկան է Հաբանդ-Ձագաձորի եկեղեցիների և մատու-

<sup>48</sup> Մատենադարան, ձեռ. Հ<sup>մ</sup> 2539, 265ա-266բ:

<sup>49</sup> Ս. Հռիփսիմեի անվան այդչափ տարածումն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով: Այսպես, կաթոլիկ միսիոներները, օգտվելով Շահ-Աբբաս Ա-ի 1604-1605 թթ. չարաղետ արշավանքների և բռնագաղթից հետո Հայաստանում տիրող ծանր վիճակից, ցրվելով երկրով մեկ, զբաղված էին մարդաորսով, անտեր ունեցվածքների հափշտակումով և լքյալ տաճարների սրբություններ հավաքելով: Առաքել Դավրիժեցին՝ «Պատմութիւն վասն նշխարաց սրբուհոյ կուսին Հռիփսիմեայ, թէ որպէս գտեալ և հանեալ եղև նա ի Ֆռանկաց և թէ որպէս տարեալ եղև ի Սպահան քաղաք» երկի ԺԶ գլխում վկայում է, որ կաթոլիկ միսիոներներ հայր Գուլիելմոսը և հայր Արքանջելին, գաղտնի պեղելով Ս. Հռիփսիմե եկեղեցու խորանի գետնահարկ մատուռում գտնվող տապանը, այնտեղից հափշտակել են վկայուհու մասունքներից և տեղափոխել Նախիջևանի կաթոլիկ կենտրոններից Ապարաներ գյուղ. «Եւ ապա ելին պատրիքն Երևանայ և զնշխարին ընդ ինքնեանս առեալ՝ եկին յերկիրն Նախչուանայ, ի գաւառն Երնջակու, ի գիւղն Ֆռանկաց Ապարաներ. և անդ զնշխարին արարեալ են երկու և երեք բաժին...» (**Առաքել Դավրիժեցի**, էջ 171-172): Մասունքների կողոպտման ճիշտ թվականը հայտնի չէ: Մաղաքիա արքեպս. Օրմանյանը դա թեականորեն նշում է մոտավորապես 1607 թվականին (տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, Գ 1600, էջ 2315): Նշխարների մի մասն ուղարկվում է Սպահան (XVII դ. սկզբներից Սպահանը դարձել էր լատին քարոզիչների կենտրոնավայրերից մեկը)՝ այդտեղից պորտուգալական գաղութ՝ Հնդկաստանի Գոա նահանգ ուղարկելու համար: Տեղեկանալով այդ մասին՝ Սպահանում բնակվող հայ նշանավոր վաճառականներից հինջուղայեցի խոջա Նազարը, որ մոտ էր Շահ-Աբբաս Ա-ին, դիմում է նրա միջնորդությանը՝ խնդրելով մարդ ուղարկել Նախիջևան՝ կողոպտիչներին բռնելու և վկայուհու նշխարները վերադարձնելու համար: Ընդառաջելով խոջա Նազարին՝ շահը Նախիջևան է ուղարկում

ների շարքում Ս. Հռիփսիմեի անվամբ XVII–XVIII դդ. կառույցների (Խանածախ (1615 թ.), Հին Խնձորեսկ (1663 թ.), Քարահունջ (1675 թ.), Մաղանջուղ (հետագայի՝ Այգեձոր, XVI դ.), Բարձրավան (հնում՝ Իրիցվանիք, XVII–XVIII դդ.), Գորիս գյուղ (Նոր կամ Ներքին Գորիս, 1776 թ.), Արավուս և այլն) բազմաքանակությունը: Ուշագրավ է, որ 1890 թ.–ի ապրիլի 6–ին գավառակենտրոն Գորիսում հիմնադրված եկեղեցական–ծխական երկսեռ դպրոցը 1910–1911 ուս. տարվանից նույնպես կոչվել է Ս. Հռիփսիմե<sup>50</sup>: Նշենք, որ Ս. Հռիփսիմեի անվամբ եկեղեցիներ կան նաև Կապանի Սրաշեն (XVII դ.), Գեղանուշ (XIX դ.), Սևաքար (XIX դ.) գյուղերում և Սիսիանի Տոլորս գյուղում (առաջինը կառուցվել է 1861 թ.–ին, երկրորդը՝ 2012 թ.–ին)<sup>51</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, Ս. Հռիփսիմե եկեղեցու մասին մատենագրական աղբյուրները և տեղագիր–հեղինակները տեղեկություններ չեն հաղորդում: Արձանագրություններից բացի, եկեղեցու շինարվեստի, կառուցվածքային ձևերի ու հորինվածքի մասին, թերևս, առաջին տեղեկությունները տալիս է 1904 թ.–ի ամռանը Ձագեձորի հովտում վիմագրական ուսումնասիրություններ կատարած Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը: Սակայն տարակուսելի է այն հանգամանքը, որ նա «Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները» աշխատության մեջ Ս. Հռիփսիմե եկեղեցուն վերաբերող հատվածը ներկայացնում է «**Ս. Գէորգ եկեղեցի**» վերտառությամբ ենթագլխի ներքո. «Ձեռով բազիլիկ է, 23x6,80 մետր մեծությամբ, կամարակապ, երկու դռնով, հարաւից եւ արևմուտքից: Շինած է հասարակ քարերով,

---

ծնունդով Նախիջևանի Աստապատ գյուղից Ավետիք (Ալթուն) անունով հային: Վերջինս գալով Նախիջևան՝ պատժում է կողոպտիչ միսուներներին, գտնում թաքստոցում պահված վկայուհու նշխարները և դրանք տեղափոխում հայրենի Աստապատ: Այդ օրերին Աստապատում էր Պողոս անունով վարդապետը: Ավետիքը ներկայանում է վերջինիս և առաջարկում վերցնել վկայուհու իր բաժին նշխարը: Վերջինս վերցնում է մի մասի չափ նշխար և Նախիջևանի հարակից Քուլթափա գյուղում հիմնարկում եկեղեցի՝ հիմքում դնելով իրեն բաժին հասած նշխարը. «Եւ յաւուր օծման եկեղեցոյն անուանեաց զանուն եկեղեցոյն սուրբ Հռիփսիմեայ» (**Առաքել Դարիժեցի**, էջ 176): Հակված ենք կարծելու, որ Պողոս վարդապետը վկայուհու նշխարի մի մասը տեղափոխել է Սյունյաց աշխարհի այլ գավառներ ևս, որտեղ նույնպես բաժանված նշխարների հիմքի վրա կառուցվել են Սբ Հռիփսիմեի անվան եկեղեցիներ, քանի որ և՛ վաղ, և՛ զարգացած, և՛ ուշ միջնադարում տարածված երևույթ էր, երբ եկեղեցական թեմերն ու հայտնի վանքերն իրենց «օրինությամբ» կամ մատուցներով կիսվում էին հարևան թեմերի կամ վանքերի ու եկեղեցիների հետ՝ իրենց սրբի օրինությունը տվյալ տարածքներում ևս տարածելու համար: Այս համատեքստում իբրև լրացուցիչ անուղակի փաստարկ կարող է ծառայել **Ստեփաննոս Օրբելյանի** հայտնի վկայությունն այն մասին, որ Սյունյաց իշխաններն ու հոգևոր առաջնորդները ջանք չէին խնայում տարբեր վայրերից հավաքելու «...գնշխարս առաքելականս և հայրապետականս և մարտիրոսականս ի գլխատր և յերևելի սրբոցն...», Սյունիք տեղափոխելու ու իրենց վանքերում և եկեղեցիներում կենտրոնացնելու գործում (տես Ստեփաննոս Օրբելյան, էջ 148):

<sup>50</sup> Տես ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 157, թ. 1, տես նաև գ. 16, թ. 37, տես նաև «Մշակ», Թիֆլիս, 1890, ապրիլի 17, № 42:

<sup>51</sup> Հավելենք նաև, որ Ս. Հռիփսիմեի անվամբ եկեղեցիներ են կառուցվել Ատրպատականի թեմի Մուժանբար (XVII դ.), Ղարաղալի Դիզմար գավառակի Ղուլուղի գյուղերում (XVIII դ.) և Թեհրանի թեմի Ղազվին քաղաքում (1676 թ.): 1831 թ. Ս. Հռիփսիմե մատուռն է կառուցվել նաև Իրան–Հնդկաստանի թեմում՝ Ինդոնեզիայի մայրաքաղաք՝ Բատավիայում (այժմ՝ Ջակարտա): Տես **Մինասեան Լ.**, Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Նոր Ջուղա, 1983, էջ 13, 35, 25, 68:

բայց նորոգել է, ապացոյց՝ պատերի մէջ գործ են դրած գերեզմանաքարեր: Կամարները յենած են պատերից մի մետր ներս ընկած սիւների վրայ: Եկեղեցին ունեցել է գաւիթ, որ այժմ քանդուած է»<sup>52</sup>: Նկատենք, որ թեև Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանի կողմից խնդրո առարկա եկեղեցին Ս. Գևորգ անվանելու տեղեկությունը չի փաստվում մատենագրական այլ աղբյուրներով, այնուհանդերձ, նկարագրությունը կարևոր է նրանով, որ լիովին համապատասխանում է ներկայիս Վերիշեն գյուղի կանգուն, չափազանց ինքնատիպ ճարտարապետական ձևեր ունեցող Ս. Հռիփսիմե եկեղեցուն:

Արդ, աղբյուրագիտական առկա տեղեկությունների շրջանակում փորձենք ճշգրտում և հստակություն մտցնել խնդրո առարկա հարցի մեջ: Վերիշեն գյուղի հյուսիս-արևելյան մասում՝ սարալանջին, կանգուն է նաև արևմտյան մասով ժայռափոր Ս. Գևորգ եկեղեցին, որն օծվելուց հետո հիշատակվում է նաև Նա(ո)րակնունք անունով<sup>53</sup>:

<sup>52</sup> **Մեսրոպ Մագիստրոս արքեպ. Տեր Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 68:

<sup>53</sup> Խնդրո առարկա հարցի մեջ հստակություն մտցնելու նպատակով, հարկ ենք համարում մեր ձեռքի տակ եղած աղբյուրների համադիր քննությամբ պարզաբանել Ս. Գևորգ եկեղեցու կառուցման ժամանակին վերաբերող հարցերը: Նախ անդրադառնանք կառուցման ժամանակի խնդրին: Բանն այն է, որ եկեղեցու կառուցման, նորոգման կամ մասնակի վերանորոգման վերաբերյալ գոյություն չունեն վիմագրական և մատենագրական ստույգ վկայություններ: Այս հանգամանքը բավականին դժվարացնում է կառուցի թվագրման հնարավորությունը, թեև մոտավոր ժամանակը կարելի է պարզել այլ աղբյուրների միջոցով: Արդ, առանց աղբյուրագիտական ուղիղ տվյալների, ենթադրում ենք, որ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ շրջանում, թերևս XVII դ. 80-ական թթ. սկզբներին հաջորդած ժամանակներում, այլապես նա կհիշատակվեր ինչպես Բարսեղ երեցի, այնպես էլ նրան հաջորդած Սարգիս և Հովհաննես գրիչների՝ 1666, 1667, 1678 թթ. ընթրիմակած «Աւետարաններ»-ի հիշատակարաններում, որոնցում Ձագեձորի հովտում շարունակաբար թվարկվում են հետևյալ սրբավայրերը. «...Ս. Գրիգորիս եւ Ս. Աստվածածնիս եւ Ս. Յակոբիս եւ Ս. Մարտիրոսիս...» (Մատենադարան, ձեռ. Հմր 8285, 290թ, տես նաև ձեռ. Հմր 3840, 273թ-274ա, տես նաև ձեռ. Հմր 2539, 265 ա-266 բ): Ընդամին՝ դատելով եկեղեցու ճարտարապետական ձևերից, այն իր հատակագծային հորինվածքով գրեթե անվերայ համապատասխանում է Ձագաձորի հովտի և հարակից շրջատարածքում XVII դարավերջին և XVIII դարակեսին կառուցված եկեղեցիներին: Ինչպես, օրինակ, Մեծ Մելիք-Օհանի՝ Ծակերի ձորում 1765 թ. կառուցած եկեղեցին: Այսպիսով՝ որոշակի կերպով կարելի է ասել, որ եկեղեցին կառուցվել է Հովհաննես գրիչի՝ 1678 թ. ընթրիմակած «Աւետարան»-ից հետո ընկած ժամանակահատվածում՝ նախքան Մահմադ խանի 1749 թ. ավերիչ արշավանքը: Այս առումով արձանագրենք նաև, որ անիրական է Վերիշենի բնակիչ Գարեգին Գրիգորյանի (ծն. 1924 թ.) ծննդավայրի մասին գրառած պատմական դրվագներում մեզ համար անհայտ աղբյուրի հիմամբ եկեղեցու կառուցման 1444 թվականը (տես **Գրիգորյան Գ.**, Վերիշենի պատմությունը 1900 թվից սկսած, Վերիշեն (ա. թ.), էջ 1: Ձեռագիր մատյանը պահվում է հեղինակի տանը: Գ. Վերիշեն, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք տուն № 1):

Մի հանգամանք ևս արժանի է ուշադրության. ինչպես այս, այնպես էլ Ձագեձորի հովտում և հարակից ձորերում XVII-XVIII դդ. կառուցված և վերակառուցված գրեթե բոլոր եկեղեցիների շինարարական արձանագրություններում փորագրված չեն եկեղեցու անվանումները: 2011-2012 և 2017 թթ. տեղում կատարած մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ամբողջովին անտաշ և կոպտատաշ քարերով վերակառուցված շինության արտաքին ճակատային մասը (սրբատաշ են միայն շենքի արտաքին դռան անկյունաքարերը), ենթարկվել է էական փոփոխությունների: Դժվար չէ նկատել, որ հուշարձանի պատերի մեջ տեղ-տեղ ազուցված են նաև եկեղեցու նախնական կառուցման հետ առնչություն չունեցող խաչքարերի կտորներ, հարակից գերեզմանատան անարձանագիր և արձանագիր տապանաքարեր, օր.՝ «ԹՎ.: ՌԾԴ»

(1605), կամ՝ եկեղեցու սրբատաշ բարադրի փոխարեն հարավային դռան վերևում տեղ է գտել պարզունակ գծախաչով արտաքուստ ազուցված քարը, որի հարթեցված մակերեսին արձանագրված է. «ԹՎ. Ռ/ՀԷ (1628): ԵՄՆԱՍԻՊ/ԿԱՆԳԼՆԵՑԻՍԲ/ԽԱՍՏՈՐԿ/ՈՒԹԵԼԱՆ/ՀՈԳՈՒՄՈՅ» (Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 76): Նկատենք, որ Ս. Բարխուդարյանի մոտ արձանագրությունը սխալմամբ նշված է արևմտյան հաստվածում ժայռափոր և գոյություն չունեցող մուտքից վերև: Ինչևէ, եթե մի պահ ընդունենք, որ եկեղեցին ժողովրդաբարբառային ձևով անվանվել է *խաչ* (տես **Աճառյան Տր.**, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 389, 453), իսկ արձանագրությունը վերաբերում է եկեղեցու շինարարությանը, ապա այս ենթադրությունը չի փաստվում մեզ հասած ձեռագրական և վիմագրական որևէ այլ աղբյուրով: Տեղին նշենք, որ շփոթության տեղիք կարող է տալ արձանագիր քարի աչքի ընկնող տեղադրությունը՝ միակ մուտքի ձակատակալը, որտեղ սովորաբար փորագրվում են հուշարձանի շինության կամ նորոգման մասին հիշատակությունները: Այսպիսով՝ միանգամայն ակնհայտ է, որ ոմն Նասիպի (ըստ Տր. Աճառյանի՝ Նասիպ անձնանունը արաբերենից՝ «բախտ», «վիճակ», «ազնվական» նշանակություններով անցել է հայոց մեջ և գործածական է եղել XVI–XVII դարերում, տես **Աճառյան Տր.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 23) կողմից «վասն հոգոյ փրկութեան», ինչպես ավանդում է արձանագրությունը, 1628 թվագրությամբ գծապատկերով խաչքարը իրականում ոչ մի աղբյուր չունի շինության կառուցման, վերականգնման թվականի, առավել ևս՝ անվան հետ:

Լեռն, 1888 թ. հոկտեմբերի 4–ին լինելով Հին Գորիսում (Վերին Շեն), ուղեգրական նոթերում առանց եկեղեցու անունը նշելու վկայում է, որ այն գործող չէր. «...թումբի գլխին կանգնած է հին եկեղեցին, որ այժմ աչքից հեռացրած է» (ԼԷօ, Իմ յիշատակարանը (տեղեկություններ մեր սարերից ու ձորերից): Սինիքից մի անկիւն, Շուշի, 1890, էջ 77, տես նաև նույնի՝ Ուղեգրություններ և հուշեր, ԵԺ, հ. 8, Երևան, 1985, էջ 59): Ավածից հետևում է, որ եկեղեցին գործող չի եղել ավերակ լինելու պատճառով և օժվել կամ վերածօժվել է հիմնանորոգումից հետո, թերևս 1890–ական թվականների սկզբներին, երբ XVIII դարի վերջերից Գորիս գյուղից (Նոր կամ Ներքին Գորիս) որոշ ընտանիքներ, հետզհետե վերահաստատվելով Գորայք–Գորիսում, վերահիմնարկել են հին գյուղը, որի հետ վերաշինվել է նաև ավերված եկեղեցին: Հարկավ, այս հասկանանքի բերումով էլ, եկեղեցին կոչվել է նաև Ն(ո)րակնունք, որը ստուգաբանվում է՝ «նոր կնքուած կամ մկրտուած» (**Հիրմիզեան Ե.**, Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբառ. հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869, էջ 398): Թե կառուցվածքային առումով ինչպիսին է եղել եկեղեցին նորոգումից առաջ, մեզ հասած գրավոր սկզբնաղբյուրներում հավաստի տեղեկությունների բացակայության պատճառով ներկայումս անհնարին է պարզել: Այնպես, ինչպես հնարավոր չէ ստույգ ճշտել եկեղեցու նախնական անվանումը: Տեղին նշենք, որ Հայաստանի մի շարք եկեղեցիներ նույնպես կոչվել են «Նորակնունք»: Ինչպես, օրինակ, Տաթևի հաջորդության մեջ մտնող Հակ (XVIII–XIX դդ. հորջորջված Մինքենդ) գյուղի Ս. Գևորգ եկեղեցու շինարարական արձանագրությունում ասվում է. «ՇԻՆԵՑԱԻ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ/ՆՈՒՆ-Ք ՀԱԿԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԿԱ: /.../ ԹՎ [ԻՆ] ՌՃԻԴ (1675)» (**Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները հորհրդային Արրեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 131, տես նաև **Յակոբեան Ա.**, Պատմա–աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտություններ (Արցախ–Ուտիք), Վիեննա–Երևան, 2009, էջ 34): Կամ՝ Վայոց ձորի Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի միակ եկեղեցին կոչվում է Նորակնունք Ս. Աստվածածին (տես Բրիտտոնյա Հայաստան. Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 919–920): Կամ՝ Շինուհայր գյուղում գրիչ Լազարի ընթրինակած «Շարակնոց»–ի հիշատակարանում ասվում է. «...նորակնունք Ս. Ստեփանոսի մերս եկեղեցոյ...» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641–1660), հ. Գ: Կազմեց՝ Վ. **Տակոբյան**, Երևան, 1984, էջ 52):

Եկեղեցու անվան վերաբերյալ տեղեկությունները հանդիպում են ավելի ուշ շրջանի սկզբնաղբյուրներում: Ինչպես, օրինակ, Հին Գորիս (Վերին Շեն) գյուղի չափաբերական մատյաններից պարզվում է եկեղեցու անունը՝ Ս. Գևորգ: Եկեղեցու, մեզ հասած ամենահին՝ 1900 թ. չափաբերական մատյանը վերնագրված է «Չափաբերական մատեան տուեալ ի լուսաորչական Հայոց վիճակային կոնսիստորիայէն թեմին Երեւանայ սուրբ Գեորգ եկեղեցոյ Հին Գորիսի գեղջ յաղագս գրելոյ գՕՆեալս, գՊատկեալս և գՆնչեցեալս այնր եկեղեցոյ վասն 1900 ամի» (ՀԱԱ, ֆ. 47, ց. 5, գ. 256, թ. 1): Որ եկեղեցին կոչվել է Ս. Գևորգ, այդ մասին հավաստվում է նաև Գորիսից «Մշակ» լրագրին 1902 թ. հունվարին ուղարկված մի թղթակցությունում, որում ասվում է. «Նոր–Գորիսից երեք վերստ հեռաորութեան վրա գտնվում է Հին–Գորիս գիւղը: Հին–Գորիսում կա մի հնաշէն եկեղեցի, ս. Գեորգ անունով («Մշակ», Թիֆլիս, 1902, յունվարի 25, № 17): Հիրավի, փաս–

1897 թ.–ին Հին Գորիս (Վերին Շեն) այցելած Ե. Լալայանը գրում է. «Գիւղում կայ մի փոքրիկ, կիսով չափ քերծի մէջ փորուած եկեղեցի Նարակնունք (Նորակնունք) անունով... Այս եկեղեցին այժմ էլ իբր աղօթատեղի է ծառայում (ընդգծումը մերն է՝ Գ. Ս.)»<sup>54</sup>: Սակայն անհասկանալի պատճառներով Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը ոչ մի տեղեկություն չի հաղորդում բարձրադիր և տեսանելի վայրում գտնվող այդ եկեղեցու մասին: Վերոբերյալ վկայությունից անմիջապես հետո Ե. Լալայանը որոշակիորեն գրում է, որ Նա(ր)ակնունք եկեղեցուց բացի գյուղում կա նաև «...մի ուրիշ եկեղեցու անրակ»<sup>55</sup>: Ակնհայտ է, որ երկրորդ վկայությունը վերաբերում է Ս. Հռիփսիմե եկեղեցուն: Հարցի մեջ վերջնական հստակություն է մտցնում այն փաստը, որ ՀԽՍՀ ժողկոմխորհին առընթեր «Պատմական հուշարձանների պահպանության կոմիտե»–ի<sup>56</sup> (այսուհետ՝ ՊՀՊԿ)՝ Գորիսի շրջանում պատմաճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելու և քարտեզագրելու նպատակով 1946 թ.–ի օգոստոսի սկզբներին կազմակերպած գիտարշավի ղեկավար, հուշարձանների պահպանության բաժնի վարիչ, բանասեր Գեղամ Սարգսյանի 1947 թ. ապրիլի 28–ի հաշվետվությունում Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանի մատնանշած եկեղեցին միանշանակ նշվում է ոչ թե Ս. Գևորգ, այլ Ս. Հռիփսիմե<sup>57</sup>: Այդ անվամբ են նշում նաև

տերը վկայում են, որ Ս. Գրիգորիս (Ս. Հռիփսիմե) եկեղեցին, այդ և հետագա ժամանակներում գտնվելով անմխիթար և քայքայված վիճակում, այլևս դադարել էր գործող լինելուց, և գյուղում 1900–1924 թթ. գործել է միայն Ս. Գևորգ եկեղեցին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 47, ց. 7, գ. 429, գ. 434, գ. 438, գ. 442, գ. 446): Այս դիտարկման տրամաբանությամբ էլ եզրահանգենք, որ Վերիշենի եկեղեցին նույնպես պետք է կոչել՝ **Նորակնունք Ս. Գևորգ**: Զորօրինակ, Վայոց ձորում Վերնաշեն գյուղից 7 կմ հյուսիս Պոռչյան տոհմի հովանավորությամբ 1321 թ. կառուցված Սպիտակավոր վանքի (երբեմն՝ Ս. Կարապետի Անապատ, Ծաղկավանք) հյուսիսային պատի արձանագրության մեջ եկեղեցին հիշատակվում է «Նորակնունք Աստուածածին» (Յովսեփեան Գ., Խաղբակեանք եւ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, մասն Գ, Երուսաղէմ, 1942, էջ 22, տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության: Պրակ III, Վայոց ձոր. Եղեզնաձորի և Ազիզբեկովի շրջաններ: Կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 96):

ՊՀՊԿ–ի՝ 1946 թ. օգոստոսին Գորիս կազմակերպած գիտարշավի ղեկավար Գ. Սարգսյանի հաշվետվությունում եկեղեցու ճարտարապետական հորինվածքի մասին ասվում է. «...փոքր եկեղեցի է 10x5,40 մ. միանալ թաղապատ սրահ, արսիդայով, մուտքը հարավային պատի արևմտյան ծայրին: Ունի մի փոքր լուսամուտ արսիդի ձևակառու, մի մեծ լուսամուտ էլ հարավային պատի մեջ: Շարվածքը զանազան տեսակի ու գույնի անմշակ քարերից կրաշաղախով, ներսից սվաղած: Դրսից պատերի մեջ խաչքարերի և տապանաքարերի բեկորներ: Եկեղեցին արևմտյան կողմից կլան է ժայռին: Շուրջը կան տապանաքարեր, մեկը ՌՃԾԷ թվագրով» (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1426, թ. 26, տե՛ս նաև գ. 1457, թ. 27): Դատելով եկեղեցու փոքրածավալ չափերից՝ այն չի ունեցել ավանդատուն: Եկեղեցին գործել է ընդհուպ մինչև 1924 թ., այնուհետև կոլտնտեսության կողմից օգտագործվել է որպես ցորենի պահեստ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1457, թ. 27): Եկեղեցին ամբողջությամբ վերանորոգվել է 1994 թ. (տե՛ս Մեծոյմյան Վ., Վերիշենի պատմությունը (գիրք սերունդների համար), Գորիս–Վերիշեն, 1996, էջ 58): Եկեղեցու վերաբացումն ու վերօծումը նույն թվականի հուլիսին կատարել է Կանադայի Հայոց թեմի առաջնորդ Հովնան արքեպս. Տերտերյանը, որը հոգացել է նաև եկեղեցու վերանորոգման ծախսերը (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 4, Երևան, 1998, էջ 802):

<sup>54</sup> **Լալայան Ե.**, Զանգեզուր: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, գիրք Դ, № 2, էջ 31:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Կոմիտեն 1937 թ.–ից գործել է ՀԽՍՀ կենտրոնական առընթեր:

<sup>57</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1457, թ. 25, տե՛ս նաև գ. 1547, թ. 37:

1958 թ.–ի ամռանը հնավայրը հետազոտած Սեդրակ Բարխուդարյանը<sup>58</sup> և ավելի ուշ շրջանում եկեղեցու տիպաբանական հարցերին անդրադարձած Մուրադ Հասրաթյանն<sup>59</sup> ու Անուշ Տեր–Մովսիսյանը<sup>60</sup>:

Այսպիսով՝ հարկ է արձանագրել, որ Ս. Գևորգ եկեղեցին նույն՝ Ե. Լալայանի այցելության ժամանակ գործող, իր չափերով շատ ավելի փոքր, արևմտյան հատվածում կիսով չափ ժայռափոր Ն(ա)որակնունք անվանված եկեղեցին է, իսկ Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանի վկայակոչածը՝ Ս. Հռիփսիմեն: Այս հակասության լուծումը տալիս է հենց Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը, որի հավաքած՝ XVI–XVII դդ. վերաբերող 19 վիմագրական արձանագրություններն իրականում գտնվում են ոչ թե Ն(ա)որակնունք Ս. Գևորգ, այլ Ս. Հռիփսիմե եկեղեցու շրջակայքում<sup>61</sup>: Ի դեպ, Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը թույլ է տվել նմանաբնույթ այլ վրիպումներ ևս: Շատ զարմանալի է, երբ նա Գորիս գյուղից (Նոր կամ Ներքին Գորիս) շուրջ 1 կմ հյուսիս–արևելք, լեռնալանջի բարձրության վրա գտնվող Ս. Մարտիրոս վիմափոր մատուռն անվանում է «Սուրբ Մարտիրոս աղբյուր»<sup>62</sup>: Իրականում կիսաժայռափոր այդ մատուռը, չունի աղբյուր: Կամ՝ «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂԱՐԱԽԱՆԻՆ ԹՎ. ՌՃԻՆԸ» (1699) արձանագրությամբ տապանաքարը տեղադրում է Ս. Հռիփսիմե եկեղեցու արևելյան մասում<sup>63</sup>: Մինչդեռ այն գտնվում է գյուղի հին գերեզմանատանը<sup>64</sup>: Հարկ է նկատել, որ հնարավոր վրիպումների պատճառի մասին Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը մատնանշել է իր վերոհիշյալ աշխատության առաջաբանում: «...ժամանակին հաւաքած նիւթերս,— գրում է նա,— չկարողացայ հրատարակել, որովհետեւ իմ նեգատիւները Թիֆլիզում եղբօրս բնակարանում հրդեհի զոհ եղան... Ներկայումս կամենում եմ տալ այդ աշխատանքը. հիմնելով իմ յուշատետրերի վրայ և օգտելով ուրիշներից փոխ առնւած լուսանկարներով, թողնելով, որ ուրիշները անշուշտ կը լրացնեն իմ թերութիւնները...»<sup>65</sup>:

Աղբյուրագիտական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ տակավին XIX դարավերջին, գուցե ավելի վաղ արդեն իսկ Ս. Հռիփսիմե անվանյալ եկեղեցին քայքայված լինելու պատճառով այլևս գործուն չէր: Այդ է փաստում է Մեսրոպ վրդ. Տեր–Մովսիսյանը, որը վերոնշյալ աշխատության «Ս. Գեորգ եկեղեցի (իմա՝ Ս. Հռիփսիմե— Գ. Ս.)» ենթագլխում գրում է. «...եկեղեցին, կանգուն մնացած, բայց այլեւ չի գործադրում»<sup>66</sup>: Այն, որ գործուն է եղել միայն Նա(ո)րակնունք անվանված Ս. Գևորգ

<sup>58</sup> Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ II: Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ: Կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 76:

<sup>59</sup> Տե՛ս Հասրաթյան Մ., Հայաստանի արտաքուստ շեշտված արքիդով միանավ հուշարձանները, էջ 28:

<sup>60</sup> Տե՛ս Տեր–Մինասյան Ա., Պատմական Սյունիքի վաղ միջնադարյան հուշարձանները, էջ 63–64:

<sup>61</sup> Տե՛ս Մեսրոպ Մազիստրոս արքեպ. Տէր Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի..., էջ 68:

<sup>62</sup> Նույն տեղում:

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>64</sup> Տե՛ս Ստեփանյան Գ., Գորիս, ԴՀՆ (2011–2012 թթ.), տետր № 2, էջ 10:

<sup>65</sup> Մեսրոպ Մազիստրոս արքեպ. Տէր Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի..., էջ 3:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 68:



եկեղեցին, փաստվում է XIX դարավերջի և XX դարասկզբի արխիվային վավերագրերով և գյուղի հնաբնակների վկայություններով: Ասվածը հաստատվում է 1900 թ. գրառված Ս. Գևորգ եկեղեցու՝ մեզ հասած ամենահին չափաբերական մատյանով, որը վերնագրված է. «Հափաբերական մատեան տուեալ ի լուսատրչական Հայոց վիճակային կոնսիստորիայէն թեմին Երեւանայ սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հին Գորիսի յաղագս գրելոյ զԾնեալս, զՊսակեալս և զՆնջեցեալս այնր եկեղեցւոյ վասն 1900 ամի»<sup>67</sup>: Ս. Գևորգ եկեղեցու շարունակական գործունեության մասին են վկայում Հայաստանի ազգային արխիվում պահվող ընդհուպ մինչև 1924 թ. եկեղեցուն վերաբերող չափաբերական մատյանները<sup>68</sup>:

Այժմ համառոտակի անդրադառնանք Ս. Հռիփսիմե եկեղեցու տիպաբանական հարցերին: Հայ եկեղեցական ճարտարապետության մեջ եզակի նմուշ համարվող այս կառույցն իր հորինվածքով իրավամբ համարվում է Հաբանդ գավառի ամենաճոխ հուշարձաններից մեկը: Ինչպես արդեն վերևում նշեցինք, այն Հայաստանի վաղ միջնադարյան միանավ, սրահավոր բազիլիկ եկեղեցիներից է (IV դ., վերակառուցված՝ V դարում), որը նույնատիպ կառուցվածքների համար ունի բնորոշ, բայց և յուրօրինակ ճարտարապետություն: Հուշարձանը կառուցված է տեղական անմշակ, մոխրագույն բազալտից՝ կրաշաղախով: Իր չափերով (27,3 մ երկարությամբ) եկեղեցին զիջում է միայն Արարատ լեռան հյուսիսարևմտյան լանջերին գտնվող Յուլակերտի հուշարձանին: Լայնությունը կողային խորշերի հետ հաշված հարաբերում է երկարությանն ինչպես 1:2,8, իսկ առանց խորշերի՝ 1:5: Կառույցի մուտքերը երկուսն են՝ արևմուտքից ու հարավից: Եկեղեցու հարավային պատին երկու կողմերում պահպանվել է քարե բարձակներով հնագույն մուտքը (այժմ փակված), նման Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկայի մուտքերին: Աղոթարահը ձգված է արևելքից արևմուտք: XVII դ. հիմնովին վերակառուցված եկեղեցին, սակայն, պահպանել է իր նախնական հորինվածքը՝ ուղղանկյուն դահլիճն արևելքից արտաքուստ և ներքուստ ավարտվում է կիսաշրջանաձև խորանով: Եկեղեցին ունի կառուցողական հին և համեմատաբար նոր հատկանիշներ: Եկեղեցու ներսում կան շատ խաչքարեր: Դրանց մի մասը, ըստ սովորության, ամրացված է եղել պատերի մեջ: Պատերի շարվածքում օգտագործված են նաև IV–V դդ. հայ ճարտարապետությանը բնորոշ կառույցի հարդարանքի բեկորներ (ատամնավոր քիվ և այլն)<sup>69</sup>: Մուրադ Հասրաթյանը կառույցի հատակագծային, ծավալատարածական հորինվածքների ու դեկորատիվ հարդարանքի համեմատական վերլուծության հիման վրա եզրակացրել է, որ «Իր այս առանձնահատկությունների, ինչպես նաև հնաոճ մանրամասների հետևանքով Վերիշենի եկեղեցին նույնպես պետք է համարել IV դ. հուշարձան»<sup>70</sup>:

<sup>67</sup> ՀԱԱ, ֆ. 47, ց. 5, գ. 256, թ. 1:

<sup>68</sup> Տես ՀԱԱ, ֆ. 47, ց. 5, գ. 264, տես նաև ֆ. 47, ց. 7, գ. 429, գ. 434, գ. 438, գ. 442, գ. 446:

<sup>69</sup> Տես Հասրաթյան Մ., Հայաստանի արտաքուստ շեշտված արքիդով միանավ հուշարձանները, էջ 28, 40, տես նաև նույնի՝ Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետությունը, էջ 12:

<sup>70</sup> Հասրաթյան Մ., Հայաստանի արտաքուստ շեշտված արքիդով միանավ հուշարձանները, էջ 28:

Այս կապակցությամբ ուշագրավ է նաև եկեղեցու ոճական ու տիպաբանական առանձնահատկություններն ուսումնասիրած ՊՀՊԿ-ի՝ 1946 թ.-ի օգոստոսին Գորիս կազմակերպած գիտարշավի ղեկավար Գ. Սարգսյանի եզրահանգումը. «Հուշարձանի հիմնապատերն ավելի հին են, քան վերին մասերը, նկատվում է, որ այստեղ եղել է մի հին եկեղեցի, որն ավերվել է, և նրա մնացորդների վրա XVII դարում շինված է ներկա եկեղեցին: Հին մասի բեկորները բնորոշ են VII դարի համար: Պատերի մեջ գործադրված են քառակողմ կոթողի բեկորներ, որոնք հատուկ են V— VII դարերին»<sup>71</sup>:

Կառույցի հարավային մուտքը երիզված է անկյունը կտրված քառանկյուն քարե երեսկալով: Արևմտյան մուտքը, հավանաբար, ավելի ուշ վերանորոգման հետևանքով ստացել է երկկենտրոն վերջավորություն: Արևմտյան մուտքին որպես բարավոր է ծառայում երկայնական կողմի վրա դրված խաչքարը, որի հյուսիսային մասում արձանագրված է.

«ԹՎ.: ԶԾԸ (1509): ՍԱՀԱԿ ԷՐԷՑ ԿԱՆՎԱՆԵՅ /Ի ԶԻԱՂՉՍ Ի ՓՐԿԱՆԻ/  
ԹԻ ՀՈԳԱՆՅ/ՀԱԻՐՆ ԻՄՈՅ ՄԱԹԱՆՍ ԲԱՀԱՆԱՆԱՅԻ ԵԻ/ԸԷՏԻՄԱ-  
ՆԻՆ. ՅԻՇԵՑԷՔ Ի ԲՍ»<sup>72</sup>:



Հին Գորիս-Վերին Շենի Ս Գրիգորիս (Հռիփսիմե)  
միանավ բազիլիկ եկեղեցի (IV դ.)

<sup>71</sup> ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1457, թ. 25:




<sup>72</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 76:



Հին Գորիս-Վերին Շեն գյուղի Ս. Գևորգ (Ն(ա)որակնունք) եկեղեցի

մոտ, պատին հենած խաչքարերից մեկը թվագրվում է 1550 թ.–ին<sup>73</sup>:

Ամփոփենք. քննության արդյունքները բավական լույս են սփռում խնդրո առարկա հարցի վրա, ուստի տարակույս չի մնում, որ Գորայք–Գորիսում (Հին Գորիս, Վերին Շեն) IV դարում հիմնադրված եկեղեցու սկզբնական անվանումը եղել է Ս. Գրիգորիս, ինչպես որ արձանագրված է Բարսեղ, Սարգիս և Հովհաննես գրիչների հիշատակարաններում: 1678 թ.–ից հետո ընկած ժամանակահատվածում եկեղեցին վերածվել և ստացել է նոր անուն՝ Ս. Հռիփսիմ: Եկեղեցին ընդհուպ մինչև XVII դ. վերջերը եղել է Ձագեծորի հովտի գրչության արգասավոր կենտրոններից մեկը: Եկեղեցին ներկայումս կանգուն է, բայց քայքայված վիճակում:



«Կորես» գյուղում Հովհաննես գրչի ընդօրինակած «Աւեպարան»-ի (1678 թ.) կազմի Ա փեղկը և հիշատակարանը (265ա–266բ): ՄՄ, ձեռ. Հ<sup>ր</sup> 2539:

<sup>73</sup> Տնն ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1426, թ. 26:

<sup>74</sup> Տնն Մեծիլույան Վ., Վերիշենի պատմությունը, էջ 58:

<sup>75</sup> Տնն Ստեփանյան Գ., Գորիս, ԴՀՆ (2011–2012 թթ.), տետր № 2, էջ 11:

## К ВОПРОСУ ДИСЛОКАЦИИ ЦЕРКВИ СБ. ГРИГОРИСА АБАНД–ДЗАГЕДЗОР ГАВАРА

ГЕВОРГ СТЕПАНЯН

Цель статьи: на основе различных источников выявить место расположения монастыря Св. Григориса.

В статье использованы методы сопоставления фактов, исторического анализа и историко–сравнительного анализа. В исторической литературе есть большое количество ответов по данному вопросу, хотя не было специального исследования этого памятника раннего Средневековья – в начальной стадии об обстоятельстве помазания Св. Рипсиме.

В начальных сопоставительных источниках обоснована истина, что раньше он назывался именем Св. Григориса. Исторической литературе есть большое количество основанная в 4 веке церковь в Горайк–Горисе (Старый Горис, Верин Шен) изначально носила имя Св. Григориса, что зафиксировано в летописях историографов Барсега, Саркиса и Ованеса. После 1678 года храм был освящен и получил новое имя Св. Рипсиме. Вплоть до конца 17 века эта церковь была одним из самых активных центров письменности в долине Дзагедзор, где были созданы копии многочисленных рукописей, часть из которых ныне хранятся в Матенадаране им. Маштоца. До сих пор церковь продолжает оставаться в полуразрушенном состоянии.

**Ключевые слова:** Сюник, Абанд, Варакни или долина Дзагедзора, Горайк–Горес–Горис, Св. Рипсиме, Св. Григорис, священник Оганнес, Библия.

## THE QUESTION OF THE LOCATION OF ST. GRIGORIS CHURCH OF HABAND–ZDAGEDZOR PROVINCE

GEVORG STEPANYAN

The purpose of this article is to examine the question of the location of St. Grigoris church based on various sources.

The paper is based on a combined examination of the facts, using the principals of historical as well as historical–comparative analysis and the reliability and the validity of these sources which have duly been studied thoroughly.

By combining the actual facts, it is obvious that the church, situated in the valley of Old Goris (named Yeri–upper Shen, the ancient Gorayq–Gores–Goris (Kyores) village, is the same church presently named St. Hripsime, built in the IX century, which is rightfully considered one of the important architectural monuments of Syunik.

Although numerous references have been made in historical literature regarding the typological issues of this church, however, no separate examination has been carried out as to the consecration of this early medieval church.

By combining all the relative sources in the article, it has been proved that the church called St. Hripsime was previously called St. Grigoris.

**Key words:** *Syuniq, Haband, Vararakni or Dzagedzor vally, Gorayq–Goris, St. Hripsime, St. Grigoris, Barsegh Pastor, HovhannesPriest, Bible, Memoir–commentary.*

## ՌՈՍՏՈՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածը ներկայացվել է 05.09.2020 թ., գրախոսվել է 10.10.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Սույն հոդվածի խնդրո առարկան ուսումնասիրության չի արժանացել, ինչն ինքնին հասարակում է հոդվածի **արդիականությունը**: Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել Ռոստոմի Թումանյանի գեղարվեստական կերպարի և իրականության կապը: Մեր **խնդիրն** է բացահայտել Ռոստոմի կերպարի միտումնավոր գեղարվեստականացումը Բակունցի ապրած ժամանակի գաղափարախոսական լույսի ներքո: Հոդվածում կիրառել ենք **պատմական** և **հերմենևտիկայի** մեթոդները: Հոդվածի **գիտական նորույթը** իրական Ռոստոմի և Բակունցի կերպած չարագործ կուլակի գեղարվեստական կերպարի հակասության բացահայտումն է:

**Հիմնաբառեր**<sup>1</sup> Մարցի կալվածք անտառապահ, անտառը թալանող վաշխառուներ, շահերի բախում և հակակրանք, ժողովրդական զրույցներ, կոլեկտիվացման ժամանակաշրջան, կուլակի կերպար:

Ռոստոմի գեղարվեստական կերպարի բակունցյան առաջին անդրադարձը «Օձի բերանից» վերնագրված ակնարկն է, որ տպագրվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1928 թ. հուլիսի 22–ի թիվ 170 համարում: Երկու տարի անց՝ 1930 թ.–ին, «Կարմիր արև» դասագրքում Բակունցը կրկին տպագրել է այս ակնարկը, սակայն որոշ խմբագրումներ ու կրճատումներ կատարելով: Ինչպես նկատել է Ռ. Իշխանյանը, «դասագրքում եղած փոփոխումները գեղարվեստական արժեք չունեն, այլ մանկավարժական նկատառումներով արված կրճատումներ, լրացումներ և փոփոխումներ են»<sup>76</sup>:

Ռ. Իշխանյանը գրում է, որ «Վանքապատկան հողերին վերաբերող՝ այս ակնարկում արձարծված խնդիրը նյութ է դարձել Բակունցի բեմագրով 1930 թ. հան-

<sup>76</sup> Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հտ. 2, Ե., 1979, էջ 687:

ված «Ան թևի տակ» (նախապես՝ «Ազդանշան ջրվեժի մոտ») շարժանկարի համար (բեմադրող՝ Պ. Բարխուդարյան, նկարահանող՝ Ա. Ստանկե)»<sup>77</sup>: Սակայն Ակսել Բակունցի երկերի՝ Ռ. Իշխանյանի աշխատասիրությամբ կազմված գիտական հրատարակության քառահատորում այն տեղ չի գտել:

Փաստորեն՝ Ռոստոմի կերպարի երկրորդ անդրադարձը վեց մասից կազմված կինոսցենարն է, որ մինչև վերջերս անտիպ էր, և որը 2009 թ.-ին տպագրել է Դավիթ Գասպարյանը «Խաչի ստրուկները» վերնագրով<sup>78</sup>:

Մինչ նշված երկերի մեկնաբանությանն անցնելը հարկ է փաստել, որ դրանք գրելու տարիներին՝ 1926–1931 թթ.-ին, Ա. Բակունցն աշխատել է Խորհրդային Հայաստանի հողժողկոմատի հողվարչության պետի տեղակալի պաշտոնում, որը կուսակցական պաշտոն էր: 1927 թ.-ի դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարում որոշում ընդունվեց գյուղատնտեսության մեջ իրականացնելու կոլեկտիվացում: 1928 թ.-ին սկսվեց կոլեկտիվացման գործընթացը, որին ակտիվորեն ներքաշվեցին ջրավորները, իսկ կուլակները շարունակում էին մենատնտեսություն վարել: Բակունցը, լինելով կուսակցական պաշտոնյա, տուրք է տվել իր ժամանակի գաղափարախոսությանը. դա արտահայտվել է նաև հետագայում նրա հարցաքննության մեջ տրված ցուցմունքում. «Կոլեկտիվացման հարցի կապակցությամբ ես հիշում եմ այն փաստը, որ Չարենցը գնացել էր ՀԿ/բ/Կ Կենտկոմի նախկին քարտուղար ընկ. Կոստանյանի մոտ և խիստ վրդովվել է Հայաստանում անցկացվող կոլեկտիվացումից, ասելով, որ կուսակցությունը Հայաստանում կիրառում է մոսկովյան օրինակներ, կործանում է գյուղական աշխատասեր տնտեսությունները և գյուղացիներին հասցնում սովամահության: Իմ հայացքներն այդ ժամանակ մոտ էին աջերի դիրքերին»<sup>79</sup>:

Այս գաղափարական մթնոլորտում Բակունցը ստեղծել է չարագործ կուլակի գրական կերպար՝ հանիրավի անտեսելով Ռոստոմի՝ Ամենայն հայոց բանաստեղծի եղբայրը լինելու հանգամանքը:

«Օձի բերանից» ակնարկում անդրադարձ է եղել Մարցի վանքապատկան կավածքին, որի կառավարիչները ներկայացվում են որպես դաժան կուլակներ: «Աղա Դարչո, Մարտիրոս, կուրթանեցի Տիգրան, Շահ Աբասով, Ռոստոմ,— ահա Մոսկոբի գյուղերում թագավորած դինաստիան: Սրանցից ամեն մեկը տարբեր ձևով էր գջլում, մեկը մյուսին գերազանցում էր շահատակության, ծեծի ու բանտարկության չափի մեջ: Բոլորն էլ ծեծել են, քիթ ու պռունգ ջարդել, անհնազանդ շինականին սոված, ծարավ գոմում պահել»,— գրում է Բակունցը<sup>80</sup>: Ապա շարունակում է ակնարկը՝ հատկապես վատ ներկայացնելով Ռոստոմի կերպարը. «Ռոստոմի տիրապետության օրոք մահակը վերացավ և նրան փոխարինեց պլստուն կազակներից վերցրած պլետը, որով ծեծում էին մարմնի բաց մասերին՝ թիկունքին, ուսերին, ոտ-

<sup>77</sup> Անդ, էջ 689:

<sup>78</sup> Տե՛ս Գասպարյան Դ., Ակսել Բակունց, Երևան, 2009, էջ 347–377:

<sup>79</sup> Անդ, էջ 209:

<sup>80</sup> Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հտ. 2, Երևան, 1979, էջ 435:

քերին: Ռոստոմը, որ դինաստիայի վերջին ներկայացուցիչը եղավ, «հանցավորին» կապել էր տալիս սյունին և ծեծում այնքան, մինչև պլետի կոթը ցավեցներ իր ձեռքը, որից հետո պլետը հանձնում էր իր շքախմբից որևէ մեկին»<sup>81</sup>:

Ռաֆայել Իշխանյանն այս ակնարկի ծանոթագրության մեջ գրում է. «Վանքապատկան հողերի հիշատակված կառավարիչները՝ Աղա Դարչո, Մարտիրոս, կուրթանեցի Տիգրան, Շահ-Աբասով, Ռոստոմ, իրական անձինք են: Վերջինը Հովհ. Թումանյանի եղբայրն է՝ Ռոստոմ Թումանյանը (1872–1915 թթ.): Մենք զրուցել ենք Ռոստոմի դստեր՝ Վարսենիկ Թումանյանի հետ: Նա Բակունցի ակնարկում իր հոր մասին գրվածի դեմ մի շարք լուրջ առարկություններ էր անում: Հովհաննես Թումանյանը գյուղում ապրող իր եղբայրների բաժանության առթիվ 1908 թ. Տփղիսից Դսեղ գրել է նամակ, որի մեջ կան Ռոստոմին վերաբերվող բնութագրումներ. դրանցից որոշ պատկերացում կարելի է կազմել Ռոստոմի բնավորության այնպիսի գծերի մասին, որպիսիք, համապատասխան պայմաններում (վերատեսչի պաշտոն և այլն) զարգանալով, կարող էին մոտենալ ակնարկում նկարագրված Ռոստոմի հատկանիշներին. թեև հիմք կա մտածելու, որ այդ հատկանիշները ակնարկում չափազանցված են»<sup>82</sup>:

Հարկ է փաստել, որ Բակունցն անձամբ է այցելել Մարց գյուղ. այս գյուղի պատմության հեղինակ Ռ. Ափիցարյանը գրում է. «Բակունցի «Օձի բերանից» ակնարկի «Չատի բիծան Սև Արզումանի տղա Խաչատուրն է, որի տանն էլ հյուրընկալվել է Ակսել Բակունցը»<sup>83</sup>:

Թեև Բակունցին ևս անհավատալի են թվացել Չատի բիծու պատմածները, սակայն իր կուսակցական ու պաշտոնական դիրքերից ելնելով՝ գրել է այս ակնարկը՝ ի ցույց դնելով հողը գյուղացուն հանձնելու, նաև կոլեկտիվացման արդարացիությունը. «Չատի բիծու պատմածից շատ բան ինձ անհավատալի էր, միամիտ առասպել վաղուց անցած այն ժամանակներից, երբ սպիտակ պախրաները լումնյակ գիշերներին խոտ պոկելով, իրար պոզահարելով անցնում էին այն անտառներով ու ձորերով, ուր հիմա շեն ու բարեկեցիկ գյուղեր կան ու ձորի միջով էլ օձապտույտ կեռամաններով վագոններն են անցնում, որպես ուլունքի շարան»<sup>84</sup>: Բակունցի նպատակն այստեղ ևս բացահայտ է. մերժել հինը՝ փառաբանելով խորհրդային ժամանակները:

Այս նկատառումով էլ Բակունցը խտացրել է գույները՝ ի դեմս Ռոստոմի ստեղծելով դաժան մարդու կերպար. «Եթե մեկը դաժան է, նրա մասին ասում են, որ «Ռոստոմ մարդ» է»<sup>85</sup>: Այդ չափազանցությունը այնքան է սրված, որ Ռոստոմն ու նրա շրջապատի մարդիկ ներկայացվում են անգամ որպես մարդասպաններ. «Ռոստոմի ժամանակ նրան հետևող ձիավորներից ամեն մինը մի պրիստավի ուժ

<sup>81</sup> Անդ:

<sup>82</sup> Անդ, էջ 688:

<sup>83</sup> Ափիցարյան Ռ., Մարց, Երևան, 2015, էջ 63–64:

<sup>84</sup> Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հտ. 2, էջ 433:

<sup>85</sup> Անդ, էջ 437:



և իշխանություն ուներ, որովհետև կարողանում էր ծեծել ում ցանկանար, բանտարկել և նույնիսկ սպանել»<sup>86</sup>:

Սա պարզապես ծայրահեղ սուտ է: Իրականում Ռոստոմի նախորդ կառավարչի՝ Սարգիս Սահակյանի, հետագայում նաև Ռոստոմի դեմ հարուցվել են քրեական տարբեր գործեր, կատարվել են քննություններ: Եթե Սարգիս Սահակյանի նկատմամբ հարուցված գործում հայտնաբերվել է պակասորդ, որի համար վերջինս դատապարտվել է, ապա Ռոստոմն այս ընթացքում եղել է կառավարչի օգնական և արդարացվել է: Հետագայում՝ կառավարիչ եղած ժամանակ, Ռոստոմը մի քանի անգամ ևս արդարացվել է: Հիշյալ քրեական գործերի նյութերը պահպանվում են ՀՀ ազգային արխիվում<sup>87</sup>:

Ապա շարունակության մեջ Ակսել Բակունցը գրում է. «Անմարդի խոսք չի լինի՝ կնանոց ոտնաշորն էլ էին տանում... Էնքան անիրավ էին: Տախտակը ծակել էին, մեր վիզը գցել, մեր գլխին էլ պոպոք կոտրում...»<sup>88</sup>:

Ակսել Բակունցի ակնարկի գաղափարական հարցադրումների դիրքերից լիովին ընկալելի է այն, որ հեղինակը սկսում է Մարցի առաջին կառավարիչ Դարչոյից, որի անունը կապվում է վանքի տան կառուցման հետ, ապա անցնում է Մարտիրոսին՝ վերջինիս անվանելով «կիսախելագար մի մարդ», որ ամենից «շատ սիրում էր իր շներին, որոնք բոլորն էլ մի գույնի և մի բոյի էին»<sup>89</sup>: Ուշագրավ է նաև մյուս կառավարչի՝ Կուրթանեցի Տիգրանի կերպարը, որ հայտնի է «հոգեբաժին» հարկը կրկնապատկելով և Մարցում խանութ բացելով:

Իրականում 1901 թ.-ին Մարցի կալվածքի կառավարիչ է եղել Հովհաննես Շահբազյանը, որին գյուղացիներն անվանել են «Շահ-Աբաս», սրան 1904 թ.-ին հաջորդել է Հովհաննես քահանա Վերանյանը, ապա 1907 թ.-ին՝ Սարգիս Սահակյանը, որին էլ 1909 թ.-ին հաջորդել է Ռոստոմ Թումանյանը: Սակայն Բակունցը չգիտի ո՞չ Հովհաննես Վերանյանի, ո՞չ Սարգիս Սահակյանի՝ Մարցի վանքապատկան կալվածքի կառավարիչ լինելու մասին: Ըստ ակնարկի՝ Շահ-Աբաս անվանված կառավարչի «օրը կարճ է տևում, որպես դաժան դև հանկարծ հայտնվում է Ռոստոմը, որ մինչ այդ աղքատ անտառապահ էր, ուներ լղար մի ձի և ժանգոտ թվանք: Նա մոռացնել է տալիս բոլորին և հասցնում այն վիճակին, որ Մարց գյուղում երանի տալով են սկսում մտաբերել Դարչոյին ու Մարտիրոսին և կասկածում, թե չլինի՞ ծնվել է Նեռը, և աշխարհը հասել է իր վախճանին»<sup>90</sup>: Բակունցը քիչ անց գրում է. «Նա միանգամից իրեն բաց չթողեց: Ասպարեզ մտավ իբր բարեսիրտ, նագով քայլեց, շատ կամաց, որ հետո ոստյուն անի և ճանկերը խոր խրի»<sup>91</sup>:

<sup>86</sup> Անդ:

<sup>87</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 3235, նաև ֆ. 53, ց. 1, գ. 2487, նաև ֆ. 53, ց.1, գ. 2512, նաև ֆ. 56, ց. 18, գ. 834, նաև ֆ. 56, ց. 18, գ. 1047:

<sup>88</sup> Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հտ. 2, էջ 438:

<sup>89</sup> Անդ, էջ 440:

<sup>90</sup> Անդ, էջ 441:

<sup>91</sup> Անդ, էջ 442:

Ռոստոմը ներկայացվում է որպես ընչաքաղց ու նյութապաշտ մարդ, որ եթե մեկի մոտ «մի լավ բան տեսներ, խլում էր...»<sup>92</sup>: Սա դեռ քիչ է, Ռոստոմին ներկայացնում է նաև որպես անբարոյականի. «Ռոստոմն անում է այն, ինչ մինչ այդ ոչ ոք չի արել: Գյուղի սիրուն հարսն էլ նրա աչքին դառնում է գեր ոչխար, որ միայն իր հոտին է սազական: Եվ եթե նրան չէր հաջողվում ուզածն անել, տուգանք էր գրում, միևնույն ժամանակ իմաց տալիս, որ եթե կնոջն ուղարկի իրեն մոտ, կարող է տուգանքը ջնջել»<sup>93</sup>:

Սա պարզապես անհնար է պատկերացնել նահապետական բարքերով ապրող հայ գյուղաշխարհում: Այս զրուցապատումը Ռոստոմի սպանությունից շատ տարիներ հետո լայն տարածում գտած սուտ է, որը Չատի բիծան պատմել է Բակունցին: Անհավանականը արժանահավատ դարձնելու նպատակով Չատի բիծան շարունակում է. «Մի անգամ աչքն ընկնում է մեկի կնոջ: Հետևում է, և այն ընկնում, երբ միամիտ կինն աղբյուրն է գնում, թաքստոցից դուրս է թռչում, փորձում է նրան բռնել: Սարսափահար կինը փախչում է: Հենց նույն օրն էլ Ռոստոմն իմաց է տալիս այդ կնոջ ամուսնուն, որ պրիստավին արդեն մատնել է նրանից գանձվելիք տուգանքի մասին: Մարդ են մեջ գցում և միայն նրա միակ կովն առնելուց հետո Ռոստոմը համաձայնվում է տուգանքը զիջել: Իսկ կովին կոչում է նրա կնոջ անունով»<sup>94</sup>:

Ասվածն անմարդկային մի արարք է, որ առավել քան անհավանական է, ավելին՝ հարիր չէ Տեր Թադևոսի կողմից քրիստոնեական դաստիարակություն ստացած մարդուն, որ մեծացել է Հովհաննես Թումանյանի հետ:

Շարունակության մեջ Բակունցը պատմում է, որ Ռոստոմի հրամանով անտառապահը գիշերով այցելում է աղքատ գյուղացու տուն, և «երեխաները տեսնում են, թե ինչպես յափունջավոր մի մարդ մոր թևից բռնած դուրս տարավ»<sup>95</sup>:

Իսկ Չատի բիծան ավելացնում է. «Նրան գերի էին տարել, որ առավոտը մարդը գնար վանքի տունը...»<sup>96</sup>:

Այս խոսքից անմիջապես հետո Բակունցը գրում է. «Երկու շաբաթ չանցած անտառի ճանապարհին երեք անգամ կրակում են: Եվ անտառապահները գյուղից դուրս կվազեին կրակոցի վրա, գետի մյուս ափին, անտառի միջից վրնջավով դուրս է փախչում սպիտակ ձին՝ Ռոստոմի արնոտ դիակը թամքից կախ ընկած, մի ոտքն ասպանդակի մեջ»<sup>97</sup>:

Ակնարկում Ռոստոմի սպանության հանգամանքները մնում են անորոշ. «Համարյա չիմացանք, թե ով սպանեց նրան: Երեք հոգի են եղել, ձյունի վրա ոտնատեղերը տեսանք... Ծառի տակ փոս էին արել, նստել... Ծատ էլ պապիրոս էին քաշել.

---

<sup>92</sup> Անդ:  
<sup>93</sup> Անդ, էջ 442–443:  
<sup>94</sup> Անդ, էջ 443:  
<sup>95</sup> Անդ, էջ 445:  
<sup>96</sup> Անդ:  
<sup>97</sup> Անդ:

մենակ էն, որ տունը քարափի գլխին էր... Եփրեմ էր անունը... երեքից մինը նա էր... էն երկուսը մինչի օրս էլ չիմացվեց: Հենց դրանով էլ Եփրեմի տունը փչացավ... պատերը մնում են քարափի գլխին... կնիկը գարունքվա դեմ մեռավ. երեխեքն էլ բարեկամները տարան, մեծ տղան հիմա զինվորության մեջ է»<sup>98</sup>:

Ակնարկում խոսվում է նաև Ռոստոմի մարդկանց վրեժխնդրության մասին. «Տանում են պրիստավի մոտ, քննություն են անում, երկուսին էլ ուղարկում են բերդ: Բայց տեղ չեն հասնում... Ռոստոմի մարդիկ վրա են տալիս և երկուսին էլ թրերով մորթում, գլուխը մի ձոր են գցում, թևը՝ մի»<sup>99</sup>:

Ակնարկի վերջում Բակունցը Չատի բիծայի բերանով ներկայացնում է իր բուն ասելիքը. «Ազատությունը որ եկավ, մի գիշերում վանքի տունը ցրիվ տվինք, քարերը ձորը թափինք: Էն օրվանից թավադի հետքն էլ չքացավ, վանքինն էլ...»<sup>100</sup>:

Այս տխրահոջակ ակնարկից հետո Բակունցը գրել է «Խաչի ստրուկները» վերնագրով կինոսցենար, որի հիման վրա Մարց գյուղում կատարվել են շարժանկարի նկարահանումներ:

Շարժանկարի նպատակը ևս ակնհայտ է. այն է՝ ժամանակի ոգուն համահունչ՝ ստեղծել հայ գյուղացուն հարստահարող կուլակի կերպարը: Այս նպատակին հասնելու համար Բակունցը դիմում է համապատասխան միջոցների, որոնք օրերի հեռվից վերարժևորման կարիք ունեն:

Նախ՝ ուշադրություն դարձնենք «Խաչի ստրուկները» խոսուն վերնագրին: Պարզ է, որ խոսքը Մարցի վանքապատկան կալվածքի գյուղացիների ստրկական վիճակի մասին է: Այդ նպատակով էլ Բակունցը ստեղծում է եկեղեցական միջավայրի պատկերը. «Եկեղեցու անդրրի մեջ գեներալը եպիսկոպոսին (կադր 6) հրովարտակ է տալիս: Հրովարտակի հանձնման արարողությունը»<sup>101</sup>: Այս կադրը պատմական նշանակություն ունեցող փաստի վավերագրում է. այսպես՝ 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ 2-րդ ցարի հրամանով վանքապատկան կալվածքները դարձնում են պետական, որը հանդիպում է լուրջ դիմադրության, և ստիպված 1905 թ.-ի օգոստոսի 1-ին ցարը եկեղեցուն է վերադարձնում կալվածքը: Շարժանկարի առաջին մասում եպիսկոպոսն ասում է. «ՄԵՐ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՍՏԱՏԵԼ»<sup>102</sup>, որին հաջորդում է հրովարտակը՝ հարկերի և տուրքերի կանոնադրությունը:

Շարժանկարի երկրորդ մասում հայտնվում է Ռոստոմը՝ որպես եկեղեցական հողերի կառավարիչ, որ նկուղում արգելափակել է տալիս կարգազանց գյուղացի Անդոյին: Այդ պահին Ռոստոմին է մոտենում հեծելապահակը և հայտնում. «ՍՐԲԱ-ՋԱՆԸ ԳԵՏԻ ՄՈՏ Է»<sup>103</sup>: Շարժանկարի սակավ խոսքերից մեկն էլ Անդոյի հոր՝ Դի-

<sup>98</sup> Անդ, էջ 446:

<sup>99</sup> Անդ:

<sup>100</sup> Անդ:

<sup>101</sup> Գասպարյան Դ., Ակսել Բակունց, էջ 348:

<sup>102</sup> Անդ, էջ 350:

<sup>103</sup> Անդ, էջ 355:

լանի՝ սրբազանին ուղղված խոսքն է. «ՈՐԴՈՒՄ՝ ՄԻԱԿ ԿԵՐԱԿՐՈՂԻՆ, ՌՈՍՏՈՍԸ ԲԱՆՏԱՐԿԵԼ Է: ԽՂՃԱ, ՀԱՅՐ, ԾԵՐՈՒԿԻՍ... ԱԶԱՏԻՐ»<sup>104</sup>: Ապա ներկայացնվում է մի տեսարան, ուր Ռոստոմը գլխարկը հանելով վազում է դեպի վանականը, վերջինս մեկնում է ձեռքը, Ռոստոմը համբուրում է, այնուհետև բռնում է ձին, և վանականն իջնում է ձիուց: Ռոստոմը ցույց է տալիս հավաքած բնամերթային հարկերը, իսկ սրբազանն ասում է. «ՍԻՆՈՂԸ ԳՈՂ Է ՔԵԶԱՆԻՑ: ԸՆԴՈՒՆԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀ-ՆԱՆՔԸ»<sup>105</sup>: Ռոստոմը խոնարհ գլուխ է տալիս, և այդ պահին նրա դեմքի արտահայտությունն ասում է. «ԵՍ ՁԵՐ ԾԱՌԱՆ ԵՄ: ՊԱՏՐԱՍ ԵՄ ԱՄԵՆ ԻՆՉԻ: ԱՆՈՒՄ ԵՄ ՈՒԺԵՐԻՍ ՆԵՐԱԾԻՆ ՉԱՓՈՎ»<sup>106</sup>:

Քիչ անց նաև սրբազանը հնչեցնում է Դիլանի խնդրանքի պատասխանը. «ՌՈՍՏՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐԻ ՉԵՍ ԳՏՆԻ: ՆՐԱ՝Ն ԽՆԴՐԻՐ, ԵՍ ԱՅՍՏԵՂ ՀՅՈՒՐ ԵՄ»<sup>107</sup>: Սակայն սցենարի հեղինակն այստեղ մի ակնարկ է անում. Ռոստոմն ակնդետ դիտում է Անդոյի կնոջը՝ Մինային, ապա «Տնտղելով նրան՝ Ռոստոմը մոտենում է պատուհանին»<sup>108</sup> և հրամայում է ազատ արձակել Անդոյին:

Շարժանկարի երրորդ մասում «Խոտին նստած՝ Մինան ծիծ է տալիս երեխային և հաց ուտում»<sup>109</sup>: Ռոստոմը նկատում է նրան և նայում է սևեռուն հայացքով: Մինան գլխաշորով ծածկում է կուրծքը: Ռոստոմը առաջ է գնում, Մինան սարսափած փախչում է: «Նայելով նրա ետևից՝ Ռոստոմը բացականջում է.

18. ՀԻՄԱՐ...»<sup>110</sup>:

Անդոն կռահում է կատարվածը, գոտեմարտ է սկսվում Ռոստոմի ու Անդոյի միջև: Ռոստոմը մտրակով հարվածում է Անդոյին: Հաջորդող տեսարաններում Ռոստոմը խստորեն հարկ է պահանջում նրանցից: Դիլանի խոսքին ի պատասխան, թե ոչինչ չունենք, Ռոստոմն ասում է. «ՈՉԻՆՉ ՉՈՒՆԵՍ: ԳՈՐԳԴ ՏՈՒՐ»<sup>111</sup>: Եվ այս տեսարանն ավարտվում է պատերազմի գույժով:

Չորրորդ մասում Անդոն պատերազմ է գնացել, իսկ Ռոստոմը կրկին փորձում է սիրահետել նրա կնոջը: Այս մասին հեղինակն ակնարկներ է անում. այսպես՝ Մինան այլ կանանց հետ գետի մեջ է, ոտքերը բաց են, Ռոստոմը դիտում է, Դիլանը նկատում է, քար է նետում, որն ընկնում է ջուրը, և հարսը ցնցվելով բարձրացնում է գլուխը, ապա նկատում Ռոստոմին և իջեցնում փեշը:

Մեկ այլ տեսարանում այլ գյուղացուց հարկ վերցնելու առիթով հանդիպում ենք հետևյալ պատկերին. «Ինչպես հալածված ճագար՝ կողովից նայում է աղքատ հագնված ջահել մի կին:

76. Ձեռքից բռնած՝ Ռոստոմը բարձրացնում է նրան:

<sup>104</sup> Անդ, էջ 356:

<sup>105</sup> Անդ:

<sup>106</sup> Անդ, էջ 357:

<sup>107</sup> Անդ:

<sup>108</sup> Անդ:

<sup>109</sup> Անդ, էջ 358:

<sup>110</sup> Անդ, էջ 359:

<sup>111</sup> Անդ, էջ 363:

77. Գյուղացին դռների մոտ ականջ է դնում: Դեմքին՝ տագնապ»<sup>112</sup>:

Սցենարի այդ մասն ավարտվում է այսպես. Ռոստոմը գիշերով թակում է Մինայենց տան դուռը: Պառավը բացում է՝ կարծելով, թե պատերազմում գտնվող Անդոյից նամակ է եկել: Տեսնելով Ռոստոմին՝ հարս ու սկեսուր սարսափում են: Ռոստոմն առաջ է գնում: Պառավը կանգնում է նրա ու հարսի միջև, Ռոստոմը հրում է պառավին, վերջինս ընկնում է: Մինան, կացինը թափահարելով, մոտենում է Ռոստոմին, որը դուրս է գալիս տնից:

Այս մասում Բակունցն ակնհայտորեն տուրք է տվել Մոսկորի գյուղերում տարածված Ռոստոմի բարոյականության վատ համբավին:

Շարժանկարի հինգերորդ մասում հայտնվում է Լենինը, որի մի խոսքը շատ կարևոր է. «ՆՈՂԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ»<sup>113</sup>: Ապա Անդոն ու Ռոստոմը կռվում են, հաջորդ առավոտյան Ռոստոմն անցնում է քերծի տակով, Անդոն դուրս է գալիս, նշան բռնում և հրացանի կրակոցով սպանում Ռոստոմին. Բակունցը գրում է. «123. Պատգարակի վրա տանում են Ռոստոմի դիակը:

124. Կոմիսարի գլխավորությամբ արշավում է դաշնակցականների ջոկատը:

125. Ջոկատի մեջ է Ռոստոմի հեծելապահակը»<sup>114</sup>:

Պարզ է, ժամանակն իր հետքն է թողել այս ստեղծագործության վրա: Ռոստոմը ներկայացվում է իբրև դաշնակցական, որ սովետականացման և կոլեկտիվացման ժամանակներում համարվում էր ժողովրդի թշնամի: Քանդում են նաև վանքապատկան կալվածքը՝ տրորելով ընկած խաչը:

Խորհրդային տարիների գաղափարական ողջ մթնոլորտը՝ հակակեղեցական միտումներով, կուլակաթափությունը, կոլեկտիվացումը, 1920–30–ական թվականների խառնակ ժամանակների օրախնդիր հարցերն էին, որոնց տուրք տալով՝ Բակունցը ստեղծել է չարագործ ու հարստահարող դաշնակցական կուլակ Ռոստոմի կերպարը: Եվ սա այն դեպքում, երբ դաշնակցական լինելը մահացու մեղք էր այդ ժամանակներում, որի մեջ կոմունիստ գրողները մեղադրում էին նաև իրեն՝ Ակսել Բակունցին: Այսպես՝ 1934 թ.–ի հուլիսի 9–ի գրողների միության նիստի ժամանակ Նաիրի Զարյանը «մի քանի անգամ կրկնեց, որ գալով դաշնակցությունից ես մինչև հիմա մնում եմ դաշնակցական,— Նժդեհի համհարզն եմ և այլն,— ինչպես ասում են, լցվեց իմ համբերությունը և բողոքելով այդ ստոր զրպարտության դեմ, ես դիմեցի և՛ նախագահին, և՛ մյուս ընկերներին, խնդրելով ստիպել, որ Նաիրի Զարյանը հետ առնի իր հայտարարությունը: Հենց այդ ժամանակ ի պատասխան իմ վերջին խնդրին, Նաիրի Զարյանը գոռաց. «Այո, դու դաշնակ ես...»<sup>115</sup>: Ինչի համար Բակունցը, ինչպես ինքն է գրում Աղասի Խանջանին և այլոց ուղղված արդարացման նամակում, «կորցնելով և՛ գիտակցություն,

<sup>112</sup> Անդ, էջ 366:

<sup>113</sup> Անդ, էջ 369:

<sup>114</sup> Անդ, էջ 373:

<sup>115</sup> Անդ, էջ 381:

և՛ կամք, և՛ համբերություն»<sup>116</sup>, հարվածել է Նաիրի Զարյանին, ինչն էլ համարում է «կոմունիստին անվայել քայլ»<sup>117</sup>:

Ուշադրություն դարձնենք ևս մի հանգամանքի. 1936 թ.-ի հոկտեմբերի 17-ի ցուցմունքում Բակունցը գրում է. «Ինձ հանձնարարված էր ակնարկ գրել ապարանյան գյուղի մասին: Տեղում ծանոթանալով՝ ես շատ ծանր տպավորություն ստացա ապարանյան գյուղի վիճակից և Երևան վերադառնալուց հետո հրաժարվեցի ակնարկ գրելուց: Բայց այն ժամանակվա «Խորհրդային Հայաստան»-ի խմբագիր Ընծակ Տեր-Վահանյանի պահանջով ես գրեցի ակնարկը, որի տպագրական դրոշմվածքը, նայելու համար, ուղարկվեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի նախկին քարտուղար Խանջյանին»<sup>118</sup>: Նկատենք, որ թեև այս խոսքը վերաբերում է այլ ակնարկի, սակայն մեզ հետաքրքրողն այն է, որ Բակունցի բոլոր ակնարկները, որոնք գրվել են «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրի պատվերով, պետք է բխեին խորհրդային գաղափարախոսությունից, ուստի մինչև տպագրվելը նաև ստուգվել են Կենտկոմի քարտուղարի կողմից:

Անշուշտ, ասվածը վերաբերում է նաև «Օձի բերանից» ակնարկին, թեև չունենք որևէ ապացույց այդ մասին, սակայն վերոհիշյալ ցուցմունքից բերված հատվածն անուղղակիորեն գալիս է հաստատելու մեր այս պնդումը:

Ցավոք, դառնալով իր ահավոր ծանր ժամանակների գերին՝ Ակսել Բակունցը ստվերել է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և նրա եղբոր հեղինակությունը:

Բակունցի ակնարկը գրվել է Մարց գյուղի բնակիչ Չատի բիծու՝ Սև Արզումանի տղա Խաչատուրի հիշողությամբ՝ թալանվող անտառը խստորեն պահպանող կառավարչի մասին ժողովրդականացած զրույցի հիման վրա՝ անտեսելով իրական սուպատմական ճշմարտությունը Ռոստոմ Թումանյանի և Մոտկորի անտառների թալանի մասին: Լեոն իր հիշողություններում վկայում է, որ Հովհաննես Թումանյանը «չէր մոռանում միաժամանակ և խիստ դժգոհություն հայտնել, որ գյուղացիներն անխնա կոտորում են ծառերը և չեն հասկանում, որ առանց անտառների նրանց երկիրը անապատ կդառնա»<sup>119</sup>:

Լեոյի այս հուշը կարևոր տեղեկություն է այն մասին, որ Մարցի անտառները թալանում էին, անտառը կտրում էին նաև գյուղացիները, իսկ դա դուր չէր գալիս Հ. Թումանյանին, որն իր եղբորը նշանակել էր տվել նախ՝ անտառապահ, ապա՝ Մարցի կավածքի կառավարիչ՝ անտառի թալանը կանխելու նպատակով:

Արխիվային և մամուլում տպագրված նյութերի ուսումնասիրությունը Ռոստոմ Թումանյանի մասին մեզ բերել է բոլորովին այլ եզրահանգման, որին պետք է անդրադառնանք առանձին գրքով: Սակայն այստեղ իբրև ավաճի ապացույց՝ բերեմ Ռոստոմին նախորդած կառավարիչ Սարգիս Սահակյանի՝ «Մշակ»-ում տպագրած

<sup>116</sup> Անդ:

<sup>117</sup> Անդ:

<sup>118</sup> Անդ, էջ 249:

<sup>119</sup> Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, հտ. 8, էջ 446:

հողվածից մի հատված. «Պ. Ռոստոմ Թումանեանը երկու տարի շարունակ եղել է իմ օգնականը Մարց կալածքում և ես պետք է ձեռքս սրտիս դրած վկայեմ, որ երբեք չեմ նկատած նրա մէջ ոչ մի այնպիսի բան, որ գոնէ հեռաւոր նմանութիւն ունենար նրա դէմ եղած մեղադրանքներին»<sup>120</sup>:

Նախկին կառավարիչը վկայում է. «Եւ շարունակ եկել են ինձ մօտ գանգատելու Ռոստոմի դէմ թէ մարցեցիք, թէ ուրիշ գիւղացիք, մեղադրելով նրան զանազան յանցանքների մէջ: Ես անուշադիր չէի թողնում թէ գանգատները, թէ ասէ-կոսէները ու միշտ հետեւել եմ ստուգելու համար մեղադրանքների ճշտութիւնը և միշտ եկել եմ այն եզրակացութեան, որ մեղադրանքների մեծ մասը զրպարտութիւն է, իսկ միւս մասը թիւրիմացութիւն»<sup>121</sup>:

**Եզրակացություն.** Ռոստոմի՝ ջանասիրությամբ անտառը պահպանելու ձգտումը հակակրանք էր առաջ բերել ոչ միայն անտառի առևտրով զբաղվող մի քանի վաշխառուների շրջանում, այլև առհասարակ անտառից օգտվող գյուղացիների, ուստի և նրա մասին հյուսվել են ժողովրդական տարատեսակ զրույցներ, որոնցից էլ օգտվել է Բակունցը՝ անտեսելով իրական ճշմարտությունը Ռոստոմ Թումանյանի մասին և կոլեկտիվացման ժամանակաշրջանում խորհրդային իշխանությունների պահանջով հանձին Ռոստոմի կերտելով ժողովրդի թշնամի կուլակի կերպար:

## ОБРАЗ РОСТОМА ТУМАНЯНА В ПРОИЗВЕДЕНИИ АКСЕЛЯ БАКУНЦА

ВАНО ЕГИАЗАРЯН

Ревностное стремление Ростома – брата Ованеса Туманяна – сохранить лес вызывало неприязнь не только со стороны небольшого числа грабителей, промышленлявших торговлей леса, но и в целом со стороны крестьян, использующих лес для своих нужд. В связи с этим о Ростоме Туманяне сложились разнообразные народные предания, ставшие основой произведения А. Бакунца «Из пасти змеи», в котором писатель, подчиняясь требованиям советских властей эпохи коллективизации, в лице Ростома создал образ врага народа – кулака, полностью игнорируя при этом реальные факты.

**Ключевые слова:** поместье Марц, лесничий, расхищающие лес грабители, столкновение интересов и неприязнь, народные предания, эпоха коллективизации, образ кулака.

<sup>120</sup> Հորիզոն, 1914 մարտի 8, թիվ 51:

<sup>121</sup> Անդ:

## ROSTOM TOUMANYAN'S CHARACTER IN AKSEL BAKUNTS' CREATION

VANO YEGHIAZARYAN

Hovhannes Toumanyan's brother Rostom was an ardent forest-protector, a fact which always aroused some antipathy among usurers especially those dealing with wood trade and other peasants of the estate and nearby villages. A series of folk tales and talks were interwoven dedicated to him and his deeds, which later were used by Aksel Bakunts. The writer quite ignoring the real truth about Rostom Toumanyan created an image of a national enemy, 'a hostile kulak'( prosperous peasant) on the Soviet authorities' order.

**Key words:** *estate of Marts, forester, forest – plundering usurers, conflict of interests and antipathy, folk talks, period of collectivization, image of a prosperous peasant.*



**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ»  
ՊԱՏՄՎԱԾՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ**

Հոդվածը ներկայացվել է 01.11.2020 թ., գրախոսվել է 25.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածի նպատակն է բացահայտել Ակսել Բակունցի «Բրուտի տղան» պատմվածքի գեղագիտական ըմբռնումների բազմազանությունը՝ բանահյուսական մշակույթի և ազգագրական ավանդույթների կենցաղավարման տեսանկյունից:

Խնդիրները բխում են հոդվածի նպատակից, իսկ արդիականությունը պայմանավորված է Բակունցի ստեղծագործության նկատմամբ մասնագիտական շրջանակների հետաքրքրության աճով:

Գիտական նորույթը գրական ստեղծագործության վերլուծությունն է՝ բանահյուսական ու ազգագրական մեթոդաբանական դիտարկումով:

Թեև Բակունցի գրական ժառանգությունը մեծածավալ չէ, բայց իր կարծադրական կյանքի ընթացքում նա կարողացել է ստեղծել սոցիալական ու սեռատարիքային ամենատարբեր խմբերի ու մարդկային այլազան խառնվածքների կրողներ: Նրա հերոսները փորձում են հարաբերվել աշխարհի հետ, կողմնորոշվել մշակութային տարածության մեջ, սակայն հասարակական կյանքում ներառվելու, սոցիալական փորձի, գիտելիքների, ինտելեկտի ու վարքի նորմերի յուրացման պակասը հաճախ հանգեցնում է բարդ ու հակասական իրավիճակների, ինչն առավել տեսանելի է «Բրուտի տղան» պատմվածքում:

«Բրուտի տղան» պատմվածքում համանուն կերպարը միօրինակ կերպար չէ. մի դեպքում նա օժտված է էպիկական-հերոսական տարերքով, մի այլ դեպքում՝ անթաքույց երգիծական նրբագծերով, առավել հաճախ՝ քնարական ներհուն զոհ է, բոլորն էլ խիստ բնութագրական՝ հատկապես ժողովրդագիտության տեսանկյունից:

**Հիմնաբառեր՝** Ակսել Բակունց, դիպաշար, հեքիաթ, կերպար, հեղինակ, ժողովածու, նշացանկ, բարբառ:

Ակսել Բակունցի ստեղծագործության գեղագիտական ըմբռնումների ու լեզվաոճական հնարքների բազմազանության մեջ իր ուրույն տեղն ունի ժողովրդագիտությունը՝ բանահյուսական ու ազգագրական ավանդույթների կենսունակությամբ, նահապետական բարքերի՝ գրեթե ծիսայնացած կենցաղավարությամբ, ինչն էլ ակնառու է «Բրուտի տղան» պատմվածքում:

Նրա ստեղծագործական աշխարհում առասպելն ու իրողությունը դեռևս անջատված չեն իրարից և գտնվում են նախնական սինկրետիկ (չտարբերակված) համադրության մեջ: Մի կողմից՝ Հայաստանի անկրկնելի բնությունն է՝ Չանգեզուրի խստաշունչ լեռներն ու քարանձավները, ձորերն ու անտառները, ալպիական մանուշակն ու ոսկեփետուր միրհավը, մյուս կողմից՝ մարդու ստեղծած ձեռակերտ նյութական մշակույթը՝ գինու հնձաններն ու բրուտների արհեստանոցները, հին բերդերի ավերակներն ու սերմնացանի ցելերը:

1920-ական թվականների ձախ գրաքննադատությունը Բակունցի ստեղծագործություններում նշմարել է բնությունը հասարակությանը հակադրելու՝ ինքնանպատակ բնապաշտական միտում<sup>122</sup>:

Իրականում բնությունը մարդկության գոյության բնական պայմանների ամբողջությունն է և մարդը, որպես կենսաբանական էակ, ի վիճակի չէ գոյատևելու առանց բնության: Մարդը յուրացրել, վերափոխել, մշակութայնացրել է բնությունը և իրեն չի զատել նրանից: Պատահական չէ, որ նախահեղափոխական Մթնաձորում աշխարհի մասին պատկերացումները պտտվում են անտառի շուրջը, որն իր բարիքներով սնում է աշխարհից կտրված մարդկանց: Այդ մարդիկ գինի էին պատրաստում և պահում անդուռ քարանձավներում թրծած կարասներում:

Ձախերը Բակունցին եռանդագին մեղադրում էին անցյալի իդեալականացման մեջ<sup>123</sup>: Իրականում Բակունցը նորի ու առաջադեմի ջատագով էր և չէր կարող իդեալներ որոնել քարանձավներում: Հասարակությունը ցնցումների հետևանքով սկսում է փոփոխվել, իսկ մշակույթը չի հասցնում թարմացնել իր նորմերն ու արժեքները<sup>124</sup>:

Այս ամենը բացառիկ դիտողականությամբ է նկարագրել Բակունցը «Բրուտի տղան»<sup>125</sup> պատմվածքում:

Ա. Բակունցին առաջադրված «գաղափարական նահանջի տեսության» մեղադրանքն, իհարկե, որևէ քննադատության չի դիմանում. ճիշտ է, զարգացման հետագա փուլերում մշակույթի աճն ուղեկցվում է մարդու և բնության օրգանական միասնության նվազեցմամբ<sup>126</sup>, բայց ինչպես Բակունցի գրական ժառանգությունը,

<sup>122</sup> Թամրազյան Հ., Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1984, էջ 432: Աղաբաբյան Ս., Ակսել Բակունց, Երևան, 1971, էջ 67–68:

<sup>123</sup> Թամրազյան Հ., նշվ. աշխ., էջ 432:

<sup>124</sup> Кравченко И. А., Культурология, Москва, 2003, с. 112, 117.

<sup>125</sup> Բակունց Ա., Երկեր, Երևան, 1986, էջ էջ 135–143:

<sup>126</sup> Гуревич П., Культурология, Москва, 2001, с. 39.

այնպես էլ տեսական մտքի պատմությունը, հնարավոր չեն համարում մարդու գոյությունը՝ առանց բնական ու մշակութային սերտ համագործակցության<sup>127</sup>:

Հին կյանքի սոցիալ-բարոյական ու քաղաքական արատներից քայքայված հայկական գյուղում սրվում է հնի ու նորի պայքարը: Բակունցի գյուղացի կերպարներն արդեն նախկին դյուրահավատները չեն: Նորը ներխուժում է նրանց կյանք ու կենցաղի, առօրյա շփումների, մտավոր աշխարհի մեջ: Նրանք սկսում են զանց առնել դարերով իրենց պարտադրված կապանքները:

«Բրուտի տղան»<sup>128</sup> պատմվածքում Բակունցը նկարագրում է XIX դարի վերջերին Հայաստանի գյուղերում մեծ չափերի հասած սոցիալ-տնտեսական ծանր կացությունը: Միանալով խռովարարներին՝ բրուտի տղա Անդրոն հեղափոխությունը դիտում է որպես թշվառությունը հաղթահարելու միջոց և նահատակվում է հայրենի հողի ազատագրման համար:

Հակամարտություններն ու պատերազմները նույնպես լինելով մարդու գործունեության արդյունք՝ մշակույթի կործանման պատճառ են դառնում<sup>129</sup>: Խնդրի նման ընկալումը կարող է նպաստել մարդկային համակեցությանը՝ լույս սփռելով ժողովրդի սոցիալ-կենցաղային, հանրային-մշակութային և անգամ քաղաքական կյանքի բազում խնդիրների հաղթահարման վրա, ինչն էլ հումանիստ գրողի ստեղծագործության գաղափարական առաջնահերթությունն էր:

«Մշակույթը, լինելով հասարակական երևույթ, շատ զգայուն է հասարակական փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում տեխնիկական, սոցիալական, քաղաքական բնագավառներում»<sup>130</sup>: Սակայն մշակույթի ու նրա արժեքների գործառնության ձևերը, կապված հասարակության կայունության աստիճանից, կարող են տարբեր լինել:

Իր պատմության վաղ փուլերում մարդն իրեն համարում էր բնության մի մասնիկը<sup>131</sup>: Մարդը բնությունն ընկալում է որպես գեղագիտական, բարոյական իղձերի աղբյուր, որտեղ ծննդավայրի թաղերի, հանդերի, անտառների, ձորերի անունները պայմանավորված են աշխարհագրական միջավայրի ու կլիմայական պայմանների մշակութային առանձնահատկություններով: Մասնագիտական գրականության մեջ ընդունված «աշխարհագրական դետերմինիզմը» տարածվում է Ա. Բակունցի Գյունեյ թաղի, Դրնգանի, Գետերի, Տից քարի, Օրանջիայի, Գայլաբունի, Հումբաթի ձորերի, Դամուրի ավերակ մարագի, Մեծ ապոր բաղի և այլ հոգեհարազատ վայրերի վրա:

Բրուտ Ավագն ու չղախ Եգորը Տից քարի տակի քարանձավների կիսամթում ուռքով պատեցնում են փայտե «չարխի» կլոր տախտակը և դեղին կավից կերտում գավաթ ու կուժ:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 39–40.

<sup>128</sup> Բակունց Ա., Երկեր, Երևան, 1986, էջ 135–143:

<sup>129</sup> Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2001, էջ 56–58:

<sup>130</sup> Մելքումյան Գ., նշվ. աշխ., էջ 58:

<sup>131</sup> Մելքումյան Գ., նշվ. աշխ., էջ 56:

Հայոց մեջ կավագործությունը (խեցեգործություն, բրուտագործություն) հենվում է երկար դարերի փորձի ու հմտության վրա, ինչը հաստատվում է հնագիտական պեղումներով և դաշտային ազգագրական նյութերով՝ գրառված Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններից, այդ թվում նաև՝ Սյունիքից<sup>132</sup>:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ամենահին խեցեգործական իրերը վերաբերում են մ.թ.ա. VII հազարամյակին: Պարզ, անզարդ խեցեղենը լայն կիրառություն ուներ գյուղի ու քաղաքի բնակչության տնտեսության ու կենցաղի մեջ:

Կավե ամանների ու իրերի պատրաստումը գործողությունների մի ամբողջ շղթա է՝ կավի հումքի մշակում (մաքրում, ծեծում–մանրացում, ջրով շաղախում, հունցում, հնեցում), ձեռքերով կամ դուրգով (անիվ, չարխ) ուզած ձևի ստացում, անգորով (կավաջրի սերուցք) պատում, կոկում, թրծում:

«Բրուտի տղան» պատմվածքում Բակունցը անպաճույճ խեցեղեն հիշեցնող անմիջական հայերենով ուրվագծում է տեխնոլոգիական այն պրոցեսը, որի ընթացքում կավը բնական պարզ իրողությունից վերածվում է մշակութային արժեքի:

«Ամենագործաձական և տարածված կավե ամաններից էր կուժը, որը ծառայում էր ջուր փոխադրելու, աղբյուրից, առվից ջուր բերելու, հնձվորներին և առհասարակ հանդավորներին ջուր տանելու և տանը ջուր պահելու նպատակներին»<sup>133</sup>: «Հին ժամանակներից ի վեր Հայաստանը հայտնի էր մի տեսակի կարմրորակ կավով՝ «հայկա» անունով, որին արաբներն ու պարսիկները «թին արմանի» էին ասում»<sup>134</sup> և որի մասին արաբ աշխարհագիր Իբրիսին վկայում է, որ Հայաստանում հատուկ տեսակի կավ էին հանում, որից պատրաստված ջրի շքեղ կժերը մեծ պահանջարկ ունեին և արտահանվում էին Իրաք, Ասորիք, Եգիպտոս<sup>135</sup>: Գինին արտադրում ու պահում էին բրուտների պատրաստած կարասներում<sup>136</sup>: Իսկ «Միրհավում»<sup>137</sup> գինու խաղողը ճզմվում էր Դիլան դայու այգու հնձանում:

Բրուտագործության դարավոր ավանդույթները շարունակվում էին Զանգեզուրի քարանձավներում, որտեղ մարդկանց ոտքերի ու ձիերի սմբակների փորած նեղ արահետով յոթ–ութ տարեկան հեղինակն ու իր ընկեր Անդոն հաց են տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար: Բակունցի ստեղծագործություններում պատմությունը վարելու կոմպոզիցիոն ձևերից հաճախ գործադրվում է հեղինակային պատումը: Բակունցը հրաշալի է նկարագրում, թե ինչպես է բրուտի ոսկրոտ մատների արանքից լարծուն կավը հոսում անընդմեջ, մինչև որ մատները գրկում են կավե սյունը: Չարխը պտտվում է, կավե սյունը ձգվում, բարակում և կավաջրի մեջ թաթախած ձեռքերով բրուտը կերպարանք է տալիս հարափոփոխ զանգվածին: Թռչում են ցեխաջրի շիթերը, և արդեն չարխի վրա ֆոում է կժի նման մի բան: Հայոց մեջ աման-

<sup>132</sup> Саркисян Е. С., Гончарное искусство Армении, Ереван, 1978, с. 6.

<sup>133</sup> Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դդ., Երևան, 1958, էջ 219:

<sup>134</sup> Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հատոր երկրորդ, Ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, 1837, էջ 52:

<sup>135</sup> Марр Н. Я., Ани, Ереван, 1939, с. 237, прим. 165а.

<sup>136</sup> Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 211:

<sup>137</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 72–81:

ների կոպիտ զարդանախշումը դարերի պատմություն ունի: Մինչ Անդոն հացի էր կանչում հարևան բրուտ Եգորին, հեղինակը տեսնում է, թե ինչպես է բրուտ Ավագը հագնում կուժի ունկը, «քարանձավի ճեղքից հանում է հին ոսկորները, որոնցով նրա պապերը դորակների և կժերի վրա գծել են նույն նախշերը: Բրուտը ոսկորի ծայրը սրբում է թևով և գծում ղվ գիտի որպիսի քարանձավաբնակ մարդու խազ»<sup>138</sup>:

«Իսկ չարխը շարունակ դառնում է: Բրուտի աջ ոտքը իջնում է փոսը, բարձրանում, մարմինն օրորվում է: Ապա հանկարծ չրխկում է մի բան, չարխը դանդաղում է, ձեռքերը պոկում են կուժը և բարձր պահում: Այդ բոլորը տևում է մի ակնթարթ:

«— Բարի վայելում,— նույն ակնթարթում ասում է բրուտ Ավագը և քարից բռնելով դուրս գալիս փոսից: Գինի՛ պիտի խմեն այդ կժից, թե աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի և ղվ է այն հարսը, որ մեջքը օրորելով այդ կուժը պիտի կրի,— բոլորին, այդ անհայտ հարսներին և աղջիկներին է ասում բրուտ Ավագը պապեից լսած խոսքը»<sup>139</sup>:

Բրուտներին հաց հասցրած մանուկները տուն են վերադառնում այգիների ճանապարհով: Թթենիների ու ընկուզենիների վրա քար են նետում, ցանկապատերի վրա կախ ընկած մոշն են ուտում, ամեն աղբյուրից ջուր են խմում, ժայռերի սովերոտ կողերին օձեր են տեսնում, քեղի թունավոր թփեր: Անդոն ասում է, որ օձերը իրենց լեղին պատրաստում են քեղի տերևներից:

Հնուց անտի մարդիկ ծանոթ են եղել օձի թույնից պատրաստված դեղամիջոցներին: Հայկական հրաշապատում հեքիաթներում Շահ Մարար օձը որսորդին փոխանցում է մասնագիտական հմտություններ. «Ամեն մի քուր ասում էր, թե էս բանի դեղն են, էնպես, որ ինչ թավուր դեղ ուզենար, կարար շինի»<sup>140</sup>:

Մատենադարանի ձեռագրերում տեղեկություններ կան այն մասին, որ բալասան ծաղիկներին՝ «համասփիտին և նարուզին» հսկում է օձերի թագավոր Շահ Մարարը<sup>141</sup>: Ժողովրդի մեջ կենցաղավարող այս հավատալիքները Անդոն «լրջությամբ և մեծի շեշտով» փոխանցում է իր ընկերներին<sup>142</sup>: Գյուղաշխարհի մանուկները, գրեթե ձուլված շրջակա մշակութային լանդշաֆտին, հավատում են, որ Նեղում՝ Լաստի խոպի կարանից սև ջուր է հոսում, որ այնտեղ ապրում է օձերի թագավորը՝ գոհարապատ թագը գլխին<sup>143</sup>:

Հանս-Յորգ Ութերի (այսուհետ՝ ՀՅՍ) «Միջազգային հեքիաթների տիպերը» նշացանկի 513 Շ, 670, 672 թվահամարներին համապատասխանող հայկական հեքիաթներում<sup>144</sup> Ստորերկրայքը օձերի թագավորությունն է, որտեղ օձ թագավորն ու թագուհին խոսում են մարդկային լեզվով, պատժում են իրենց վնասողներին և վարձահատույց լինում լավության դիմաց:

<sup>138</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 168:

<sup>139</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>140</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. III, Երևան, 1962, էջ 339:

<sup>141</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան ձեռ. № 1495, թ. 152:

<sup>142</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 170:

<sup>143</sup> Նույն տեղում, էջ 170:

<sup>144</sup> Uther H.-J. 2011, The Types of International Folktales. A Classification and Bibliography, I, FF Communications, Helsinki, Academia Scientiarum Fennica, p. 301, 365, 368–369.

Անա զիզին, ձեռքերը ծնկներին խփելով, աղաչում է, որ Նեղում, կարանի մոտ չլողանան.

«— Հանգիզի, հա...մոտիկ տեղ ենք գնում»,— հանգստացնում է Անդոն»<sup>145</sup>:

Ու Նեղը չհասած շորերը հանում են, կոնատակին դրած վազում. «Անդոն քարից գցում է իրեն, օդի մեջ պտոյտ անում և թաղվում փրփուրի ամենախոր տեղը»<sup>146</sup>:

Շատ տպավորիչ է նաև բրուտ Եգորի կերպարը. «Պրոմեթեոս էր նա, բանտարկված բրուտի քարանձավներում, թե՛ մի խեղճ սատիր...»<sup>147</sup>: Թվում է, թե Բակունցը չլախ Եգորի մասին հիշում է հպանցիկ, բայց նրան համեմատելով սպիտակ մառախուղի միջից ելնող ժայռերի ու Պրոմեթեոսի հետ՝ գրողը հասնում է մշակութաբանական խոր ընդհանրացման. «Ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը, խոնավությունից փտած շապիկը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից: Եվ նորից հռնդում է անասնական խրխիհնջով, ցցվում են մազերը, ինչպես տատակի թուփը»<sup>148</sup>:

Պրոմեթեոսին ակնարկելով՝ Բակունցը բրուտի արհեստը կապում է հին հունական առասպելի համանուն հերոսի հետ, որը կանգնած է մշակույթի ակունքներում: Պրոմեթեոսը Օլիմպոսի սրբազան օջախից հափշտակեց կրակը և նվիրաբերեց մարդկանց: Նա մարդկանց սովորեցրեց օգտագործել հնոցը, տիրապետել տարբեր արհեստների, կրակում մետաղներ հալել, գործիքներ, իրեր պատրաստել, բժշկել և բարիդրացիությամբ ապրել: Նա փրկեց մարդկանց՝ չվախենալով, որ իր վրա կուղղվի ամենազոր աստծու՝ Զևսի ցասումը<sup>149</sup>:

Տարբեր լեգենդներ հաղորդում են, թե Պրոմեթեոսը մարդկանց ստեղծել է հողից ու ջրից (հմմտ. բրուտագործության երկու հիմնական բաղադրիչները՝ կավահողը և ջուրը):

Ավելորդ չէ հիշեցնել, որ քուրա և հնոց ունեին ոչ միայն դարբիններն ու ոսկերիչները, այլև բրուտները կամ խեցեգործները. «Ոչ միայն ոսկերչաց մանկանց են քուրայք, այլև խեցեգործաց»<sup>150</sup>:

Ահա աշխարհից կտրված գյուղի առօրյան. Անդոն ուսման վարձը չի վճարել: Նրանց Նարգիզ կովը աղիողորմ բառաչում է. հորթը քարով է ընկել: Կովը լիզում է հորթի՝ խոտով լցրած մորթին և չի զգում անասնական ջերմություն.

«— Անդո՛ր, բա թռչավ կը:

— Թող նանը վերջացնի:

Անա զիզին կթում է բառաչող Նարգիզին, խոսում է նրա հետ, աղաչում, և կովը հանդարտվում է, կարծես հասկանում է նրա լեզուն:

— Նանի՛:

Հեյ՛:

<sup>145</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 170:

<sup>146</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>149</sup> Гуревич П., նշվ. աշխ., էջ 34–35.

<sup>150</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, էջ 520:

— Բա թոշակն ուզում են: Վարժապետն ասել է...

— Նանին քեզ մատաղ, Նարգիզն էլ ցամաքել է, որ կաթը ծախենք: Սպասի, հրես հերդ կժերը կտանի Գետերը»<sup>151</sup>: Աշնանը բրուտները կուժ ու կարաս են տանում Գետերը՝ վաճառելու: Նանին նկատի ունի, որ միգուցե աշնանը կարողանան Անդոյի ուսման վարձը վճարեն: Անա զիզին թարմ հավկիթները դարսել է թաշկինակի մեջ, և Անդոն, հոգնած ոտքերը քարշ տալով, անցնում է հարուստների տների մոտով: Իսկ ձվերը չեն առնում: Մի կին ձվի գինն է հարցնում, և Անդոն կարմրում է՝ նրա մոտ տեսնելով համադասարանցի Մաշոյին, որը հարուստի աղջիկ էր:

— «Ձվերը ծախու չեն,— կտրուկ ասում է Անդոն և գլուխը բարձր պահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր թաղը»<sup>152</sup>:

Անդոն դանակով սպառնացել էր Մաշոյին, որը դասարանում ստորացրել էր սև խոշոր աչքերով, միշտ տխուր ու դեղնած Նուշիկին՝ ասելով, որ նրա աղքատ մայրը լվացքի մի կտոր է գողացել:

Բարու և չարի, արդարության ու պարտքի, պատվի և այլնի մասին հասարակության կողմից ձեռք բերված պատկերացումները, ըստ մասնագիտական գրականության, կարգավորում են հանրույթի վարքը, բնութագրում են սոցիալական երևույթները:

Առավոտյան Անդոն տխուր ասում է, որ ինքն այլևս ուսումնարան չի գնալու: Անա զիզին թախանձում է, ասում է.

«— Անդո, նանին քեզ մատաղ, հրես հերդ կժերը կտանի ...»<sup>153</sup>:

Իսկ Անդոն արդեն հորթարած է և ամպի միջից վազելով՝ ձեռքով է անում, որպեսզի կանգնեցնի այն կառքը, որի մեջ իր մանկության ուսյալ ընկերն է:

«— Անդո՛ր,— և դուրս եմ թոչում կառքից:

Գյուղի երեխաները երբ հրաժեշտ են տալիս, ոչ համբուրում են իրար, ոչ ձեռք են սեղմում: Նրանք նայում են իրար, ինչպես մունջ մարդիկ: Հեռացողը հեռանում է, ով մնում է տեղը, նայում է նրա հետևից, մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը:

Ի դեպ, հրաժեշտի նույնպիսի տեսարան առկա է նաև «Խոնարի աղջիկը»<sup>154</sup> պատմվածքում. «Սպիտակ քարի մոտ, գոգածև ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մեջ տեսա Խոնարիին: Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա... Արտի մեջ կանգնել էր, ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուս և մոլախոտի մի կապ:

Ոչինչ չասացի, հեռացա»<sup>155</sup>:

Կառապանը մեզ բաժանեց:

— Ճանապարհին կուտես,— և Անդոն իր տոպրակից հանում է բոված սիմինդր, որ ամեն առավոտ պատրաստում է Անա զիզին:

<sup>151</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 175:

<sup>152</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>153</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 115–127:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 126:

— Ունեմ, քեզ պահի...

— Չէ, իմը ան,— և գլորվում են անիվները:

Ամպը կախվում է, Անդոն ու մեր հորթերը կորչում են ամպի մեջ: Ձորը լցվում է կաթնագույն ամպերով»<sup>156</sup>:

Այս հրաժեշտը, հարակից նրբերանգներով հանդերձ, զգայական ապրումների այնպիսի մի տեսարան է, որը կարող է մի ողջ ազգագրական ուսումնասիրության նյութ ծառայել, մանավանդ որ սովորության, բարոյական ընկալումները, բախվելով կոպիտ իրականության, փլուզվող գյուղի խնդիրների հետ, ունենում են ողբերգական հետևանքներ:

Մշակույթը մարդու կողմից վերափոխված բնությունն է: Իսկ Անդոն արդեն մշակների հետ քար էր ջարդում, պայթեցնում քարափները նոր առվի համար:

Նա գիշերը քնում էր տախտակների վրա և հսկում մուրճերի, քլունգների կույտը, իսկ ցերեկը քաղաքում՝ քարափի տակ, էլեկտրակայան էր կառուցում: Ներագդելով բնության վրա՝ Անդոն ոչ միայն լույս էր բերում իրենց հեռավոր եզերքը, այլև միանալով խռովարարներին՝ հեղափոխական գաղափարներ էր տարածում քարանձավներում, մասնակցում կյանքի վերափոխմանը:

Երբեմն լույսերը թարթում են երկու-երեք անգամ: Անդոն ազդանշան էր տալիս ընդհատակյա ընկերներին: «Մարդն իր արհեստական, ձեռակերտ աշխարհը ստեղծում է բնության պաշարների օգտագործման շնորհիվ»<sup>157</sup>, և Անդոն, վերափոխելով բնությունը, ճամփա է բացում նոր առվի համար՝ իրեն հաստատելով որպես մշակութային սուբյեկտ՝ «բացահայտելով սեփական բնական պոտենցիալը»<sup>158</sup>:

Բրուտ Ավագի որդին՝ Անա գիզու չար Անդոն, երբեմն քարի տակից հանում էր սուրհանդակի միջոցով ստացած տպագիր առաջին պաստառը, թուղթը մոտեցնում էր կարմիր լամպին. «Խունացած թուղթը արնագույն էր դառնում և սև տառերը պողպատի սառնությամբ ասում էին.

— Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին...»<sup>159</sup>:

«Բրուտի տղան»<sup>160</sup>, ինչպես նաև «Սև ցելերի սերմնացանը»<sup>161</sup> պատմվածքներում կավն ավելին է, քան բնության մեջ գոյություն ունեցող մի նստվածքային ապար: Ինչպես կավի փափկությունը բրուտին հնարավորություն է ընձեռում պատրաստել կոպիտ խեցեգործական իրերից՝ ալյուսից, կղմինդրից մինչև կատարելագործված անոթներ, արձանիկներ, քանդակներ, այնպես էլ Բակունցի ստեղծագործություններում կավը, կիրառական նշանակությունից զատ, ծառայում է որպես գեղարվեստական հնարանք՝ հասնելու արտահայտչականության բազմազանության. «Ես մատնեով տրորում եմ կավը, ամենահին նյութը, որ կա այս տափարակում: Քանի՛ ոտքեր,

<sup>156</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>157</sup> Гуревич П., նշվ. աշխ., էջ 32–33.

<sup>158</sup> Гуревич П., նշվ. աշխ., էջ 33.

<sup>159</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 187:

<sup>160</sup> Նույն տեղում, էջ 165–191:

<sup>161</sup> Նույն տեղում, էջ 244–252:



քանի սմբակներ և անիվներ անցել են այս կավի վրայով, ինչքան է ծեծել ձյունը, և հողմը, և արևը, և անձրևը:

Անմռունչ, հավիտյան համր կավ...

Ահա հեռվում երևում են այգիների գորշ պարիսպները և տների պատերը՝ կառուցված նույն հին կավից: Արևը խանձել է, քամին և անձրևը պոկել են պարիսպների կատարները, մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրածայր:

Նստել են կավե հին պատերն այս ընդարձակ դաշտում, ինչպես չոքած ուղտեր: Նրանցից մեկը ցցել է վիզը, մյուսի միայն սապատն է երևում, երրորդը չոքել է առաջի ոտքերի վրա, կարծես հիմա պիտի իջեցնի և հետին ոտքերը»<sup>162</sup>:

Կավի՝ արևից ճաքած խոր ճեղքերում մի բրդոտ սարդ հյուսել է իր ոստայնը և ամեհի արագությամբ պտույտ է անում ոսկեգույն թելերի վրա՝ անհամբեր փնտրելով որսը: Իսկ նրա զոհը ոչ ավել, ոչ պակաս աղբի գունդը գլորող այն աղբակեր բզեզն է՝ սկարաբեյը, որին եգիպտացիք համարում էին սրբազան, որովհետև հավատում էին, որ նա է գլորում երկնագունդը, ինչպես այս կլոր աղբը<sup>163</sup>:

«Սև ցելերի սերմնացանը» պատմվածքում Բակունցն ընթերցողին փոխանցում է եգիպտացիների տիեզերագիտական պատկերացումները, որոնք, ի դեպ, աղերսվում են հայ առասպելաբանության մեջ Երկրի նեցուկ-հենարանի դերում հանդես եկող երկու կենդանիներին՝ եզին և ձկանը. երկիրը հենված է եզան եղջյուրներին, եզը՝ ձկան մեջքին, ձուկն էլ ծովի վրա<sup>164</sup>:

Ի դեպ, հին Բաբելոնում, էլամների աշխարհում, Միջագետքի խանձված դաշտերում, ամեն տեղ նույն կավն է և սրբազան բզեզները<sup>165</sup>: Միջագետքի (Հին Մեսոպոտամիա) պատմությունը՝ սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մեր թվարկության սկիզբը, ներկայացվում է այդ շրջանի տեքստերով, որոնք սեպագրով գրված են կավե սալիկների վրա<sup>166</sup>:

Գալով մեզ՝ Բակունցը նկատում է. «Իսկ այս դաշտում ինչքան արագ են մահանում պարիսպները, երկաթե անիվները տրորում են բրդոտ սարդերին և արգավանդ կավը ուռճանում է նոր սերմերով»<sup>167</sup>: Բակունցի նկարագրած աշխարհը փոքր է. գյուղը երեք թաղ ունի՝ Հյումբաթի ձոր, Միջին մահլա և Գյունեյ թաղ: Բայց Բրուտի տղա Անդոյի ու սերմնացան Սեթի ընդվզումը ձորի ապահով թաքստոցներից բարձրանում ու խառնվում է մեծ աշխարհի հորձանուտին՝ առաջադրելով հասարակության ու մշակույթի, հետևաբար նաև անհատի «միաժամանակյա համամասնական փոփոխության» պահանջը<sup>168</sup>:

<sup>162</sup> Նույն տեղում, էջ 245:

<sup>163</sup> Նույն տեղում:

<sup>164</sup> **Պետոյան Վ.**, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 342:

<sup>165</sup> **Բակունց Ա.**, նշվ. աշխ., էջ 245:

<sup>166</sup> **Մելքումյան Գ.**, նշվ. աշխ., էջ 91; **И. А. Кравченко**, նշվ. աշխ., էջ 220–221:

<sup>167</sup> Նույն տեղում:

<sup>168</sup> **Մելքումյան Գ.**, նշվ. աշխ., էջ 58:

Հնի ու նորի այդ պայքարը կյանքը վերափոխելու մշակութային հայտ է, որի իրագործման ճանապարհին նահատակվում են գյուղի ազնիվ տղաները՝ չարածճի խռովարար Անդոն և ամենալավ սերմնացան Սեթը: Սեթի մայրը՝ Երանը, «ոչ տղայի դիակը տեսավ, ոչ թաղումը»: Երբ նրան հայտնում են, որ ահա բերում են, նա ճիչով դուրս է վազում, բայց մինչև շեմքը չի հասնում... Չորս օր մնում է ուշաթափ»<sup>169</sup>:

Անդոն ու Սեթը զոհվում են իրենց Գունեյ թաղի, իրենց հայրենի հողը թշվառությունից ազատագրելու համար: Այն հողի համար, որի ձորի ժայռերը, մութ քարայրները, նեղ արահետները ոչ ոք իրենցից լավ չգիտեր. «Փողոցի մեջտեղը շնչահեղձ պառկել էր Անա զիզին և լիզում էր որդու տաք արյան առաջին շիթը... Լիզում էր հողը, արյունը, երեսը քսում էր գետնին և չանգոռոտում անմոռնչ գետինը»<sup>170</sup>:

«Կարմիր հեծելագորը քաղաք մտավ կամուրջի կողմից... Հրացանների վրա նրանք բերում էին Անդոյի արյունոտ մարմինը»<sup>171</sup>:

Անդոն ու Սեթը, Կարլ Յունգի խոսքերով ասած, «վտանգից փախչող հայտնի խոհեմները չեն»<sup>172</sup>, նրանք ըմբոստ մշակութային կերպարներ են և գիտեն, որ «վտանգից փախչողը զրկվում է այն բարիքից, ինչը հնարավոր չէ ձեռք բերել առանց խիզախության ու ռիսկի»<sup>173</sup>:

Նույնպիսի մշակութային հերոս էր Ակսել Բակունցը:

Նրա գրական կյանքը սկսվեց հեքիաթի նման: Երբ 1926 թվականի մարտին Գորիսից Երևան եկած գյուղատնտեսը մտավ մայրաքաղաք, արդեն ճանաչված գրող էր. «Նրա գրական դիրքը բարձր էր, տեղն արդեն՝ Չարենցի կողքին»<sup>174</sup>: 1937-ին Ակսել Բակունցի կյանքն ավարտվեց դարձյալ Չարենցի կողքին, բայց ոչ հեքիաթի նման:

## НАРОДОВЕДЧЕСКИЕ И КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ РАССКАЗА АКСЕЛА БАКУНЦА «СЫН ГОНЧАРА»

ТАМАР АЙРАПЕТЯН

Цель статьи раскрыть многогранность художественного восприятия фольклорной культуры и этнографических традиций с точки зрения их бытования в рассказе Аксела Бакунца «Сын гончара».

<sup>169</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 247:

<sup>170</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 189–190:

<sup>171</sup> Նույն տեղում, էջ 190:

<sup>172</sup> Юнг К., Архетип и символ, Москва, 1991, с. 109–110.

<sup>173</sup> Նույն տեղում:

<sup>174</sup> Թամրազյան Հ., նշվ. աշխ., էջ 429:

Задачи исходят из цели статьи. Актуальность статьи обусловлена растущим интересом со стороны профессиональных кругов в отношении произведений Бакунца.

Научная новизна проявляется в том, что произведение Бакунца было проанализировано в ракурсе фольклорной и этнографической методологии.

Хотя литературное наследие Бакунца невелико, однако за свою короткую жизнь он сумел создать уникальных персонажей, с различными мировоззрениями, представителей разных социальных групп и характеристик.

Его герои пытаются соотноситься с миром, ориентироваться в культурном пространстве, но недостаток социального опыта, знаний, интеграционных и поведенческих норм часто приводит к сложной и противоречивой ситуации, что ярко продемонстрировано в рассказе «Сын гончара».

«Сын гончара» не является простым персонажем: в одном случае он наделен элементами эпического героя, в другом случае, очевидны сатирические тона, но чаще всего он является лирической жертвой. Все эти проявления весьма характерны для него, особенно с точки зрения фольклорного и этнографического восприятия.

**Ключевые слова:** Бакунц, сюжет, сказка, персонаж, автор, сборник, тип сказки, диалект.

## FOLKLORE AND CULTURAL BACKGROUND OF AKSEL BAKUNTS'S STORY "THE POTTER'S SON"

TAMAR HAYRAPETYAN

The aim of the article is to reveal the diversity of artistic perception of living folk culture and ethnographic traditions in Aksel Bakunts's story "The Potter's Son". The objectives arise from the aim of the article.

The topicality of the article is conditioned by the growing interest in professional circles towards the work of Bakunts.

The scientific novelty is the analysis of the literary work from a folklore–ethnographic methodological point of view.

Although the literary heritage of Aksel Bakunts is not very large, during his short life he managed to create diversity of characters suiting the varieties of social, gender, age and other groups.

His heroes are unique, they try to relate to the world, to figure out the cultural environment, though there can be felt a lack of experience in their desire to integrate in social life, have experience, knowledge, behavioural norms which lead to complicated and

controversial perceptions of everyday life issues. All these problems are vivid in the short story «The Potter's Son».

“The Potter's Son” is not a monotonous character. On the one hand he is endowed with features of an epic hero, on the other he is a humorous character, but more often he is a victim of lyrical intrusion. All these elements are peculiar to the character especially from the point of view of folklore perception.

**Key-words:** *Bakunts, plot, tale, character, author, collection, tale type, dialect.*

## ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածը ներկայացվել է 12.10.2020 թ., գրախոսվել է 15.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Ակսել Բակունցի լեզուն գեղարվեստական խոսքի բարձրարվեստ դրսևորում է: Նրանում հմտորեն միաձուլված են գրական հայերենը և մեր լեզվի արևելյան ու արևմտյան փարաձային փարբերակներից մի քանիսի լեզվական իրողությունները: Գործածված են հատկապես մասնավորաբար արևելյան խմբակցության Արարապյան բարբառի Քանաքեռի խոսվածքից, Ղարաբաղի բարբառի Գանձակի ենթաբարբառից, իսկ արևմտյան գավառականներից՝ Մուշի, Վանի, Սասունի, Արաբկիրի, Խարբերդի, Երզնկայի փարաձային փարբերակներից, Կարնո բարբառի Շիրակի խոսվածքից:

Բակունցի սրբեղծագործություններում ըստ տեղի ունեցող գործածված են նաև ժողովրդական խոսքի մաս կազմող առած-ասացվածքներ, օրհնության և անեծքի բանաձևեր, դարձվածային միավորներ և բարբառային նկարագրական արտահայտություններ, որոնք ոճավորում և պարկերավորում են գրողի լեզուն:

**Հիմնաբառեր՝** հայերեն, բարբառ, գրական լեզու, բառապաշար, քերականական, բաղաձայնական համակարգ, դարձվածային միավոր, արձակագիր:

«Իմ կարծիքով, լեզվաշինարարության խնդիրներում մենք դժվարությունների ենք հանդիպում առարկաներ անվանելու ուղղությամբ, այսպիսի դեպքերում պետք է ելակետ ունենալ ժողովրդական բարբառը»,— ասում է Բակունցը Հայաստանի սովետական գրողների առաջին համագումարում ունեցած ելույթում: Ապա հավելում է, որ «մենք հաճախ այս կամ այն բառը ճիշտ հայերենով գործածելու համար կանգ ենք առնում դժվարությունների առջև, չենք գտնում այն բառը, որն անհրաժեշտ է այս կամ այն նրբությունն արտահայտելու համար»<sup>175</sup>:

<sup>175</sup> Բակունց Ա., Երկեր, հ. 2, Երևան, 1964, էջ 598–599:

Այդ համագումարում հնչում են նաև Չարենցի ու Տերյանի կարծիքները խորհրդահայ գրական լեզու ստեղծելու մասին: Վկայաբերելով եվրոպական մի շարք լեզուների զարգացման ընթացքը՝ Չարենցն ու Տերյանը նախընտրում են նազարյանական–շահագիզյան, այսինքն՝ «հոկտեմբերյան» կոչվող գրական լեզվի հիմնավորումը և մերժում են Գ. Սունդուկյանի, Խ. Աբովյանի, Պ. Պողոջյանի, անգամ Հ. Թումանյանի էս–ով ու էն–ով, բարբառային որոշ տարրեր պարունակող լեզուն: Ա. Բակունցն ասվածին հակամետ չէր. նա դեմ էր խոսքի մաքրամոլությանը և չափազանց գրականացված լեզուն համարում էր արհեստական:

Շրջանցելով ժամանակի պահանջին հարմարվելու ակնհայտ պարտադրանքը՝ Ա. Բակունցը նշում է, որ համագումարի բանախոսների՝ նոր գրական լեզվի մասին հակասական մոտեցումը «առաջ է բերում լեզվի խառնվածություն, լեզվի թվատություն: Այնպես որ, պետք է բարբառները կշռել դեղատան կշեռքի ճշտությամբ», և այս տեսակետից շատ ուսանելի է համարում Հ. Թումանյանի փորձը<sup>176</sup>: Ըստ այդմ՝ «Ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու տրամադրություն, շունչ է ու զգացմունք»<sup>177</sup>:

Ինչպես նկատում է Ռ. Իշխանյանը, 1930–ական թվականներից սկսած լեզվին նվիրված «վիճաբանություններն ու տարակարծությունները ավելի հաճախ եղել են ոչ թե ընդհանրապես *հայ նոր գրական լեզվի*, այլ *հայ գեղարվեստական գրականության լեզվի շուրջ*»<sup>178</sup>:

Որպես Սյունյաց աշխարհի բարբառակիր զավակ՝ Ա. Բակունցի մայրենի լեզուն Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքն էր, որն իր լեզվամտածողական ողջ համակարգով ու կառուցվածքով ընկած է նրա արձակի հիմքում: Բարբառային իրողությունների և գրական հայերենի հմուտ միաձուլմամբ ստեղծված է բարձրամակարդակ մի խոսքարվեստ, որը բնորոշվում է *Բակունցի լեզու* տերմինով: «Բակունցը իր գեղարվեստական խոսքը հյուսելիս Թումանյանի նման սկսեց դիմել հայ լեզվաստեղծման սկզբնաղբյուրին՝ հայ ժողովրդի, հիմնականում՝ հայ գյուղացիության կենդանի խոսքին՝ այնտեղ որոնելով կենսական հյութեր իր արվեստի համար»,— գրում է Ռ. Իշխանյանը<sup>179</sup>:

Բակունցի բոլոր ստեղծագործություններում գործածված են Գորիսի խոսվածքին բնորոշ լեզվական կառույցներ, բառապաշարային միավորներ, երբեմն նաև հնչյունական իրողություններ:

Բակունցյան բարբառաբանությունները կարելի է ներկայացնել մի քանի խմբով.

ա) **Բարբառային հնչյունական իրողություններ:** Պետք է ասել, որ այս հարցին Բակունցը մոտենում է զգուշորեն: Նա հիմնականում շրջանցում է բար-

<sup>176</sup> Ն.ս., էջ 600:

<sup>177</sup> Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 6, էջ 167:

<sup>178</sup> Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 43:

<sup>179</sup> Նշվ. աշխ., էջ 63:

բառային հնչյունափոխական օրենքները, քանի որ դրանով կտուժեր գեղարվեստական խոսքը: Ինչպես գիտենք, Գորիսի խոսվածքին բնորոշ է երկշարք ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգը և ձայնավորների քմայնացումը, իսկ Բակունցի մի շարք հերոսների կիրառած Սասունի, Արաբկիրի բարբառներին՝ բաղաձայնների տեղափոխություն–տեղաշարժը, որոնց պահպանումը կհանգեցներ խոսքի անհասկանալիության: Այդ իսկ պատճառով մեծանուն արձակագիրը հնչյունափոխված սակավաթիվ օրինակներ է միայն բերում: Դրանք հիմնականում Ղարաբաղի բարբառին բնորոշ հնչյունական համակարգային իրողություններ են. օրինակ՝ *Կյորես*, *Պարսեղ* [Կ]<sup>180</sup>, *Պուղան* [Ջ], *սուրբը քեզ հի՛նչ անի* [Կ], *կանիեպ* [Կ], վարժապետ *պարուն* [Կ], *Պեպրուս* [Կ], *հընգերներ* [ԳՆ], *ականջը հլորեմ* (ԲՏ) և այլն:

Նշված օրինակներում առկա են *գ*, *բ* ձայնեղների խլացում, *հ* հազագի հավելում, ո>ու ձայնավորական անցում, Արցախ–Սյունիքի տարածքում *ֆ*-ի դիմաց գրաբարյան *փ* շնչեղ խուլի պահպանում, ինչպես նաև *Պողոս* հատկանվան բարբառային ձև:

Հնչյունափոխական իրողություն կարելի է համարել է օժանդակ բայի՝ Արարատյան բարբառին և Գորիսի խոսվածքին բնորոշ *ա*-ով ձևը: Օրինակ՝ «Պղնձաքարի սարում ավելուկը *կանայել ա*» [ՎԲ], *խաշապաշտ ա* [ՎԲ], *ինչից ա* և այլն: Հանդիպում են նաև արևմտյան տարածքին բնորոշ տարբերակներ. այսպես՝ *ինպոր*, քար *պիլա* չկա [ԼՄ], *նախակահ* (ԾՓ) և այլն:

բ) **Բարբառային քերականական** իրողություններից կարելի է նշել գոյականի հոլովման, հոգնակիակազմության, բայի ժխտական խոնարհման ետադաս և բայական այլ ձևերը: Օրինակ՝ *աշունքվա* [Մթ] «աշնան», *ճղներ* [Մթ], *եքանաք ոչ* [ՎԲ] «չուշանաք», *նստիլ չէին* [Մջ], *վերեք* [Ն] «վեր կացեք», արևը *կեծանելիս* [Ա] «արևը բարկ դառնալիս, կեսօրին», *կտվես* [Մջ] «քաղցի զգացողություն կունենաս», *կոխ կենալ* [Խա] «կոխ բռնել», *ավրի* (ԼՄ) «ավերի» և այլն:

գ) **Բառապաշարային իրողություններ:** Բակունցի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում ժողովրդախոսակցական բառաշերտին բնորոշ հայերեն բառերը՝ *թոկ*, *աղունապեր*, *ոսպապերեղ*, *աշունքաղեմ*, *ջրապար* «խեղճ, թշվառ», *ցցաչոր* և այլն:

Հետաքրքարական են նաև գրական հայերենին բնորոշ բառերի հնչատարբերակները և տվյալ տարածքին բնորոշ իմաստափոխականները. օրինակ՝ *օքմին* [Խղլց] «ոմն, մեկը», *ձեռքափող* [Ջ] «ամենօրյա ծախսի գումար», *ապեր* [Կ] «հորեղբայր», *շեն* [Կյորես] «գյուղ», Կյորեսի լեզուն *շենավարի* է [Կ] «բարբառային», *բացուպ* [Մթ] «ընդարձակ տարածություն», *կծոպող* [Կ] «շուն», *եկահալ* [ԿԲ] «ծյուն և արև փոփոխական եղանակի մասին, երբ ծյունը գալուն պես հավլում է», *եքանալ* [ԱՄ] «ուշանալ» և այլն:

գ) **Օտարաբանություններ:** Բակունցի ստեղծագործություններում որոշակի թիվ են կազմում արևելյան լեզուներից կատարված փոխառությունները, որոնցում

<sup>180</sup> Ծան.՝ ուղիղ փակագծերում Բակունցի ստեղծագործությունների վերնագրերի համառոտագրումն է՝ երբեմն էջանշումով:

որոշակի թիվ են կազմում հատկապես թուրքերենի միջոցով անցածները: Օտար բառերը հաճախ ածանցվում կամ բառաբարդվում են հայերենի բառակազմական օրենքների համաձայն: Օրինակ՝ *դարիբական* [Կ], *սուբահանոց* [Կ], *բարաբար* [Կ], *ճոթի մաղազա* [Կ], խեղճ ու կրակ *ռահաթ* [Կ], *սրա* [ԼՄ] «հերթ», *զիզի* [Կ], *բեյ* [Կ], *բիբի* [Կ], *զուռնա-նաղարա* [Կ], *մահալ* [Կ], *դայօլի* [Կ], *իմանսըզ* [ԿՔ], *քեֆսըզ* (ԼՄ) և այլն: Ինչպես նկատում ենք, վերջին օրինակները կերտված են թուրքերենի բառակազմական առանձնահատկություններով (*դայի+օլի*, *իման+սըզ*, *քեֆ+սըզ*):

Պայմանավորված ժամանակի մեծապետական պահանջներով՝ Բակունցը խոսքը ռճավորելու նպատակով անհրաժեշտաբար գործածում է նաև ռուսերեն և ռուսերենի միջոցով անցած նորագույն փոխառություններ, օրինակ՝ *խարաշո* [ԿՔ], *պամոշնիկ* [ՈՈ], *սմապրիպել* [ԲՏ], *դրուժինա* [Կ], *բլադառոդնի* [Եզու [Կ] «գրական հայերեն», *պալտոնավոր* [Կ], *սպորտենտ* [Կ], *բուվար* [Կ], տները միանման *կամերներ* [Կ], *ռուսաց շկուլ* [Կ], *ապրյադ* [ԿՔ], *պասսաժիր* [ՈՈ], *կոնդուկտոր* [ՈՈ] և այլն:

Հանդիպում են նաև ռուսերեն նախադասություններ, որոնց հայերեն համար-ժեքները ասելիքը կդարձնեին արհեստական ու անհաղորդ: Նման խոսքային միավորները թերևս մեկ այլ գրողի գրչի տակ դիտարկվեին որպես անհարկի նորամուծություններ, սակայն Բակունցի ստեղծագործություններում դրանք պատճառաբանված են և անթերի կերպով միաձուլված են խոսքին:

Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, «մերժել այդպիսի հնարները, նշանակում է գրական լեզուն զրկել հնչերանգների բազմազանությունից: Դրանք իմաստային ու արտահայտչական նրբություններով իսկապես պայմանավորում են լեզվի կենդանի զարկերակի բաբախման ուժն ու կենսունակությունը»<sup>181</sup>:

դ) **Բարբառային դարձվածքները, շրջասությունները, հարադիր այլ կազմությունները** հղկելով՝ Բակունցը նոր շունչ է հաղորդել բարբառային խոսքին բնորոշ հուզաարտահայտչական միջոցներին. օրինակ՝ *մարդահասչ փայլ*, *աղվեսահասչ փայլ*, *բքախեղդ լինել*, *շար ընկնել* [ՈՈ], *դարդահալ լինել*, *մարգոց անել* [ՔԴ], *գիրկապ անել* [Մր], *փապ անել* [Մ], *պար ածել* [Կ], *խաղ ասելով փեսնել* [Կ], այսինքն՝ «քննադատել, ծաղրել», *հացափոր աշխատանք* [Կ], *մի նստելում յոթ հաց ուտող* [Կ], *բուկի ուտողներ* [Կ], *յոթը դռան հաչող շուն* [Կ], էսպես *նեղում չենք մնա* [ԿՔ], *աչքդ գիրը կփանի* [ՎԲ] «կկուրանաս» և այլն:

Բակունցի ստեղծագործություններում գեղարվեստական խոսքի բարձրակարգ հմտությամբ հրաշալիորեն միաձուլված են գրական հայերենն ու բարբառը, ինչպես օրինակ՝ *զառ նշանով մոմ* [Կ], *ոսկի զառով մոմ* [Կ], *զառ մանդիլով նորահարս* [Մ], *Անիկա փոփոյա* [Կ], *փիկին Օլինկա* [Կ], *դյուքյանդարներ և մեծամեծներ* [Կ], *հիսունմին* [Կ], *մարդ-օլան* [Կ] «մարդորդի», *ճոթավաճառ* [Կ], «Կար մի կանդիտեր, որ սրճատան հետևի մասը դարձրել էր գինետուն» (Կ, 14): «Սասուն» տպարանը տպում էր «հարսանյաց հրավերներ, գավառային վարչության բլանկներ և զանազան պուրլիկացիաներ՝ տուրքի, քոչի և զինվորակոչության մասին» (Կ, 14–15):

<sup>181</sup> Առաքելյան Վ., Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 1964, հ. 3, էջ 153:



Տաղանդաշատ գրողի բարձրարվեստ գրչի ներքո բարբառային հնչերանգ են ձեռք բերում անգամ գրաբարյան *ցնոր կարգադրություն* [Մրց], *ընդհանրոր հանդերձ* և այլ բառակապակցություններ. այսպես՝ «երբեմն պալտոնավորը՝ այսինքն՝ Գորիս քաղաքացիք՝ Եփրատ Երեմը, Անիկա տյուտյան, տիկին Օլինկան, Կիզիկով Իսակը հանդերձ ընտանյոք» (Կ, 12):

Ահավասիկ ևս մեկ օրինակ, որում գեղարվեստական խոսքի վարպետությամբ կողք կողքի են գրականն ու գավառականը: «Ամենամոլեռանդ կյորեսեցիք, որոնք ծաղրում էին Գորիսի օտարականներին՝ ոմանց շլապան անվանելով *կլիբո* և *ծղաման*, ոմանց կանանց՝ անվանելով *շինովի փիկնիկ*, ոմանց մորուքն էին ծաղրում՝ անվանելով *կուպուռուզ*» [Կ, 9]:

Նշված բարբառաբանություններից բացի, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ամփոփման ենթարկված անձնանուններն ու մականունները, որոնք հատուկ են Գորիսի տարածաշրջանին: Նման հատկանունները հիմնականում բաղադրյալ կառույցներ են, որոնց բաղադրիչներից մեկը հաճախ փոխառություն է կամ բարբառաբային լեզվական միավոր: Այդ մասին «Կյորես»-ում կարդում ենք. «Կյորեսեցիք ծաղրում էին քաղաքացիներին՝ հորինելով մականուններ՝ *Պրիստավի Թագի*, *Թեփոսծ Երեմ*, *Ամբարի Կապու Սողոմոն*» (Կ, 9): Ոչ պակաս հետաքրքրական են նաև *Քյալլա Ծափուր* [Կ], *Ղաթրինի Աղալո* [Կ], *Պարան-Պարան Ավանես* [Կ], *Գյուրջի Օբի* [Կ], *Մալակրովնի Նիկոլայ* [Կ], *Չանթա Ռեխ Գալուսպ* [Կ], *Խոջա Բաղիր* [Կ], *Ղուրդանց Իսո* [Կ], *Սայու Մադի* [Կ], *Չդին Հաբուդ* [Կ], *Սահաթսագ Սանդրո* [Կ], *Ջամբա Ծափուր* [Կ], *Գլդան Գորի* [ԵԸ], *Չառի աքիր*, *Մելոչնի Բախշի* և այլ անձնանուններ:

Հանդիպում են նաև տեղանունների բարբառային ձևեր ու հնչյունական տարբերակներ. օրինակ՝ *Ղևան*, *Ծլանգի փախս* [Կ] «հարթավայր», *Շհարի փախս* [Կ], *Շահ յուրդ*, *Շոր աղբյուր* և այլն:

Հնչյունական ու բառապաշարային լեզվական իրողություններից բացի, ուշագրավ են իմաստային անցումներն ու բարբառային խոսքին հատուկ փոխաբերացումները: Օրինակ՝ որպես «հիշողություն» ֆիզիկական հասկացության համարժեք է գործածում *հուշ* բառը, որը բառարաններում այդ իմաստով չի հանդիպում:

«Ապա դու սո՛ւրբ ես» (Կ, 12), «Ապա չեմ ասե՛լ քեզ» (Կ, 12) հարցական նախադասություններում զուտ գրական *ապա* ձևը ստացել է բարբառային տարածագործանականություն և փոխարինում է բացառապես խոսակցական լեզվին բնորոշ *բա*-ին (իմա՝ «Բա դու սո՛ւրբ ես», «Բա չեմ ասե՛լ քեզ»):

«Նրանց լեզվով ազգ նշանակում էր տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապված են արյան կապով: Իսկ եթե նրան բացատրեիր, որ ազգությունն ես հարցնում, այլ ոչ թե տոհմը, նա կպատասխաներ. — Կյորեսեցի եմ... Չանգեզուրի մարդ եմ» (Կ, 9–10): Տվյալ դեպքում *կյորեսեցին* և *Չանգեզուրի մարդը* ձեռք են բերել «հայ» իմաստը, որին հակադրվում են *անհավաք նասրանին* [Կ], *չան ազգը* [Կ], *մարդ պլոկոդ ազգը* [Կ], *մոլթանին* [Կ], այսինքն՝ օտարականը:

Բակունցի ստեղծագործություններում ըստ տեղվույն գործածված են նաև ժողովրդական խոսքի մաս կազմող առած–ասացվածքներ, օրինության ու անեծքի բանաձևեր, դարձվածային միավորներ ու բարբառային նկարագրական արտահայտություններ, որոնք ոճավորում և պատկերավորում են գրողի լեզուն: Այսպես՝ *իշալլա հեյր չդառնաս* [ՈՈ, 238], *խաբարըդ քոռ ակոավը բերի* [ՈՈ, 238], *դաստեմ քուքուրդ դնեմ հոգուդ* [ՈՈ, 238], *քո կուշտ կերած օրը զատկի իրիկուն եղնի* [ՈՈ, 238], *փեշքեշ ձիու ալամին չեն նայի, բզի գլխին յամրուղով կտանս, թե չաքչով, հարամ հացը թող իմ սուփրիս չլինի* [ՎԲ] և այլն:

Ակսել Բակունցի ստեղծագործություններում հանդիպում են բազմաթիվ բարբառաբանություններ արևելյան խմբակցության Ղարաբաղի բարբառի Գորիսի ենթաբարբառից, Արարատյան բարբառի Քանաքեռի («Խաչատուր Աբովյան») և Լոռու («Օձի բերանից»), Ղարաբաղի բարբառի Գանձակի ենթաբարբառի Ղազախի («Սև հացը») խոսվածքներից և արևմտյան խմբակցության Կարնո («Որդի որոտման», «Աշտը»), Սասունի («Ծիրանի փողը», «Մուրոյի զրուցը», «Քեռի Դավոն»), Վանի («Սև հացը»), Արաբկիրի, Խարբերդ–Երզնկայի («Լառ–Մարգարը»), Մուշի («Ծիրանի փողը») բարբառներից:

Օրինակ՝ Արարատյան բարբառի Քանաքեռի խոսվածքով. «Նանին աղլուխի մեջ հաց է կապել» [ԽԱ, 365], «*Ղաղեղ առնի նանին, մի էս հացը փար հանդին նշանց փուր*» [ԽԱ, 365], «*Նա մի ինչ–որ նմանություն փեսավ այդ աղջկա և Եղսան հոքրի Մայրանի միջև*» [ԽԱ, 371] և այլն:

Ղարաբաղի բարբառի Գանձակի ենթաբարբառով. «*Էր անդերը հինչամվ շինիմ*» [ՍՀ, 202], «*Ինձ պիտի ունթունես*» [ՍՀ, 208], «*Էս սհաթիս մի կնիկ թելսպոնով քեզ հարցրեց: Ասի՛ ըստի չի... Նհենց քաղցր էր խոսում*» [ՍՀ, 208] և այլն:

Կարնո բարբառի Շիրակի խոսվածքով. «*Չի էղնի, խնամի ջան... Սարիտ չի էնե, բիլեթը թամամ, ուրիշ նարուշեննի պոավիլ ունի, պրիչինն չկա, որ էնեմ...*» [ՈՈ] և այլն:

Սասունի–Մուշի բարբառներով. «*Մըր գուղն ի, իդա դար լե շրջվի*» (ԾՓ), «*ինա կուտ լե մեր է*» (ԾՓ), «*մըր բախտ կապած ենք զգդալ ջրի*» (ԾՓ), «*գիմ փող կիտամ իմ քաջարժիվ թոռնիկին*» (ԾՓ) և այլն:

Վանի բարբառով. «*Էսնա խորոտ ի*» [ՍՀ, 194], «*Իկեր ես, տղա: Չայ պիրեմ*» [ՍՀ, 194] և այլն:

Արաբկիր–Խարբերդ–Երզնկայի բարբառով. «*Կեցիր դիս, կրակ չեղավ, սրադ ուրբաթ է*» [ԼՄ, 128], «*Ծառդ պտուղ չի փար, յավրիս, գողության մի վարժեցուր*» [ԼՄ, 128], «*Աստեղվանքը հիջ չկա իմինիս պես ծիրանի*» [ԼՄ, 134] և այլն:

Այսպիսով՝ Ակսել Բակունցի լեզուն գեղարվեստական խոսքի բարձրարվեստ դրսևորում է, որում հմտորեն միաձուլված են գրական հայերենը և մեր լեզվի արևելյան ու արևմտյան տարածքային տարբերակներից մի քանիսի, մասնավորաբար արևելյան խմբակցության Ղարաբաղի, Արարատյան և արևմտյան գավառականներից Կարնո, Մուշի, Վանի, Սասունի, Արաբկիրի, Երզնկայի տարածքների բարբառային իրողությունները, և եթե Մ. Նալբանդյանի՝ ճշմարիտ գրականության լեզվին

վերաբերող խոսքերով բնորոշենք, բոլոր գավառական բարբառներից ճանապարհներ են բացվել դեպի բակունցյան յուրօրինակ լեզվի կենտրոն<sup>182</sup>:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա – «Աքարում»
- ԱՍ – «Այու սարի լանջին»
- ԵԸ – «Եղբայրության ընկուզենիները»
- Զ – «Զանգեզուր»
- ԽԱ – «Խաչատուր Աբովյան»
- Կ – «Կյորես»
- ԿԲ – «Կարմրաքար»
- Մ – «Միրհավ»
- Մթ – «Մթնաձոր»
- Մր – «Մրոց»
- Ն – «Նաման ոռոսաց թագավորին»
- ՈՈ – «Որդի որոտման»
- ՍՀ – «Սև հացը»
- ՎԲ – «Վանդուց Բադին»
- ՔԴ – «Քեռի Դավին»

## АРМЯНСКИЕ ДИАЛЕКТЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ АКСЕЛА БАКУНЦА

*ԱՅԿԱՆՍԻ ՄԵՏՐՈՍՅԱՆ*

Язык Аксела Бакунца – высококультурное выражение художественной литературы. В нем умело сочетаются литературный армянский язык и некоторые языковые реалия восточных и западных территориальных версий нашего языка. Использованы, в частности, отрывки из Канакерского говора Араратского диалекта восточной фракции, из Гандзакского поддиалекта Карабахского диалекта, а также из западных провинциальных диалектов Муша, Вана, Сасуна, Арабкира, Харберда, Ерзнка и говора Ширака Каринского диалекта.

В произведениях Бакунца широко использованы также формы фольклора: пословицы и поговорки, слова благословения, проклятия, фразеологические словосочетания, диалектные описательные выражения, которые помогают стилизации и изображению языка писателя.

<sup>182</sup> Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 145:

**Ключевые слова:** Армянский язык, диалект, литературный язык, лексика, грамматический, фонетическая система, фразеологизм, прозаик.

## ARMENIAN DIALECTS IN WORKS OF AKSEL BAKUNTS

HAYKANUSH MESROPYAN

The language of Aksel Bakunts is a highly cultural expression of fiction literature. It skillfully combines the literary Armenian language and some linguistic realities of the eastern and western territorial versions of our language. Used, in particular, excerpts from the Kanaker dialect of the Ararat dialect of the eastern faction, from the Gandzak subdialect of the Karabakh dialect, as well as from the western provincial dialects of Mush, Van, Sasun, Arabkir, Kharberd, Erzuka and the Shirak spoken of the Karin dialect.

In the works of Bakunts widely also used forms of folklore: Proverbs and sayings, words of blessing, curses, phraseological phrases, dialectal descriptive expressions, which stylize and depict the language of the writer.

**Key words:** Armenian language, dialect, literary language, vocabulary, grammatical, phonetic system, phraseological unit, writer.

## ՇՈՒՇԻԻ ՀԱՅԵՐԻ 1920 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ<sup>183</sup>

Հոդվածը ներկայացվել է 15.07.2020 թ., գրախոսվել է 15.09.2020 թ., ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածի խնդրո առարկան Շուշիի հայ բնակչության 1920 թ.–ի կոտորածներին «Մշակ» լրագրի անդրադարձի լուսաբանումն է: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել թերթի 1918–1920 թթ.–ի հրապարակումները, որոնք շրջափում են Արցախի պատմական ճակատագիրը՝ ներկայացնելով 20–րդ դարասկզբին Արցախում ու Սյունիքում տեղի ունեցած դրամատիկ իրադարձությունները, այդ թվում՝ Շուշիի 1920 թ.–ի եղեռնագործությունը: Մեր խնդիրն է ի մի բերել ու վերլուծել Շուշիի պատմության այդ չարաղետ անկյունաքարի վերաբերյալ թերթի հաղորդած տեղեկությունները, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն ու ճանաչողական արժեք ունեն Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրության համար: Վերոնշյալով էլ պայմանավորված է հոդվածի արդիականությունը՝ պատմության դառը փորձին առեքսվելու իրողությամբ:

Հոդվածում կիրառել ենք լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներ, պատմական, համադրման մեթոդներ, բովանդակային վերլուծություն, ընդհանրացում:

**Հիմնաբառեր՝** Լեռնային Ղարաբաղ, Սյունիք, Շուշի, «Մշակ», լրագիր, հրապարակախոսություն, կոտորած, ցեղասպանություն:

Շուշիի 1920 թ.–ի հայ ազգաբնակչության կոտորածի վերաբերյալ բազմաբանակ վավերագրերի շարքում մեծ նշանակություն ունեն այդ ժամանակաշրջանում հրատարակված հայ և օտարերկրյա պարբերական մամուլի նյութերը:

<sup>183</sup> Հոդվածը ներկայացվել է 2020 թ. հուլիսի 13–15–ը Շուշիում տեղի ունեցած «Աղբյուրների ցեղասպան վարքը. պատմություն և արդիականություն» խորագրով միջազգային առցանց գիտաժողովին՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100–րդ տարելիցին:

Դարասկզբին արևելահայ իրականության մեջ առավել ազդեցիկ պարբերականներից էր «Մշակը», որ, հիմնադրվելով 1872 թ.-ին Թիֆլիսում ժամանակի ամենահայտնի մտավորականներից Գրիգոր Արծրունու կողմից, գործեց մինչև 1921 թ.-ը՝ ընդհուպ մինչև Կրաստանի խորհրդայնացման առաջին օրը՝ փետրվարի 25-ը՝ ուրույն հետագիծ թողնելով հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Ուսումնասիրողները լրագրի անցած ճանապարհը բաժանում են երեք փուլի՝ 1. 1872–1883 թթ., 2. 1884–1892 թթ., 3. 1893–1921 թթ.: Երրորդ փուլը «Մշակ»-ն անցնում է առանց հիմնադիր խմբագրի: 1892 թ.-ի դեկտեմբերի 19-ին Արծրունին կնքում է մահկանացուն՝ լրագրի հրապարակման գործը թողնելով կնոջը՝ Մարիամ Մելիք-Աղամալյան Արծրունուն և եղբորը՝ Անդրեասին: Արծրունու մահից հետո մոտ երեք տասնամյակ «Մշակ»-ը խմբագրեցին Ալեքսանդր Քալանթարը (1895–1913 թթ.), Համբարձում Առաքելյանը (1913–1918 թթ.), Տիգրան Հախումյանը (1918–1919 թթ.), Լևոն Քալանթարը և Լեոն (Առաքել Բաբախանյան, 1920–1921 թթ.): Նրանցից յուրաքանչյուրն իր գաղափարական կնիքն է թողել «Մշակ»-ի գործունեության վրա:

1918–1920-ական թթ.-ին «Մշակ»-ն աչքի է ընկնում համազգային մտահոգություններով, հայության պատմաքաղաքական դրության և դրա բազմակողմ զարգացումների լայնախոհ քննարկումներով: Թերթի էջերում, առավել քան արևելահայ որևէ պարբերականում, լայնորեն լուսաբանվել են 20-րդ դարասկզբի իրադարձությունները (Առաջին աշխարհամարտը, Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, Արևմտյան Հայաստանի հայաթափումը, Եղեռնը, հայերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը, Արևելյան Հայաստանում տեղի ունեցող պատմաքաղաքական իրադարձությունները և այլն): Լրագիրը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Արցախի պատմական ճակատագիրը՝ անդրադառնալով 20-րդ դարասկզբին Արցախում ու Սյունիքում տեղի ունեցող դրամատիկ իրադարձություններին, այդ թվում՝ Շուշիի 1920 թ.-ի եղեռնագործությանը: Թերթի հաղորդած տեղեկություններն ունեն սկզբնաղբյուրային նշանակություն ու ճանաչողական արժեք՝ Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրության համար:

Թերթը, թեև ոչ կանոնավոր, 1918–2019 թթ.-ից արդեն անդրառանում է նորաթուխ Ադրբեջանի մուսավաթական կառավարության՝ պատմական Հայաստանի մի շարք տարածքները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը բռնազավթելու հավակնություններին, որոնց բացահայտ կերպով օգնում էին Օսմանյան Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ Անգլիան, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանը: **«Ահա ձեզ Ղարաբաղի հարցը, որին կամենում է տիրանալ Ադրբեջանը և այդ ձգտումը չի խեղդվում դաշնակիցների կողմից: Ընդհակառակը, մեզ հասած տեղեկություններին նայած, Ադրբեջանը համառում է շնորհիվ այն բարյացակամության, որ ցույց է տալիս դեպի նրա նվաճողական ձգտումները Բազուի անգլիական հրամանատարությունը: Ինչն է անգիտացվում մեր իրավունքը Ղարաբաղի նկատմամբ: Նրա համար, որ այժմ մենք թույլ ենք: Մենք սպառեցինք մեր ոյժերը Ռուսաստանի համար, որը հեղափոխությունից առաջ տմարդի ու խարդախ էր հայության նկատմամբ,**

**խկ հեղափոխությունից հետո շատ խոստացող, բայց թույլ և ապիկար: Եվ այժմ հնձում ենք մեր սխալ քաղաքականության պտուղները: Հայաստանի կառավարությունը թող չընկրկի անիրավության հանդեպ: Կա դեռևս դիմադրության կորով հայ ժողովրդի մեջ: Ղարաբաղի հարցում մենք զիջող չենք կարող լինել: Միմիայն բռնությունը կարող է կաշկանդել մեր ձեռքերը և փակել մեր բերանը»,— գրում է «Մշակ»-ը 2019 թվականի մարտի 11-ի համարում<sup>184</sup>:**

Այդ շրջանում թերթը «Վերջին տեղեկություն» խորագրի ներքո պարբերաբար ընթերցողին տեղեկացնում է Արցախում տիրող խառնակ իրադրության մասին՝ անդրադառնալով Ադրբեջանի կառավարության 1919 թ.-ի հունվարի 15-ի տխրահռչակ որոշումով Արցախ-Չանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված հայատյաց Խոսրով Բեկ Սուլթանովի դիվանագիտական ճնշումներին, սպառնալիքներին, խաղաղ բնակչության վրա զինված ուժ գործադրելու՝ պարբերաբար կրկնվող դեպքերին, որոնց նպատակը արցախահայությունից Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն կորզելն էր: «Ադրբեջանական զորքերը, թուրք ասկերները և տեղական հրոսակախմբերը թվով մի քանի հազար մարդ, թուրք օֆիցերների առաջնորդությամբ գրավելով Չաբուղի կիրճը, ձեռնարկել են արշավանքի Ջիբրայիլի(Դարեագինի) գավառի հայկական գյուղերի վրա»,— հաղորդում է թերթը 1919 թ.-ի հունվարի 28-ի համարում: Ականատեսների վկայությունների հիմքով մանրամասներ են հաղորդվում Ասկերանի գյուղերում ադրբեջանական զորքերի ոչնչացրած ջրաղացների, հացի մթերքների հափշտակության, հայ ազգաբնակչությանը այլուրն աղալու հնարավորությունից զրկելու և այլ ոտնձգությունների մասին, որոնց հետևել էր Ջեբրայիլի հայ ազգաբնակչությանն ուղղված «հնազանդվելու և զենքերը հանձնելու» վերջնագիրը: 1919 թվականի փետրվարի 15-ի համարում անդրադառնալով Խոսրով Բեկ Սուլթանովին Ղարաբաղի գերենալ-նահանգապետ նշանակելու ցավալի փաստին՝ դրանից բխող դառնադի հետևանքներով՝ «Մշակ»-ը մեջբերում է «Ադրբեջան» թերթում նրա մի հրապարակումը, որում «ռուս վարձկան գրչակը» ճգնում է ապացուցել, «թե հայերի թիվը այդ երկրում անհամեմատ պակաս է թուրքերից, որ հայերը բնիկներ չեն, այլ գաղթած Պարսկաստանից ու Թուրքիայից, որ մելիքները ծագում են առել Չինգիզ Խանից» և այլն: «Սակայն բառերն ու պատրանքները կորչում են, փաստերը մնում»,— հակադարձում է «Մշակ»-ի թղթակիցը,— այդ կուռ փաստը Ղարաբաղի համառ հայ գեղջուկն է, որ մերժել է Ադրբեջանը և պիտի անսասան մնա իր որոշման մեջ: Պատմական կեղծիքներն անույժ են այս կուռ փաստի առաջ»<sup>185</sup>: «Ղարաբաղի ընդհանուր նահանգապետ Սուլթանովը սկսել է գործել: Թվով 2000 մարդ, Խանքեղիի շուրջը փորում են խրամատներ և կառուցանում են ամրություններ: Հայերը այդ համարում են նշան թուրքերի ապագայ յարձակողական գործողությունների Ղարաբաղի դեմ»<sup>186</sup>,— կարդում ենք «Մշակ»-ի 1919 թվականի մարտի 29-ի մեկ այլ հրապարակման մեջ:

<sup>184</sup> «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 11, թիվ 54:

<sup>185</sup> «Մշակ», Թիֆլիս, 1919, թիվ 36:

<sup>186</sup> «Մշակ», 1919, թիվ 69:

Արցախում 20-րդ դարասկզբին տիրող իրավիճակի շուրջ լրագրի 1919 թվականի օրախոսքի հրապարակումներից հիշատակության են արժանի հատկապես «**Ինչու է Ադրբեջանը աչք տնկել Ղարաբաղի վրա**» խորագրով վերլուծականները<sup>187</sup>, «**Հայկական Ղարաբաղը**»<sup>188</sup>, «**Ղարաբաղ**»<sup>189</sup>, «**Շուշում**»<sup>190</sup>, «**Կյանքը Շուշում**»<sup>191</sup>, «**Լուրեր Շուշուց**»<sup>192</sup>, «**Բռնության դեմ**»<sup>193</sup>, «**Ղարաբաղի դրության մասին**»<sup>194</sup> վերլուծականներն ու հաղորդագրությունները:

«Մշակ»-ը պարբերաբար հրապարակում է նաև Շուշիից ստացվող «Նոր կյանք» շաբաթաթերթի նյութերը: Թեմայի ուսումնասիրության ծիրում հատկապես հետաքրքրական են «Ղարաբաղ. ուղևորի դիտողությունները» շարքը, որը ստորագրել է թերթի թղթակից Դ. Անանունը՝ Թիֆլիսից Արցախ իր ուղևորության տպավորությունների փոխանցմամբ՝ որպես ականատեսի վկայություններ, որոնք հատկանշվում են ինքնատիպ դիտարկումներով և ունեն ճանաչողական մեծակշիռ արժեք: Թերթում տեղեկություններ կան նաև Արցախի հայության 2-րդ և 3-րդ համագումարների անցակցման և «տիրողի լեզու բանեցնող» թուրքերին զսպելու մի քանի կարևոր որոշումների մասին: «Ժողովներում» խորագրի ներքո մանրամասներ են հաղորդվում նաև այդ ծանր շրջանում Ղարաբաղի հայրենակցական միության ժողովների մասին՝ օրեցօր բարդացող իրավիճակի շուրջ «Ղարաբաղի գործիչների մտքերի փոխանակության» և որոշումների քաղաքեղումներով:

1920 թ.-ի սկզբներին Արցախում իրավիճակը սրվում է: Սուլթանովը Արցախի Հայոց Ազգային Խորհրդից պահանջում է վերջնականապես ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Միաժամանակ նա հրամայում է մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել ռազմական նշանակություն ունեցող կետերում՝ Սյունիք ներխուժելու միտումով: «Մշակ»-ը տազնապով հետևում էր իրադարձությունների զարգացմանը Սյունիքում ու Արցախում և 1920 թվականի փետրվարի 10-ի համարում գրում է. «Մահմեդականների սարքած գազանային կոտորածները Ազուլիսում Ղարաբաղի հայության մեջ թողել են շատ ճնշիչ գրգռած տրամադրություն: Շրջանի մի քանի տներում սկսվել են յուզմունքներ: Դրությունը հղի է վերջին աստիճանի բարդ հետևանքներով: Գլուխ է բարձրացնում յուզված ժողովրդի մեջ ավազակաբարոյ տարրին շրջանից ընդմիջտ արտաքսելու տրամադրություն: Յամենայն դեպս Ղարաբաղի խնդիրը մոտ է իր լուծման»<sup>195</sup>:

Ստեղծված իրավիճակը քննարկելու համար 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում հրավիրվում է արցախահայության ութերորդ համագու-

<sup>187</sup> «Մշակ», 1919, թիվ 47:

<sup>188</sup> «Մշակ», 1919, թիվ 51:

<sup>189</sup> «Մշակ», 1919, թիվ 54:

<sup>190</sup> «Մշակ», 1919, թիվ 56:

<sup>191</sup> «Մշակ», 1919, թիվ 59:

<sup>192</sup> «Մշակ», 1919, թիվ 61:

<sup>193</sup> «Մշակ», 1919, թիվ 60:

<sup>194</sup> «Մշակ», 1919, թիվ 62:

<sup>195</sup> Դրությունը Ղարաբաղում, «Մշակ», 1920, թիվ 1:



մարը, որը մերժում է Սուլթանովի պահանջը և հավաստում, որ օգոստոսի 22-ի համաձայնագիրը Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտման հետևանքով կորցրել է իր ուժը: «Մշակ»-ը, ձեռքը պահելով իրադարձությունների զարկերակին, հաղորդում է, որ «Հայաստանի արտաքին գործերի մինիստր Խատիսյանը հեռագրով բողոքել է Ադրբեջանի կառավարության այդ տմարդի գործողությունների դեմ, որոնք չեն համապատասխանում անցեալ տարվա նոյեմբերի 23-ին երկու պետությունների միջև կապուած համաձայնության, որի համաձայն տերիտորիալ հարցերը վճռվելու են խաղաղ ճանապարհով»<sup>196</sup>: Որևէ զսպող միջոց չէր կարող կանխել Ադրբեջանի կողմից վաղորդ կանխամտածված հայասպան ծրագրերը: «Մշակ»-ը միանգամայն իրավացի էր Ղարաբաղի իրավիճակը նկարագրելու հարցում՝ դրա նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը որակելով իբրև իմպերիալիստական, որ իրականացվում էր Անգլիայի ու Թուրքիայի օգնությամբ: 1920 թվականի փետրվարի 29-ին թերթը «Ղարաբաղը նոր աղէտի առջեւ» խորագրով փոխանցում է Հայաստանի կառավարության պաշտոնական հաղորդագրությունը, ըստ որի՝ Նուրի փաշան գնացել է Շուշի՝ Արցախն ու Ջանգեզուրը սրով նվաճելու համար: Հռովածագիրը ցավով հիշեցնում է, թե ով է Կովկասում հայտնի Նուրի փաշան. «Բազուի մեջ 30000 հայ կոտորողը, ապա Անգլիացիների ձեռքով Բաթումում կալանավորված իբրև ոճրագործ, ապա Անգլիացիների աչքի առջև բանտից փախած մի Ժեռն-Թիւրք, էնվեր փաշայի եղբայրը և այլն, և այլն: ... Մինչև Բազուն վերցնելը նա մի կոչ ուղղեց Ղարաբաղի հայերին, հպատակության հրավիրեց, յանձնարարելով, հակառակ դէպքում, յիշել Ադանան, այսինքն՝ 30000 հայերի ջարդը»: «Մշակ»-ի խմբագրության համար այլևս անկասկած է դառնում, որ Ղարաբաղը մի նոր աղէտի առջև է կանգնած, որը լինելու է պատմության դառը փորձին առերեսվելու ևս մեկ իրողություն. «**Աղետ է սպառնում նրա քաջարի ժողովրդին, որ ունի իր գեղեցիկ պատմությունը, որ տարիների ընթացքում միակն է եղել, որ պահպանել է ազատության և անկախության գաղափարը հայութեան մեջ, բայց որ անցյալ տարի տրագիքական դրության մեջ ընկավ ոչ թե այն պատճառով, որ թուլացել էր և անարի դարձել, այլ որովհետև այդպես կամեցան Բազվում նստած անգլիական գեներալները: Բացի դրանից, օրհասական վտանգի միջոցին հրապարակ իջավ Ղարաբաղի պատմական դժբախտությունը**»<sup>197</sup>,— գրում է թերթը՝ հիշեցնելով, որ Ղարաբաղը, դժբախտաբար, ոչ միայն Մելիք Հաթումի, Մելիք Մեծյումի, Մելիք Յովսեփի և այլ ազնվագույն մարդկանց հայրենիքն է, այլ նաև Մելիք Շահնազարի, որի շառավիղները կան ու գործում են անգամ այդ չարաղետ ժամանակներում: Հռովածագիրը մեղադրում է նաև Հայաստանի կառավարությանը, որ ապիկար գտնվեց իր ժողովրդի ու երկրի առաջնակարգ շահերը պաշտպանելու մեջ: «**Սա այնպիսի աղետ է, որի առջև պիտի նսեմանան բոլոր նախընթաց սարսափները: Պիտի վերանայ այնուհետև դրացիության ամեն մի հասկացողություն, և մշտնջենական**

<sup>196</sup> «Մշակ», 1920, թիվ 3:

<sup>197</sup> «Մշակ», 1920, թիվ 4, էջ 3:

**անեծքը պիտի ծանրանա Կովկասի բոլոր ազգերի վրա»:** Քանի ուշ չէ, պետք է փրկել սկզբունքները, գաղափարը, հավատն ու վստահությունը, հորդորում է թերթը, պետք է փրկել Ղարաբաղը: Պետք է նկատել, որ ադրբեջանցիների և թուրքերի ճնշման պայմաններում Ղարաբաղի առանձնահատուկ վիճակի գնահատման հարցում «Մշակ»-ը պաշտպանում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հորդորում նրան հիմնավորել Ղարաբաղի չեզոքությունը: Հետաքրիր է նաև, որ Հայաստանի կառավարության և Անդրանիկի հակադրությունների պարագայում «Մշակ»-ը պաշտպանում էր Անդրանիկին, բայց և քննադատեց նրա համակերպումը անգլիացիների ցանկությանը՝ Արցախ արշավելուց ձեռնպահ մնալու հարցում:

1920 թվականի մարտի սկզբից սկսած՝ «Մշակ»-ի էջերը ողողվում են Արցախում տեղի ունեցող ահազդեցիկ իրադարձությունների մասին հաղորդագրություններով: Մարտի 7-ին թերթը ծանուցելով արցախահայերի օրհասական դրության մասին՝ նկարագրում է Ղայբալիշեն գյուղի կոտորածը: «Ղարաբաղի մարդակեր նահանգապետը դեն է դրել իր դիմակը և ձեռնարկել է Ղարաբաղի նվաճման: Նորերս նա Բագուի վոկզալում խրոխտանքով ասել է իր հայ բարեկամներին, թե մինչև որ ամբողջ Ղարաբաղը չչոքեցնե իր առջև, չպիտի հանգստայ: Սուլթանովը, այո՛, Հայ բարեկամներ էլ ունի, ինչու ծածկել մեր ամոթը— ցավով արձանագրում է «Մշակ»-ի թղթակիցը,— դրանց մեջ կա մեկը, որ անորակելի դավաճան Մելիք-Շահնազարի սերունդից է և պաշտոնեայ է Սուլթանովի մոտ: Իր նման մի քանիսների հետ նա թուղթ է շինել, իբր թե Ղարաբաղի հայութեան անունից, որով պահանջում է, որ Հայոց կառավարությունը չմիջամտե Ղարաբաղի գործերին: Կրկնվում է Հայ մելիքությունների պատմությունը ամենայն ճշտությամբ»<sup>198</sup>, — դառնորեն եզրակացնում է «Մշակ»-ի թղթակիցը: Գրեթե անսխալ ու դիպուկ ներկայացվում են այն նպատակները, որոնք իր առջև դրել էր Ադրբեջանի կառավարությունը՝ ունենալով համապատասխան փորձառություն և օգտվելով իր համար նպաստավոր պայմաններից ու անպատժելիության մթնոլորտից: **«Թուրքերը, ոտնատակ տալով իրանց ստորագրած պայմանները, զորքեր են կենտրոնացնում Ղարաբաղում՝ հայկական մասերը գրավելու համար:**— գրում է թերթը 1920 թվականի մարտի 7-ի համարում: — **Ամենից նշանավորը իր ռազմագիտական դրությամբ հանդիսանում է Ջրաբերդի գաւառը, և այդտեղից էլ թուրքերը պիտի սկսեն նվաճումը՝ ոչնչացնելով այդտեղի հայությանը: ... Միաժամանակ Ադրբեջանի կառավարությունը միլիոններ է բաց թողել Ղարաբաղի հայութեանը զինաթափ անելու համար: Հայերին խաբում են և նրանց զենքերը գնում թանկ գնով»**<sup>199</sup>: Մարտի սկզբին «Մշակ»-ը հաղորդում է, որ «Շուշիի հայկական մասը ենթարկուած է բլկադայի և հաղորդակցությունը դժվարացել է»: Մարտի 21-ի համարում «Վերջին ժամ» հատկանշական խորագրով թերթը հրապարակում է Շուշիից ուղարկված մասնավոր մի նամակ՝ հետևյալ բովանդակությամբ «Շատ սարսափելի և ծանր դեպ-

<sup>198</sup> «Մշակ», 1920, մարտի 7, թիվ 5:

<sup>199</sup> Նույն տեղում:

քեր են գալիս մեր գլուխը: Ոչ մի ապահովություն թե կեանքի և թե գույքի: Օր չէ լինում, որ քաղաքից դուրս, 5-10 ճամբորդ հայերի դիակ չընդունուին այստեղ ու այնտեղ ընկած: Վերջին երկու ամսուայ ընթացքում քանի-քանի հայ ընտանիքներ մնացին որբ ու անտիրական: Դիմումներն ու գանգատները խորամանկ Սուլթանովի կողմից մնում են անհետևանք: Տաճկական հայակեր եաթաղանը ամեն մի րոպե կանգնած է մեր աչքերի առաջ: Մտնում ենք անկողին՝ յոյս չունենալով, թե հետևեալ առաւտը կենդանի կըմնանք թե ոչ: Չենք իմանում մեր այս կրիտիքական դրութեան մասին սկի այդտեղ մտածող, հոգ տանող կայ, թե չէ»<sup>200</sup>: «Մշակ»-ը հրապարակում է նաև թիֆլիսաբնակ ու երևանաբնակ դարաբաղի հայերի միությունների նախագահներ Լեոյի և Գ. Բալայեանի հուշագիրը՝ ուղղված դաշնակից պետությունների կովկասյան ներկայացուցիչներին ու Վրաց կառավարությանը, որում հիշեցնում է 1919 թվականի օստոսյան համաձայնագրի մասին, ըստ որի՝ «Ղարաբաղը ճանաչեց պ. նահանգապետի ժամանակավոր իշխանությունը, իսկ ադրբեջանյան կառավարությունը երաշխավորեց հայերին ժողովրդի կուլտուրական ու ֆիզիկական կյանքը, ինչպես նաև քաղաքական իրավունքները ապահովող սահմանադրություն», որը, սակայն, կոպիտ կերպով խախտվեց: Հուշագրում մեջբերվում են բոլոր այն կետերը, որոնք այդ ամբողջ ընթացքում խախտվել են ադրբեջանական կառավարության կողմից՝ ողբերգական հետևանքներով հանգեցնելով ներկայի՝ «խստորեն վատթարացած դրությանը»: «Ադրբեջանը պահանջում է Ղարաբաղից անպայման ճանաչել իր իշխանությունը, զինաթափ անել ազգաբնակչությանը և զորամասեր մտցնել հայկական գյուղերը: Այդ նպատակով Խալիլ-փաշան և Սուլթանովը նորից դիմում են ջարդերի ու ահաբեկման քաղաքականության՝ յուսալով ուժասպառ անելով ու երկիրը ներշնչելով հասնել իրանց նպատակին»<sup>201</sup>:

Ադրբեջանական բանակին պատրաստվում էին դիմադրել Արցախի ինքնապաշտպանական շրջանները՝ Վարանդան, Խաչենը, Ջրաբերդն ու Դիզակը: Բայց թուրք-ադրբեջանական յաթաղանի սպառնալիքի դիմաց Շուշին մնացել էր անպաշտպան, որտեղ հայության դրությունը անտանելի էր: Բոլոր քայլերը վկայում էին, որ Շուշիի հարաբերական խաղաղությունն ապրում է իր վերջին ժամերը: 1920 թվականի ապիլի 4-ի համարում արդեն «Մշակ»-ն արձագանքում է Շուշիի մարտի 23-ի զարհուրելի կոտորածին և հետագա դեպքերին. «**Խեղճ Շուշի... Դժբախտ իր խաղաղասիրութեամբ, դժբախտ՝ որ մի կտոր կեանք վայելելու համար պատրաստ էր խնդրել ամենքին, նույնիսկ և Սուլթանովին: Այսօր նա վերածուած է մի հսկայական սպանդանոցի: Այսօր նա մի լուռ գերեզմանատուն է, ուր բորենիներն են խնդում դիակների հոտից**»<sup>202</sup>: Ներկայացվում են այն քայլերը, որոնք ստեղծված իրավիճակում ձեռնարկեց Հայաստանի կառավարությունը՝ հույս ունենալով, որ «Ադրբեջանի կառավարությունը կդադարեցնի արշավանքը և վիճելի հարցերը կլուծի Հայաստանի կառավարության հետ ոչ

<sup>200</sup> Նույն տեղում:

<sup>201</sup> «Մշակ», 1920, թիվ 9:

<sup>202</sup> Նույն տեղում:



*Շուշիի ավերակները 1920 թ.-ի  
հայ ազգաբնակչության ջարդերից հետո*

զենքի ուժով»: «Մշակ»-ը լայնորեն լուսաբանում է Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի պաշտոնագիրը՝ ուղղված դաշնակից մեծ պետությունների Կովկասյան ներկայացուցիչներին և Վրաց կառավարության արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորիին, որում ներկայացնում է այն դավաճանական հարձակման ու կոտորածների մասին, որոնք ձեռնարկել է Ադրբեջանի կառավարությունը անպաշտպան Արցախի հայության դեմ: Պաշտոնագրում Խատիսյանը հայտնում է, թե սրի է քաշված Շուշիի ամբողջ հայությունը և ավելացնում, որ Ղարաբաղի ու Զանգեզուրի դեմ սկսված արշավանքի նպատակն է բնաջնջել այդ երկու հայկական նահանգների հայ ազգաբնակչությունը և Նախիջևանի վրայով միանալ Թուրքիայի հետ՝ «շրջապատելով այդպիսով Հայաստանը թուրք-թաթարական թշնամի օղակով»<sup>203</sup>: Խատիսյանը Գեգեչկորիից խնդրում է ազդել Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի արյունահեղությունը դադարի և Անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների ծրագրած խորհրդակցությունը Թիֆլիսում կայանա: «Մշակ»-ը երկրորդում է «Ադրբեջան» թերթի մարտի 31-ի մի հաղորդումը, ըստ որի՝ «հայերի հարձակումները Շուշու, Խանքենդի վրայ յետ են մղուած»<sup>204</sup>: «Ադրբեջանի կառավարության արտաքին գործերի մինիստր Խան-Խոյսկին Ղարաբաղի դեպքերին տալիս է բոլորովին այլ լուսաբանություն, մատնանշելով, թե իբր նախահարձակ հայերն են եղել»<sup>205</sup>: 1920 թվականի ապրիլի 11-ին «Մշակ»-ը «Վերջին ժամ» խո-

<sup>203</sup> Նույն տեղում:

<sup>204</sup> Նույն տեղում:

<sup>205</sup> Նույն տեղում:

րագրի ներքո դարձյալ անդրադառնում է Շուշիի կոտորածին. «Շուշուց Թիֆլիս եկած մի թուրք վաճառական հաղորդեց մեզ, թե Շուշում ցավոք սրտի տեղի ունեցել հայկական կոտորած թուրք գազանացած խուժանի և զորքերի ձեռքով Ասկերանը գրավելուց յետոյ: Կոտորածին ենթարկվել են գլխավորապես անպաշտպան հայ կանայք, երեխաներ և ծերունիներ: Հրդեհուած են մի քանի հայ տներ: Ներկայումս Շուշում համարեա հայ չկայ»:

1920 թվականի ապրիլ-մայիս ամիսներին թերթը շարունակում է լուսաբանել ու սուր քննադատության ենթարկել մուսավաթականների անսանձ կամայականությունները Լեռնային Ղարաբաղում՝ իրավիճակը դիտելով տարբեր կողմերից: Ներկայացվում են այդ իրադարձություններին առնչվող մի շարք հուշագրեր, հեռագրեր, պաշտոնագրեր: Շուշիի եղեռնագործության մասին ուշագրավ հրապարակումներ են հատկապես ականատեսների վկայությունները: Մեջբերենք հատվածներ 1920 թվականի ապրիլի 5-ին Հադրութից «Մշակ»-ին հասցեագրված մի նամակից. «... Մի երկու ժամվայ ընթացքում քաղաքը այրվում էր կազարմի մոտ, Կանաչ ժամի մոտ և ներքևի հանգստարանում: ... Սրբազանին ու քահանային թուրքերը գլխատում են և տունը իսկույն այրում: Աթաբեգյանների ամբողջ ընտանիքին, Խալոնց Ալխենքի բոլոր ընտանիքներին թիքա-թիքա են անում և տան մեջ այրում: Մենք Սաքոյի(բժ. Համբարձումյան) խորհրդով այն տնից, որի մեջ ապաստանել էինք, անմիջապես երեխաների հետ դուրս եկանք, անկարող լինելով վերցնել նույնիսկ մի թաշկինակ: ... Շուշու հայ բնակիչների կեսը ոչնչացավ ամբողջ ընտանիքներով: Երեք ժամվա ընթացքում Շուշին կործանվեց: Ամբողջ քաղաքը այրված ու կողոպտված է, բացառությամբ թուրքական թաղամասի և Ձահուր-Ղալայի: ... Շատերին կենդանի այրել են, մոտ 12000 հոգի հրաշքով ազատվեցին և գտնվում են գավառում առանց դրամի ու շորի. 2500 հոգի գերի ընկան, նրանց վիճակը հայտնի չէ»<sup>206</sup>:

Թերթում տեղեկություններ կան նաև Շուշիի դեպքերից հետո Թիֆլիսում անցկացված բազմամարդ միտինգների մասին, որ կազմակերպել է ղարաբաղցիների հայրենակցական միությունը և օրախնդիր բանաձևեր ընդունել՝ «Անմիջապես դադարեցնել յանցավոր և անմիտ արհեստիտությունը երկու դարավոր հարևան ժողովուրդների միջև», «Բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով»<sup>207</sup>, որոնք այդպես էլ ազատության դուռ չբացեցին Արցախի համար:

Թերթում առանձին ուշագրավ նյութեր կան նաև գաղթականների հետագա ճակատագրի մասին:

Այսպիսով՝ ամփոփելով արձանագրենք, որ Արցախում, մասնավորապես Շուշիում 1918-1920 թթ.-ին տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները լայնորեն արտացոլված են «Մշակ»-ի էջերում: Սկզբնաղբյուրային արժեք ունեցող այդ հրապարակումները առատ նյութ են տալիս Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրման համար:

<sup>206</sup> «Մշակ», 1920, թիվ 13:

<sup>207</sup> «Մշակ», 1920, թիվ 10:

## ОСВЕЩЕНИЕ ПУБЛИКАЦИЙ ГАЗЕТЫ «МШАК» О МАССОВЫХ УБИЙСТВАХ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В ШУШИ В 1920 ГОДУ

ТЕЙМИНА МАРУТЯН

Предметом статьи является освещение публикаций газеты «Мшак» о массовых убийствах армянского населения в Шуши в 1920 году.

Целью статьи является изучение публикаций 1918–1920 годов, в которых затрагивается историческая судьба Арцаха, освещаются драматические события, произошедшие в Арцахе и в Сюнике в начале XX века, в том числе геноцид 1920 года в Шуши. Наша задача собрать воедино и проанализировать информацию, предоставленную газетой об этом злополучном событии, имеющем первостепенное значение и познавательную ценность для изучения того самого сложного периода в истории Арцаха.

Вышесказанное обусловило актуальность статьи фактом столкновения с горьким опытом истории.

В статье использованы современные методы изучения журналистики, исторических, сравнительный методы, контент-анализ, обобщение.

**Ключевые слова:** *Нагорный Карабах, Сюник, Шуши, «Мшак», газета, публикация, резня, геноцид.*

## THE PUBLICATIONS OF “MSHAK” NEWSPAPER ABOUT THE MASSACRES OF THE ARMENIAN POPULATION IN SHUSHI IN 1920

TEHMINA MARUTYAN

The subject of the article is the coverage of the publications of “Mshak” newspaper about the massacres of the Armenian population in Shushi in 1920. The aim of the article is to study the newspaper’s publications of 1918–1920, which touch upon the historical fate of Artsakh, presenting the dramatic events that took place in Artsakh and Syunik in the early 20th century, including the genocide in Shushi in 1920. Our task is to bring together and analyze the information provided by the newspaper about this unfortunate event, which is of primary importance and cognitive value for the study of that most difficult period in the history of Artsakh.

Above mentioned determines the urgency of the article: to face the bitter experience of history.

In the article we have used modern methods of studying journalism, historical, comparison methods, content analysis, generalization.

**Key words:** *Nagorno-Karabakh, Syunik, Shushi, “Mshak”, newspaper, publication, massacre, genocid.*

## ՆՈՐ ԷՋԵՐ 1828–1835 ԹԹ. ՇՈՒՇԻՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոդվածը ներկայացվել է 15.11.2020 թ., գրախոսվել է 30.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Ներկա ուսումնասիրության մեջ անդրադարձել ենք 1828–1835 թթ.–ին Շուշիում տպագրված գրքերին, որոնք Արցախի տարածքում լույս տեսած առաջին հրատարակություններն էին: Դրանք հետազոտելիս ոչ միայն փորձել ենք դասակարգել՝ ըստ իրենց բովանդակային ուղղվածության, այլև համեմատելով մի շարք օրինակների ու տպագրությունների հետ՝ մանրամասն վերլուծել ենք՝ ցույց տալով այդ գրքերի դերն ու նշանակությունը հայ տպագրության պատմության մեջ: Տարբեր աղբյուրների համադրմամբ ի մի ենք բերել այն բոլոր արժանահավատ տեղեկությունները, որոնց շնորհիվ վերականգնել ենք գրքերին առնչվող անհայտ տվյալները: Միաժամանակ մեր կողմից առաջին անգամ հայտնաբերվել են նաև որոշ գրքերի մասին տեղեկություններ, որոնց մինչ այդ որևէ անդրադարձ չի եղել: Հոդվածի վերջում զետեղել ենք տվյալ ժամանակաշրջանում Շուշիում տպագրված գրքերի՝ մեր կազմած ամբողջական մատենագիտական ցանկը, որն ըստ անհրաժեշտության ծանոթագրել ու պարզաբանել ենք:

Կարծում ենք, որ սույն ցանկը՝ որպես սկզբնաղբյուր, կարող է օգտակար լինել ոչ միայն մատենագիտությամբ զբաղվողների, այլև առհասարակ հայ գրքի պատմությամբ հետաքրքրվող մասնագետների համար:

**Հիմնաբառեր՝** Շուշի, բողոքական քարոզիչներ, Բազելի Ավետարանական քարոզչական ընկերություն, առաջին հրատարակություն, տպարան, գրքույկ, գրացուցակ, մատենագիտություն:

Հայ տպագրության պատմությամբ զբաղվող ուսումնասիրողներն անցյալի որևէ տպարանի մասին խոսելիս հաճախ խուսափում են նշել իրենց կողմից ուսումնասիրվող տպարանում հրատարակված գրքերի ճշգրիտ ցանկը, քանի որ չունեն

նալով սկզբնաղբյուրներ կամ վավերագրական տվյալներ՝ չեն կարողացել հստակեցնել անհրաժեշտ տեղեկությունները: Մյուս կողմից պետք է նշել, որ անցյալի տպագիր գրականությունը միշտ չէ, որ ամբողջությամբ պահպանված է, քանի որ ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ դրա մի մասը չի հասել մերօրյա ընթերցողին, իսկ շատ դեպքերում մինչև անգամ անհայտ են մնացել նաև ուսումնասիրողներին: Հայ գրքի մատենագիտական ցանկերն առաջնային կարևորություն ունեն հետազոտողների համար: Այս ցանկերը մեր թեմայի հետ առնչվում են 1801–1850 թթ.–ի տպագրված հայերեն գրքերի մատենագիտությամբ, որը կազմել և աշխատասիրել է 20–րդ դարի մատենագետ, բանասեր Հայկ Դավթյանը<sup>208</sup>: Վերջինս, հասկանալիորեն, ամբողջական չէր կարող լինել, քանի որ նախորդ տասնամյակների համեմատ ընդարձակվել էր ինչպես հայկական տպագրավայրերի աշխարհագրությունը, այնպես էլ ավելացել էին այդ հրատարակությունների տեսականին ու տպաքանակը: Չնոռանանք նաև, որ նախկինում կատարված մատենագիտական ուսումնասիրությունները չեն ունեցել այն մեծ առավելությունը, ինչ որ կա այսօր՝ պայմանավորված արդի միջոցների համատարած թվայնացման աշխատանքներով: Հասկանալի է, որ ժամանակի ընթացքում այս մատենագիտական ցանկերը լրամշակվում, սրբագրվում են նոր գրքերի ի հայտ գալով և աշխարհի առցանց գրադարաններում առկա թվային պաշարներով:

Հոդվածում ներկայացվում են Շուշիում հրատարակչական գործունեություն իրականացրած բազելյան բողոքական քարոզիչների տպարանում 1828–1835 թթ.–ին հրատարակված գրքերը, դրանց բովանդակային ուղղվածությունը, տպաքանակը, աշխարհագրական տարածումը<sup>209</sup>: Ուշագրավ է, որ մինչև օրս հիշյալ հարցերին վերաբերող որևէ հստակ տվյալի չենք հանդիպում գիտական գրականությունում: Ուսումնասիրելով 1827–1838 թթ.–ին Բազելում հրատարակված «Ավետարանական առաքելությունների» ամսագիրը (“Magazin für die neueste Geschichte der evangelischen Missions- und Bibelgesellschaften”)՝ կարևոր տեղեկություններ ենք գտնում Շուշիում բողոքական քարոզիչների գրահրատարակչական գործունեության վերաբերյալ: Պետք է նշել, որ Շուշիում գործող բողոքական քարոզիչների կողմից պարբերաբար Բազել ուղարկված զեկուցագրերից կազմվել են ամենամյա գործունեության ամփոփ հաշվետվություններ, որոնք էլ հրատարակվել են վերոհիշյալ ամսագրում: Ամենամյա պաշտոնական հաշվետվությունների մեջ, ի թիվս քարոզիչների այլ գործունեության, փոխանցվում էր նաև Շուշիի տպարանի աշխատանքներին առնչվող

<sup>208</sup> Դավթյան Հ., Հայ գիրքը 1801–1850 թվականներին (մատենագիտություն), Երևան, 1967, 539 էջ:

<sup>209</sup> Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեության արդյունքում 1827 թ. վերջին Շուշիում հիմք դրվեց տպագրական գործին, իսկ 1828 թ. սկսած՝ այստեղ լույս տեսած հայերեն գրքերն Արցախի տարածքում տպագրված առաջին հրատարակություններն էին: Շուշիում քարոզիչները որոշակի դադարներով՝ ներառյալ 1835 թ., հրատարակեցին տարաբնույթ գրքեր: Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հաստատման և տպարանի հիմնադրման մասին տես Ս. Պետոյան, «Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը», Եվրոպական համալսարան, Երևան, 2019, № 10 (02), էջ 372–384:



արժեքավոր տեղեկություններ: Դրանց համադրմամբ կարող ենք եզրակացնել, թե Շուշիի տպարանում 1828–1835 թթ.–ին ինչ գրքեր են տպագրվել, ինչ ուղղվածություն և որքան տպաքանակ են դրանք ունեցել, ինչպիսի աշխարհագրական տարածում են ընդգրկել:

Ուսումնասիրելով այդ ամսագրերում եղած տեղեկությունները և դրանք համեմատելով այլ աղբյուրների հետ՝ կարողացել ենք ամբողջացնել տվյալ ժամանակահատվածում բողոքական քարոզիչների կողմից Շուշիում տպագրված գրքերի ճշգրիտ ցանկը՝ ներկայացնելով 31 անուն գրքեր, որոնցից 29 գրքերը հայերեն են, մեկը՝ թաթար–թուրքերեն ու պարսկերեն, իսկ մի գիրք էլ՝ միայն պարսկերեն<sup>210</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ ցանկը կազմելիս մեր կողմից նոր տվյալներ են ի հայտ եկել 9 անուն գրքույկի<sup>211</sup> մասին, որոնք այդպես էլ չկարողացանք որևէ տեղ տեսնել: Ցանկում տեղ գտած գրքերը դասավորված են ըստ ժամանակագրության, նշված է դրանց տպաքանակը (բացառությամբ սույն հոդվածի վերջում զետեղված ցանկի 26–րդ համարի), իսկ որոշ գրքերի դեպքում տրվել են նաև ծանոթագրություններ: Ցանկում տեղ գտած գրքերի համար նշել ենք նաև դրանց պահպանման հայտնի վայրերը՝ ընդգծելով այն գրքերը, որոնք տեղ են գտել Հայկ Դավթյանի վերոհիշյալ մատենագիտության հատորյակում:

Երբ առաջին հայացքից դիտարկում ենք մեր կազմած ցանկը, անհասկանալի է թվում, թե ինչպես կարող էին այդ գրքերից կամ գրքույկներից որոշներն անհայտ մնալ գիտական հանրությանը՝ նույնիսկ բացակայելով մեզ հայտնի գրադարաններից: Կարևոր է նշել, որ ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած գրքույկներից շատերը դասագրքային հրատարակություններ<sup>212</sup> են: Իսկ դրանց «անհետացումը» հնարավոր է բացատրել խիստ կիրառական լինելու և մշտապես սաների՝ ձեռքից ձեռք անցնելու հանգամանքով: Մյուս կողմից էլ պետք է արձանագրել, որ դեռևս 19–րդ դարի կեսերին Շուշիի բողոքական քարոզիչների հրատարակած գրքերից առհասարակ շատ քիչ օրինակներ են պահպանվել մեր օրերում, թեև դրանց տպաքանակը քիչ չի եղել<sup>213</sup>: Այս իմաստով ուշագրավ է պահպանված այն տեղեկությունը, համաձայն որի՝ 1844 թ.–ի նոյեմբերի 9–ին Ղարաբաղի հայոց վիճակավոր կոնսիստորիայի՝ Ս. Էջմիածնի Սինոդին ուղղված զեկուցագրում տեղեկացվում էր, որ թեև նախկինում Բաղդասար մետրոպոլիտը վիճակի (թեմ)

<sup>210</sup> 1834 թ. սկզբներին բողոքական քարոզիչներն ստացել էին Լոնդոնից ձեռք բերված պարսկերեն տառատեսակներ, որից հետո միայն 1835 թ. Շուշիում հրատարակել են թաթար–թուրքերեն և պարսկերեն գրքեր (տես Ս. Պետոյան, «Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը», էջ 379–380):

<sup>211</sup> Ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած և ցանկում նշված գրքերից շատերի հրատարակության պատմությանը հիմնավոր կերպով անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում (տես Ս. Պետոյան, «Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին», Բանբեր Մատենադարանի, Երևան, 2020, № 30):

<sup>212</sup> Ընդհանրապես, Շուշիի բողոքական քարոզիչներն իրենց տպագրած գրքերը բաժանում էին դասագրքային հրատարակությունների և գիտական ուսումնասիրությունների (տրակտատներ):

<sup>213</sup> Շուշիում հրատարակված գրքերի տպաքանակի մասին տես հավելվածի ցանկը:

տպարանում<sup>214</sup> ունեցել է բողոքական քարոզիչների տպագրած գրքույկներից, սակայն դրանք բոլորը բաժանվել են տեղի բնակիչներին, և տպարանում դրանցից օրինակներ չեն մնացել: Ավելին՝ Շուշիում որոնելուց հետո էլ դրանցից և ոչ մեկը չեն կարողացել ձեռք բերել<sup>215</sup>:

Պետք չէ մոռանալ նաև, որ բողոքական քարոզիչների հրատարակությունների մեջ շատ գրքույկներ պարզ թղթե կազմերով<sup>216</sup> էին, որոնք կարճ ժամանակում ընդունակ էին մաշվելու: Դրանք աչքի չէին ընկնում տպագրական շքեղ արտաքինով, այլ առավելաբար ունեին համեստ ձևավորում: Գեղարվեստական հարդարանքի տեսակետից նույնպես շատ պարզ էին, չունեին ճոխ անվանաթերթեր, զարդագրեր, գլխատառեր, անգամ՝ հիշատակարաններ: Պարզ գլխազարդերով ու վերջազարդերով ևս հարուստ չէին: Այդ ամենով հանդերձ՝ դրանք բավական պարզ ու մաքուր տպագրություններ էին: Սա բացատրվում է այն բանով, որ քարոզիչների համար էականը գրքերի բովանդակության մատչելիությունն էր, որի շնորհիվ դրանք հասկանալի կդառնային հասարակության լայն շրջանակների համար: Ահա թե ինչու հետզհետե քարոզիչները խուսափեցին խրթին լեզվով շարադրված ու դժվարընկալելի հրատարակություններից՝ գրաբարից անցում կատարելով աշխարհաբար արևելահայերենի: Մինչև անգամ տպագրական պատվագրության (հապավված բառեր) ավանդույթը, որը հայ տպագրության մեջ ընդունված էր կիրառել այդ և նախորդող ժամանակաշրջաններում, ինչպես նաև գրքերի անվանաթերթերին տպագրության թվականին զուգահեռ հանդիպող հայոց Մեծ թվականի կիրառումը բողոքական քարոզիչների հետագա տպագրություններում աստիճանաբար իրենց տեղը զիջեցին ավելի պարզ շարադրանքներին: 1828–1835 թթ.–ին քարոզիչների կողմից Շուշիում տպագրված հրատարակություններում առհասարակ հիշատակված չեն տպարանի մասին տվյալները, ինչը տվյալ ժամանակի համար հազվադեպ երևույթ էր:

Կարևոր է հասկանալ, թե բողոքական քարոզիչների հրատարակած 29 անուն հայերեն գրքերից քանիսն էին դասագրքային հրատարակություններ և քանիսը՝ գիտական ուսումնասիրություններ (տրակտատներ): Հայերեն գրքերի և դրանց ցանկերի հետազոտությունից պարզ է դառնում, որ 29 գրքից 14–ը եվրոպական լեզուներից թարգմանված գիտական ուսումնասիրություններ են, որոնք կրոնաքարոզչական բնույթի են, իսկ մնացյալ 15–ը դասագրքային հրատարակություններ են<sup>217</sup>: 29 անուն հայերեն հրատարակությունների տպաքանակի հանրագումարն անցնում է 35.000 միավորը, ինչը այդ ժամանակվա համար բավական խոսուն թիվ է: Ընդ որում՝ 19.300 միավոր տպաքանակը վերաբերում է կրոնաքարոզչական բնույթի 14 անուն հրատարակություններին, իսկ 15.864 միավորը՝ դասագրքային հրատարակություն-

<sup>214</sup> Շուշիում բողոքական քարոզիչների գործունեության դադարից հետո տպարանի տնօրինությունն ստանձնել է Գանձասարի մետրոպոլիտ Բաղդասար Հասան–Ջալալյանը:

<sup>215</sup> Տե՛ս Վաևրագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ի, Էջմիածին, 2019, էջ 413:

<sup>216</sup> Որոշ գրքերի կազմերի վրա էլ հանդիպում էր գրքի կարճ վերնագիրը:

<sup>217</sup> Դասագրքային հրատարակություններից որոշները («Տետրակ այբուբենական», «Առաջին կանոն սաղմոսի», «Պատմություն Սուրբ Գրոց») Շուշիում ունեցել են վերատպություններ: Ավելի մանրամասն տե՛ս ցանկում:

ներին: Ակնհայտ է, որ միանշանակ չի կարելի պնդել, թե Շուշիի բողոքական քարոզիչների տպարանը հետապնդում էր զուտ քարոզչական նպատակներ: Այս վիճակագրական թվերը մեկ անգամ ևս ապացուցում են, որ բողոքական քարոզիչները մեծ նշանակություն էին տալիս կրթությանը, որը հետագայում կարող էր նաև ծառայեցվել քարոզչական նպատակների համար<sup>218</sup>:

Շտաբըքիր է իմանալ, թե հայկական աղբյուրներում ինչ տեղեկություններ կան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հրատարակված գրքերի տպաքանակի մասին: Այս հարցի վերաբերյալ Լեոն գրում է. «Միսիօներների տպարանական գործունեութեան արդիւնքներն էին (թէ Շուշում և թէ Մոսկվայում) 11,679 օրինակ հայերէն, 728 օրինակ պարսկերէն, 147 օր. թուրքերէն և 100 օրինակ եբրայերէն գրքերը...»<sup>219</sup>: Սակայն Լեոյի հիշատակած տեղեկության մեջ պարզ չի դառնում, թե այդ գրքերի տպաքանակը վերաբերում է Շուշիում ու Մոսկվայում բողոքական քարոզիչների միացյալ հրատարակություններին (ինչպես նշում է Լեոն մեջբերված հատվածում՝ որպես միջանկյալ տեղեկություն), թե՛ միայն Շուշիի հրատարակություններին: Հիշյալ գրքերի տպաքանակի առնչությամբ հստակացնենք, որ 11.679 օրինակ հայերեն գիրք ասելով՝ պետք է հասկանալ տարբեր անուն գրքերի 11.679 միավոր (հատ): Այս թիվը պետք չէ շփոթել գրքերի անունների հետ: Սակայն գլխավոր խնդիրն այն է, որ Լեոն այս տեղեկությունները հիշատակելիս որպես տարրընթերցում՝ հղում է կատարում Կովկասյան հնագրական հանձնաժողովի վավերագրերին («Акты, собранные Кавказской археографической комиссией»): Լեոյի հղած աղբյուրն ուսումնասիրելիս հանդիպում ենք Կովկասի գլխավոր կառավարիչ Գ. Ռոզենի՝ 1836 թ.–ի սեպտեմբերի 3–ով թվագրված նամակին՝ ուղղված Ռուսաստանի Ներքին գործերի նախարար Դ. Բլուդովին: Նամակում կարդում ենք, որ Ռոզենը Շուշիի բողոքականներից ստացել է քարոզչական գրքերի մի ցուցակ, համաձայն որի՝ քարոզիչների մոտ առկա է եղել 11.679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն, 100 օրինակ եբրայերեն գրքեր<sup>220</sup>: Փաստորեն, ինչպես տեսանք, Կովկասյան հնագրական հանձնաժողովի՝ խնդրո առարկա

<sup>218</sup> Քարոզիչները Շուշիում դեռ 1827 թ. հիմնադրել էին հայկական կանոնավոր ուսումնարան: Առաջին ուսումնական տարում (1828 թ.) այստեղ սովորում էին շուրջ 130 սաներ, որոնք հիմնականում տեղացի չունեւոր հայ ընտանիքներից էին: Այստեղ սաները սերտում էին հայերեն գրել–կարդալ, մայրենի լեզվի քերականություն, Նոր կտակարան և մասամբ՝ Հին կտակարան, կատարում էին գրաբարից աշխարհաբար փոխարկություններ: Բողոքական օտար քարոզիչները դասավանդում էին թվաբանություն և աշխարհագրություն՝ սաների համար կազմելով հայերեն դասագրքեր, իսկ որոշ սաների դասավանդում էին ռուսերեն: Նրանք նաև անհատական դասընթացներով ցանկացողներին սովորեցնում էին հունարեն, լատիներեն, անգլերեն և եբրայերեն: Շուշիի բողոքական քարոզիչները տեղի ուսումնարանի կարիքների համար ոչ միայն տպագրում էին կրթական բնույթի գրքեր, այլև օգտվում էին այլուր տպագրված հայերեն նույնաբնույթ գրքերից: Իսկ երբեմն էլ այդ գրքերը վերախմբագրելով՝ նորովի էին հրատարակում իրենց տպարանում (տես Ս. Պետոյան, «Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը», էջ 380):

<sup>219</sup> Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838–1913, Թիֆլիզ, 1914, էջ 93:

<sup>220</sup> Акты собранные Кавказскою Археографическою Коммиссиею, подъ редакцию А. Д. Берже, Томъ VIII, Тифлисъ, 1881, стр. 329–330 (այսուհետ՝ АКАК).

վավերագրում Լեոյի մեջբերած հատվածը, որպես միջանկյալ տեղեկություն («թէ Շուշում և թէ Մոսկվայում»), բացակայում է:

Պետք է նկատի ունենալ, որ Լեոյի հաղորդած վերոհիշյալ տեղեկությունը տարընկավման արդյունք է, ինչը որևէ կերպ չէր արտացոլում Շուշիի բողոքական քարոզիչների հրատարակած գրքերի տպաքանակի հանրագումարը: Մինչդեռ Ռոզենի հիշյալ գրությունից պարզ է դառնում, որ այդ գրացուցակում հիշատակված գրքերի միավորները վերաբերում էին քարոզիչների մոտ այդ պահի դրությամբ եղած գրքերին, որոնք, ինչպես տեսանք, հայերեն և օտար լեզուներով էին: Մյուս կողմից էլ բողոքական քարոզիչներն իրենց գործունեության ընթացքում երբայերեն գրքեր չեն հրատարակել, ինչի մասին սխալմամբ նշում է Լեոն: Դա պարզ է դառնում նաև մեր կազմած ցանկից:

Բողոքական քարոզիչների հրատարակած գրքերի լայն տարածումը պայմանավորված էր մի քանի գործոններով: Տարածաշրջանում մեծ քանակությամբ գրքեր տարածում էին նաև Շուշիի հայկական ուսումնարանի հայ երիտասարդները, որոնք հասնում էին Շուշի, Շամախի, Բաքու, Գանձակ, Նուխի, Նախիջևան, Դերբենդ, Աստրախան, Թիֆլիս, Երևան, Էջմիածին և դրանց շրջակայքը: Բողոքական քարոզիչների վկայությամբ՝ հայ երիտասարդներն իրենց տեղեկացնում էին, որ շատ հայեր մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում, քանի որ գրքերի մեծ մասը աշխարհաբար արևելահայերենով էր, որը միանգամայն հասկանալի էր տեղացիներին<sup>221</sup>: Մյուս կողմից՝ գրքերի տարածմանը նպաստում էին քարոզիչների ճանապարհորդությունները, որոնց շնորհիվ բողոքական քարոզիչների հրատարակած հայերեն գրքերը հասնում էին մինչև անգամ Էրզրում, Թավրիզ, Սպահան<sup>222</sup>, Բաղդադ և այլ վայրեր, որտեղից էլ նույնիսկ հեռավոր Հնդկաստան<sup>223</sup>:

Բացի դրանից, բողոքական քարոզիչները Շուշիում իրենց տպագրած գրքերի տարածումը խթանելու նպատակով փորձում էին տեղում գտնել հայ վաճառականների, որոնք տարբեր վայրերում կարող էին դրանք վաճառել: Նշենք, որ վաճառված գրքերի բեռնափոխադրման ծախսերը հաճախ գերազանցում էին վաճառքի գինը: Մյուս կողմից էլ քարոզիչների հրատարակած հայերեն դասագրքերը և Նոր կտակարանի որոշ օրինակներ վաճառվում էին ցածր գներով: Դրան զուգահեռ՝ նույն Նոր կտակարանի այլ օրինակները, ինչպես նաև մեծամասամբ գիտական ուսումնասիրությունները (տրակտատ) քարոզիչների կողմից բաժանվում էին անվճար<sup>224</sup>:

Քարոզիչներն իրենց հրատարակած գրքերը տարածում էին նաև համախոհների և այդ գրքերով հետաքրքրվող հայերի միջոցով: Շուշիում բողոքական քարոզիչների՝ հետագայում տպագրած (1832, 1833) որոշ գրքերի վերջում հանդիպում ենք

<sup>221</sup> Magazin für die neueste Geschichte der evangelischen Missions— und Bibelgesellschaften, Vol. 17, 1832, S. 442 (այսուհետ՝ Evangelisches Missions—Magazin).

<sup>222</sup> Thomas S. R. O’Flynn, The Western Christian Presence in the Russias and Q. j.r Persia c. 1760–c. 1870, Boston, 2017, pp. 525, 538, 503–504, Evangelisches Missions—Magazin, Vol. 19, 1834, S. 465:

<sup>223</sup> Evangelisches Missions—Magazin, Vol. 17, 1832, S. 441, АКАК, Томъ VIII, Тифлисъ, 1881, с. 324, Groves Anthony Norris, Journal of a residence at Bagdad, during the years 1830 and 1831, London, 1832, p. 2, 211.

<sup>224</sup> Evangelisches Missions—Magazin, Vol. 19, 1834, S. 442–443.

վաճառվող գրքերի՝ համառոտ վերնագրերով ցանկերի, որոնց նախորդում է «Շուշի բերդումն ասետարանական ժողովքի տան մէջն էս հետևող գրեանքս էլ ծախվում են» սկսվածքը: Ցանկերում հիշատակված գրքերը, բացառությամբ առաջինի («Նոր կտակարան տպեալ ի Վենետիկ»), բողոքական քարոզիչները մեծ մասամբ տպագրել են Շուշիում, իսկ մնացածը՝ Մոսկվայում<sup>225</sup>: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդ ցանկերը հիմնականում հանդիպում են բողոքական քարոզիչների տպագրած գիտական ուսումնասիրությունների վերջում: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ քարոզիչներն այս ցանկերի միջոցով ընթերցողներին ծանոթացնում էին իրենց նախկին հրատարակությունների մասին՝ միաժամանակ առիթն օգտագործելով դրանց վաճառքի ու տարածման համար:

Ուսումնասիրելով բողոքական քարոզիչների վերոհիշյալ հաշվետվությունները՝ պարզել ենք, որ 1829–1836 թթ.–ին Շուշիում ու Մոսկվայում իրենց տպագրած հայերեն հրատարակություններից տարածվել էին 32.912 միավոր գրքեր, որոնցից 7.006–ը դասագրքային հրատարակություններ էին, իսկ 25.906–ը՝ գիտական ուսումնասիրություններ: Ինչ վերաբերում է քարոզիչների՝ Շուշիում տպագրած օտարալեզու հրատարակություններին, ապա ընդամենը 1000 տպաքանակով հրատարակված պարսկերեն գրքից («Ճշմարտության կշեռքներ») վերջիններս 1835–1836 թթ.–ին կարողացել էին տարածել 656 օրինակ<sup>226</sup>:

Կարևոր է նաև իմանալ, թե բողոքական քարոզիչների հրատարակություններն անցյալի տպագիր գրացուցակումներից որոնցում են տեղ գտել, որպեսզի պատկերացում ունենանք դրանց կիրառական նշանակության և հայկական միջավայրում հետագա օգտագործման ու պահպանման մասին: Սակայն մեզ առավել հետաքրքրում է, թե դրանք ընթերցողների կողմից ինչպիսի տարածում կամ պահանջարկ կարող էին ունենալ: Այսպես, 19–րդ դարավերջին և 20–րդ դարասկզբին Ցարական Ռուսաստանի տարածքում բացված հայկական մի շարք գրադարաններում, ինչպես տեղեկանում ենք վերջիններիս գրացուցակներից<sup>227</sup>, հանդիպում ենք բողոքա-

<sup>225</sup> Ցանկերում տեղ գտած գրքերի գները, տպագրության տարեթիվը, վայրը, տպարանը բացակայում են, իսկ յուրաքանչյուր գրքի մասին տեղեկությունը հակիրճ է (վերնագիր, լեզվական բնորոշում՝ «գրաբառ», «աշխարհաբառ», «ի գրաբառէ յաշխարհաբառ»):

<sup>226</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 20, 1835, S. 441–443, Vol. 21, 1836, S. 461–463, Vol. 22, 1837, S. 385–386, 400–401. Վերոբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ բողոքական քարոզիչները ոչ միայն տարածում էին իրենց կողմից հրատարակած գրքերը, այլև տարբեր լեզուներով այլուր տպագրված աստվածաշնչյան գրքերը: 1829–1836 թթ. միայն տարածաշրջանում քարոզիչների տարածած աստվածաշնչյան գրքերի ընդհանուր թիվը կազմում է 11.454 միավոր, որից 3.264–ը հայերենով, իսկ մնացյալ 8190–ը՝ այլ լեզուներով (հիմնականում պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, ռուսերեն, եբրայերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ևն): Տարածում գտած հայերեն աստվածաշնչյան գրքերի մեծ մասը քարոզիչների հրատարակած Մատթոսի ավետարանն (Մոսկվա, 1832) ու Նոր կտակարանն էր (Մոսկվա, 1834), իսկ մնացած փոքր մասը՝ Կոստանդնուպոլսի աշխարհաբարով (փարիզյան) և գրաբարով (վենետիկյան) Նոր կտակարանի օրինակներն էին, որոնք քարոզիչներն ստանում էին Բրիտանական Աստվածաշնչյան ընկերության օժանդակությամբ: Հասկանալի է, որ գրաբար Նոր կտակարաններն ավելի քիչ տարածում ունեին՝ պայմանավորված լեզվական դժվարություններով:

<sup>227</sup> Այդ գրացուցակներն են՝ 1. Catalogue des livres de la bibliothèque fondamentale de l'institute Lazareff des langues orientales, Moscou, 1861; 2. Каталогъ книгъ и рукописей библиотекъ

կան քարոզիչների՝ Շուշիում ու Մոսկվայում հրատարակած որոշ գրքերի: Դրանք ուսումնասիրելով՝ կարող ենք ասել, որ այդ գրքերը գրադարաններում փոքրաքանակ էին: Առավել զարմանք է հարուցում այն փաստը, որ բողոքական քարոզիչների կողմից Շուշիում ու Մոսկվայում տպագրված գրքերից հազիվ 10 անուն հայերեն գիրք է հանդիպում Լազարյան ճեմարանի գրադարանի գրացուցակներում, այն էլ՝ 1–2 օրինակով: Սա այն դեպքում, երբ բողոքական քարոզիչներն իրենց գրքերը 1830–1840 թթ.–ին Մոսկվայում տպագրում էին Լազարյան ճեմարանի տպարանում: Ավելին՝ Շուշիում բողոքական քարոզիչների գործունեության դադարից հետո (1837 թ.) նրանք իրենց քարոզչական բնույթի գրքերը շարունակեցին տպագրել հենց Լազարյան ճեմարանի տպարանում:

Ինչ վերաբերում է Շուշիի տպարանի ոչ հայալեզու հրատարակություններին, ապա նշենք, որ Լազարյան ճեմարանի 1861 և 1888 թթ.–ի տպագիր գրացուցակներում<sup>228</sup> ռուսերենով հիշատակվում է Շուշիում տպագրված «Ճշմարտության կշեռք-

Лазаревского института восточныхъ языковъ. а) Библиотека Специальныхъ классовъ. б) Восточный отдель Фундаментальной библиотеки, Москва, 1888; 3. Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревского института восточныхъ языковъ. Приложение 1) Библиотека Н. О. Эмина, Москва, 1896; 4. Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревского института восточныхъ языковъ. Приложение 2) Библиотека Г. И. Кананова, Москва, 1901; 5. Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревского института восточныхъ языковъ. Приложение 3) Списокъ книгъ и рукописей, поступившихъ съ 1888 г. по 1–ое Юня 1903 года, Москва, 1904; 6. Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշու գրադարանի, Շուշի, 1891; 7. N 2 Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշու գրադարանի, Շուշի, 1894; 8. Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բազուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի, Բազու, 1891; 9. Գրացուցակ Շուշուայ հասարակաց ժողովարանի գրադարանի, Շուշի, 1910; 10. Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բազուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի (Յաւելուած 1891 թ. հրատարակուած գրացուցակի), Բազու, 1894; 11. Գրացուցակ բարձրագոյնս հաստատեալ Բազուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի (Յաւելուած 1891–1894 թ. հրատարակած գրացուցակների) N 2, Բազու, 1899; 12. Գրացուցակ Բազուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի: (Յաւելուած 1891–1894–1899 հրատարակուած գրացուցակների) N 3, Բազու, 1890; 13. Գրացուցակ հայերէն գրքերի Բազուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի = Каталогъ армянскихъ книгъ библиотекы Бакинск. Арм. Человеколюбиваго общества, Баку, 1912; 14. Первое добавление къ каталогу библиотеки Бакинскаго Общественнаго Собранія за 1910–1913 г.г., Баку, 1913; 15. N 2 Յաւելուած 1903 թ. գրացուցակի Աղէքսանդրապօլի քաղաքային գրադարան–ընթերցարանի, Աղէքսանդրապօլ, 1908; 16. Մայր ցուցակ մատենից գրադարանի Ներսիսեան հոգեւոր դպրոցի հայոց, Թիֆլիս, 1893; 17. Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի [I Մանկական], Թիֆլիս, 1910; 18. Գրացուցակ հայերէն գրքերի Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի: II Գեղարուեստական, Թիֆլիս, 1910; 19. Գրացուցակ հայերէն գրքերի: [I Մանկական: Յաւելուած], Թիֆլիս, 1913; 20. Գրացուցակ հայերէն գրքերի: [II Գեղարուեստական: Յաւելուած], Թիֆլիս, 1913; 21. Գրացուցակ հայերէն գրքերի: Հանգուցեալ Աւետիս Վարդապետեանի անուան բաժանմունք: Գրացուցակ հայագիտական գրքերի, Թիֆլիս, 1913; 22. Каталогъ книгъ Маріинско–Анановскаго училища: Къ 1–му марта 1912 г., Тифлисъ, 1912.

<sup>228</sup> Catalogue des livres de la bibliothèque fondamentale de l'institute Lazareff des langues orientales, p. 24; Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревского института восточныхъ языковъ, с. 15.

ներ» պարսկերեն աշխատությունը: Այն նաև հիշատակվում է «Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերության գրադարանի» գրացուցակում<sup>229</sup>:

Կարևոր է նաև հասկանալ, թե Շուշիում բողոքական քարոզիչների հրատարակած գրքերը, բացի աշխարհագրական տարածումից, ինչ ազդեցություն են ունեցել Շուշիից դուրս գործող հայկական տպարաններում: Ինչպես արդեն նշել ենք, Շուշիի բողոքական քարոզիչները մինչև 1840 թվականը գրքեր են հրատարակել նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում<sup>230</sup>, որոշ դեպքերում վերահրատարակելով Շուշիի տպագրություններից մի քանիսը: Մյուս կողմից էլ քարոզիչների հրատարակած որոշ գրքեր 1830–1860–ական թվականներին վերատպվել են Կալկաթայի «Մկրտիչ Միսիոնարաց» տպարանում<sup>231</sup>: Այսպես, երբ համեմատում ենք Շուշիի բողոքական քարոզիչների և Կալկաթայի «Մկրտիչ Միսիոնարաց» տպարանի հրատարակած գրքերը<sup>232</sup>, տեսնում ենք, որ ի տարբերություն Շուշիում տպագրված գրքերի՝ Կալկաթայում վերատպված յուրաքանչյուր գրքում պարտադիր կերպով նշված է տպաքանակի մասին տեղեկությունը (1000 օրինակ), որոշների դեպքում էլ անվանաթերթ չկա, իսկ եղած անվանաթերթերը անգլերեն ու հայերեն են: Մյուս կարևոր տարբերությունն այն է, որ Կալկաթայում հրատարակած գրքերի անվանաթերթերին առկա է տվյալ մատենաշարի համարը: Ստացվում է, որ Կալկաթայի այս հրատարակությունները տպագրվել են հնդկահայ շրջանակների համար:

Կալկաթայում ու Մոսկվայում Շուշիի բողոքական քարոզիչների տպագրությունների վերատպությունը աչքի անցկացնելիս հետաքրքիր մի երևույթի ենք հանդիպում. այն է՝ վերատպված գրքերը վերևում ուսումնասիրված գիտական ուսումնա-

<sup>229</sup> Գրացուցակ հայերեն գրքերի Բագուայ Հայոց մարդասիրական ընկերության գրադարանի, 1912, էջ 176:

<sup>230</sup> Բողոքական քարոզիչները Մոսկվայի Լազարյան ճեմարանում 1830–1834 թթ. տպագրեցին հետևյալ գրքերը՝ 1) «Երեք խօսակցութիւնք մին քահանայի մին աշխարհական մարդոյ հետև: Փրկութեան ճանապարհի համար», Մոսկով, 1830 (4000 տպաքանակ), 2) «Աւետարանի զօրութիւն կամ մին արաբ ծառայի պատմութիւն որ Քրիստոսի հաւատքովն երանելի էլաւ», Մոսկով, 1830 (5000 տպաքանակ), 3) «Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոց եւ մահմետական կրօնի», Մոսկով, 1831 (2000 տպաքանակ), 4) «Սուրբ Աւետարան ըստ Մատթէոսի», Մոսկով, 1831 (1200 տպաքանակ), «Նոր Կտակարան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի», Մոսկով, 1834 (տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չունենք):

<sup>231</sup> Այս տպարանի գործունեության մասին տեղեկություններն այնքան էլ շատ չեն: Յ. Իրազեկի (Յակոբ Տէր Յակոբեան) «Պատմութիւն հնդկահայ տպագրութեան» (Անթիլիաս–Լիբանան, 1986) մեծաթեք աշխատության 432–րդ էջում կարդում ենք. «... Մկրտիչ միսիոնարների հայկական տպարանը, կամ աւելի ձիշդ՝ տպարանի հայկական բաժինը սկսել է գործել Կալկաթայում 1830–ական թուականների սկզբից եւ շարունակուել է մինչև 1865 թուականը: Ուրեմն մի շատ պատկառելի կեանք, հնդկահայոց ազգային տպարանների համեմատութեամբ, շնորհիւ միսիոնարական փափուկ գանձարանի: Այդքան տնտղութեան ընթացքում նա տուել է բազմաթիւ մանր–մունր հրատարակութիւններ, գերազանցօրէն կրօնա–բարոյական ուղղութեամբ եւ բողոքականութեան տարամերժ շնչով տոգորուած...»:

<sup>232</sup> Այս գրքերից որոշները ներառված չեն «Հայ գիրքը 1801–1850 թթ.» մատենագիտության մեջ, իսկ դրանց մասին առաջին անգամ բավական հանգամանորեն ներկայացվել է «Սիոն» ամսագրում: Տեն Մինասեան Լ. Գ., «Հայ տպագիր գիրքը 1801–1850 թուականներին» եւ մի քանի նորահայտ գրքեր // Սիոն.–Երուսաղէմ, 1970.— Թիւ 1–2.— Յունուար–Փետրուար.— էջ 78–79: Այս գրքերի մեծ մասը պահվում է ՆՋԱՎ–ում, իսկ թվայնացված օրինակները հասանելի են <http://haygirk.nla.am/> «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում:

սիրություններն (տրակտատ) էին: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ Շուշիում հրատարակված գրքերից գիտական ուսումնասիրությունները տպագրվում էին Բրիտանական Աստվածաշնչյան ընկերության միջոցներով, և դրանք շատ հաճախ անվճար բաժանվում էին հայկական միջավայրում, իսկ դասագրքային հրատարակությունները տպագրվում էին բազելյան ընկերության միջոցների հաշվին: Դասագրքերը վաճառվում էին երբեմն էլ զեղչված գներով: Քարոզիչների՝ Շուշիում հրատարակած դասագրքային ուղղվածություն ունեցող գործերից միայն «Պատմութիւն Սուրբ Գրոցն» է, որ 1835 թ.-ին Կալկաթայում ունեցել է վերատպություն<sup>233</sup>, հետևաբար դասագրքային այլ հրատարակություններ չեն եղել:

**ԲԱԶԵԼՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**  
**1828–1835 ԹԹ. ՇՈՒՇԻՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ**<sup>234</sup>  
(հավելված)

**Հայերեն**

Լերան Քարոզը.— Շուշի, 1828.— 15 էջ:

**ԾՆԹ.** *Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից: Փորձնական տպագրություն է:*

Բնագիրը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 50 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

Առաջին կանոն սաղմոսի.— Շուշի, 1828:

**ԾՆԹ.** *Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:*

Բնագիրը՝ գրաբար: Էջերի քանակը՝ անհայտ: Տպաքանակը՝ 300 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

<sup>233</sup> Այս հրատարակությունը ևս դուրս է մնացել հայ գրքի մատենագիտական ցանկերից:

<sup>234</sup> Տպագրության ժամանակագրության սկզբունքով կազմված սույն ցանկը պատրաստելիս՝ մատենագիտական նկարագրություններում հարազատ ենք մնացել անվանաթերթերի բնագրային տեղեկություններին: Տպաքանակի մասին տվյալները վերցրել ենք քարոզիչների զեկուցագրերից կազմված ամենամյա գործունեության ամփոփ հաշվետվություններից: Նկարագրվող գրքի կամ գրքույկի պահպանման վայրը նշելիս՝ նախընտրություն ենք տվել Հայաստանի ազգային գրադարանին (այսուհետ՝ ՀԱԳ), իսկ բացակայության դեպքում՝ նշել ենք պահպանման մեկ այլ վայրը, եթե հայտնի է: Մեր կողմից հայտնաբերված գրքերի կամ գրքույկների մասին տեղեկությունները նույնպես ծանոթագրված են, թեև դրանք «առ աչօք» (de visu) չենք տեսել, և ոչ էլ մեզ հայտնի է պահպանվան վայրը: Գրքերի ուսումնասիրության ընթացքում եղել են դեպքեր, երբ միաժամանակ համեմատել ենք տարբեր վայրերում պահվող միևնույն գրքի մի քանի օրինակներ (որոշ դեպքերում՝ գրքի բնօրինակները, իսկ որոշ դեպքերում՝ թվայնացված տարբերակները), սակայն սույն ցանկում չենք նշել դրանց բոլորի պահպանման վայրերը, ինչպես ընդունված է մատենագիտական ցանկերում: Բողոքական քարոզիչների՝ Շուշիի հրատարակություններից օրինակներ են պահպանվել ՀԱԳ-ում, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (այսուհետ՝ Մ), Գրականության և Արվեստի թանգարանում (այսուհետ՝ ԳԱԹ), Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում (ՆԶԱՎ), Վրաստանի պատմության պետական թանգարանում (ՎՊՊԹ), ինչպես նաև այլ գրադարաններում և առցանց շտեմարաններում: Բացի դրանից՝ մեր ցանկում նշված են, թե ո՞ր գրքերն են հիշատակված Հայկ Դավթյանի կազմած մատենագիտության (այսուհետ՝ ՀԴՄ) մեջ, իսկ որո՞նք՝ ոչ:



3. Պատմութիւն Սուրբ Գրոց: Արարեալ համառօտ հարցմամբք և պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց/ Թարգմանեալ ի Ռուս լեզուէ ի պ[ա]ր[ո]ն Յարութիւնէ Դաւթեան Զուղայեցոյ.— Շուշի, 1828.—44 էջ:

**ԾԱԹ.** Թարգմանությունը՝ գրաբար: *Տպաքանակը՝ 500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 621):*

4. Համառօտ տարրական քերականութիւն գրաւոր լեզուի.— Շուշի, 1828:

**ԾԱԹ.** 1828 թ. Այս գիրքը կամ գրքուկը սկզբնաղբյուրում վերնագրված է “Eine kurze Elementargrammatik der Schriftsprache”: Վերջինիս մասին մեզ հայտնի չեն մատենագիտական այլ տեղեկություններ, ուստի անհայտ են մնում դրա նկարագրության և տպագրության մանրամասները: Սույն գրքուկը մեզ ծանոթ չլինելով՝ վերնագիրը գերմաներենից պայմանականորեն ենք թարգմանել:

*Տպաքանակը՝ 700 օրինակ, էջերի քանակը՝ անհայտ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:*

5. Հաւաքումն աստուածային վկայութեանց յաղագս ամ[ենայն] ուսմանց քրիստոնէական հաւատոց. ժողովեալ ի ս[ուր]բ գրոց, և յօրինեալ ըս[տ] կարգին հրահանգի քրիստոնէական վարդապետութեան, որ տպեցաւ ի Տիփսիս յամի 1825.— Շուշի, 1829.— 184 էջ:

**ԾԱԹ.** Բնագիրը՝ գրաբար և աշխարհաբար: *Տպաքանակը՝ 2000 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 648):*

6. Ընթերցուածք ի Սուրբ Գրոց Հին Կտակարանի: Հաւաքեալ ի պէտս վարժարանաց.— Շուշի, 1829.— 218 էջ:

**ԾԱԹ.** Բնագիրը՝ գրաբար: *Տպաքանակը՝ 700 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 647):*

7. Համառօտութիւն հայկական քերականութեան/ Աշխատասիրութեամբ Տ[ե]առն Պօղոսի գերիմաստ վարդապետի Ներսիսեան Ղարատաղոյ ի միաբանութենէ սրբոյ Ստաթի.— Շուշի, 1829.— 2 չի., 130, 1 չի. էջ:

**ԾԱԹ.** Ուշագրավ է այն, որ այս գրքի վերջում զետեղված տպագրական վրիպակների ցանկը հազվադեպ երևոյթ է 19-րդ դարի հայերեն տպագիր գրքերում: Այն միակ դեպքն է, որ հանդիպում է մեզ հասած Շուշիի բողոքական քարոզիչների հրատարակություններում: Սա նաև վկայում է գրքի նկատմամբ ցուցաբերված գիտական բծախնդրության մասին:

*Բնագիրը՝ գրաբար: Տպաքանակը՝ 400 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 649):*

8. Համառօտ բառ գիրք ի գրաբառէ յաշխարհաբառն: Ի պէտս համբակաց/ Աշխատասիրութեամբ Տեառն Յովսէփայ Արցախեցոյ գերիմաստ վարդապետի ի միաբանութենէ վանիցն Սրբոյն Յակոբայ.— Շուշի, 1830.— 398 էջ:

**ԾԱԹ.** Թեև անվանաթերթին տպագրության տարեթիվը նշված է 1830, սակայն մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրքի տպագրությունն ավարտվել է

1831 թ.: Կազմման աշխատանքներն ավարտվել են 1832 թ.' մեծ տպաքանակի և ծավալուն լինելու պատճառով<sup>235</sup>:

Տպաքանակը՝ 2000 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 693):

9. Տետրակ այբուբենական.— Շուշի, 1832.— 32 էջ:

**ՄևԹ.** Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Տպաքանակը՝ 1200 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված է ՀԴՄ-ում:

10. Առաջին կանոն սաղմոսի: Երկրորդ տպագրություն.— Շուշի, 1832.— 38 էջ:

**ՄևԹ.** Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Բնագիրը՝ գրաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված է ՀԴՄ-ում:

11. Պատմություն Սուրբ Գրոց: Արարեալ համառոտ հարցմամբք և պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց/ Թարգմանեալ ի Ռուս լեզուէ ի պ[ա]ր[ո]ն Յարութիւնէ Դաւթեան Ջուղայեցոյ: Առաջին անգամ տպեալ յամի 1828: Երկրորդ տպագրություն.— Շուշի, 1832.— 40 էջ:

**ՄևԹ.** Թարգմանությունը՝ գրաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՆՋԱԿ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 760):

12. Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար: Թարգմանություն.— Շուշի, 1832.— 41, 1 չի. էջ:

**ՄևԹ.** Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 2000 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 759):

13. Ժամանակի վերջն: Թարգմանություն.— Շուշի, 1832.— 45, 1 չի. էջ:

**ՄևԹ.** Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 756):

14. Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար: Թարգմանություն.— Շուշի, 1822՝.— 74 էջ:

**ՄևԹ.** «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» և «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկների անվանաթերթերին, որպես տպագրության տարեթիվ, նշված է 1822 թիվը: Այս գրքույկների տպագրության թվականի մասին մատենագետ Կ. Դավթյանն անվանաթերթերի վրա նշված թվականը ստույգ չի համարում՝ բերելով մի քանի հիմնավորումներ: Համադրելով այդ փաստերը՝ Կ. Դավթյանը եզրակացնում է, որ հիշյալ գրքույկներն ամենայն

<sup>235</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 17, 1832, S. 447. Որպես կանոն՝ բառարանները, լինելով ծավալուն և բարդ տպագրություններ, մշտապես խիստ պահանջված են եղել ցանկացած ուսումնական հաստատությունում: Տվյալ դեպքում գրաբար-աշխարհաբար այս բառարանը կրկնակի կարևորություն է ունեցել, քանի որ այսպես Շուշիի բողոքական քարոզիչները խթանում էին աշխարհաբար հայերենի տարածումը, ինչը դյուրացնում էր նրանց քարոզչությունը:

հավանականությամբ տպագրվել են 1832 թվին, իսկ անվանաթերթի վրա նշված 1822-ը պարզապես տպագրական վրիպակ է, կամ էլ հրատարակիչները միտումնավոր են այդ թվականը դրել<sup>236</sup>:

Հ. Դավթյանի կատարած հետազոտությունից կես դար անց մեզ հաջողվեց պարզել հետևյալը: Նախ՝ «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկից մեկ օրինակ կա նաև ՆՋԱՎ-ում, որի թվայնացված տարբերակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինիս անվանաթերթի վրա տպագրության տարեթիվը նշված է 1832: Մ-ում պահվող սույն գրքույկի մեկ այլ օրինակն ուսումնասիրելիս պարզեցինք, որ դա Հ. Դավթյանի նկարագրած միակ օրինակը չէ, այլ կա նույնանուն գրքույկի ևս մեկ օրինակ, որի անվանաթերթի վրա տպագրության տարեթիվը դարձյալ նշված է 1832: Մատենադարանի վերոհիշյալ երկու օրինակները<sup>237</sup> համեմատելիս տեսնում ենք, որ դրանք չունեն բովանդակային<sup>238</sup> և տպագրական տարբերություններ՝ բացառությամբ կազմերի գույնի և կազմերի վերջերեսի պատկերների<sup>239</sup>: Փաստորեն, ուսումնասիրելով ՆՋԱՎ-ում և Մատենադարանում պահվող սույն գրքույկի օրինակների՝ որպես տպագրության թվական 1832-ի նշումով անվանաթերթերը՝ թերևս կարելի է ենթադրել, որ «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկը տպագրվել է հենց 1832 թվին:

«Մկրտիչ Միսիոնարաց» տպարանում տպագրված գրքերի մեծ մասի թվայնացված օրինակներն ուսումնասիրելիս պարզում ենք, որ «Կարճառօտ աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքույկը վերատպվել է Կալկաթայում 1841 թվականին, որի անվանաթերթի վրա գրված է՝ «առաջին անգամ տպեալ յամի Տեառն 1832 ի Շուշի»: Իսկ «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկը վերատպվել է 1839 թվականին կրկին Կալկաթայում, որի անվանաթերթի վրա կարդում ենք՝ «ի Շուշի յամի Տեառն 1833»: Ստացվում է, որ այդ գրքույկի մեկ այլ վերահրատարակության մեջ շատ հստակ նշվում է նախորդ հրատարակության տպագրության վայրը և թվականը՝ Շուշի, 1833 թ.: Սակայն հանդիպում ենք մեկ այլ փաստի ևս, որը հաստատում է սույն գրքույկի՝ 1833 թ.-ին տպագրված լինելու հանգամանքը: Այսպես, «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի վերջում առկա վաճառվող գրքերի ցանկում բերված են նաև 1833 թվականին տպագրված գրքերի վերնագրեր: Սա ինքնին խոսում է այն մասին, որ «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկը չէր կարող տպված լինել 1832 թվին, քանի որ նույն գրքույկի վերջում հիշատակված են Շուշիում 1833 թ. տպված որոշ գրքերի անունները: Ավելին, ուսումնասիրելով 1833 թ.-ին տպագրված

<sup>236</sup> Դավթյան Հ., Հայ Գիրքը 1801–1850 թվականներին (մատենագիտություն), նկարագրության Հմր 416, Հմր 417:

<sup>237</sup> Այս երկու օրինակների թվայնացված տարբերակներն հասանելի են <http://haygirk.nla.am/> «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում:

<sup>238</sup> Մինչև անգամ հիշյալ գրքույկի երկու օրինակների վերջում զետեղված է Շուշիում վաճառվող 14 անուն գրքերի միևնույն ցանկը:

<sup>239</sup> Մատենադարանում պահվող Հ. Դավթյանի նկարագրած «Տասն և վեց կարճառօտ քարոզներ» գրքույկի (1822 թ.) կազմի վերջերեսին առկա է «Գառն Աստուծոյ» կամ «Գառն պատարագեալ» պատկերը, իսկ մեր ուսումնասիրած մյուս օրինակի (1832 թ.) կազմի վերջերեսին առկա է «Ամենատես աչքն Աստուծոյ» պատկերը:

մյուս գրքերում առկա վերոհիշյալ ցանկերը՝ կարող ենք հաստատել, որ «Տասն և վեց կարճատուր քարոզներ» գրքուկը տպագրվել է «Վարդապետություն Քրիստոսի խաչին համար» (1833) գրքուկից (տես ցանկի 19-րդ համարը) հետո և «Քարոզ Ասագ Ուրբաթ օրին համար» (1833) գրքուկից առաջ (տես ցանկի 21-րդ համարը): Հետևաբար, ելնելով ներկա ուսումնասիրություններից՝ կարող ենք պնդել, որ «Կարճատուր աղօթքներ շաբաթի ամէն մէկ օրին համար» գրքուկի առաջինի տպագրության (ի Շուշի) թվականը պետք է ընդունել 1832-ը, իսկ «Տասն և վեց կարճատուր քարոզներ» (ի Շուշի) գրքուկինը՝ 1833:

Այստեղից հետևում է, որ այս երկու գրքուկները Շուշիում չէին կարող ունենալ երկու տարբեր տպագրություններ, քանի որ երկու դեպքում էլ որպես երկրորդ հրատարակություն հիշատակված են Կալկաթայի տպագրությունները: Մնում է կարծել, որ բողոքական քարոզիչները խնդրո առարկա երկու գրքուկները Շուշիում հրատարակել են 1832 և 1833 թթ.–ին՝ տարբեր օրինակների անվանաթերթերի վրա սխալմամբ նշելով 1822 և 1832 թվականները: Ուսումնասիրելով բողոքական քարոզիչների զեկուցագրերը՝ այնտեղ չենք հանդիպում այս գրքերի անվանաթերթերի վրա նշված տարեթվի սխալների մասին որևէ տեղեկության: Եվ առավել հավանական ենք համարում, որ դրանք տպագրական վրիպակի արդյունք են:

*Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՎՊՊԹ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 416):*

15. Մեղքի մեծանալոյն և զօրանալոյն համար: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 26 էջ:

*ԾևԹ. Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՎՊՊԹ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 792):*

16. Մեղքն խաղ անելոյ բան չէ: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 14 էջ:

*ԾևԹ. Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 793):*

17. Յորդորունք սուտ ասօղ մարդկանց համար: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 26 էջ:

*ԾևԹ. Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 794):*

18. Աւետարանի ճշմարտութեան և զօրութեան համար: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 30, 2 չի. էջ:

*ԾևԹ. Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 789):*

19. Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 57 էջ:

*ԾևԹ. Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 797):*

20. Տասն եւ վեց կարճատուր քարոզներ: Թարգմանութիւն.— Շուշի, 1822<sup>՞</sup> (1832<sup>՞</sup>).— 66, 2 չի. էջ:

**ԾՆԹ.** *Տպագրության թվականի վերաբերյալ մեր պարզաբանումների և ճշգրտմաների մանրամասն վերլուծությունը տես սույն ցանկի 14-րդ համարի ծանոթագրությունը:*

*Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 417):*

**21.** Քարոզ Աագ Ուրբաթ օրին համար: Մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի Չարչարանաց եւ Մահուան վերայ: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 32, 2 չի. էջ:

**ԾՆԹ.** *Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 798):*

**22.** Ճանապարհացոյց առ բարեպաշտ կեանս, որ հիմնեալ է ի կանոնս Քրիստոնէութեան: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 150, 2 չի. էջ:

**ԾՆԹ.** *Թարգմանությունը՝ գրաբար: Տպաքանակը՝ 2000 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 791):*

**23.** Սրբոյն Կիրոյի Երուսաղէմացոյ հայրապետի ճառ վասն տասնհրամանեան հաւատոյ: Առեալ ի մատենէ Կոչումն ընծայութեան կոչեցելոյ: Վերստին տպագրեալ.— Շուշի, 1833.— 46 էջ:

**ԾՆԹ.** *Անվանաթերթի վրայի «վերստին տպագրեալ» նշումը հիմք է տալիս մտածելու, որ սա գրքույկի առաջին տպագրությունը չէ, ինչի մասին տեղեկություններ չկան հայ գրքի մատենագիտական ցուցակներում:*

*Թարգմանությունը՝ գրաբար: Տպաքանակը՝ 750 օրինակ: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 790):*

**24.** Սիրտ մարդոյ որ է տաճար Աստուծոյ կամ գործարան սատանայի: Տասն պատկերներով առաջի դրած: Որ ամէն մարդ հեշտ իմանայ և միտք առնելով քրիստոնէական կեանքին հետևելոյ համար ջանք անէ: Թարգմանութիւն.— Շուշի, 1833.— 43, 1 չի. էջ:

**ԾՆԹ.** *Շուշիում բողոքական քարոզիչների կողմից տպագրված գրքերում հիմնականում չենք հանդիպում պատկերների, քանի որ բողոքականությունը ժխտական վերաբերմունք ունի սրբապատկերների և առհասարակ՝ պատկերագրության նկատմամբ: Միակ բացառությունն այս գրքույկն է, որի անվանաթերթի վրա պատկերների քանակը նշված է տասր: Բնագրում դրանք տեղադրված են ներդիրի տեսքով, որոնք աստվածաշնչյան թեմաներով ավանդական պատկերներ չեն: Իսկ արդյո՞ք այս պատկերները տպագրվել են Շուշիում, թե՞ դրանք տպագրության են պատրաստվել այլուր, որոնք Շուշի են բերվել բողոքական քարոզիչների կողմից և որպես ներդիր՝ ավելացվել գրքույկում: Կարծում ենք՝ ավելի հավանական է այն մտերցումը, որ դրանք այլ տպարանի տպագրություններ են: Հատկանշական է, որ պատկերների տպագիր համարակալության հերթական թվային համարի կողքին առկա է ձեռագրին նմանվող համարակալում՝ հայերեն տառային համարժեքով: Յուրաքանչյուր պատկերի ներքո տեսնում ենք դարձյալ ձեռագրին նմանվող հակիրճ նկարագրություն, իսկ որոշ պատկերների վրա կան բացատրական տպագիր գրություններ:*

*Այս գրքույկի 1833 թ. (Շուշի) և 1839 թ. (Կալկաթա) տպագրությունների պատկերները համեմատելիս տեսնում ենք, որ առաջինի՝ ձեռագրին նմանվող հակիրճ*

նկարագրությունները երկրորդում արդեն նախորդից փարբերվող փայագիր փեսքով են: Այստեղից կարելի է ենթադրել, որ սույն պատկերները փայված են մեկ ուրիշ փայարանում և ապա զետեղված Շուշիում փայագրված գրքույկում: Այս կարծիքն ավելի է ամրապնդվում՝ հաշվի առնելով վերջինիս՝ նախապես Ստամբուլում հայերենով և թուրքերենով փայագրված լինելու փեղեկությունը<sup>240</sup>: Հավանական է, որ հենց Ստամբուլից էլ այդ պատկերները բերվել և օգտագործվել են հետագա փայագրությունների համար:

Թարգմանությունը՝ աշխարհաբար: Տպաքանակը՝ 1000 օրինակ: Առկա է Մ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 796), որի նկարագրությունը թերի է (էջերի քանակը 44-ի փոխարեն նշված է 28)՝ հիմք ընդունելով ՀԱԳ-ի թերի օրինակը:

25. Տետրակ այբուբենական: Երկրորդ տպագրութիւն.— Շուշի, 1833.—32՞ էջ:

**ԾԱԹ.** Գրքույկի մասին փեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Տպաքանակը՝ 1000 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

26. Քերականութիւն հայկազեան լեզուի: Եւ այժմ նորոգ համառօտեալ աշխատասիրու[թեամ]ք նորին առ ի դիւրու[թ]ի[ւն] ուսանողաց/ Յօրինեալ ի Հայր Միքայէլ Վարդապետէ Չամչեանց: Տպագրեալ ի Վենետիկ յամի տեառն 1801: Վերստին տպագրեալ.— Շուշի, 1833՞.— 328 էջ:

**ԾԱԹ.** Գրքի փայագրության մասին փեղեկանում ենք, որ այն ավարտվել է 1834 թ. հունվարի 11-ին<sup>241</sup>, թեև անվանաթերթին փայագրության փարբերվելը նշված է 1833: Իսկ փայաքանակի մասին որևէ փեղեկություն չկարողացանք գտնել: Միայն կարող ենք ասել, որ 1834–1835 թթ. գրքի 464 օրինակ փարածվել է:

Բնագիրը՝ գրաբար: Առկա է ՀԱԳ-ում: Հիշատակված է ՀԴՄ-ում (նկարագրության Հ<sup>տ</sup> 795):

27. Տետրակ այբուբենական: Երրորդ տպագրութիւն.— Շուշի, 1835.—32՞ էջ:

**ԾԱԹ.** Գրքույկի մասին փեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Տպաքանակը՝ 1200 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

28. Առաջին կանոն սաղմոսի: Երրորդ տպագրութիւն.— Շուշի, 1835:

<sup>240</sup> Գրքույկի նախաբանից տեղեկանում ենք. «Էս գիրքս հին գիրք է. և էլ շատ ժամանակից առաջ ըստամայլ քաղաքումն տպվեցաւ հայերեն և թուրքերէն լեզուով. բայց հիմիկ թարգմանվեցաւ ռուսական լեզուիցն հայոց աշխարհաբար լեզուովն՝ որ շատ մարդիք կարենան կարդալ և օգուտ ստանալ տրանով»: Ի դեպ, հայ գրքի մատենագիտական ցուցակներում վերն ակնարկված հայերեն և թուրքերեն լեզուներով հրատարակության մասին որևէ տեղեկության չենք հանդիպում: Իսկ 1839 թ. Կալկաթայի «Մկրտիչ Միսիոնարաց» տպարանում վերատպված նույնանուն գրքույկում վերը մեջբերված հատվածը կրկնվում է՝ հետևյալ տարբերությամբ. «...բայց հիմիկ թարգմանվեցաւ Գերմանացոց և Ռուսական լեզուիցն Հայոց Աշխարհաբար լեզուովն...»:

<sup>241</sup> Evangelisches Missions-Magazin, Vol. 19, 1834, S. 448.

**ԾՆԹ.** Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Բնագիրը՝ գրաբար: Էջերի քանակը՝ անհայտ: Տպաքանակը՝ 1200 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

**29.** Պատմութիւն Սուրբ Գրոց: Արարեալ համառօտ հարցմամբք և պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց/ Թարգմանեալ ի Ռուս լեզուէ ի պարոն Յարութիւնէ Դաւթեան Զուղայեցոյ: Երրորդ տպագրութիւն.— Շուշի, 1835.— 44 էջ: Տպաքանակը՝ 1200 օրինակ:

**ԾՆԹ.** Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից:

Թարգմանությունը՝ գրաբար: Տպաքանակը՝ 1200 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ: Հիշատակված չէ ՀԴՄ-ում:

Օտարալեզու

**30.** Մուսուլմաններին ուղղուած կոչ.— Շուշի, 1835:

**ԾՆԹ.** Գրքույկի մասին տեղեկությունն առաջին անգամ հայտնաբերվել է մեր կողմից: Վերնագրի հայերեն բառացի թարգմանությունը կատարել ենք գերմաներենից (“*Aufruf an die Mohammedaner*”)՝ օգտվելով քարոզիչների զեկուցագրերից կազմված ամենամյա գործունեության ամփոփ հաշվետվություններից:

Բնագիրը՝ թաթար-թուրքերեն և պարսկերեն: Էջերի քանակը՝ անհայտ: Տպաքանակը՝ 500 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ:

**31.** Ճշմարտութեան կշեռքներ.— Շուշի, 1835.— 276 էջ:

**ԾՆԹ.** Գրքի մասին տեղեկությունը հայկական միջավայրում առաջին անգամ բարձրաձայնվել է մեր կողմից: Վերնագրի հայերեն բառացի թարգմանությունը կատարել ենք գերմաներենից (“*Waage der Wahrheit*”)՝ օգտվելով քարոզիչների զեկուցագրերից կազմված ամենամյա գործունեության ամփոփ հաշվետվություններից: Ռուսերեն տառադարձմամբ պարսկերեն վերնագիրն է «*Мизинь-ил-Хакк*»:

Բնագիրը՝ պարսկերեն: Տպաքանակը՝ 1000 օրինակ: Պահպանված օրինակ հայտնի չէ:

## НОВЫЕ СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ КНИГ, НАПЕЧАТАННЫХ В ШУШИ В 1828–1835 ГГ.

СТЁПА ПЕТОЯН

В настоящем исследовании мы коснулись книг, напечатанных в Шуши в 1828–1835 гг., которые были первыми изданиями, опубликованными в Арцахе. В процессе исследования мы не только пытались классифицировать их по направлениям содержания, но и сравнивая их с рядом экземпляров и публика-

ций, мы детально проанализировали их, показывая роль и значение этих книг в истории Армянская типография. Путем сопоставления различных источников мы собрали всю достоверную информацию, благодаря которой мы восстановили неизвестные данные, связанные с книгами. В то же время, мы впервые обнаружили информацию о нескольких книгах, которые не упоминались ранее. В конце статьи мы поместили составленный нами полный библиографический каталог книг, изданных в Шуши в этот период, который мы при необходимости аннотировали и уточняли. Думаем, что этот каталог, как источник, может быть полезен не только тем, кто занимается библиографией, но и специалистам, интересующимся историей армянской книги в целом.

**Ключевые слова:** Шуши, протестантские миссионеры, Базельское Евангельское миссионерское общество, первое издание, типография, буклет, каталог, библиография.

## NEW PAGES FROM THE HISTORY OF THE BOOKS PRINTED IN SHUSHI IN 1828–1835

STYOPA PETOYAN

In the present research we have reflected to the books printed in Shushi in 1828–1835, which were the first editions published in Artsakh. While researching, we not only have tried to classify them according to their content directions, but also comparing them with a number of copies and publications, we have analyzed them in details, showing the role and the significance of these books in the history of the Armenian typography. By collating different sources, we have gathered all the trustworthy information, thanks to which we have recovered the unknown data related to the books. In the same time, for the first time, we have discovered some information about several books that have not been mentioned before. In the end of the article we have inserted our compiled complete bibliographical catalog of the books published in Shushi during that period, which we have annotated and clarified as necessary. We think that this catalog, as a source, can be useful not only for those who are engaged in the bibliography, but also for the specialists interested in the history of the Armenian books in general.

**Key words:** Shushi, protestant missionaries, Basel Evangelical missionary society, first edition, printing house, booklet, catalogue, bibliography.



## ՏԵՍԻԼԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Հոդվածը ներկայացվել է 05.11.2020 թ., գրախոսվել է 20.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Ընթերցողի դիտանկյունները փոխկապակցված են ուղիղ և հակառակ տեսանկյուններից: Այս ուսումնասիրությունը նոր դիտանկյունից է քննում Բակունցի պատմվածքների պոեզիկայի մի կարևոր առանձնահատկությունը՝ տեսիլը: Հակադարձ հեռադիտության համակարգը գալիս է տեսողական դիրքերի բազմազանությունից, այսինքն՝ այն կապված է տեսողության դինամիկային և տեսողական տպավորության հետագա ամփոփմանը: Բակունցի մի շարք պատմվածքների պատումներն ունեն մի քանի տեսողական-տեսիլային զարգացումներ: Դրանց նարատիվն այնպես է կառուցված, որ պատմվածքի վերջում պատմողը դառնում է ականատես, բայց ոչ թե պատմության իրադարձությունների, այլ արդյունքին, որն էլ դառնում է իր սեփական տեսիլն ու փոխանցվում ընթերցողին. Ոչ միայն երևակայական պատկերն է դառնում տեսիլի շարժիչ ուժը, այլև կերպարի վերհուշը: Դրա համար նրա կերպարներին անընդհատ թվում է: Ներքին տեսլականը նման է գեղարվեստական տեսլականի: Գրական ստեղծագործությունները գրված են երկու տեսակի ընկալման համար, ինչ-որ ներքին լսողության համար, որը կարող է գրավել իր տարաբնույթ մեղեդիներով և դիտելու համար: Այսպես էլ ստեղծվում է ներքին տեսլականը, որը վերարտադրում է երևույթի գույնը և իմաստը: Ակսել Բակունցի պատմվածքները հենց այս հատկանիշն է դարձնում բացառիկ և պատահական չէ, որ մի շարք գիտնականներ նրա արձակում գտնում են բանաստեղծականություն:

**Հիմնաբառեր՝** տեսիլ, հեռանկար, պատմվածք, ականատես, նարատիվ, պատրանք, թվաց, անշարժ, ներքին իրականություն, արտաքին աշխարհ:

Քսաներոդդ դարի գեղագիտական հիմնական խնդիրը աշխարհը տեսնելու մեջ էր: Արվեստի տարբեր բնագավառներում՝ նկարչություն, գրականություն, թատրոն և այլն, ներխուժեց տեսիլն իբրև պատկերի գեղագիտական կառուցում: Այս

մոտեցմանը տարբեր բնութագրումներ կարելի է տալ, սակայն ամենից հարմարը թերևս տեսական եզրույթն է:

Գրական քննադատության հեռանկարը ընկալվում է որպես իրադարձության տեսակետ, պատմողի վերաբերմունքը պատմությանը, ֆիզիկական առարկայի և գիտակցության օբյեկտի միջև հաստատված փոխհարաբերությունը, կառուցվածքի կենտրոնական խնդիրը: Ընթերցողի դիտանկյունները փոխկապակցված են ուղիղ և հակառակ տեսանկյուններից: Հակադարձ հեռատեսության համակարգը գալիս է տեսողական դիրքերի բազմազանությունից, այսինքն՝ այն կապված է տեսողության դինամիկային և տեսողական տպավորության հետագա ամփոփմանը:

Տեսողական դիրքերի այդ դինամիկան փոխանցվում է պատկերի վրա, որի արդյունքում հայտնվում է «դեֆորմացման հատուկ տեսակետներ, որոնք հակառակ տեսանկյունից են»<sup>242</sup>: Ուղղակի հեռանկարը ընթերցողին տարածում է պատկերի առարկայից և արտաքին տեսք է տալիս: Ընդհակառակը, հակառակ տեսակետը ընթերցողին ներառում է այն, ինչ նա մտածում է, և նրան ոչ հեռավոր մասնակից է դարձնում, այլ իրադարձության մասնակից:

Այս համատեքստում դիտարկենք Բակունցի «Մթնածոր» պատմվածքը: Պատումն ունի մի քանի տեսողական–տեսիլային զարգացում՝ Պանիի տեսիլը, երբ մարդու ու արջի մենամարտը խաղ է, ասես սպորտային մրցություն, և Ավիի տեսիլը, ով մի կողմից Պանիի կամքին հնազանդ, մյուս կողմից կենաց ու մահու կոիվն է մղում անհավասար մարտում: Սակայն այստեղ ամբողջ պատումը հիմնված է պատմողի տեսիլի վրա: Իսկ նարատիվն այնպես է կառուցված, որ պատմվածքի վերջում պատմողը դառնում է ականատես, բայց ոչ թե պատմության իրադարձություններին, այլև արդյունքին, որն էլ դառնում է իր սեփական տեսիլն ու փոխանցվում ընթերցողին.

«Ավին շրթունքներ չունի: Ոսկորների բաց ճեղքից երևում են ատամները, բաց է քթի խոռոչը, և երբ Ավին համրի պես խոսում է, շունչը քթի խոռոչով էլ է դուրս գալիս: Աչքերի խոռոչներում չորացած մսի կտորներ կան, ծառի վրա կիսաչոր, մաշկը ծալ–ծալ եղած ծիրանի պես»<sup>243</sup>:

Հակադարձ հեռանկարներ են տեսիլվում կերպարների համար, սակայն Բակունցյան բուն տեսիլը բնորոշվում է Ավիի քանդված արտաքինի տեսողական դաշտի ճնշմամբ, և պետք է հաշվի առնել վերափոխվող ուղեղի գործունեությունը: Ըստ Բ. Վ. Ռաուշենբախի՝ «հակադիր տեսլապատկերը անհեթեթորեն անտրամաբանական է». «Հակադիր տեսիլի հիման վրա կառուցված պատկերը, որոշ ենթագիտակցական պրոցեսներ է առաջացնում, որոնք հակասում են բնականին և նման են տարբեր տեսակի օպտիկական պատրանքների»<sup>244</sup>:

Ժամանակն այնպիսին էր, որ տեսիլքի առիթներ էր ստեղծում: Եվ այդ տեսիլքները տարբեր բովանդակություններ ունեին, կարող էին լինել թե՛ պայծառ ապագայի

<sup>242</sup> Успенский Б. А., Семиотика искусства. М., 1995. С. 247.

<sup>243</sup> Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հատոր I, էջ 17: Այսուհետև սույն հրատարակությունից մեջբերումների հատորն ու էջերը կնշվեն փակագծերում՝ մեջբերումից հետո:

<sup>244</sup> Раушенбах Б. В., Геометрия картины и изобразительное восприятие. СПб., 2001. С. 268–269.

պատրանք և թե՛ ազգային բարդ ու դժվարին ճակատագրի, հայրենիքի կորստյան անհեռանկար ու մահաբեր տեսլականներ (Տերյան, Չարենց, Բակունց, Մահարի և այլն): Չարենցի պարագան ինչ–որ չափով տարբեր, բայց ներքին բովանդակային հատույթում նույնական էր Բակունցի տեսիլների հետ: Չարենցի պարագայում «Տեսիլային պատումն ընթանում է բանաստեղծի հիշողության մեջ վերարթնացած նախկին մտապատկերների ու զուգորդությունների ներհայեցողական բազմատեսակ ձևերով ու զգայություններով»<sup>245</sup>, նույնը կարելի է տեսնել Բակունցի պատմվածքներում: Այսպես, «Այու սարի լանջին» պատմվածքում վերհուշ–տեսիլների շարքը օպտիկական պատրանքներ են ստեղծում ընթերցողի մտահայեցման մեջ: Պետիի տեսիլները, որոնք ընդամենը մի քանի վայրկյան են տևում, խտացված են հետևյալ հատվածում. «Երբեմն երբ նրա աչքին էր ընկնում մի շքեղ բզեզ կամ թիթեռ գունավոր թևերով կամ դիտում էր, թե ինչպես են մրջյունները աշխատում հերվա բունը սարքելու,— Պետին գլուխը երերում էր և ինքն իրեն խոսում.

— Փառքդ շատ, այ աստված, որ էսպես հրաշք բաներ ես ստեղծել» (էջ 50):

Այս հատվածը անմիջապես հիշեցնում է մեկ այլ հայտնի տեսիլ «Ալպիական մանուշակ» պատմվածքից. «Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»: Այս տեսիլն իր կառուցվածքի մեջ ուղղակիորեն բացառիկ է այն իմաստով, որ իր վրա կրում է ոչ միայն պատմողի տեսլացումը՝ բզեզի ու մանուշակի ներդաշնությունը, այլև բզեզի տեսիլը, այն է՝ մանուշակը ճոճք, աշխարհը ծիրանագույն բուրաստան է թվում: Այս տեսիլային պատկերի մեջ կարևոր է «թվում» արտահայտությունը, որին դեռևս կանդրադառնանք:

Սույն տեսիլները շարունակություն ունեն՝ Պետին պետք է ձուլվեր իր բզեզ–թիթեռ–մրջյունին՝ «Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետու» (էջ 62), իսկ հնձվորի կինը (մանուշակ) պետք է պատկեր դառնար ֆետրե գլխարկով մարդու ծոցից հանած տետրի էջերին՝ «...սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին» (էջ 187), իսկ հնձվորը (բզեզ) իր մահակի ուժը պետք է կնոջ մեջքին չափեր իր տեսիլի՝ չկայացած իրականության համար. «Իր արտից նա տեսավ ձիավորներին, և նրան թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակներում հենց այն գանձերն են, որ հարյուր տարիներ մնացել են քարի տակ, որի վրա ինքը շարունակ նստել է, երբ բերդի ավերակներում պահում էր այծ ու ոչխար» (էջ 188): Այս տեսիլն արդեն իսկ ավելի ընդգրկուն ժամանակ ունի իր մեջ: Ոչ միայն երևակայական պատկերն է այս տեսիլի շարժիչ ուժը, այլև կերպարի վերհուշը, սակայն ի վերջո տեսիլ է դառնում, քանի որ կերպարին թվաց:

Գրողը պետք է տեսնի ոչ միայն աշխարհը, այլև անտեսանելին, և սա է ստեղծագործական մտքի տեսլականը: Բակունցը ստեղծում է հատուկ օպտիկա, որը

<sup>245</sup> Հովհաննիսյան Ն., <https://aparaj.am/new/%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D6%87-%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B7%D5%A5-%D5%B9%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D6%81%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%B0/>

տատանվում է գեղարվեստականի և իրականության միջև: Եվ սա գրողի կողմից հստակ գիտակցված քայլ է, ստեղծագործական լաբորատորիայի առանձնահատկություն, քանի որ Բակունցը նախընտրում էր իրականության ընկալման այն կերպը, որը ստեղծում է տեսիլքի հրաշքը: Գրողի համար իրականության ու տեքստի միջև միջնորդ են դառնում խորհրդանիշները, որոնք տարբեր օպտիկական մեխանիզմներ են՝ ասես տեսախցիկով սահմանազատված պատկերներ, իսկ այդ տեսախցիկը օպտիկական տարբեր հնարքներ ունի, դիտանկյունների փոփոխություններ, խոշոր պլան, լայն տեսադաշտ և այլն:

Այս իմաստով անփոխարինելի ստեղծագործություն է «Խոնարհ աղջիկը» պատմվածքը: Գրեթե ամբողջ պատումը կառուցված է տեսլային անցումներով: Ամբողջ պատմությունը լի է **թվաց, կարծես, ասես** տեսլաստեղծ արտահայտություններով. «**Ասես** աչքի առաջ, ձյունոտ անտառում, տեսնում էր աղջկան, ձեռքին չոր ցախ» (էջ 151), կամ «Զգիտեմ աղջիկը ժպտաց, թե չէ, բայց ինձ այդպես **թվաց**» (էջ 151), կամ «Նոր շորերի մեջ նա **երևաց** ավելի բարձրահասակ, մեջքը բարակ» (էջ 154):

Պատմվածքի դիպաշարը երկու զարգացում ունի՝ գյուղական պատկերը ու երիտասարդ ուսուցչի կյանքը գյուղում, որը պատմվում է առաջին դեմքով և ուսուցչի ու Խոնարհի լուռ ու անխոս վիճակի վակուումով ստեղծված տեսլաշարը: Խոնարհի ներկայությունը պատմողի կյանքում տեսիլք է, ցնորք, ուղեղի մորմոք, և նման կերպ էլ վերարտադրում է Բակունցը պատմվածքի մեջ՝ ստեղծելով տեսիլք-պատմվածք: Պատահական չէ, որ Խոնարհը գրեթե միշտ անշարժ է (կանգնած, խոտի խուրճը գրկած, հիվանդ պառկած և այլն): Բացի այդ, պատումն այնպես է կառուցված, որ ուսուցիչն առաջին դեմքով պատմելիս անընդհատ հայեցման դիրքում է՝ Խոնարհին տեսա:

Ամեն **տեսա-ն** մի տեսիլք է դառնում, անշարժ պատկեր, նման կտավի, եթե շարժ էլ կա, այն մի քանի ակնթարթ է տևում, սակայն տեսախցիկը հստակ ֆիքսել է պատկերը, որը երևում է տարբեր դիտանկյուններից: Ահավասիկ սույն տեսիլ-պատկերը. «Կռացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման (**ընդհանուր պատկեր** – Ա. Ա.): Եվ այդ երամից մեկը, գորշ շորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին (**մտրեցված պատկեր** – Ա. Ա.), որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետը և միայնակ անցվորին (**դիտանկյունը փոխվում է** – Ա. Ա.)» (էջ 160):

Իրականության ընկալման հիմնական չափանիշները՝ հայացք, հպում և հիշողություն ստեղծում են «պայծառ բծեր», որոնք նման են կանխատեսումների: Կա բառերի իմաստաբանության մետաֆորային ընդլայնում, և հարկավոր է հասկանալ այդ բառերի՝ գեղագիտական նշանակություն ունեցող մի շարք կատեգորիաները: Հեղինակը ստեղծում է իր հասկացությունը բազմակի պրիզմայով, որտեղ կարող է պատկերը ֆոկուսի բերել:

Փայլուն «նկարիչ» Բակունցը տեսնում է այն երևույթները, որ ուրիշները չեն տեսնում (կամ ավելի շուտ՝ երևույթների անտեսանելի կապը): Այսպես՝ «Միրհավ»-ը

պատմվածքում խորհրդավոր կապ է ստեղծվում կերպարի և տեսիլվող պատմության միջև: Աչքի համար տեսանելի մի պատկեր կա՝ ծերացած Դիլան դային և երկու փետուր՝ փափուկ մամուռների վրա: Այս պատկերից կարող է ածանցվել թեման, որը բացատրելի չէ, այլ ասոցիատիվ տեսլացման է տանում: Կերպարը կախարդական լուսարձակի էկրանին թափանցիկ մանրանկարների միջոցով տեսնում է զարմանալիորեն հստակ գծագրված տեսիլքը: Այստեղ ևս ամբողջ պատմությունը հյուսված է տեսիլի միջոցով: Ոչ թե վերհուշ, այլև տեսիլ, քանզի պատումը կերտվում է **ներկա ժամանակով**: Ահա վերհուշի ու տեսիլի հիմնական տարբերակումը: Այնպես չէ, որ սույն տեսիլը վերհուշ չէ, վերհուշ է, սակայն վերհուշը գրողի կողմից կառուցվում է տեսլապատումի ձևով, ուստի պատմվածքում կա մեկ գեղարվեստական ժամանակ՝ Դիլան դայու և երկու փետուրների ժամանակը, որի շարունակությունն է տեսիլը՝ նույն ժամանակի մեջ: Այստեղ ևս ստեղծվում են «օպտիկական» պատկերներ և պատահական չէ, որ կերպարների միջև գրեթե չկան երկխոսություններ: Սա ևս կապված է ստեղծագործական տեսլականի հետ: Մյուս կողմից իրադրության հանգստությունը ևս մատնում է տեսլացումի պահը: Զգայությունները ներհայեցման արդյունք են, ուստի չկան ուժեղ բախումներ ու կրքերի հորդահոսներ, չկան սայթաքումներ: Պատկերված է կատարյալ իրադրություն, որը հնարավոր է միայն տեսիլի մեջ. «Սոնան էր, գառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղջիկը, որ այնպես զրնգուն ծիծաղում էր, երբ առվակի մեջ կախում էր սպիտակ սրունքները, իսկ դրացու տղան՝ Դիլանը, ջուր էր ցնցղում նրա ողկույզի պես գանգուր մազերին» (էջ 74):

Տեսիլի բաղկացուցիչ մաս է նաև լաջվարդ շապիկը: Դիլանի տեսիլը գրեթե ամբողջությամբ կառուցված է լաջվարդ շապիկով Սոնայի շուրջ: Սոնան գրեթե չի փոխում հագուստը, և սա փաստում է հեղինակի կողմից գիտակցված տեսիլ-պատում կառուցելու հանգամանքը:

Կարծում եմ, որ համաշխարհային գրականության մեջ առկա է մի ստեղծագործական մեկնակետ, որտեղ երևակայությունը և իմացությունը հատվում են, ինչը առթում է մեծ երևույթների նվազեցմանը և փոքր երևույթների ահռելիացմանը: Սրանից էլ ծնունդ է առնում արվեստի գլուխգործոցը: Կյանքը երբեմն անհեթեթություն է թվում, այնուամենայնիվ, այն գրական ստեղծագործության մեջ հեղինակի սեփականությունն է դառնում, և վերջինիս է տրված հեռավոր անցյալը հստակ տեսնելու արտոնությունը, ինչն էլ կարող է արտահայտվել հակադարձ հեռատեսության հատուկ տեխնիկայով՝ պատումի ստեղծման գործընթացում կատարվող հիշողության փոխատեղումներով:

Ներքին տեսլականը նման է գեղարվեստական տեսլականի: Գրական ստեղծագործությունները գրված են երկու տեսակի ընկալման համար. ինչ-որ ներքին լսողության համար, որը կարող է գրավել իր տարաբնույթ մեղեդիներով և դիտելու համար: Այսպես էլ ստեղծվում է ներքին տեսլականը, որը վերարտադրում է երևույթի գույնը և իմաստը: Ակսել Բակունցի պատմվածքները հենց այս հատկա-

նիշն է դարձնում բացառիկ և պատահական չէ, որ մի շարք գիտնականներ նրա արձակում գտնում են բանաստեղծականություն:

Բակունցի տեսիլներն արտահայտվում են մեծ կտավների վրա՝ «Միրհավ», «Մթնածոր», «Ալպիական մանուշակը», «Ծիրանի փողը», «Պրովինցիայի մայրամուտը» և այլն, սակայն մյուս կողմից նրա ստեղծած կերպարներն էլ ունեն իրենց տեսիլները. Պետու՝ չստացված ընտանիքի տեսիլը, Լառ Մարգարի՝ իր ծիրանի այգու և ժառանգության շարունակության տեսիլը, Սիմոնի՝ Յուլակի հանդեպ իր փիսուքայան տեսիլը, Արթին պապի՝ ռուս թագավորի տեսիլը և այլն:

Բակունցի մետաֆորային տեքստակառուցման մեջ ետ ու առաջ մտածելու կերպը կարելի է բնութագրել իբրև տեսիլների հակադիր կառուցման սկզբունք, ներհայեցման պատահականություն, իրականության ու երևակայության հավասարակշռող ուժ, երբ մտքերն ուղղահայաց զարգացում ունեն և տեքստին հաղորդում են նույնի տարբերություններ, ներքին իրականության ու արտաքին աշխարհի նմանության պատրանքներ:

Դարերի ընթացքում ձևավորված պատկերավորման արվեստը կարող է փոխվել գեղարվեստական տեսանկյունից: Կողմնակի աչքը դառնում է խիստ կարևոր և մեռած, ձանձրալի, սովորական դարձած գույները, բնական գաղափարները արտացոլվում են նուրբ երանգներով և ստեղծում նոր կերպարի հրաշալիք: Մտքի ու զգայության փոխհարաբերություններով կառուցված պատկերների իրարահաջորդումը երբեմն հակադարձման տեսիլով ու թեմատիկ բևեռվածությամբ հանդիսանում է Բակունցի գեղարվեստական մտածողության կարևոր առանձնահատկությունը: Նա միաժամանակ դիտարկողն է, պատմողը և իրադարձությունների վերահսկողը: Բակունցը աշխարհը ներկայացնում է այնպիսին, ինչպիսին հնարավոր չէ տեսնել առանց հեղինակի և նրա ստեղծած կերպարների տեսիլի հետ հաղորդակցվելու: Գրողի համար սկզբունք է հավերժական ներկայի կերպար ստեղծելը՝ որպես ապագա հիշողություն, ապագա ընթերցողն էլ դառնում է հեղինակի ժամանակի արտացոլողը: Ահա ամենաբարդ տեսլական օպտիկան, որ ստեղծել է մեծանուն հայ գրող Ակսել Բակունցը:

## ВИДЕНИЕ В ИСТОРИЯХ БАКУНЦА

АРМЕН АВАНЕСЯН

Перспективы читателя взаимосвязаны от прямого к противоположному углам. Система обратного зрения исходит из множества зрительных позиций, то есть связана с дальнейшей динамикой зрительного визуального впечатления. Рассказы Бакунца имеют несколько визуально–визуальных разработок. Их повествование построено таким образом, что в конце рассказа рассказчик становится очевидцем, но не событий рассказа, а результата, который становится его собственным видением

и передается читателю. Движущей силой видения становится не только воображаемый образ, но и его воспоминание.

Поэтому персонажам всегда кажется. Внутреннее видение похоже на художественное видение. Литературные произведения написаны для двух типов восприятия для внутреннего слуха, который может запечатлеть его различными мелодиями. Так создается внутреннее видение, воспроизводящее значение цвета. Именно эта особенность делает рассказы Бакунца уникальными, не случайно что ряд ученых находят в его прозе поэзию.

**Ключевые слова:** видение, перспектива, рассказ, очевидец, повествование, иллюзия, неподвижен, внутренняя реальность, внешний мир.

## VISION IN BAKUNT'S STORIES

ARMEN AVANESYAN

The reader's perspectives are interconnected from direct to opposite angles. The system of reverse vision comes from the variety of visual positions, that is, it is connected with the further summary of the dynamic and visual impression. Number of Bakunt's stories have several visual-spectral developments. Their narrative is constructed in such a way that in the end of the story the narrator becomes an eyewitness, but not to the events of the story, but to the result, which becomes his own vision and is transmitted to the reader. It is not only the phantom image that becomes the driving force of the vision, but also the recollection of the image. That's why his characters always see imaginary scenes. Inner vision is like an artistic vision. Literary works are written for two types of perception for some inner hearing that can capture with its various melodies and to watch. This is how the inner vision is created, which reproduces the color and the meaning of the event. It is the feature that makes Axel Bakunts' stories unique. It is not accidental that a number of scholars find poetry in his prose.

**Key words:** vision, perspective, story, eyewitness, narrative, illusion, immovable, inner reality, outer world.

## ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածը ներկայացվել է 10.09.2020 թ., գրախոսվել է 20.10.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

«Սյունյաց իշխանուհի Մինա խաթունի նվիրատվական և շինարարական գործունեությունը» հոդվածում նպատակ ենք ունեցել ներկայացնելու Տարսայիճ Օրբելյանի կնոջ՝ Մինա խաթունի գործունեությունը և ևս մեկ անգամ փաստել, որ հայ կինը ոչ միայն ընտանիքի պահապանն էր, այլ նաև իր ամուսնու թև ու թիկունքը, շինարար և խոշոր նվիրատու:

Հոդվածը գրելիս մեր առջև խնդիր ենք դրել հանգամանալից ներկայացնել Մինա Խաթունի՝ շինարարարական և նվիրատվական գործունեությունը:

Վերը նշված խնդրի լուծման համար օգտագործել ենք պատմահամեմատական մեթոդը և համադրել ենք տարբեր սկզբնաղբյուրների տեղեկությունները: Կատարել ենք անհրաժեշտ վերլուծություններ:

Հոդվածն արդիական է նրանով, որ ևս մեկ անգամ շեշտվում է այն տեսակետը, որ հայ կինը երբեք էլ իրավագուրկ չի եղել, այլ ընդհակառակը, ակտիվորեն զբաղվել է պետականաշինությամբ, կառույցների շինարարության հովանավորությամբ, նվիրատվությամբ:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

— Մենք բացի հերոս կանանցից, ունենք նաև շինարար և նվիրատու կանայք, որոնց գործունեության վառ ապացույցները կիսականգուն վանքերն ու եկեղեցիներն են: Եվ այդ կանանցից է Մինա խաթունը:

— Ծղուկի Ըղերձի եկեղեցու շինարարությունը վերագրվում է Մինա խաթունին, ինչի վկայությունը փաստող արձանագրությունը պահպանվում է միայն Շահխաթունյանի մոտ:

— Սպասավորների կարիքների համար Մինա Խաթունը Ըղերձի վանքին նվիրել է Սունակի հողը, Նահապակի հողը, Շինուհայրում և Տաթևում այգիներ:



— Մինա խաթունի հովանավությամբ կառուցված իշխանական տնից՝ դարաբասից, պահպանվել է մի լուսանկար Գ. Հովսեփյանի մոտ, որի մանրամասն նկարագրությունը ժամանակին տրվել էին նաև Զալալյանը և Քաջբերունին: Այդ լուսանկարի մանամասն նկարագրությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ազգագրագետներին:

— Հեղինակը իր մոր գործունեությանը՝ Մինա խաթունի դուստր Ասիան, ամուսնանալով Խաչենում, ևս զբաղվել է շինարարական և նվիրատվական գործունեությամբ:

**Հիմնաբառեր՝** Մինա Խաթուն Տարսայիճ Օրբեյան, Սյունիք, Ըղերծի Աստվածածին եկեղեցի, իշխանական տուն:

Հայ ժողովրդի պատմության թե՛ հերոսական, թե՛ դժվարին պահերին հայ կինն ամուր հենարան է եղել իր ամուսնու համար՝ խաղաղ ժամանակ զբաղվելով շինարարությամբ ու նվիրատվությամբ, իսկ պատերազմի ժամանակ զենք կրելով ու թշնամու դեմ մարտնչելով: Մեր պատմությունը մեզ ավանդել է նման հերոս-կանանց բազում սխրանքներ (Փռանձեմ, Այծեմնիկ և այլն), իսկ բազում վանքեր ու եկեղեցիներ նրանց շինարարական ու նվիրատվական գործունեության վառ ապացույցներն են: Խնդրո առարկա հարցի շրջանակում անդրադառնաք Օրբեյանների կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Տարսայիճ Օրբեյանի երկրորդ կնոջ՝ Մինա խաթունի եկեղեցաշեն ու նվիրատվական գործունեությանը:

Սարգիս արքեպ. Զալալյանցի, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, Հայր Առնոյ Ալիշանի աշխատություններում, «Դիվան հայ վիմագրության» 3–րդ պրակի մեջ բազմաթիվ տեղեկություններ կան Տարսայիճ Օրբեյանի կնոջ՝ Մինա խաթունի շինարարական գործունեության վերաբերյալ: Սակայն Ստեփանոս Օրբեյանը տեղեկություններ չի հաղորդում Մինա խաթունի մասին: Նշենք, որ Մինա խաթունը Տարսայիճ Օրբեյանի երկրորդ կինն էր, իսկ Ստ. Օրբեյանը առաջին կնոջ՝ Արզու խաթունի որդին էր: Ըստ որոշ տեղեկությունների՝ Տարսայիճ Օրբեյանը Մինա խաթունի հետ ամուսնացել էր Արզու խաթունի կենդանության ժամանակ հավանաբար այն պատճառով, որ Արզու խաթունն այլազգի էր, իսկ Մինա խաթունը նշանավոր Զալալ Դուլայի դուստրն էր: Ուստի այն հետապնդում էր նաև քաղաքական նպատակ:

Տարսայիճ Օրբեյանն ու Մինա խաթունը 1272 թվականին միասին կառուցել են Ըղուերծի Ս. Աստվածածին եկեղեցին<sup>246</sup>: Հնում Ըղուերծ անունով երկու գյուղ է գոյություն ունեցել՝ մեկը՝ Հաբանդ, մյուսը՝ Ծղուկ գավառում, որոնց հարկի չափը եղել է 12 և 10<sup>247</sup>: Մինա խաթունին է վերագրվում Ծղուկի Ըղուերծի եկեղեցու շինարարությունը: «Դիվան հայ վիմագրության» 2–րդ պրակում նշվում է, որ Ծղուկի Ըղուերծը ներկայիս Դարպաս գյուղն է<sup>248</sup>: Ըղուերծի եկեղեցու արձանագրությունը չի պահպանվել: Արձանագրության մասին տեղեկանում ենք Հովհ. եպս. Շահխա-

<sup>246</sup> Հացունի Վ., Հայուհին պատմութեան առջեւ, Վենետիկ–Ս. Ղազար, 1936, էջ 227:

<sup>247</sup> Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 371, 375:

<sup>248</sup> Դիվան հայ վիմագրության, պր. 2, Երևան, 1960, էջ 111:

թունյանցի աշխատությունից, որում պահպանվել է արձանագրություն հետևյալ բովանդակությամբ.

«Յուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիճ իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, և ամուսին իմ Մինայ խաթուն դուստր մեծին Զալալ Դօլին կողմնակալ յայսմ նահանգի գոր ետ մեզ ա՛ծ ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ, շինեցաք Ածածածին ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգոյ և երկարութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակի հողն, և ներքին ծաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսագին. և կատարի ի տարին Ժ՛ ժամ, Ե՛ յայտութե՛, Ե՛ գատկին վասն ինձ Տարսայիճիս և Մինայ խաթունին. եթէ ոք ի մերոց կամ յօտարաց խափանեսցէ զսահմանեալս մեր, յԺ՛ը հայրապետաց նզոված է, թուին չիա» (1272)<sup>249</sup>»:

Արձանագրության բովանդակությունից պարզ է դառնում, որ «ի հալալ արդեանց» Տարսայիճ Օրբեյանը Մինա խաթունի հետ կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին և սպասավորների կարքիների համար վանքին տվել Սունակի հողը, Նահատակի հողը, այգիներ Շնհերում և Տաթևում, ինչպես նաև սահմանել տասը պատարագ Հայտնության և Զատկի տոներին:

Այս նույն արձանագրությունը տալիս է նաև Ս. Զալալյանցը, բայց նշում է, որ այն գրված է հայերալ վանքում<sup>250</sup>:

Մինա խաթունի գործունեության մասին Վ. Հացունին գրել է. «Հիրանոցք հին Հայաստանի մենաստանաց հետ կապուած էին սովորաբար, ուր կ'իջեանէին անցորդներ, գտնելով ձրի սնունդ ու բնակարան: Ատոնց համար եկամտներ ալ հաստատուած էին բարեսէր անձերէ, որոց մէջ ես կ'երեւին մեր տիկնայք, ոչ միայն իբրեւ նուիրատու, այլ նոյն ինքն հիմնադիր հիրանոցաց: Ատոցմէ ծանօթ են՝ Մինա խաթուն, որ 1274-ին Սիւնեաց Եղեգիք աւանի մէջ կենակցին Տարսայիճի հետ կը կերտեն նոյնպիսի շինուած մը, յայտնի իրենց թողած արձանագրէն իսկ, որ անոր միակ մնացորդն է այժմ. «Աստուած շնորհաւոր առնէ դարբաս պարոն Տարսայիճի եւ ամուսնոյն իւրոյ Մինայ խաթունին. ի թվին Հայոց ՉԻԳ»:<sup>251</sup>

Խոսքն այստեղ վերաբերում է Եղեգիս ավանում կառուցած իշխանական տանը՝ Դարաբասին: Պատմական Եգեղիք կամ Եղեգիս ավանը Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է և սկսած 9-րդ դարից՝ Սյունյաց գահերեց իշխանների նստավայրը: Ունեցել է ամուր ու ընդարձակ բերդ՝ տեղավորված ավանի հյուսիսում ձգված բարձր ու երկարավուն բլրաշարի վրա, որի սրբատաշ քարերով շինված պարիսպներն ու դարպասը մինչև այժմ էլ կանգուն են: Տեղացիներն այս բերդն անվանում են «Սմբատա բերդ»: Այս ամուր բերդը չի կարողացել գրավել նույնիսկ արաբ զորավար Նըսրն: Եղեգիսը հիշվում է որպես գյուղաքաղաք և նույնիսկ մայրաքաղաք:

<sup>249</sup> Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց շահիխարցոյ միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 364:

<sup>250</sup> **Զալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 208:

<sup>251</sup> **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 232:

Հին ավանի ավերակները տարածվում են Եղեգիսի աջ ափով 3–4 կիլոմետր երկարությամբ՝ նեղ ձորի մեջ: Այդ ավանի հսկայական ավերակները շինված են եղել մեծ քարերի բեկորներով, որոշակի երևում են տների, բակերի, ձիթհանների և այլ շատ պարզ մնացորդներ: Եղեգիսի ծաղկման երկրորդ շրջանը զուգադիպել է 13–րդ դարին Օրբելյանների տիրապետության շրջանին: Այդ ժամանակ ևս Եղեգիսը մնացել է որպես իշխանական նստավայր, որտեղ կառուցվել են տներ, եկեղեցիներ, բազմաթիվ որմնափակ խաչքար–հուշարձաններ և այլն, որոնք տեղավորված են եղել ավանի գերազանցապես արևելյան մասում, ձորի ամենալայն տեղում:<sup>252</sup>

*Եղեգիսի ս. Նշան եկեղեցու մոտ՝ հարավից պահպանվել է իշխանական տան «դարասպաս» մուտքի կամարակալ քարը հետևյալ արձանագրությամբ.*

*«ԱԾ ՇՆՈՐՀԱԻՈՐ ԱՆԷ ԴԱՐԱԲԱՍ ԲԱՐՈՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, ՄԻՆԱՅՅՅ ԽԱԹՈՒՆԻՆ ԻԻՐ ԱՄՈՒՍՆԱԻ ԹՎ: ՉԻԳ: (1274)»<sup>253</sup>:*

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը նշում է, որ Դարաբասից մնացել է միայն դռան մեծ կամարակալ քարը՝ Տարսայիճի և Մինա Խաթունի հարթաքանդակներով և արձանագրությամբ: Այս հարթաքանդակը տեսել և նկարագրել են Ս. արեքյ. Զալալյանը և Գ. Քաջբերունին, որոնցից և օգտվել է Ղ. Ալիշանը: Գ. Հովսեփյանը շատ մանրամասն նկարագրում է հարթաքանդակը, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «...բայց վերջերս կորած էր համարում այն: Երկու անգամ հետամուտ եք եղել գտնել այդ քարը, բայց ի զուր: Վերջապես յաջողուեցաւ գտնել Էրդափինցի ծերունի Յովհաննէս Գէորգեանի ցուցմամբ: Գիւղի թուրքերից մէկը քարը կտորել, երեք կտոր է արել և շարել իւր պարտէզի ցանկապատի քարերի մէջ: Բարեբաղտաբար կարելի է ամբողջութեան մասին գաղափար կազմել՝ կտորներն իրար մօտ բերելով: Մոռացել ենք նշանակել քարի մեծութիւնը: Լուսանկարչական պատկերը ցոյց է տալիս, որ Զալալյան չափազանցութիւններ է արել իւր նկարագրութեան մէջ: Քաջբերունին եւս սխալում է խոյր տեսնելով Մինա Խաթունի գլխին: Կողք կողքի առանձին առանձին աթոռների վրայ նստած են Տարսայիճ և Մինա Խաթուն: Տարսայիճ թագունի գլխին, որի յետեւիվ կախուած զոյգ արտախորակները, ոլորուն և փունջաւոր: Կախուած են եւ ուրիշ ժապաւէնաձև զարդարանքներ, որ պարզ չեն: Քարն այնքան մաշուած է, որ տարաբաղդատաբար հագուստի մանրամասնութիւնները նկատելի չեն, բայց երկար է, լայն և ծանծկում է մինչեւ ոտները: Աթոռը բաձրաթիկունք չէ. երեսում են միայն վերին երկու ծայրերը: Տարսայիճ ունի ոլորուն ընչացք եւ երկար միրուք: Աջ ձեռքը դրել է կրծքին, իսկ ձախը ծնկան վերայ: Այս քանդակը լուսանկարել եւ հրատարակել է յետոյ նաեւ Ե. Լալայեան, Ազգ. հանդէսի մեջ, 1913–ից յետոյ: Նոյն ձեւով և նման աթոռի վերայ բազմած է Մինա Խաթուն: Ներքնազգեստը ծածկում է մինչեւ ոտները, որոնց ծայրերը երեսում են քղանցքի տակից: Վերան ձգել է զարդարուն վերնազգեստը նոյնպէս ամբողջ հասակի երկարութեամբ: Պարանոցին կրկնակի մանեակ է կախած: Գլխի զարդարանքը չի որոշում, բայց քառանկիւնի

<sup>252</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ 3, Երևան, 1967, էջ 104–105:

<sup>253</sup> Նոյն տեղում, էջ 115:

խոյր չէ, ինչպէս Քաջբերունին է կարծել: Հաւանօրեն արաղչինաձեւ գլխարկ էր ճակատը զարդարուն եւ շղարշով ծածկուած: Մինա խաթունը աջ ձեռքը դրել է ծնկան վերայ, իսկ ձախը նկատելի չէ, քարի կտորուած լինելու պատճառով: Երկուսն էլ բոլորակ լուսոյ պսակ ունին գլխների: Հարթաքանդակն առնուած է շրջանակի մէջ, վերից մի աղեղ ներքեւից կտրուած է հորիզոնական, զարդարուն գարնէզով՝ մանր, իրար հիւսուած կիսաբոլորակներից կազմուած: Կիսաբոլորակ շրջանակն առանց զարդարանքի՝ վերած գրուած է.

**Աձ. շնհատոր անէ դարաբաս պարոն Տարսայիճին և Մինայ խաթին իրեան ամ:**

Քարի ներքեւի մասն ամբողջապէս զարդարուած է երկրաչափական վեցանկիւնանի աստղաձեւերից, կեդրոններում մի երկրորդ վեցանկիւնուց դէպի անկիւններն արձակուած եռատերեւներով: Աստղաձեւերի միջին տարածութիւնը զարդարուած է գոյգ գծերի հիւսուածքից եւ իրար դէմ արձակուած եռատերեւներով»<sup>254</sup>:



Այժմ անդրադառնանք Նորավանքում Մինա խաթունի նվիրատվական գործունեությանը: Նախ նշենք, որ Նորավանքը Օրբելյան տոհմի նշանավոր հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատունն էր: Մեր այս նյութը շարադրելիս օգտվել ենք նաև Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսիական» աշխատությունից, որը մեր նշանավոր պատմահայր, հոգևոր գործիչն ավարտին է հասցրել Նորավանքում 1299 թվականին: Մեր պատմահայրը մահկանացուն կնքելուց հետո թաղվել է վանքի գավիթում: Բացի այդ, այստեղ է ստեղծագործել նաև մեր նշանավոր մանրանկարիչ Մոմիկը, որ Թամթա խաթունի պատվերով խաչքար է կերտել իր որդիներ Բուրթելի և Բուղտայի հիշատակին:

<sup>254</sup> Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիա-Լիբանան, 1969 թ., էջ 433:

Նորավանքի ներկա բոլոր շինությունները կառուցված են Օրբելյան իշխանական տան անդամների կողմից և, ընդհանրապես, Նորավանքի ծաղկումն էլ հենց Օրբելյանների տոհմի հետ է կապված: Վանքի գլխավոր հուշարձանները գտնվում են մի ընդարձակ բակի մեջ՝ շրջափակված բարձր պարիսպներով: Այդ պարսպի հյուսիսային ու արևմտյան պատերը կանգուն են, իսկ հարավայինն ու արևելյանը՝ կիսակործան: Ներսից՝ պարսպի հարավային ու արևելյան պատերի տակ մնում են բազմաթիվ խուցերի և այլ տնտեսական շենքերի ավերակները: Վանքի հուշարձաններից են Ս. Կարապետ գմբեթավոր եկեղեցին, Գավիթը, Սմբատի դամբարանատունը, Բուրթելաշեն եկեղեցին: Նշված շինություններից մեզ հետաքրքրում է Սմբատի դամբարանատունը (ս. Գրիգոր), որը մի փոքր թաղակապ եկեղեցի է՝ կառուցված ս. Կարապետի հյուսիսային կողմից: Կառուցել է տվել Տարսայիճ Օրբելյանն իր եղբայր Սմբատի համար որպես տապանատուն, բայց հետագայում այնտեղ են թաղել նաև Տարսայիճին և Օրբելյան տոհմից այլ նշանավոր անձանց: Այստեղ եղած տապանաքարերը շինված են սպիտակավուն քարից: Այս դամբարանատունը կառուցել է վարդապետ-ճարտարապետ Սիրանեսը 1275 թվականին:

Մինչև այժմ Նորավանքի որմերից, խաչքարերի, տապանաքարերի և առանձին բեկորների վրայից հավաքվել, վերծանվել և հրապարակվել են 187 արձանագրություններ, որոնցից շուրջ 24-ը նվիրատվական բնույթի են<sup>255</sup>: Այժմ անդրադառնանք Նորավանքում պահպանված Մինա խաթունի նվիրատվական արձանագրությանը, որը գտնվում է Սմբատի դամբարանի հյուսիսային պատի արևելյան կամարի մեջ: Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՆՋՂՋԵԼԻ ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆԻՍ Է. ԴՍԵՐ ՄԵԾԻ ԱՐՔԱԻՆ ԶԱԼԱԼԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ՄԵԾԱՂԳԻ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱԻՃԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴՈՅՍ ԶԱԼԱԼԻՍ. ՈՐ ԳՆԵՑԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԸՆՁԻՑ ԶՆՈՐՊԵՏԻՆ ԱՅԳԻՆ Ի ՎԷԴԻ ԵՒ ԶԱՅԼՆ Ի ԿՈՐԴՈ ԳՆԵՑԱՔ Ի ՀԱՅՐԵՆԱՏԻՐԱՅՆ ԵՒ ՏՆԿԵՑԱՔ ԵՒ ԲՈԼՈՐԵՑԻ Զ:Դ: ԴԵՀ:Ա: ՃԱԿԱՏՆ ԲՆԱՇԱՀ ՌԱՀՆ ՈՒ ԻՐ ՊԱՋՈՒՄԻՆ ԱՅԳԻՆ, :Ա: ՃԱԿԱՏՆ ԻՐԻՑՅԻՆ ԱՅԳԻՆ ՏԵՂ:ԺԲ: ԳՐՎԻ ԶՈՂԻ ՅԱՌԱՋ ԱՅԼ ՏՎԱԾ ԷՐ ՎԱՆԻՑՍ ՄԵՔ ՄԵՐ ՅԱԻԺԱՐՈՒԹԵԱՄԲ ՎԵՐՍՏԻՆ ՏՎԱՔ Ի ՆՈՐԱՎԱՆՍ ՅԱԻԱՂԳ ՍԲ ՆՇԱՆՍ ԵՒ Ի ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՍՆ ՀՈԳԵՑ ԱՐՔԱՅԱՇՈՒՔ ՏԵԱՌՆ ԻՄՈ ՏԱՐՍԱԻՃԻՆ. ԻՍԿ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ՆՄԱ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋԻՆՋ ԶՏԱԻՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ. ԶԻ ՅԱՅՆՄ ԱԻՈՒՐ ՀԱՂԴԻՍԻԻ ԱԻՐՀՆԵՍՅԵՆ ԶՇԻՐԻՄՍ ՆՈՐԱ ԵՒ:Ժ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՁԻ, ԵՒ ԱՅՍ ՏՈՒՐՔՍ ՈՉ Ի ԶՐԿԱՆԱՅ ՈՉ Ի ԳԼԵՂԷ, ՈՉ Ի ՊԱՐՈՆԱՀՈՂՈ ԱՅԼ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԴՐԱՄԱԳԻՆ՝ ԱՋԱՏ ՅԱՄԷՆ ՅԱՐԿԱՅ. ՈՐ ՈՉ ՈՒՄ ՀԱՇԻԻ ԶԿԱ Ի ՀԵՏ: ԱՐԴ ԹԷ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱԾ ԿԱՄ ՅԻՇԽԱՆԱՅ ԿԱՄ Ի ՁԵՌՆԱՈՐԱՅ ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱԻ ՆԵՆԳԵԼ ԿԱՄՂ ՀԱՆԵԼ ԶԱՆԱՆ ԶԱՅՍ ԱՅԳԻՍ Ի ՆՈՐԱՎԱՆԻՑ ԿՏՐԵԱԼ ԼԻՑԻՆ ՆՈՔԱ ՅԵՐԿՈՒ ԿԵՆԱՅ, ԸՆԴ ԱԻՁԻՆ ԵՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱԻ ՆՁՈՎԵԼ ԵՂԻՑԻ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ ԱՅ. ԶԿԱՅԵՆԻՆ,

<sup>255</sup> Սարգսյան Գ., Նորավանքի նուիրատվական արձանագրությունները եւ մի տեղադրութեան ձգարտման փորձ, Նորավանք, Բ հրատ., Մոնրէպլ-Երևան, 2001, էջ 77:

ՋՅՈՒԴԱՅԻՆ, ՋՅՈՒԼԻԱՆՈՍԻՆ ԱՌՁԷ ՎԱՐՁ ՏԺ ԸՆԴ ՎԱՍԼԱԿԱ ՌԻՐԱՑՈՂԻՆ ԴԱՏԵՍՑԻ, ՅԵՐԻՑ ՍԲ ԺՈՂՈՎՈՅՆ ԵՒ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՑ ԱՆԻՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՄԱՀ ԵՒ Ի ԿԵԱՆՔ ԵՒ ԹԷ ՏԱՃԻԿ ԼԻԱԴ ՓՈԽԻ ԵՒ ՀԱՆԵԼ ՋԱՆԱ:Ռ::Ռ::Ռ: (1000 1000 1000) ՆԱԼԱԹ ԼԻՆԻ, ՅԻԻՐ ՄԱՀՄԵՏԷՆ ԱՊԻԶԱՐ ԼԻՆԻ: Ի ԹՎԻՍ:ՉԻԱ: (1292): ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԿԱՄԱԻՆ ԱՅ»<sup>256</sup>:

Արձանագրությանը անդրադարձել է նաև Ղ. Ալիշանը<sup>257</sup>: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Մինա խաթունը 1292 թ.–ին Վեդիում գնել է Նորպերտի այգին և այն նվիրել Նորավանքի ս. Նշան եկեղեցուն: Արձանագրությունից նաև պարզ է դառնում, որ Մինա խաթունն այն գնել էր «մեր հալալ դրամագին՝ ազատ յամեն յարկաց» և նաև սահմանել էր նվիրատվական արձանագրություններին բնորոշ անեծքի բանաձև:

Ի դեպ, Մինա խաթունի մասին Հացունին գրել է. «Իսկ 1298 ին ինք կ'երթայ հանգչելու նոյն մենաստանին մէջ, ուր ցարդ կը խօսի պերճօրէն իւր մահարձանը»<sup>258</sup>:

Այսպիսով՝ Մինա խաթունի դուստրը՝ Ասփան, որ մորից ժառանգել էր շինարարական ու նվիրատվական ձիրք, հարս գնալով Խաչեն՝ նոյնպես զբաղվեց հայրենանվեր գործունեությամբ:

## БЛАГОТВОРИТЕЛЬНАЯ И СТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ СЮНИКСКОГО КНЯГИНЫ МИНА ХАТУН

ГАЙАНЕ ШАБУНЦ

В статье «Благотворительная и строительная деятельность Сюникского княгини Мина Хатун» мы стремились представить деятельность жены Тарсаича Орбеляна Мины Хатун, чтобы еще раз доказать, что армянка была не только хранительницей семьи, но и спиной мужа, крупным строителем–донором.

При написании этой статьи мы поставили перед собой задачу подробно рассказать о строительстве и дарении Мины Хатун.

Для решения указанной проблемы мы использовали историко–сравнительный метод объединили информацию из разных источников. Мы сделали необходимые анализы.

Статья актуальна тем, что еще раз подчеркивает мнение о том, что армянская женщина никогда не была лишена гражданских прав, а наоборот, активно участвовала в государственном строительстве, спонсировании строительства зданий, пожертвованиях.

<sup>256</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 239:

<sup>257</sup> Միսական, Տեղագրութիւն Սյունեաց աշխարհի, ի հ. Ղեոնդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, Ի Մխիթարայ Վանս, Ի Ս. Ղազար, 1893, էջ 191–192:

<sup>258</sup> Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 198:

Подводя итоги исследования, мы пришли к следующим выводам.

— Помимо героических женщин, у нас есть еще женщины–строители и доноры, ярким свидетельством деятельности которых являются недостроенные монастыри и церкви. И Мина Хатун одна из таких женщин.

— Строительство церкви Цхуки Эгердз приписывают Мине Хатуни, свидетельства о которой хранит только Шаххатунян.

— Для нужд служителей Мина Хатун передала в дар монастырю землю Сунак, землю Нагатак, сады в Шинухайре и в Татеве.

— Сохранилась фотография Г. Овсепяна из дома правительства Дарабас, построенного под патронатом Мины Хатун. Овсепян, подробное описание которого когда–то дали Джалалян и Каджберуни. Подробное описание этой фотографии дает этнографам ценную информацию.

— После деятельности матери Аспа, дочь Мины Хатун, вышла замуж в Хачене и занималась строительством и благотворительной деятельностью.

**Ключевые слова:** *Мина Хатун, Тарсаич Орбелян, Сюник, церковь Богородица в селе Игердз, княженский дом.*

## DONATION AND CONSTRUCTION ACTIVITIES OF SYUNIK’S PRINCESS MINA KHATUN

GAYANE SHABUNTS

In the article “The donation and construction activities of Syunik’s Princess Mina Khatun” we aimed to present the activities carried out by Mina Khatun, Tarsayich Orbe-lyan’s wife, and to prove once again that Armenian women were not only the once who took care of the family, but also held their husbands’ back, initiated construction and donation activities.

Mina Khatun’s construction and donation activities are described in detail in this article.

To solve the above–mentioned problem, historical–comparative method has been used: information from different sources has been combined. Appropriate research and analyses have been done.

The article is relevant, it emphasizes once again the role and the rights of Armenian women who were actively involved in construction and donation activities.

Summing up the study, we came to the following conclusions.

— In addition to female heroes, we also have female constructors and donors. The vivid evidence of their activities are the preserved ruins of monasteries and churches. Mina Khatun is among them.

— The construction of Tsghuk church is attributed to Mina Khatun, the evidence of which is kept in Shakhkatunyan's work.

— For the servants' needs, Mina Khatun donated the land of Sunak, the land of Nahatak, gardens in Shinuhayr and Tatev.

— A picture has been preserved in G. Hovsepyan's work from Darabas built under the patronage of Mina Khatun, the detailed description of which was given by Jalalyan and Kajberuni. The detailed description of this picture provides valuable information to ethnographers.

— Following her mother's activities, Mina Khatun's daughter Aspa got married in Khachen and was also engaged in construction and donation activities.

**Key words:** *Mina Khatun, Tarsaich Orbelyan, Syunik, Egherdz Mary church, Prince's House.*



## ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ԿԱՐՄՐԱՔԱՐ» ՎԵՊՈՒՄ

Հոդվածը ներկայացվել է 20.11.2020 թ., գրախոսվել է 30.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածի նպատակն է քննել «Կարմրաքար» վեպում կիրառված դարձվածային միավորները՝ ներկայացնելով դրանց կառուցվածքային, իմաստագործառույթային ու ոճական դրսևորումները: Այդ դրսևորումներով էլ պայմանավորված են ուսումնասիրության արդիականությունը և գիտական նորույթը: Դարձվածային միավորների նմանօրինակ կիրառությունները ոչ միայն ժողովրդային երանգ, այլև բնականություն են հաղորդում բակունցյան արձակին: Լինելով խոսքի ոճավորման անփոխարինելի կառույցներ՝ խնդրո առարկա դարձվածային միավորները բակունցյան բնագրի լեզուն դարձնում են առավել արտահայտիչ՝ զերծ պահելով այն երկարաբանությունից: Դարձվածային միավորներով հարուստ է հատկապես կերպարների խոսքը: Բնագրում զգալի կշիռ են կազմում բայ գերադաս անդամով և հաղորդակցական դարձվածային միավորները: Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք համադրություն ու վերլուծություն:

**Հիմնաբառեր**՝ դարձվածային միավոր, «Կարմրաքար», խոսքի ոճավորում, կառուցվածքային առանձնահատկություն, ոճական դրսևորումներ:

Ակսել Բակունցի ստեղծագործությունների լեզվաոճական էական հատկանիշները ուսումնասիրվել են Ռ. Իշխանյանի «Բակունցի լեզվական արվեստը» աշխատության մեջ: Քննության նյութ դարձնելով «Կարմրաքար» վեպում հեղինակի կիրառած դարձվածային միավորները<sup>259</sup>՝ ըստ հարկի ներկայացրել ենք դրանց կառուցվածքային, իմաստագործառույթային ու արտահայտչական դրսևորումները:

Բակունցի ստեղծագործությունների լեզուն օժտված է մի ներքին հմայքով, ինչն ապահովել են արձակագրի՝ ոչ միայն նրբաճաշակ տաղանդը, այլև լեզվական ձևերի

<sup>259</sup> Դարձվածային միավոր եզրույթին զուգահեռ գործածել ենք նաև մասնագիտական գրականության մեջ ընդունված հապավումը՝ ԴՄ:

ճիշտ ու նպատակային ընտրությունը, ոճական հնարներով կերպարներին անհատականացնելու, միջավայրի ու ժամանակի գունավորում ստեղծելու վարպետությունը: Հիրավի, նրա արձակի լեզվական առանձնահատկություններից են քնարականությունը և ժողովրդայնությունը: Ինչպես իրավացիորեն նկատել է Ռ. Իշխանյանը, «... ժողովրդային է բակունցյան խոսքի բուն ակունքը՝ լեզվամտածողությունը, ընդհանրապես արտահայտվելու ձևը, խոսելակերպը»<sup>260</sup>: Բնական է, որ գյուղը պատկերող գրողների ստեղծագործություններում զգալի է «...հայերենի ժողովրդայնացման հակումը»<sup>261</sup>, ինչի շնորհիվ և՛ Բակունցի հեղինակային խոսքը, և՛ նրա կերպարների լեզուն համեմված են ժողովրդի կենդանի խոսքից քաղված խոսակցական-բարբառային բառերով և արտահայտություններով: Այդօրինակ կազմությունները կա՛մ ունեն իրենց գրական համարժեքները, կա՛մ բացակայում են դրանց գրական տարբերակները, ուստի դրանց դիպուկ ու տեղին կիրառությունները խոսքին ոչ միայն ժողովրդային երանգ, այլև բնականություն են հաղորդում: Բակունցյան արձակի լեզվին պարզություն, ժողովրդայնություն ու ինքնատիպություն են տալիս նաև դարձվածային միավորները:

Հայտնի է, որ ԴՄ-ներն ու դարձվածքները, լինելով տվյալ ժողովրդի ազգային լեզվամտածողության և մշակութային հոգևոր արժեքների յուրօրինակ կրողներ, արտահայտում են այդ լեզվակիրների կենսափորձն ու պատմական ուղին, աշխարհընկալումն ու պատկերացումները շրջապատող առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ<sup>262</sup>: Ըստ Վ. Գակի՝ «Ազգային առանձնահատկություններով է օժտված լեզուների դարձվածային համակարգը ամբողջությամբ»<sup>263</sup>: Դարձվածների գիտական ուսումնասիրությունը սկզբնավորել է շվեյցարացի լեզվաբան Շարլ Բալին (1865–1947), իսկ հայ իրականության մեջ այդ հարցին հանգամանորեն անդրադարձել են 20–րդ դարի 50–ականներից: Օտարազգի և հայ մի քանի լեզվաբաններ (Վ. Վ. Վինոգրադով, Ն. Մ. Շանսկի, Ա. Վ. Կունին, Ա. Ա. Մուրվալյան, Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Խ. Բադիկյան և այլք) դարձված են համարել հարադրական կազմություն ունեցող բառերը, առած–ասացվածքները, թևավոր խոսքերը, օրինանքներն ու անեծքները՝ այդկերպ ընդարձակելով դարձվածքի սահմանները: Հայտնի է, որ «...բառերի այն կայուն կապակցությունը, որի բաղադրիչները միասնաբար մի նոր՝ փոխաբերական–այլաբերական իմաստ են արտահայտում, կոչվում է դարձվածք»<sup>264</sup> (ընդգծումը մերն է՝ Ս. Մ.), իսկ դարձվածը կամ դարձվածային միավորը «...երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ միտք արտահայտող վերաիմաստավորված, պատրաստի, վերարտադրելի կայուն բառակապակցու-

<sup>260</sup> Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Ե., 1965, էջ 124:

<sup>261</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>262</sup> Տե՛ս Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 5:

<sup>263</sup> Гак В., Беседы о французском слове, М., 1966, с. 249.

<sup>264</sup> Մարգարյան Ա. Ս., ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 301:

թյուն է կամ նախադասություն»<sup>265</sup>: Տեղին է նշել, որ Ա. Մ. Բաբկինը, Վ. Ի. Մոկիենկոն, Գ. Սևակը, Ե. Հ. Գևորգյանը, Պ. Ա. Բեդիրյանը և ուրիշներ, ընդհակառակը, դարձվածքի ըմբռնումը նեղացրել են՝ հատկացնելով դրան միայն իդիոմատիկ կապակցությունները: Ըստ այդմ՝ «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերախմաստավորված կապակցություն է, որում բաղադրիչ բառերի հնքնությունն ու նշանակությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած»<sup>266</sup>: Հայ լեզվաբանները դարձվածը «...սահմանում են նաև որպես փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություն կամ իդիոմատիկ նշանակությամբ կայուն կապակցություն կամ կայուն արտահայտություն (ֆրազ)»<sup>267</sup>:

Ընդհանուր առմամբ, ԴՄ-ները կազմավորվում են լեզվի բառային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակների տարրերով, իսկ դրանց տեղին կիրառությունները իմաստային նրբերանգներով հարստացնում են խոսքը և այն զերծ պահելով երկարաբանությունից՝ դարձնում են առավել տարողունակ:

Հարկ է նշել, որ դարձվածի կիրառումը պայմանավորված է հաղորդակցման իրավիճակով, խոսքի համատեքստով կամ «խոսքաշարային միջավայրով»<sup>268</sup>, այսպես՝ «*Իրենց գյուղից դուրս պիտի գա աստղով մի մարդ և ամեն գյուղից պիտի հավաքվեն աստղով մարդիկ, խելք խելքի փան: ... — Էնպես ամեն ինչ իր փեղը գցեն, որ մնաս զարմացած... Մարդիկ իրար միս կուտեն*» 269, «...Իզուր փեղը պարտվում են, իրար միս կրծում (439), «— Մկրտում... Անունդ քարին գրեմ, մի փես, իմ աչքերը լավ չեն ջոկում փես նշանը փեղն է» (442), «Ան լինի էն օրը, որ մարդ էդ ձեռքը բռնի» (427), «— Բաղդադ էլ խուրմա շար կա, մեզ ինչ... Գլուխդ կախ արա, քրակոսդ ծրի.. Հրեդ եքա մարդ ես դառել, փնավորվի, մի կերպ կառավարվի, հալբաթ մի լույս էլ մեզ կհասնի: Էսպես նեղում չենք մնա» (475) և այլն: Ընդգծված կառույցները տվյալ համատեքստից դուրս այսօրինակ պատկերավորություն չունեն, քանի որ դրանք միայն վերախմաստավորելով են վերածվել դարձվածի: Լինելով ոճավորման անփոխարինելի կառույցներ՝ ԴՄ-ները գեղարվեստական խոսքին տալիս են կենդանություն ու սեղմություն՝ դարձնելով այն առավել արտահայտիչ:

Ա. Սուքիասյանի բնորոշմամբ՝ «...դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ազատում խոսքը միապաղաղությունից ու չորությունից»<sup>270</sup>: Դարձվածային պատկերավորությունն ունի լեզվամտածողության այն առանձնահատկությունը, որը, բնորոշ լինելով տվյալ ժողովրդին, սերում է նրա պատմությունից ու կենսակերպից, ազգային մշակույթից ու ավանդույթներից:

<sup>265</sup> Բադիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000, էջ 10:

<sup>266</sup> Բեդիրյան Պ. Ա., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 5:

<sup>267</sup> Սուքիասյան Ա. Մ., Հումանիզմերը ժամանակակից հայերենում, Ե., 1971, էջ 238:

<sup>268</sup> Արտահայտությունը տե՛ս Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Ե., 1986, էջ 43:

<sup>269</sup> Բակունց Ա., Երկեր, Ե., 1986, էջ 439 (այսուհետ բնագրային օրինակներից հետո փակագծերում կ'նշվի միայն էջը):

<sup>270</sup> Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 5:

Հարկ է նշել, որ կառուցվածքային քննության տեսանկյունից դարձվածային միավորները ձևավորվում են տվյալ լեզվի քերականական օրենքների համապատասխան առանձնահատկություններով: Յուրաքանչյուր դարձված՝ ներառած բառային բաղադրիչներով, հատկանշվում է ձևաբանական կառուցվածքով ու շարահյուսական գործառույթամբ, հետևաբար ԴՄ-ների մեջ քերականական կարգերի առկայությունն արտահայտվում է նրանով, որ բառային արժեք ունեցող դարձվածները պատկանում են այս կամ այն խոսքի մասին և բառերի նման տարբերակվում քերականական զանազան հարաբերություններով<sup>271</sup>: Ըստ այդմ էլ ԴՄ-ները, հարաբերակից լինելով որևէ խոսքի մասի և հանդես գալով տվյալ խոսքիմասային յուրահատկություններով, անվանական (կամ անվանողական) արժեք ունեն և համարժեք են բառերին, իսկ հարաբերակից լինելով նախադասություններին իբրև տարաբնույթ դատողություններ՝ դրանք հաղորդակցական արժեք ունեն: Անվանողական կամ ոչ հաղորդակցական ԴՄ-ները, ըստ իրենց իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշների, լինում են *գոյականական, ածականական, բայական, մակբայական* ու *եղանակավորող*<sup>272</sup>:

*Գոյականական* կամ գոյականին համարժեք անվանողական բնագրային դարձվածային միավորներից են՝ «Մեր գյուղում էլ ձեռք բռնող կա» (427), «Դե ինձանից արշա եկածն ի՞նչ պիտի լինի» (430), «Ասա, շան որդի, փողը ոսկոր է, որ կրծել եք»(443), «Էսբան թուր ու մուրն հումար է»(444), «Սար ու քուլերը ձեզ» (534), *ածականական*՝ «— Խելքը գլխին մարդը չի գա էս քար ու քոլի մեջ տուն շինի» (426), «...ոսկորը պինդ մարդը» (427), «Ողորմած հոգի պապս էր պատմում» (430), «...հայը խեղճ ու կրակ ռահաթ է» (456), «Նա հիշեց խնջույքը, Բեղլու Վարդազարի ծանր խոսքը»(536) «Էն լեն ու քոլ երկիրը թողես» (425) և այլն: Բնագրային ածականական ԴՄ-ները, ստորոգում ստանալով, վերածվել են պարզ հաղորդակցական կառույցների, օր.՝ *սև օր*, բայց՝ «...մեր օրը սև էր,— ասում էր Ունանը» (426), *որսկորը հաստ*՝ «Շալուն Սիմոնի ոսկորն է հաստ, թե՛ Եփրեմի» (431) և այլն: Անվանողական ԴՄ-ների շարքում կարելի է տարբերակել *մակբայական* ստորադասական՝ «Տուն է դառնում և գրվածը քաշ ապրում» (434), «Չամբարի հաչոցին Մկրտումը երեսը պատուհանին էր դարձնում և աչքերը լայն բաց արած լսում» (457), «Գողին քթի տակ ժպտում էր» (427), «Հարստացողը մի աչք ավել էր տուն շինում» (438), «Դու հենց աչքիդ տակով նայիր» (460), «Ղուշի թևով էլ կհասնեմ» (535), «...կռացավ և աչքի չափով ստուգեց պատի ուղղությունը» (471), նաև՝ *համադասական* կառույցներ՝ «...ու հնամաշ քուրքի մեջ, որ ամառ-ձմեռ վրայից չէր հանում» (429), «Էսօր էգուց կամուրջը տանելու է» (512), «Էսօր-էգուց մեռնելու եմ, է» (479) և այլն: Նշենք, որ «Կարմրաքար»-ում կերպարների գնահատողական վերաբերմունքն ու ապրումներն արտահայտող ոճավորման միջոց են *եղանակավորող* դարձվածային միավորները, որոնք միաժամանակ հուզական երագավորում են հաղորդում բնագրին: Դրանց մի մասի իմաստագործառույթային արժեքը

<sup>271</sup> Տե՛ս Սուբիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., նշվ. աշխ., էջ 7:

<sup>272</sup> Մանրամասն տե՛ս Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 90-91:

դրսևորվում է հնչերանգով և խոսքային միջավայրում, իսկ մյուս մասի ոճական արժեքը պայմանավորված է տվյալ կապակցության գոյականական կամ բայական բաղադրիչներին բնորոշ քերականական որոշ կարգերով. այսպես՝ «Բարի աջողում, ուտա Նազար»(468), «Ես իմ աստվածը...» (426), «Քո ազիզ արևը, մի տարի է...» (508), «— Մի խոսք՝ Կարմրաբարը ապրելու տեղ չի»(436), «Մկրտում...Անունդ քարին գրեմ» (442), «Ասի, էդ է, արևդ կծեմ» (428), «Չորտ նա խաբար, — քթի տակ ասաց Եփրեմը» (458) և այլն, նաև **ծայնարկություններ+լիմնաստ բառ** կաղապարով կազմված միազագաթ եղանակավորող ԴՄ-ները՝ «Այ հայ...Անդրի, դե պատասխան տուր» (431), «...նվ գիտե որ քարի տակ պահ տալիս» (437), «Այ թե հա՛...տերտեր, — և ժպիտը դառնում էր թեթև ծիծաղ» (428), «Պա հո՛... Վայ ձեզ, վայ ձեր օրին, այ ջահելներ» (430), «Հարևանի մալը հարամ է, այ խալխը» (542), եղանակավորող ԴՄ-ները, սերելով ժողովրդախոսակցական լեզվից, բնականաբար ձևավորվել են օրինանքներից և անեծքներից՝ «Աստված կոներիդ ուժ տա» (444), «Աստված գլխիդ խոով չանի իմ կովը» (456) և այլն: Որոշ եղանակավորող ԴՄ-ների համար դարձվածակազմիչ նշանակություն ունեն դիմորոշ հոդերը, օր.՝ «Արինը գլխիս է, հա՛, Մկրտում... Մարդը ճանաչի» (510), «— Հա, արևիդ մեռնեմ» (526), «— Բալադ մեռնի, փող...» (498) և այլն: Քննվող ոչ հաղորդակցական ԴՄ-ների շարքում զգալի կշիռ ունեն բայականները, քանի որ անվանական կառույցները, համալրվելով անորոշ դերբայով, կարող են վերածվել բայականի: Բնականաբար, բայական ԴՄ-ների կազմում որպես գերադաս անդամ առկա բայ բաղադրիչը դրսևորվում է իր քերականական կարգերով, ընդ որում՝ բնագրային օրինակներում հաճախադեպ են նախ՝ սահմանական եղանակի ժամանակաձևերով, ապա՝ մյուս եղանակաժամանակային կազմությամբ կառույցները, այսպես՝ *ներկա անկատարով*՝ «...էլի նրանք են ձեռք բռնում» (427), «...նստեցնում քե՛ք—հալ հարցնում» (434), «Նրանց էլ պատիժ է ուղարկել, որ միշտ գլխիդ վայ տաս» (431), *անցյալ անկատարով*՝ «Այդքան աշխատելուց հետո նրա մեկը երկու չէր դառնում» (426), «Ջաղացանը նեղն էր ընկնում» (431), «Ամեն մարդ իր մտքի հետևից էր ընկնում» (427), «էդ օրը քերանը երկու կտոր չէր անի» (433), «Նա լավին էր սպասում ու միտք էր անում» (439), «...ասես երիտասարդին աչքով էր անում, որ ավելին ասի» (428), *անցյալ վաղակատարով*՝ «Ձեյթա գյուղի մոլլայի հետ քանի անգամ էր վեճի նստել և նրան նեղը զցել» (434), *ներկա ապակատարով*՝ «...որ կերան, հետո էլ Քառասնաջրի ջանին են ընկնելու» (506), *անցյալ կատարյալով* օր.՝ «Մկրտումի աչքին ընկավ և Սալբին»(479), «Տղամարդ կաց» (535), ապա և՛ *ենթադրական ապառնի*՝ «Ոտքը կկապի, էլ չի կարա հեռանալ» (475), «...ով սիրտ կանի նրա դռնից փետ տանի» (508), «Նա խաբար կունենա» (517), *հարկադրականի ապառնի*՝ «Բա մերը երբ պիտի գլուխ բերես» (503), *հարկադրականի անցյալ*՝ «Գյուղ վերադարձող երիտասարդին նա գալու մյուս օրը պիտի տնտղեր, ծանր ու թեթև աներ» (439), *հրամայական եղանակի ժամանակաձևով*՝ «— Բերանդ հավաք պահի՛» (509), «Գործի ժամանակ է գնա՛, գնա՛ բանիդ» (443) և այլն: Նկատենք, որ ոչ հաղորդակցական կամ անվանողական դարձվածային միավորները իրենց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով հանդես են գալիս որպես նախադասության ամբողջական անդամներ:

Բակունցյան խնդրո առարկա բնագրային օրինակները հասկանալիում են նաև ոչ ստորոգումային ու ստորոգումային **երկանդամ** ու **եռանդամ** կառուցվածքային տիպերով: *Երկանդամ* ԴՄ-ներից սակավ են **գոյական+գոյական** կաղապարով՝ «Ուրիշից ես բերել, շան աղջիկ, իմ ցեղում զուռնա ածող չի եղել» (445), «Ասա, շան որդի, փողը ոսկոր է, որ կրծել եք» (443), «— Արի արջերն եկան» (530), նաև՝ **թվական+գոյական**՝ «— Մի խոսք՝ Կարմրաքարը ապրելու տեղ չի» (436), համեմատաբար շատ են **ածական+գոյական** -ով հարադրված կառույցները՝ «...ոսկորը պինդ մարդը» (427), «— Էն եղոտ պատառ է, որ կերան, հետո էլ Քառասնաջրի ջանին են ընկնելու» (506), «Ավան ամին գիտեր նրա թույլ կողմը» (431), «Բարի աջողում, ուստա Նազար» (468), «...երեք գիշեր մարդու չէիր հանդիպի բարի օր ասելու» (432), **գոյական+դերբայ**՝ «Այսուհետև էլ նոր տուն տեղի մասին հոգս քաշելը զուր է» (481), «Թե մեր ծուռը դզող լինի, էլի ձեզնից մի հույս կա» (429) և այլն: Բնականաբար տարածված են հաղորդակցական արժեք ունեցող ստորոգումային տարբեր կաղապարներով ԴՄ-ները, այսպես՝ **գոյական+բայ**, օր., «Մի երեխու սիլլա տալով աջ խարիր չի քանդվի»(512), «...մեկնվել էր մեջքի վրա, աչքը գցել գառան չափ սպիտակ ամպին»(511), «Քարի գլխից նա աչք էր ածել քաղահանավորներին» (477), «Կռվում էին, գլուխ ջարդում, պատահում էր, որ մարդ էին սպանում» (428), «— Լավ է, էդքան էլ խելքը կտրել է»(460), «Ինչ ես կարկուտ թափում» (460), «Մկրտումը գլխով արեց»(446), «— Ես էլ կտրանը կանգնած էի, ականջովս ընկավ» (494) և այլն, նաև՝ **դերանուն+բայ**՝ «... նվ գիտե որ քարի տակ պահ տալիս» (437), «Ով գիտի, տան պառավ «կաճեն» ինչ արցունքով է բաժանվել սևացած պղնձից» (538) և այլն: Իսկ քննության առարկա *եռանդամ* կազմությունները հիմնականում երկանդամ կառուցվածքային տիպերի ծավալումն են որևէ խոսքի մասով, այսպես՝ **գոյական+գոյական+բայ**՝ «...որոնց ոսկորները այժմ լույս աշխարհ է հանում Այրումի բարակ առուն»(432), «Շան ծիծ ես ծծել»(444), «Շան օր քաշեցինք» (495), «Հավաքել եմ, շան փայ չլինի»(543), «Կոներումդ ուժ կա, գա ավադ արա» (475), **դերանուն+գոյական+գոյական**՝ «Վերջը կերածնիս մի փոր հաց չի»(474), **դերանուն+դերանուն+գոյական կամ փոխանուն**՝ «...ես քո խրատողի...»(444), **դերանուն+գոյական+բայ**՝ «— Ինչ եք իրար մսի ելել» (510), «Երկուսն էլ իրար աչքով չափեցին» (495), **կապային կառույցներ**՝ «Չուլախը ջրի ափով իջնում էր ինքն իր մտքի հետ» (543), **ծայնարկություններով կառույցներ**՝ «Ա՛յ փուչ աշխարհ, փուչ էլ կմնաս» (442), «Վայ ձեզ, վայ ձեր օրին, այ ջահելներ» (430) և այլն: Ի տարբերություն վերոբերյալների՝ **քառանդամ** կազմությունները չեն առանձնանում հաճախակի կիրառությամբ, օր.՝ «Էդ օրը բերանը երկու կտոր չէր անի» (433), «... մին ծուռ խոսք չի ասի անժամանակ» (456), «... հոգիդ դուրս չի գա, որ ձյունը մաքրես» (446), «Այդքան աշխատելուց հետո նրա մեկը երկու չէր դառնում» (426), «Ինչ եք կարասն ընկած մկան նման թոսխել» (526), «Մարդիկ իրար միս կուտեն» (439), «...աչքդ էս երեխու վրա պահիր» (535) և այլն: Այս կառուցատիպի մեջ տարբերակել ենք նաև կրկնակի հարադրությամբ բաղադրված կազմությունները, որոնց «...աջ կողմի իմաստը կամ բխում է ձախից, կամ պայ-

մանավորված է նրանով»<sup>273</sup>, «...խանձվում է, վերև աստված ներքև դու, ինձ ազատի» (508), «— Ես մեռած, դու սաղ» (535), «— Է, Ավան ամի, էջը կորցրել, չվան կհարցնես» (470) և այլն: Տեղին ենք համարում նշել, որ ծավալուն ԴՄ-ների հիմքում ընկած են երկանդամություններ՝ բինոմներ կամ «այսպես կոչված աստիճանական կազմիչներ»<sup>274</sup>, որոնք շարահյուսորեն անտարրալուծելի են: Ուսումնասիրվող լեզվանյութում նմանաբնույթ երկանդամությունները ներկայացնում են տարբեր հարաբերություններ՝ «որոշիչ-որոշյալ»՝ *սև օր, ծուռ խոսք, թույլ կողմ*, «հատկացուցիչ-հատկացյալ»՝ *շան որդիք, շան փայ, գայլի սիրտ*, «ենթակա-ստորոգյալ»՝ *ձեռքը կկտորի, ծայրը բացվել*, «խնդիր-ստորոգյալ»՝ *գլուխ առնել, ձեռք բռնել, կարկուտ թափել, ասք գցել* և այլն:

Արձակ բնագիրը բնականաբար հարուստ է հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներով, որոնք, կազմությամբ նման լինելով պարզ կամ բարդ նախադասություններին, տարբեր բնույթ ունեն: Քննվող լեզվանյութում գերակշռում են *պատմողական* հնչերագով պարզ հաղորդակցական ԴՄ-ները, օր.՝ «— Չէ, էսօր գիրդ շաղվել է, Անդրի» (430), «Այ խալխ, չամիչ չեն բաժանում» (525), Արզումանի *գլուխը քարի տակին չի մնա*(535), «Այ քո բոստանը... Կատուն միջին թավալ չի տա» (506), «... ժպտում էր, ասքը հեռուն գցում» (427), «Գայլի սիրտ կերած է» (526), «Ուժդ նրան պատեց, համ» (511), «Այ Անդրի, գլխիդ ձի չի քացի տվել» (433), «Ունքամեջը չէր բացվում» (433), «Մենք հեշ, գուր ենք հաց ուտում» (429), «Հիբանը գիտեր, որ կինը մեկը տասն էր շինում» (444-445), «— Մարդ գցի մեջտեղ, թող մի բան պակասեցնի» (508), «Բա մեր սրտից ցուր խմած մի մարդ չկա, որ մեծամեծաց հասկացնի...» (514), «...արի գլուխ առնենք, կորչենք» (433), «Տերության ինչ հոգն է, թե ձեռք նեղումն է» (515), «Յարա ունեցողը կիմանա մրմուռը» (456), «Հալալ մարդու համար իմ դուռը բաց է» (444) և այլն: Սրանց քանակապես հաջորդում են *հարցական* տիպի ԴՄ-ները՝ «Խեթքո ի՞նչ է կտրում» (514), «Նա ո՞ւմ շունն է, որ իմ ուզածն առնի» (460), «Գլխի ես չե՞ մեր բանը...» (535) և այլն, որոնց էլ՝ *հրամայական*՝ «Դե հաշիվդ ան» (426) և այլն: Բնականաբար, բարդ ԴՄ-ներն էլ, արտահայտելով մեկից ավելի միտք, հատկանշվում են համադասական կամ ստորադասական կառույցներով, ինչպես՝ «Երեխու ձեռը փող չդնես, տունդ կքանդես» (443), «Մին նալին ես խփում, մին մեխին» (430), «— Բռիցս հոտ չեմ արել, որ իմանամ» (494), «Աստծու ճանապարհից դուրս ես գալի, սատանի ճանապարհը մտնում» (512), «...տարին տասներկու ամիս քարի քոլի հետ կռիվ տաս, էլի ձմեռվա կեսին տաշտը ցամաք» (436), «Շան ծիծ ես ծծել, ես քո խրատողի...» (444), «Կաթը պոռոշին չորացել չի, խոսքի է խառնվում» (472), «Քո ի՞նչ բանն է, էս քահեղի հետ գլուխ ես դնում» (431), «Լավ է երեխեքը տկտր մնան, քան նրանց դուռը գնաս» (427), «...նամակ են ստացել իրենց որդուց և ահա ծայրը բացվում էր, կծիկը ետ էին տալիս» (436), «Սև լինի էն օրը, որ մարդ էդ ձեռքը բռնի» (427) և այլն,

<sup>273</sup> Բաղիկյան Խ., նշվ. աշխ., 1986, էջ 197:

<sup>274</sup> Բեղիրյան Պ. Ս., նշվ. աշխ., էջ 166:

այդպես և շարահարությամբ ձևավորված ստորադասական կառույցներ՝ «— Ես մեռած, դու սաղ» (535), «— Խալխի սրտին դանակ տաս, արյուն չի կաթի, սրանք էլ հարսանիք են գնում» (530), «...անողը պրծավ, ասողն ընկավ կրակը» (512), «— Է, Ավան ամի, էջը կորցրել, չվան կհարցնես» (470) և այլն:

Ուսումնասիրության առարկա բնագրում հանդիպել ենք դարձվածային հոմանիշների, որոնք խոսքի ճակատման յուրովի միջոցներ են: Նույն համատեքստում դարձվածային միավորի գրական բայը փոխարինվում է խոսակցական-բարբառային տարբերակով, օր՝ ուտել-կրծել՝ «Մարդիկ իրար միս կուտեն» (439)–«Իզուր տեղը պտտվում են, իրար միս կրծում» (439), կամ ստեղծելով ընդունված ԴՄ-ների ժողովրդական տարբերակներ՝ «Ա՛յ Անդրի, գլխիդ ձի չի քացի տվել» (433), «... որ կերան, հետո էլ Քառասնաջրի ջանին են ընկնելու» (506), «Ուշքը վրադ պահի, քնով չանցնես» (503), «...մի քանի մարդկանց սիրտն է դինջանում» (519), «Փեշքեշ ձիու ատամին չեն նայի, էյ» (533), «...քոյի հետ կոխ կենաս» (426) և այլն: Մեկ այլ դեպքում ընդհանուր բաղադրիչներ ունեցող կազմություններով ձևավորվել են հոմանիշային՝ «Ուժներս տա, անելու շատ բան կա» (471)–«Ուժդ նրան պատեց, հա՛» (511), նաև՝ համանիշային տարբերակներ՝ «Ասա, շան որդի, փողը ոսկո՞ր է, որ կրծել եք» (443)–«— Շան որդիք...Բնչ է, ես ձեր մասխարան եմ» (474), «...ոսկորը պինդ մարդը» (427)–«Շալուն Սիմոնի ոսկո՞րն է հաստ, թե՛ Եփրեմի» (431) և այլն: Տեղին է նշել, որ ԴՄ-ների կազմության մեջ իմաստազատիչ դեր ունեն առկայացման, թվի ու հոլովի քերականական կարգերը: Անհոդ ու հոդով կառույցներից որպես դարձվածային համանուններ հանդիպել ենք ձեռք բռնել-ձեռքը բռնել՝ «... էլի նրանք են ձեռք բռնում» (427)՝ «օգնել»–«Սև լինի էն օրը, որ մարդ էդ ձեռքը բռնի» (427)՝ «օգնությունն ընդունել», կամ՝ «...մեկնվել էր մեջքի վրա, աչքը գցել գառան չափ սպիտակ ամպին» (511)՝ «նայել»–«...օրը մի քանի անգամ աչք էին գցում գարու արտերին» (466)՝ «հայացք գցել, հետևել» և այլն: Ուսումնասիրության լեզվանյութում առկա են **աչք** գոյականի տարբեր հոլովաձևերից հարադրված ԴՄ-ներ, որոնցում հոլովի քերականական կարգը իմաստատարբերակիչ է, այսպես՝ ուղղականով՝ «Նրա աչքն ընկավ քարերին» (544)՝ «նայել, ուշադրություն դարձնել», տրականով՝ «Մկրտումի աչքին ընկավ և Սալբին» (479)՝ «ուշադրությունը գրավել»: ԴՄ-ների կազմի գերադաս անդամի ձևաբանական փոփոխություններով պայմանավորված առաջացած դարձվածային տարբերակներից են քերականական համանիշները, օր.՝ «Նա դեռ գլխու չէր» (515), «...Քեզ եմ ասում...Գլխի չեմ» (469), «— Էստեղ մի բան կա, գլխի չեմ» (469), ինչպես և՝ դրանց հականիշ տարբերակը՝ «Սիմոն, էլի դու մի բան գլխի գցես» (469) և այլն: Կիրառված հականիշային ԴՄ-ներից են ներհականիշային դարձվածները, որոնք հենց ինքնին հականիշություն են արտահայտում<sup>275</sup>. օր.՝ «...խանձվում է, վերև աստված ներքև դու, ինձ ազատի» (508), «— Ես մեռած, դու սաղ» (535) և այլն:

<sup>275</sup> Այս մասին տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 341, Բաղիկյան Խ., նշվ. աշխ., 2000, էջ 107:



Դարձվածային միավորները, ունենալով բառային իմաստ, կարող են փոխարինվել համանշանակ բառով կամ բառերով<sup>276</sup>: Սակայն հայտնի է, որ «...փոխակերպման ժամանակ մեծ մասամբ կորչում են խոսքի պատկերավորությունն ու նրբագեղությունը, պակասում են հուզականությունն ու ներգործության ուժը. հատկանիշներ, որոնք ներհատուկ են դարձվածային միավորին՝ նրա էությունն են»<sup>277</sup>: Այսպես, ԴՄ-ը կարող է համապատասխանել որևէ քերականական ձևի, օր.՝ «...Դու էլ միտդ պահի, որ չսխալվեմ» (442)՝ «հիշիր», «— Էհ, Ավան ամի, դու էլ դադած կաշի ունես նրանց հետ, հմ բշտում ես» (506)՝ «հակասության, հակառակության մեջ ես», «— Չես թողնելու քյասիբը հաց ուտի...» (506)՝ «ապրի», «էնպես ավստնել գիտի դր, օձը ծակից կհանի» (474)՝ «ճարպիկ», «Դարբինն ականջը էր կախել գրույցին» (511)՝ «լսում էր», «...հայր խեղճ ու կրակ ռահաթ է» (456)՝ «անօգնական», «...որ կերան, հետո էլ Քառասնաջրի ջանին են ընկնելու» (506)՝ «զբաղվելու են», «...«Մկրտում ինչքան եղավ. զրուցով ընկանք» (443)՝ «զրուցեցինք», «Վեց շահու արժեքն ինչ է, որ դրա համար խոսք ու գրույց ես անում» (443)՝ «վիճում ես», «Չոլխիւր տապ արեց պատի տակ» (544)՝ «թաքնվեց», «Իսկ նրանց ասածը՝ ինչպես անտառի արահետը թուխա օրերին» (511)՝ «անորոշ և անհայտ» և այլն: Կամ համարժեք է ամբողջական նախադասության, օր.՝ «Ունքամեջը չէր բացվում» (433)՝ «չէր ուրախանում», «Հոգի ունեմ տալու» (500)՝ «չեմ կարող ճշմատությունը չասել», «Գեներալ Կուտոզովի տղան էս» (511)՝ «հայտնի ես», «Սև լինի էն օրը, որ մարդ էդ ձեռքը բռնի» (427)՝ «անհիծվի, եթե օգնությունն ընդունի», «— Էլի՛ բռնեց...Քորի, լեզուդ մի քիչ քորի» (460)՝ «անիմաստ խոսի՛ր», «Աստված կոներիդ ուժ տա» (444)՝ «զորավիզ լինի», «Հալալ մարդու համար իմ դուռը բաց է» (444)՝ «հյուրընկալ է», «— Ես իմ հոր տղան չեմ լինի, եթե պիլնում նրա գլուխը չմաշառեմ» (511)՝ «երդվում եմ անպայման...», «ամոթ չլինի ասել» (442)՝ «անհարմար է», «Էս ձեռքդ կկտորի՛, որ տակը փեյնես» (466)՝ «ի՛նչ կպատահի» և այլն:

Նկատելի է, որ Բակունցն ազգային լեզվամտածողությանը հարազատ դարձվածային միավորների անհրաժեշտ ու դիպուկ կիրառություններով ոչ միայն անհատականացրել է իր գրական կերպարների՝ Ավան ամու, Արզումանի, Անդրի ամու, Ունանի, Տեր Նորընծայի լեզուն, այլև կերպարներին դարձրել է կենդանի ու տիպական: Այսպես՝ Տեր Նորընծայի խոսքում կարելի է առանձնացնել կազմությամբ ու բնույթով տարբեր կառույցներ, որոնցից են *գրաբարից ավանդված*՝ «Առաջվա լիությունն էլ չկա.. ահա քեզ արմատ չարյաց» (428), *խոսակցական*՝ «Դորանով յարան չի սաղանա, այ՛ օրինյալ» (428) և այլն:

Խնդրո առարկա նյութը քննելիս նկատել ու կարևորել ենք այն հանգամանքը, որ ոչ միայն կերպարների, այլև հեղինակային խոսքը, առանձնանալով իր հայեցի բնույթով, համադրված-համեմված է գրական, օտարաբան ու գրական զուգահեռներ ունեցող ժողովրդական-բարբառային բնորոշ տարբերակներով: Թվում է, թե

<sup>276</sup> Տե՛ս Սուքիասյան Ա. Մ., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971, էջ 240:

<sup>277</sup> Բաղիկյան Խ., նշվ. աշխ., 2000, էջ 12:

«...հեղինակային խոսքում այդ հերոսն ինքը մասնակցություն ունի»<sup>278</sup>, օր.՝ «...ինչպես Ավան ամին էր ասում «ծնոտ էր ծեծում» ապացուցելու» (432), «Կարմրաքարի ծխատեր քահանան մտածում էր իր հոտի մասին, սրտանց ուզում էր դարման գտնի» (437), կամ «Տաշտը դատարկ էր, օրը մի քանի անգամ աչք էին զցում գարու արտերին» (466), որոնցով երևան է հանել քահանայի մտորումը և աշխատող շինականի կենսակերպը գարնանամուտին: Այս և այլ օրինակներ հարստացրել և ավելի դիպուկ են դարձրել հեղինակային խոսքը: Արծակագիրը բարբառախոս կերպարների խոսքում ոճավորման նպատակով պահպանել է բարբառային արտասանությամբ դարձվածային կառույցներ, ինչպես՝ «Է...խեր բարաքյաթը կորավ» (442), «...իրա օրումը ջերը մի բոռ չեթ էլ չի տեսել» (443), «Փողն ինչ բան է, քեզ պես մի մարդու հետ նստել վերկենալը հազար մանեթի թայ չեմ անի» (443), «Դե ինձանից արշա եկածը ինչ պիտի լինի» (430), «...Հրեդ եքա մարդ ես դառել... հալբաթ մի լույս էլ մեզ կհասնի: Էսպես նեղում չենք մնա» (475), «Բզի գլխին յումբուղով կտամ, թե՛ չաքուճով» (511), նաև գոեհկաբանություններ՝ «Թքած փողի վրա. դու մարդու լավությունն ասա» (443) և այլն:

Նման կիրառություններով հեղինակը իր հերոսների խոսքը դարձրել է ավելի սրտաբուխ ու անմիջական, երբեմն էլ՝ ազդեցիկ, առավել ծանրակշիռ ու հանդիսավոր:

Ընդհանրապես լեզվական միավորների արտահայտած հասկացությունների ուսումնասիրությունը կատարվում է իմաստաբանության տիրույթում: Դարձվածները, օժտված լինելով հուզաարտահայտչական գունավորմամբ ու կիրառական-ոճական առանձնահատկություններով, արտահայտվում են ոճաբանական բոլոր միջոցներով ու դարձոյթներով: Ըստ այդմ էլ բնագրային դարձվածային միավորները հիմնականում օժտված են **պարկերավորությամբ**՝ «— Բռիցս հոտ չեմ արել, որ իմանամ» (494), «...տարին տասներկու ամիս քարի քոլի հետ կոճվ տաս, էլի ձմեռվա կեսին տաշտը ցամաք» (436), «...ոնց էին խտիտ-խտիտի արջապար տալի» (506), «— Բա վերջը, մի լույս չի՞ հասնելու մեզ: Էսպես խավար պիտի մնանք» (516) «— Խալխի սրտին դանակ տաս, արյուն չի կաթի...» (530), «Ախի, երեխի սիրտը խարաբ մի անի, թող պարզամիտ գնա» (534), «Գեղովի խելք-խելքի տանք, մին էլ տեսար ըի՛ր, լույսը բացվեց» (512), «Հլա ջահել ես, շատ մարդ շատ խոսք կասի, բալքամ արյունդ էլ կպղտորվի» (481), «...ունքերն իրար տար և երեսը դարձներ Ավան ամու կողմը» (425), «Թե որ չեկա, ուրիշի մեղքի տակին ինչի ընկնեմ» (535) և այլն, **փոխաբերությամբ**՝ «Բզի գլխին յումբուղով կտամ, թե՛ չաքուճով» (511), «Այ քո բոստանը... Կատուն միջին թավալ չի տա» (506), «Արզումանի գլուխը քարի տակին չի մնա» (535), «Տղամարդ կաց» (535) «Հայ արևդ կծեմ, գործին տաք կպի» (474) «Էս էլ քու հագարացու աշխարհը չի, որ լեզվակոխ անես» (428), «Քո փորն ինչո՞ւ է ծակում,— գոռաց Արզումանը» (509), «— Տես, ինչ կատաղած լակոտ է... փորը մի քիչ տաքացել է» (509), «Հորս վիզը ծուռ չթողես» (509), «Ձեր են բաղի կողքով որ

<sup>278</sup> Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 69:

անց են կենում, քիթս մխում է» (475), «— Ես իմ հոր տղան չեմ լինի, եթե պիլնում նրա գլուխը չմաշառեմ» (511) և այլն:

Խնդրո առակա լեզվանյութում առկա են նաև *համեմատություն ցույց տվող դարձվածային միավորներ* կամ *համեմատություն–դարձվածային միավորներ*, որոնք ևս պատկերավորություն են հաղորդում և կերպարների, և հեղինակի խոսքին՝ միաժամանակ արտահայտելով նրանց զգայական ու գնահատողական վերաբերմունքը: Ինչպես գիտենք, համեմատությունը որևէ առարկայի և դրա հատկանիշի կամ գործողության և դրա հատկանիշի հարաբերության արտահայտումն է մեկ այլ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ<sup>279</sup>, *խկ համեմատություն–դարձվածային միավորները* «...խոսքի պատկերավորության հիման վրա առաջացած կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերահիմաստավորված կապակցություններ են»<sup>280</sup>: Դրանք հիմնականում ձևավորվում են *պես, նման, չափ, ինչպես, որպես, իբրև* կապերով և *ասես, կարծես, ոնց որ* շաղկապներով: Լինելով պատրաստի վերարտադրելի կառույցներ՝ դրանց տեղին կիրառումը նպաստում է պատկերակերտմանը: Դրանց կառուցվածքային–քերականական առանձնահատկությունները վերհանելիս կարելի է առանձնացնել *անվանողական համեմատություն–դարձվածային միավորներ* և *հաղորդակցական համեմատություն–դարձվածային միավորներ*<sup>281</sup>, որոնցից մեր կողմից ուսումնասիրվող բնագրում համեմատաբար հաճախադեպ են անվանողական համեմատություն–դարձվածային միավորները: Ձևավորվելով տարբեր կաղապարներով՝ վերջիններս ոճական նշանակությամբ ու իմաստային–գործառական դերով լինում են *ածականական*՝ «Եվ նրանց աչքում Մկրտումը դառնում էր խանի չափ զորություն ունեցող մարդ» (506), «Երեխի նման ժողովուրդ են» (456), *մակբայական*՝ «— Քո ասելով ուրեմն անբան կովի պես սուս անենք էլի» (511), «...և նվում էր՝ թևն արնոտ բուխ նման» (504), «Մերոնք հենց շաշ եզան նման քար են պոզահարում (456), «Ինչ եք կարասն ընկած մկան նման թոսխել» (526), «Ջրի ալիքները կույր օձերի նման դեսուդեն էին վազում» (489), «Քաղցածների այդ խումբը, ագռավների երամի նման սպասում էր» (537), «...խմորի գնդի պես թուլվում էր լեզուն» (430), «Թիթեղյա ծածկոցը թուխպի պես թևերը փռել էր» (504), «...մինչև Արզումանը փոքրացավ սև կատվի չափ» (536), «...վիրավոր գազանի նման շտապում էր որջը» (542), «Արևը հասուն մրգի նման թեքվել էր» (511), «Եփրեմն ունքերն կիտում էր և իբր խռոված երեխա բարձրանում վերև» (458), «...մեկը բառաչում էր ինչպես մորթվող անասունը» (536), «Պատերազմի լուրը պայթեց, ինչպես որոտը պարզկա երկնքում» (513), «Առօրյա մանր հոգսերը հանկարծ խառնվեցին, ինչպես կռունկի երամը ամպ գիշերին» (513) և այլն: Համեմատաբար քիչ են բնագրային *հաղորդակցական համեմատություն–դարձվածային միավորների* օրինակները՝ «Նրանց համար նորություն էր այդ. կար-

<sup>279</sup> Տնն Բաղիկյան Խ., նշվ. աշխ., 2000, էջ 22:

<sup>280</sup> Ավետիսյան Լ. Ն., Համեմատություն–դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Ե., 2018, էջ 5:

<sup>281</sup> Այդ մասին մանրամասն տես Ավետիսյան Լ. Ն., նշվ.աշխ., էջ 31–89:

ծես երկաթյա թևով մի թռչուն իջել էր ձորը» (504), «Իսկ նրանց ասածը՝ ինչպես անտառի արահետը թուխալ օրին» (511) և այլն:

Խնդրո առարկա բնագրային օրինակների ոճական արժեքն ու նշանակությունը դրսևորվում է նաև տարբեր դարձույթներով<sup>282</sup>, այսպես՝ **չափազանցություն (հիպերբոլա)**՝ «Հազար շառ, հազար փորձանք» (527), «Օխտը օր օխտը գիշեր ձիավոր անց կացավ, բաղի չափարը պրծավ» (476), «— Հազար մարդ է անց կենում, հազար աչք է նայում» (446), «Ղուշի թևով էլ է կհասնեմ» (535), «Պա, պա, պոռչտին ջրի գին է» (534), **բացթողում (էլիպսիս)**՝ «...էս էլ հնգանոցը, չէ՛, քեզ մատաղ...» (442), «...խանձվում է, վերև աստված ներքև դու, ինձ ազատի» (508), «— Ես մեռած, դու սաղ» (535), «Սար ու քուրը ձեզ» (534), «Էս արտը քեզ փեշքեշ» (479), **շրջասույթ (պերիֆրազ)**՝ «Ողորմած հոգին լավ մարդ էր» (442), «Հայ արևդ կծեմ, գործին տաք կպի» (474), «— Մկրտում...Անունդ քարին գրեմ, մի տես...» (442), «— Շան որդու փորսին տես» (495) «Մինչև շան որդուն թուղթը գրել եմ տվել, հոգիս բերանս է հասել» (459), «— Դենը փախեք, շան լակոտներ» (495), «— Այ խամ հեյվան» (494), «— Ուր է, լեզվիդ մատաղ, քո ասածը լինի» (526), **կրկնություն**՝ «Գեղովի խելք-խելքի տանք...» (512), «Չոլախը ջրի ափով իջնում էր ինքն իր մտքի հետ» (543), **համըմբռնում (սինեկդոխա)**, որը դրսևորվել է հիմնականում **գլուխ, աչք** անվանումներից կազմված օրինակներով՝ «Աչքն էլ չհանեցի՞նք» (485), «...արի գլուխ առնենք, կորչենք» (433) և այլն, **երգիծանք**՝ «Տերտեր, չեղավ էլի՝ մեր գլխին Ավետարանդ պահես, ասես համճգ ես» (534), ընդ որում՝ երգիծանքի տարատեսակներից հանդիպում ենք այսպես կոչված արհամարհական ԴՄ-ներ, որոնցով հասարակ գյուղացիներն իրենց անհարգալից վերաբերմունքն են արտահայտել, օր.՝ «Կաթը պոռչին չորացել չի, խոսքի է խառնվում» (472), «Շան ծիծ ես ծծել» (444), «Նա ո՞ւմ շունն է, որ մեզ վրա հաչի» (462), **աստիճանավորում (գրադացիա)**՝ «Հլա ջահել ես, շատ մարդ շատ խոսք կասի, բալքամ արյունդ էլ կպղտորվի» (481), «Աստծու ճանապարհից դուրս ես գալի, սատանի ճանապարհը մտնում» (512) և այլն:

Այսպիսով՝ քննելով ուսումնասիրվող ԴՄ-ների տարատեսակ դրսևորումները՝ նկատել ենք, որ դրանցում համեմատաբար շատ են **գլուխ, աչք, ձեռք, աստված** գոյականներով հարադրված անվանողական ու հաղորդակցական ԴՄ-ները: Գունանվանումների և որևէ խոսքի մասի զուգորդումներով կազմություններից հանդիպել ենք միայն *սև* ածականով բաղադրված կառույցներ: Լինելով խոսքի ոճավորման անկրկնելի միջոցներ՝ նպատակային կիրառված բնագրային ԴՄ-ները բազմազանության բնագրի լեզուն ձեռքբազատել են միօրինակությունից: «Կարմրաքար» վեպը հարուստ է ժողովրդախոսակցական ԴՄ-ներով, որոնցով արտահայտված միտքն առավել գունեղ է ու դիպուկ:

<sup>282</sup> Նշված դարձույթների և դրանց օտար անվանումների մասին տես **Բաղիկյան Խ.**, նշվ.աշխ., 2000, էջ 32–54:

## ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ В РОМАНЕ А. БАКУНЦА “КАРМРАКАР”

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

В статье поставили цель изучить фразеологизмы романа «Кармракар», представлены их структурные, семантико–функциональные и стилистические проявления. Современность исследования и научная новизна обусловлены этими проявлениями. Такое употребление фразеологических единиц не только придает народный колорит, но и обеспечивает естественность прозе Бакунца. Будучи незаменимыми элементами стилизации речи, рассматриваемые фразеологические единицы сделали более выразительным язык Бакунца в данном произведении, не позволив ему излишнюю удлинённость. Особенно богата фразеологизмами речь героев романа. Значительную часть романа составляют коммуникативные фразеологические единицы и фразеологизмы с глаголом в качестве главного члена. Мы использовали комбинацию и анализ в ходе исследования.

**Ключевые слова:** фразеологические единица, «Кармракар», стилизация речи, структурная особенность, стилистические проявления.

## PHRASAL UNITS IN “KARMRAQAR” NOVEL BY A. BAKUNTS

SVETLANA MANUCHARYAN

In the article we intend to examine phrasal units applied in “Karmraqar” novel presenting their structural, semantic –functional and stylistic expressions. The modernity of the study and the scientific novelty are conditioned by these expressions. Such appliance of phrasal units transmit not only folk nuance but also naturality to this Bakunts novel. Being speech styling irreplaceable structures, phrasal units have made the language of this Bakunts novel more expressive keeping it free from verbosity. Especially the hero’s speech is rich of phrasal units. Verbal and communicative units are a significant part of the original. During the study we used a combination u analysis.

**Key words:** phrasal unit, “Karmraqar”, stylization of speech, structural feature, stylistic expressions.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ԵՎ ԶԱՐԴԱՐԱՆՔԻ ԱՐՏԱՑՈՒԼԱՆՔԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հոդվածը ներկայացվել է 15.09.2020 թ., գրախոսվել է 10.10.2020 թ., ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպիսի անսպառ շտեմարան է Ակսել Բակունցի սրբեղծագործական աշխարհը հայոց ազգային մշակույթի, հայկական փարագի ու զարդերի զանգեզուրյան համալիրի, առօրյա-փոն, կին-տղամարդ, յուրային և օտար, տեղացի-եկվոր, տեղական-եվրոպական երկբևեռ փոխկապերի, գյուղական ու քաղաքային ընկալումների, պատկերացումների, ինչպես նաև հայրենի բնաշխարհի ու մշակութային բնապատկերի առանձնահատկությունների ազգաբանական դիտարկման և ուսումնասիրման համար: Ուսումնասիրման թեման արդիական է և նորույթային, քանի որ այս դիտարկյունից դեռևս դիտարկված չէր: Քննարկված հարցերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ գրավոր, դաշտային ազգագրական նյութերը, համադրվելով ու համալրվելով գեղարվեստական գրականության, տվյալ դեպքում՝ Ակսել Բակունցի՝ հայրենի բնաշխարհի մշակութային առանձնահատկությունների ներսից ու խորքից ճանաչողության և իմացության վրա խարսխված տվյալներով, առավել ամբողջական են դարձնում մշակութային երևույթների ու փարրերի պատկերը:

**Հիմնաբառեր՝** փարագ, զարդ, կին, տղամարդ, տեղական, եվրոպական, գլխաշոր, շլապա, առօրյա, փոն:

Հայկական տարազը հայոց բազմաբարբառ լեզվի նման բազմաբնույթ է: Այն հիշեցնում է բազմագույն երանգապնակ իր առանձին, բայց միաժամանակ համամասն ու ներդաշնակ գույներով: Բոլոր տարազախմբերում այն կազմված է ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի հարդարանքից, զարդարանքից, ագանելիքից (գուլպա, ոտնաման, տղամարդկանցը նաև՝ ոտքի փաթաթան, սոնապան): Տարբերությունները ոճավորման մեջ են, իսկ հագուստի ոճը դրսևորվել է ձևվածքային լուծման,

հիմնական ձևերի, հազնելու եղանակի, գունային համադրության ու գեղազարդման եղանակների մեջ:

Հայկական տարազն անսպառ աղբյուր է հայոց մշակույթի, զարդարվեստի ու ազգային ինքնության բազմակողմանի ճանաչողության և ուսումնասիրման առումով: Տարազը և զարդերը իմաստակիր նշանների համակարգ են, որոնցում դրսևորվել է հագուստը, տվյալ զարդը կրողի սեռատարիքային, ընտանեկան, սոցիալական, դասային–ունեցվածքային աստիճանակարգը: Մի կողմից այն անհատականացված է և արտահայտում է կրողի գեղագիտական ճաշակն ու նախասիրությունները, կյանքի տվյալ փուլին համապատասխանող համալիրով, մյուս կողմից՝ կապված է ժողովրդի ազգային մտածելակերպի, գեղեցիկի իդեալի պատկերացումների և ընկալման՝ գեղագիտական չափանիշների համատեքստում, ինչպես նաև ներէթնիկ ու ազգագրական խմբերի առանձնահատկություններին<sup>283</sup>:

Հայկական տարազի ու զարդարանքի վերաբերյալ ուշագրավ նկարագրեր ու բնութագրեր ենք հանդիպում Ակսել Բակունցի ստեղծագործություններում: Այս տեսանկյունից ուշարժան են «Միրհավ»<sup>284</sup>, «Ալպիական մանուշակ»<sup>285</sup>, «Կարմրաքար»<sup>286</sup>, «Կյորես»<sup>287</sup> և այլ ստեղծագործությունները:

Ներկայացված են լեռնաշխարհի մարդկանց՝ ջրաղացպանի, հողի մարդու, վաճառականի, զինվորականի, ինչպես նաև հոգևորականի հագուստի ու հագուկապի նկարագրեր: Ուշագրավ տեղեկություններ կան գործածվող կտորատեսակների և դրանցից հագուստ կարող դերձակների գործունեության վերաբերյալ: Կան նաև տվյալներ տղամարդկանց ու կանանց հագուստների, գլխի հարդարանքի տարրերի, հագուստի սեզոնային գործառույթի առանձնահատկությունների վերաբերյալ: Տիպական է հնի ու նորի հակամարտության արտացոլումը մարդկանց կերպարի, գլխի լաչակ կամ շլապա կրողների, «չուփայավորի» ու «պալտոնավորի» կերպարների, հագուկապի, վարվելաձևի, ինչպես նաև տների ներքնատեսքի, առօրյայի ու կենցաղավարության մեջ:

«Կարմրաքար»-ում ներկայացված են լեռնաշխարհի մարդկանց՝ ջրաղացպանի, հողի մարդու, վաճառականի, զինվորականի, ինչպես նաև հոգևորականի հագուստի ու հագուկապի նկարագրերը: Ուշագրավ տեղեկություններ կան գործածվող կտորատեսակների և դրանցից հագուստ կարող դերձակների գործունեության վերաբերյալ: Կան նաև տվյալներ տղամարդկանց ու կանանց հագուստների, գլխի հարդարանքի տարրերի, հագուստի սեզոնային գործառույթի առանձնահատկությունների վերաբերյալ: Տիպական է հնի ու նորի հակամարտության արտացոլումը մարդկանց կերպարի, հագուկապի, վարվելաձևի, ինչպես նաև տների ներքնատեսքի, առօրյայի և կենցաղավարության մեջ:

<sup>283</sup> Պողոսյան Ս., Հայկական զարդերը որպես նշաններ, «Մովսես խորենացի» հանդես, 2004, թիվ 4, էջ 31–32:

<sup>284</sup> Բակունց Ա., Միրհավ, Երկեր, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1985, էջ 112–122:

<sup>285</sup> Բակունց Ա., Ալպիական մանուշակ, Երկեր, Երևան, 1985, էջ 78–89:

<sup>286</sup> Բակունց Ա., Կարմրաքար, Երկեր, էջ 247–383:

<sup>287</sup> Բակունց Ա., Կյորես, Երկեր, էջ 138–215:

Ուշագրավ են տեղացիների տոհմիկ հագուստի ու եկվորների եվրոպական հագուկապի ու գլխի հարդարանքի, տոնածիսական կյանքի՝ սրբազան ժամանակի ու առօրյայի, մտածումների ու ընկալումների տարբերություններն ընդգծող նկարագրերը: Անդրադարձ կա նաև արևմտահայոց կենցաղին ու հագուստին: Պատկերավոր է ներկայացված երիտասարդ հայուհու զառ գլխաշոր մանդիլն ու շալե լաջվարդ շապիկի արծաթ սուրմաների ախորժալուր ու չարխափան զրնգոցը՝ «զրնգան սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում»: «Կյորես»-ում հստակ ուրվագծվում է Գորիսի ու Կյորեսի հակադրությունը, որը դրսևորվում է նաև գլխի լաջակ կամ շլապա կրողների, «չուխայավորի» ու «պալտոնավորի» կերպարներում:

«Կարմրաքար»-ում ներկայացված է ջրաղացյան Անդրու արտաքին կերպարը՝ ամառ-ձմեռ վրայից չհանվող հնամաշ քուրքով, ալրաթաթախ փափախով, տրեխներով: Հեռվից էլ կարելի էր Բոլոր քարի շուրջը նստածների սև ու դեղնավուն չուխաների մեջ տարբերել Անդրու ալրոտ քուրքը<sup>288</sup>: Ավան ամին էլ հիշում է, որ հնում, երբ սամավար չկար, մարդիկ չգիտեին ինչ է թեյը, նրանք հագնում էին «ղաղաք»՝ բամբակյա գործվածք, իսկ կանայք դարայի՝ մետաքսե կտորից հագուստ<sup>289</sup>: Այն ժամանակ դերձակը դուքան չուներ, ձեռքին մի ասեղ էր, մի մկրատ, տնետուն ման էր գալիս, Ա աշխատում, Ա տանն էլ հաց ուտում: Երեք օրում մի արխալուղ էր կարում: Թավրիզից ուղտերի քարավանով չոթ ու կտոր էին բերում, շիլեյի, գյուլի աղլուխ և այլն<sup>290</sup>: Խոջա-Հիբանի տունը նկարագրելիս հիշատակված են նաև կնոջ զարդերը և թանկարժեք մորթիները<sup>291</sup>:

Հիշատակված են նաև մեռնող Խոջա-Հիբանդի սպիտակ հալավն ու արխալուղը: Հոր մահից հետո որդիները կառուցում են խանութ, որտեղ աղաքարի կույտերի, ցորենի ու գարու հետ վաճառում էին ճոթ ու կտոր, գույնզգույն չիթ, թուփերով մահուղ, ատլաս, ծոպավոր թաշկինակներ և այլն: Խանութում Եփրեմը բուխարա փափախով և սև մահուղե պիջակով էր. քաղաքի վաճառականների նման, որի համար քաղաքացիներին ժամանակին ծաղրում էր հայրը, քանի որ պիջակը մարմինը մինչև սրունքները չէր ծածկում, ինչպես իր՝ խոջա-Հիբանի շալի չուխան էր<sup>292</sup>: Վաճառվում էր Յիհդելի սատին, Մորոզովի հալավացու: Տրված է նաև բնակարանի ներքնատեսքի ուշագրավ ու տիպական բնութագիրը<sup>293</sup>: Մկրտումի ապառիկների ցուցակում հիշատակված են հարսանիքի համար անհրաժեշտ 10 արշին զուլավոր, Պրոխորովի լաստիկ՝ 8 արշին, գյուլի աղլուխ և Բրոդսկու շաքար<sup>294</sup>: Մկրտումը, ինչպես վայել է հարուստ վաճառականին, կրել է արծաթե գինդերով գոտի<sup>295</sup>:

<sup>288</sup> Բակունց Ա., Կարմրաքար, էջ 253:

<sup>289</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>290</sup> Նույն տեղում, էջ 268:

<sup>291</sup> Նույն տեղում:

<sup>292</sup> Նույն տեղում, էջ 278, 280:

<sup>293</sup> Նույն տեղում, էջ 281:

<sup>294</sup> Նույն տեղում, էջ 282:

<sup>295</sup> Նույն տեղում, էջ 287:



Գարնանը մարդիկ ծմեռվա հաստ շորերը արևին են տվել և հագել հնամաշ արխալուղները: Ոմանք ծանր փափախների փոխարեն գլուխներին կապել են կապույտ կտորից թաշկինակներ<sup>296</sup>: Արզումանի մասին ասում է, որ նա էլ իրենց տան փափախավորն է, այսինքն՝ տղամարդը, որոշողը, ներկայացուցիչը<sup>297</sup>: Արզումանը, գալով գյուղ, կրում էր զինվորականի հագուստ՝ զինվորական համազգեստ— «աբմունդիրավաննի»՝ ոսկու պես պսպղուն կոճակներով, զինվորական հովհարավոր գլխարկկարտուզով՝ ծուռ դրած, կոշտ սապոգներ և զինվորական շալվար, որ «քնելուց առաջ ծալում էր խնամքով, գլխատակին դնում՝ ծալը չկտորելու համար» և գոտիով<sup>298</sup>: Հիշատակված է նաև հնագույն թիկնաշոր յափունջին:

«Ալպիական մանուշակ»-ում ուշագրավ են տեղացիների տոհմիկ հագուստի և եկվորների եվրոպական հագուկապի ու գլխի հարդարանքի, կյանքի և առօրյայի, մտածումների ու ընկալումների տարբերություններն ընդգծող նկարագրերը: Գյուղ եկող երեք ձիավորից երկուսի զգեստը և ձի նստելու ձևը ցույց են տալիս, որ նրանք քաղաքի մարդիկ են, օտար ու եկվոր<sup>299</sup>: Ֆետրե՝ նուրբ թաղիքից գլխարկով տղամարդը և նրա ընկերը հարուցում են ինչպես երեխանների, այնպես էլ կենդանիների զարմանքը: Նրանց հակադրությունն էր գլխին թաշկինակ փաթաթած, գոտու մեջ մանգաղ խրած, արխալուղ-խուխայով տղամարդը<sup>300</sup>: Ոտաբորբիկ, զգեստի խշշոցով կինը, տեսնելով օտար տղամարդկանց, գլխի շորը մի քիչ իջեցնում է աչքերի վրա: Կինը թեյ պատրաստելիս երբ կռանում ու բարձրանում էր, կամ բորբիկ ոտքերով քայլում խսիրի վրա, զնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները, փոքրիկ զանգակների ձայն հանում: Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև մերկ ներբանները<sup>301</sup>: Ծովափի տիկինը ևս ուներ խշխշան շորեր, հագնում էր գորշ գույնի վերարկու, սև թավշե գլխարկ, որի երկար քորոցը նարնջագույն գլխիկ ուներ: Նա շրջում էր հովանոցով: Ի տարբերություն նրա կարճ խուզած մագերի՝ գեղջկուհին ծամավոր էր<sup>302</sup>: Ամուսնու հետ ունեցած միջադեպից հետո գեղջուկ կնոջ «սուրմաները զրնգացին, ցնցվեցին երկար ծամերը»<sup>303</sup>:

«Ծիրանի փողը» պատմվածքում հիշատակված է արևմտահայոց, մասնավորապես Սասնո ավանդական ոտնաման-խարուկը<sup>304</sup>:

«Միրհավ»-ում պատկերավոր են ներկայացված հերոսուհու՝ Սոնայի զառ կապույտ գլխաշոր— մանդիլն ու շալե շապիկի արծաթ սուրմաները. կարծես լսվում է նրանց ախորժալուր ու չարխափան զրնգոցը, և «զրնգան սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում»: Շատ գեղեցիկ է ներկայացված սիրելիի քրտին-

<sup>296</sup> Նույն տեղում, էջ 298:

<sup>297</sup> Նույն տեղում, էջ 306:

<sup>298</sup> Նույն տեղում, էջ 311–312:

<sup>299</sup> **Բակունց Ա.**, Ալպիական մանուշակ, էջ 12:

<sup>300</sup> Նույն տեղում, էջ 14–15:

<sup>301</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>302</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>303</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>304</sup> **Բակունց Ա.**, Ծիրանի փող, էջ 41:

քից լանջին կպած շապիկը կամ լաջվարդի՝ խոտի խուրձերի մեջ թողած բույրը: Դիլան դայու հիշողության մեջ հավիտյան անջինջ են մնում Սոնան, հնձանը, «շույր վեր չարած» լաջվարդ շապիկը, արծաթե սուրմաները: Դիլան դային հիշում է, որ Սոնային թաղեցին լաջվարդ շապիկով<sup>305</sup>:

«Կյորես»-ում հստակ ուրվագծվում է Գորիսի ու Կյորեսի հակադրությունը, որը դրսևորվում է անունների մեջ, գլխի լաչակի և շլապայի մեջ, չուխայավորի ու պալտոնավորի միջև: Ամենամուլեռանդ կյորեսցիք ծաղրում էին Գորիսի օտարականների շլապան՝ անվանելով կլիդո՝ ծղաման, ոմանց կանանց անվանում էին շինովի տիկնիկ, ոմանց միրուքն էին ծաղրում՝ անվանելով կուտուռուզ և այլն<sup>306</sup>: Քաղաքացիներին անվանել են ընդհանուր տերմինով՝ պալտոնավոր, որոնք ուխտի էին գնում սուրբ Մարտիրոսի մոտ՝ զուգված, զարդարված, գույնզգույն հովանոցներով<sup>307</sup>: Հիշատակված են կտորների տեսակներ՝ «շիլեյ»՝ կարմիր կտավ, «մահուդվարի»՝ բրոյա հաստ կտոր, «ղադաք»՝ բամբակե կտոր, շալ, ինչպես նաև ոտնաման՝ սաղրի քոշ<sup>308</sup>: Քաղաքի շուկայում աշխատել են արհեստավորներ՝ ներկարարներ, սաղրի չմոշկ կարողներ, գառան հասարակ մորթուց «մոթալ փափախ» կարող վարպետներ: Հայտնի էր նաև Մանգասար դայու կտորեղենի խանութը՝ հատկապես արխալուղի դանավուզ մետաքսե կտորով: Դերձակների խանութների մոտ կախված են եղել պատրաստի արխալուղներ, կոշկակարները կարել ու վաճառել են սապոգներ<sup>309</sup>:

«Մթնաձոր»-ում ներկայացված է որսորդ Ավին՝ բերդան հրացանով, տաք վերնազգեստ-չուխայի փեշերը գոտու տակ խրած, մորթե գլխարկ-փափախը գլխին պինդ քաշած<sup>310</sup>:

Ակսել Բակունցի երկերն անսպառ աղբյուր են ու հարուստ շտեմարան հայոց բնաշխարհի տարբեր խավերի մարդկանց, ավանդական կամ նորամուտ մշակույթը կրողների արտաքին տեսքի, առօրյա և սրբազան կյանքի վերաբերյալ: Հայրենի բնապատկերն ու կենցաղը գերազանց իմացող հեղինակի տվյալները համադրելով առկա ազգագրական գրավոր նյութերի հետ՝ հնարավոր է դառնում առավել ամբողջական դարձնել ավանդական կենցաղի, այդ թվում՝ տարագի ու զարդերի բնութագիրը:

Զանգեզուրում տղամարդիկ որպես զարդ կրել են մատանիներ ու գոտի: Արծաթե գոտին դիտվում էր որպես տղամարդկության խորհրդանիշ, իսկ ոսկյան նաև ունևորության ցուցիչ էր: XIX դ. տղամարդու տաք վերնազգեստ չուխայի կրծքամասում դրվել են փամփշտակալներ, որոնք հետագայում ձեռք են բերում դեկորատիվ նշանակություն: Այդտեղ ունևորները դրել են փամփուշտներ՝ ոսկե կամ արծաթե գլխիկներով: XIX դ. վերջերին ունևոր տղամարդիկ կրել են ոսկյա շղթայով ժամա-

<sup>305</sup> Բակունց Ա., Միրհավ, էջ 49–50:

<sup>306</sup> Բակունց Ա., Կյորես, էջ 141:

<sup>307</sup> Նոյն տեղում, էջ 143:

<sup>308</sup> Նոյն տեղում, էջ 152:

<sup>309</sup> Նոյն տեղում, էջ 160–161:

<sup>310</sup> Բակունց Ա., Մթնաձոր, էջ 25:

ցույց, ճկույթը կամ ցուցամատը զարդարել են թանկարժեք ակով կամ առանց ակի ոսկյա մատանիով:

Զանգեզուրի կանանց ավանդական տարազի զարդարանքի համալիրը կազմված էր արծաթյա զարդերից, որոնցով հարդարվել են զգեստների օձիքը, թևքերը, կրծքամասը: Դրանք զգեստներին ամրացված անշարժ զարդեր էին: Զարդերի երկրորդ խումբը շարժական էր, կազմված գլխի, վզի, կրծքի, ձեռքի, գոտկամասի և ականջների զարդերից: Կնոջ գլխի հարդարանքի զարդերից հատկապես հարգի ու տարածված էին ոսկե ու արծաթե դրամներից ճակատազարդը: Բնութագրական զարդերից էր և թանկարժեք քարով քորոցը: Ամուսնացած կինն այն ամրացրել է ճակատակալի կենտրոնում, նշանվածը՝ ձախ մասում: Սիրված զարդի օրինակ էր և քունքակախիկ բոժոժ /պոժոժը՝ թելի վրա հավաքված: XIX դ. սկզբին բոժոժների փոխարեն սկսել են օգտագործել արծաթե կամ ոսկե դրամներով քունքակախիկներ: Ականջներին աղջիկներն ու կանայք կրել են գնդաձև, օղակաձև, ձվաձև, բուսանախշով կամ առանց դրանց ոսկե, արծաթե օղ-գինդեր՝ ցանցկեն կամ մանրարուք տեխնիկայով արված: Որպես նշան՝ այլ զարդերի հետ հարսնացուին ընծայաբերել են նաև գինդեր: Երիտասարդ կանայք օգտագործել են ոսկյա՝ փիրուզի, սարդինի քարերով և արծաթե ակնազարդ կամ առանց քարերի մատանիներ: Աղջիկները կրել են պողպատե մատանիներ՝ չարխափան նշանակությամբ: Պսակադրության օրը հարսնացուն հարսանյաց մատանիից բացի ստացել է նաև ոսկեդրամ, որոնք ամրացրել են վերնազգեստի երկու կողմերում: Կանանց առանձնահատուկ զարդերից են արծաթե, ոսկե դրամներով ճակտոնցները՝ կարմիր, կանաչ գույների թավշյա ժապավենների վրա շարած: Ճակատանոցը կազմված էր ոսկե և արծաթե դրամներից, ծնոտը բոլորող զարդը՝ արծաթե կամ ոսկե բոժոժներից: Ճակատնոցը սովորաբար կարմիր կամ կանաչ թավշից նեղ ժապավեն էր՝ վրան ոսկեդրամ կամ արծաթե դրամ: Մեջտեղում դրվել է «միջանակ» կամ միջանոց կոչվող դրամ, ժապավենը հարդարել են, ասեղնագործել, որից հետո կախել են «պոժոժները»: Գլխաշորը գլխին ամրացրել են արծաթե շղթայի՝ «չանգյալի» միջոցով: Գլխաշորի վրա ամրացվել են արծաթե կամ ոսկե կեռազարդեր: Այն արծաթյա երեք խուփ է, 2–4 սմ մեծությամբ, որոնք միացված են չորսից հինգ արծաթե շղթաներով: Դրանց վրա ամրացվում էին փոքրիկ արծաթե գնդիկներ: Զահել կանայք կրել են արծաթե՝ «սրտի տախտակ» կոչվող զարդը, իսկ ունևոր տարեց կանայք գոտկատեղում կրել են արծաթե չափրաստ: Ինքնատիպ զարդերից էին քունքակախիկ-բոժոժները՝ ոսկե, արծաթե սնամեջ գնդիկներով: Առանձնապես աչքի էին ընկնում գլխաշորի վրայից կրվող արծաթե՝ իրար խաչաձևող արծաթյա կեռազարդը, որը պատրաստվում էր թելքաշ, հատիկաշար եղանակներով: Զանգեզուրում ուրույն տեղ ունեին հագուստի վրա կարվող զարդերը՝ արծաթե գնդաձև, խողովակակերպ զարդակախիկները, ասեղնագործ և կտորից եզրազարդերը: Կնոջ վերնազգեստի կրծքամասն ու թևքերը զարդարվել են արծաթե կոճակներով ու գնդիկներով: Զգեստի թևքի ճեղքվածքները՝ արմունկից մինչև բազուկ, հարդարվել են բարակ երիզով և զարդարվել գնդաձև արծաթե կոճակներով: Թևնոցների կոճակները փոխարինվել են բարակ

արծաթե խողովակներով՝ թելի վրա հավաքված: Չանգեզուրում արխալուղի թևերի կտրվածքների արտաքին եզրերին կարել էն արծաթե կամ ոսկե կոճակներ, բոժոժներ կամ դուզմաններ՝ 6–12 հատ, իսկ դիմացը՝ եզրերին կոճակ–օղակներ, վրայից էլ՝ զառ բարթա: Թևքերը ավարտվել են եռանկյունաձև հավելվածով՝ եզրերին ոսկեթել երիզ: Դրան ամրացվել է սուրմա՝ բարակ խողովակներ, որոնք տեղ–տեղ երեքական կախվել են եռանկյունի կազմած: Արխալուղը կապվել է գոտիով և կոճկվել արծաթե կոճակներով:

## ОТРАЖЕНИЕ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО КОСТЮМА И УКРАШЕНИЙ В ТВОРЧЕСТВЕ АКСЕЛЯ БАКУНЦА

СВЕТЛАНА ПОГОСЯН

Цель данной статьи–показать, какой неисчерпаемой сокровищницей является творческий мир Акселя Бакунца для этнологического наблюдения и изучения армянской национальной культуры, зангезурского комплекса национального костюма и украшений, а также для изучения бинарных оппозиций— повседневная жизнь/праздник, женщина/мужчина, свой/чужой, коренной житель/приезжий, местный/европейский, специфики сельских и городских восприятий и представлений, а также выявления особенностей родного края и культурного ландшафта. Тема исследования актуальна и выделяется новизной, поскольку с этой точки зрения еще не изучена. Анализ обсужденных вопросов позволяет сделать вывод, что, сопоставив и пополняя письменные, полевые этнографические материалы с данными художественной литературы, в данном случае творчеством Акселя Бакунца, познание изнутри и из глубины культурных особенностей родного края, делают более целостным образ культурных явлений и элементов.

**Ключевые слова:** национальный костюм, украшение, мужчина, местный, европейский, платок, шляпа, обыденный, праздник.

## THE REFLECTION OF ARMENIAN NATIONAL COSTUME AND ADORNMENTS IN THE WORKS BY AKSEL BAKUNTS

SVETLANA POGHOSYAN

The article aims at showing what an inexhaustible depository is Aksel Bakunts' creative world for the Armenian national culture, Zangezur complex of Armenian national costume and adornments, daily–festive, man–woman, native–newcomer, local–European bipolar relations, rural–urban perceptions and ideas, as well as for the ethnological re-

view and study of peculiarities of the countryside and cultural landscape. The topic of the study is actual and new, as it has not been observed from this perspective yet. The analysis of the discussed issues allows to conclude that by combining the written, field ethnographic materials and supplementing the facts based on the deep knowledge of cultural peculiarities of the native countryside described in fiction, in this case in the works by Aksel Bakunts, the cultural phenomena and elements become more complete.

**Key words:** *national costume, adornment, woman, man, local, European, headscarf, shlyapa, daily life, feast.*

## ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՍԵՐՈ ԽԱՆՋԱԴՅԱՆԻ «ԿՈՍՏԻ ՔԵՌԻՆ»ՊԱՏՄՎԱԾՔԻ ՀԻՄՔՆ ՈՒ ԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Հոդվածը ներկայացվել է 15.10.2020 թ., գրախոսվել է 20.11.2020 թ.,  
ընդունվել է տպագրության 01.12.2020 թ.

Հոդվածում քննության է առնվել Սերո Խանզադյանի՝1991 թ–ին մամուլում լույս տեսած և որևէ ժողովածուում չգեղարված «Կոստի քեռին» պատմվածքը, որում իրական դեպքերի ու բնավորությունների գեղարվեստականացմամբ հեղինակը հիանալի ներկայացրել է ստալինյան բռնի ժամանակները, երբ անհիմն մեղադրաքննիչի պատճառով անգամ մտերիմներին էին ուրանում հարազատներին: Այս ամենի միջով անցել է նաև հեղինակը, ճաշակել աքսորական կյանքի դառնությունները, ապրել մորն ու քույրերին կորցնելու սարսափը, և մինչև կյանքի վերջին օրը պայքարել այդ չարիքի դեմ: Մեր խնդիրն է եղել իրական կենսահանգամանքների հիմքով վերլուծել ընթերցողին քիչ հայտնի ուշագրավ ստեղծագործությունը՝ որոշ զուգահեռներ փանելով նաև «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակի այն շերտերի հետ, որոնք կապվում են ստալինյան շրջանում գրողի ընտանիքին պատուհասած ստալինյան հալածանքների հետ: Հոդվածում կիրառել ենք կենսագրական, պատմական, վերլուծական ու համադրական մեթոդները:

**Հիմնաբառեր՝** Կոստի քեռի, ստալինյան բռնություններ, աքսոր, հալածանք, ողբերգություն, վարժապետ, ստեղծագործական երևակայություն:

Գրականագիտության մեջ հաճախ Սերո Խանզադյանի ստեղծագործությունը դիտարկել են իբրև «գեղարվեստական փաստագրություն»՝ համոզված, որ Խանզադյանն իր ստեղծագործություններում արտացոլում է միայն իրականությունը՝

այդպիսով արժեզրկելով նրա գրական-գեղարվեստական մտածողությունը, իրական դեպքերից ու դեմքերից գեղարվեստական կատարյալ իրադարձություններ ու տիպական կերպարներ կերտելու նրա մեծ տաղանդը: Այո՛, Խանզադյանն իր ստեղծագործությունների համար ընտրել է իրական դեպքեր ու իրական անձնավորություններ, սակայն հեղինակը, ազատություն տալով ստեղծագործական երևակայությանը, փոփոխություն է մտցնում դեպքերի ընթացքի մեջ, դրանք հարմարեցնում միջավայրին: Իսկ նախատիպերի ընտրությունն առավել ևս պատահական չէր կարող լինել. դրանք իրենց ներքին էությամբ, բնավորության ու մարդկային խառնվածքով պետք է համապատասխանեին ստեղծվելիք գրական կերպարներին: Եթե զուգահեռ ընթերցենք 1986 թ.-ին լույս տեսած «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակի «Մեր աշխարհի գույները» հատվածը և «Սյունիք» մարզային թերթում առաջին անգամ 1991 թ.-ի փետրվարի 1-ին լույս տեսած «Կոստի քեռին» պատմվածքը (պատմվածքը գրվել է դեռևս 1937 թ.-ի նոյեմբերին Աշխաբադում, ուր փախել էր Չեկայի ձեռքից, այսինքն՝ պատմվածքի իրական դեպքերից ընդամենը երեք-չորս տարի հետո, սակայն տպագրվել է կես դար անց), որի ձեռագիր տարբերակը նույն թվականի Ամանորին հեղինակը հանձնել էր Էդուարդ Զոհրաբյանին, վերևում ասվածը կտեղափոխվի իրական հողի վրա, կնկատենք, թե իրականությունն ինչպես է ձեռք բերում գեղարվեստական տարազ:

Այսպես՝ «Այս տարվա դեկտեմբերի երեքին լրանալու է տասնիննս: Հայրս ասում է՝ անմեղ, երազող հասակ է դա: Մայրս գոհ է, ուսուցիչ եմ ... Հունիսին մեզ ուսուցչի վկայական տվին: Մեզ կանչեցին լուսբաժին՝ աշխատանքի նշանակելու ... Ինձ առաջարկեցին հեռավոր Տաթև գյուղի յոթնամյա դպրոցը: Երբ խնդրեցի ինձ մեր գյուղում թողնել, վրաս քրքջացին:

— Էդ էր պակաս ... Դու պիտի ուրիշ գյուղ գնաս: Վերջ»<sup>311</sup>: Իսկ «Կոստի քեռին» պատմվածքում հին օրերի հուշին խառնվում է նաև ժամանակի «պարտադիր» դարձած օրենքներից մեկի հանդեպ քամահրական վերաբերմունքը. «— Էյ, էյ ... Դու մեր երկրում ծավալված պարտադիր ուսմանը դեմ ես: Էյ, էյ ...»<sup>312</sup>:

Ինքնակենսագրական վիպակի և իրական հիմք ունեցող պատմվածքի ընդհանրությունները «հերոսների» նույն տարիքն ունենալով կամ բերանը նույն հրամանով փակելով չի ավարտվում:

Ծայրաստիճան հուզիչ է «սովից լղարած գյուղի», ասել է թե՛ ողջ երկրի նկարագիրը մեկ-երկու բնորոշ համեմատությամբ, մակդիրով, փոխաբերությամբ ներկայացնելը: «Հենց որ Ակներ աղբյուրի մոտից մտա գյուղ, իսկույն ամաչեցի նրա հառաչող աղքատությունից: Է, կասեր հանգուցյալ տատս՝ ինչ գյուղ է, մի որձակի բեռնես՝ կտանի:

Այստեղ ես իմացա, որ աղքատությունն էլ հոտ ունի: Չեմ կարող ասել, թե ինչից է մխում այդ հոտը՝ սովից մեռած մանկան վերջին շնչից, թե՛ կոլխոզի դատարկ

<sup>311</sup> Խանզադյան Ս., Հորս հետ և առանց հորս (Ինքնակենսագրական վիպակ), Ե., Սովետական գրող, 1986, էջ 208:

<sup>312</sup> Զոհրաբյան Է., Լեռնային լեզենդ, Ե., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2007, էջ 20:

ամբարների խոնավությունից»<sup>313</sup>, իսկ վիպակում՝ «Մի ահեղ թշվառություն մոնչաց երեսս ի վեր: Աղքատության հոտերն ու ճիչերը լցվում են ձորը»<sup>314</sup>: Գյուղի խեղճուկ-րակության խորհրդանիշն է Կոստի քեռին՝ վաթսունն անց, անշնորհք կարկատված շորերով, մաշված տրեխներով, այրված բոքոնի նման դեմքով, կիսաստված, կիսակենդան, կիսատ-պոատ այդ մարդը: Նրա ու վարժապետի մտերմությունը սկսվում է ճաքճաք սեղանի շուրջ՝ վարժապետի բերած ուտելիքով, շարունակվում քաղաքից պարբերաբար Կոստի քեռու համար բերվող նվերներով՝ բլուզ, հալավ-ոտաշոր, գուլպա, սապոգ, Կոստի քեռու օրհնանքներով՝ «Հարյուր տարվա կյանք ունենաս, որդիս: Ծլես, ծաղկես: ... Օրհնվես, վարժապետ: Աջ գնաս աջվես, ձախ գնաս՝ էլի աջվես: — Աշխարհս քեզ լինի, որդիս ...»<sup>315</sup>:

«Կոստի քեռին» պատմվածքում Խանգաղյանը լեզվական պատկերավորման տարբեր միջոցներով ոչ միայն հրաշալի ներկայացնում է ստալինյան ժամանակների գյուղը, այլ նաև վախվորած, խեղճուկրակ, ձայնագուրկ կամ ըստ պահի անհրաժեշտության բարձր ծղրտացող գյուղացուն: Կոստի քեռու հետ հենց առաջին ծանոթության ժամանակ հեղինակ-վարժապետը ուշադրություն է դարձնում նրա ադամախնձորին, որի հիմնական դերը նաև տղամարդու ձայնալարերը պաշտպանելն է, իսկ Կոստի քեռու ադամախնձորը «մերթ գնում-կորչում է սաստիկ լղար կրծքի, ոչ՝ փորի մեջ, մեկ էլ, ըհը, ցցվում, դեմ է առնում ծնոտին: Ճահճում խրվող-ելնող գորտ է այդ գնացող-եկող կրճակկլորը: ... Կոստի քեռու ձայնը մարեց: Ադամախնձորը գնաց կորավ փորի մեջ: Ետ չի գալիս ճահճի ցեխն ընկած քարի պես: Կոստի քեռին կապտեց: Կապտեց՝ ջրից հանած մեռել ...»<sup>316</sup>: Պատմվածքի սկզբնամասում գետեղված Կոստի քեռու ադամախնձորի պատկերավոր նկարագրությունները, ցավոք, այն ժամանակների մարդկանց մեծ մասի հեղհեղուկության, վախվորածության, սեփական մտքերից անգամ վախենալու, ուր է թե՛ արտահայտելու մասին է: Սուր ու սպանիչ է հեղինակի խոսքը, բայց միևնույն ժամանակ տխուր ու ողբերգական... Իսկ վերջում, երբ վարժապետին ժողովի ժամանակ մեղադրում են իբրև ժողովրդի թշնամի, այդ նույն խրվող-ելնող ադամախնձորով Կոստի քեռին է «Մահ մեր երջանիկ կյանքը խանգարողին» գոռում:

Երկու ստեղծագործության կենսահիմքի զուգահեռ քննությունից նկատում ենք նաև, որ մեկը մյուսի շարունակությունն է կամ, օրինակ, պատմվածքում արված բնորոշ համեմատության կամ նկարագրի հիմքը գտնում ենք վիպակում, ինչպես՝ «Ինչպե՞ս թե եկել եմ, ... մեր խրճիթը, խանձված մորս ու ահից ցնցվող հորս թողել-եկել եմ»<sup>317</sup>: Վիպակում արդեն Խանգաղյանը ցավով ներկայացնում է մի փոքրիկ ու ծանր միջադեպ, և պարզ է դառնում, թե պատերազմի բովով անցած մարդն ինչպես է գլուխ խոնարհում կեղծ, շինծու գաղափարախոսություններ կրողների առջև.

<sup>313</sup> Զոհրաբյան Է., Լեռնային լեզենդ, Ե., 2007, էջ 21:

<sup>314</sup> Խանգաղյան Ս., Հորս հետ և առանց հորս, Ե., 1986, էջ 221:

<sup>315</sup> Զոհրաբյան Է., Լեռնային լեզենդ, Ե., 2007, էջ 22, 23, 24:

<sup>316</sup> Նույն տեղը, էջ 21:

<sup>317</sup> Նույն տեղը, էջ 20:



«Մեզ՝ ավարտածներիս տարան Բաքու՝ էքսկուրսիա: Հայրս լուսբաժնի վարիչին ասաց, թե լավ կլինի տղաներին տանք Երևան: Վարիչը չարությամբ նայեց հորս:

— Ի՞նչ է,— ասաց նա,— դուք դեմ եք ազգերի եղբայրությանը:

— Ներողություն,— հայրս հանեց գլխարկը:— Ախր ես...

Ցավեցի հորս համար, որ գլխարկ հանեց մի ճախլիկ սնապարծի առաջ: Այն գլուխը, որ պատերազմներում երբեք չէր խոնարհվել, միայն հաղթանակի պսակ է կրել, այժմ խոնարհվում է մի ակնոցավոր վարժապետի առաջ»<sup>318</sup>:

Այսպես անցնում են օրեր, ամիսներ, մինչև մի օր գյուղի ակումբում կուսակցական ու կոմսոմոլի դռնփակ ժողով է գումարվում, և ... վարժապետը, գյուղի ժողովրդի բարեկամ վարժապետը հայտարարվում է «դաշնակ-տրոցկիստ, թափթփուկ, ժողովրդի թաքնված թշնամի ...»: Եվ առաջին մարդը, որ վայրկենապես լքում է ապշահար վարժապետին, բռունցք թափահարում նրա վրա, Կոստի քեռին է:

Պատմվածքում տասնիննամյա երիտասարդը ցնցված է, սարսափած: Տարիներ հետո, երբ խառն ու խառնակ տարիներին աքսորում են նաև Խանզադյանի մորն ու երկու քրոջը, արդեն հասուն, պատերազմում հաղթած որդին ընկնում է իրավաբանների ու դատախազների դռները, նրանց դեմ տալիս շքանշանները, մեդալները, շնորհակալագրերը, նախատինքի խոսքեր ասում պատերազմում քաջաբար տղաներ ծնած մորն աքսորելու համար և կրկին ցնցվում, սարսափում, երբ դատախազի տեղակալը ցույց է տալիս այն բոլոր հարցերի պատասխանները, որոնց գրողի ծննդավայրում տվել էին միայն «ոչ» պատասխանը: Այսինքն՝ Վարդանուշ մայրիկը զինվորական որդիներ չուներ, բանակում ծառայած կամ զոհված, պատերազմին մասնակցած բարեկամ-հարազատ չուներ: «Դուք վիրավորվեցեք ձեր այն հայրենակիցներից, ովքեր դրել են ճակատագրական «ոչ»-երը»:

Սերո Խանզադյանը գրվածքներում, հարցազրույցներում, «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակում թեկուզ թեթև ակնարկով չի նշում այն կոստիքեռիներին, որոնք դրել են այդ «ճակատագրական «ոչ»-երը», սակայն փոքրիկ գյուղաքաղաքն այդպիսի «գաղտնիքը» երկար պահել չէր կարող: Միգուցե գրողի ընտանիքն իմացել է՝ ովքեր են նման ստոր քայլեր արել, միգուցե իրենք էլ ժամանակին թև ու թիկունք են եղել նրանց, ինչպես վարժապետը՝ Կոստի քեռուն, պարզապես չեն բարձրաձայնել: Վստահ ենք, որ տարիներ հետո թեկուզ իրենց զավակները Կոստի քեռու կերպարում ճանաչել են իրենց, ամաչել կերած հացի, նվեր ստացած կոստյումի, սապոգի համար:

Դժվար է ժամանակի հեռավորությունից փորձել համարձակության ու ազնվության նժարին դնել Ստալինի դժոխային ժամանակներում գոյատևած մարդկանց արարքներն ու խոսքերը: Դա ողջ Խորհրդային միության համար արհավիրքի ժամանակահատված էր, երբ քո ու ընտանիքիդ անվտանգությունն ապահովելու համար ստիպված զրպարտանքի խոսքեր պիտի հնչեցնեիր հարա-

<sup>318</sup> Խանզադյան Ա., Հորս հետ և առանց հորս, Ե., 1986, էջ 209:

գատիդ հասցեին, երբ պետք է դավաճանների ընկերոջդ հետ կիսած սուրբ հացը: Ստալինի ստոր քաղաքականության հետևանքով շատ-շատերը ազգի դավաճան, նացիոնալիստ պիտակավորմամբ արքայվեցին իրենց բնօրրանից: Հայաստանի մեծ ու փոքր քաղաքներում, գյուղերում դահիճ Բերիայի հայ թիկնապահներն ի կատար էին ածում «չեչոտ, նեղճակատ կինտոյի» հրամանները: 1988 թ.-ին Է. Զոհրաբյանի և Ս. Խանզադյանի միջև տեղի ունեցած հարցազրույցի<sup>319</sup> ընթացքում («Այո՛, դա չպետք է կրկնվի» խորագրով) Խանզադյանը հիշում է այդպիսի մի թիկնապահ-վիշապի՝ ինչ-որ Արամ Հարությունյանի. «Նա ... հաճախ էր ասպետորեն ճեմում Գորիսի փողոցներում: Մենք, հատկապես պատանիներս, հմայված էինք նրանով: Այդպես հմայված են նապաստակի ձագերը ոսկեթագ և չնաշխարհիկ գույներով վիշապ օձից: Այս չեկիստը քայլում էր դանդաղ, գլուխը բարձր: Նրան հետևում էին մանր-մունր վիշապիկներ, և եթե նա հայացքը թեքում էր դեպի տուն շինող կամ հող մշակող անմեղ մարդու, ապա այդ մարդը նույն գիշեր կուլ էր գնում նրա վիշապային երախին: Նա դարձավ Հայաստանի դատախազ, և մեր բանտերը լվեցին անհամար անմեղ մարդկանցով: Հրազդան գետը կարմրեց Բակունցի, Չարենցի, նաև՝ հորս արյունով»<sup>320</sup>: Իսկ հոր մահվան լուրը Խանզադյանն առել էր Միջին Ասիայում՝ Աշխաբադում, որտեղ ութ ամիս անտուն թափառական էր, որտեղ փախել էր 1937-ին Տաթև գյուղից՝ որպես «իդի-ոլոգիապես անհնազանդ էլեմենտ» և հենց այդ ժամանակ էլ գրել «Կոստի քեռին» պատմվածքը:

Պետք է նկատել նաև, որ Խանզադյանը չի ատում խեղճուկրակ կոստիքեռիներին, որոնք շաղինքոտ բեղերով, գայլ դարձած երախով փառաբանում են իրենց «երջանիկ» կյանքը, «միայն թե, անկեղծորեն ասած, զարմանում եմ, թե 30-40- ական թվականներին մեր սերունդը, նաև մեր ավագ սերունդը ինչպես էր ոչխարի հնազանդությամբ հնազանդվում գայլին: Ստալինի քաղաքականության նպատակը մեկն էր՝ ահ ու սարսափ տարածել. «Ժողովրդի թշնամի» պիտակի տակ գիտնական ու հողագործ, գրող ու զորավար ոչնչացնելով, պահպանել իր արյունոտ գահը, կուռքի պաշտամունք ստեղծել իր անձի շուրջը»<sup>321</sup>:

Դառնալով ստալինյան հրեշավոր քաղաքականության զոհը՝ Խանզադյանը մշտապես անհաշտ պայքարի մեջ է եղել չարի ու արհավիրքի «թիկնապահներին», ստոր ու դավաճան ուժերի դեմ: Պատահականություն էր, թե նախախնամություն, որ գրողն իր անտիպ «Կոստի քեռին» հենց 1991 թվականին՝ Ամանորի շեմին հանձնեց տպագրության՝ այդպիսով փորձելով կանխել սահմուկեցուցիչ օրերի և թեկուզ ժամանակի հարկադրանքով դավաճան դարձած մարդկանց վերադարձը:

<sup>319</sup> Հոդվածը տպագրվել է 1988 թ., «Գրական թերթ»-ում, որը շատ տարիներ հետո՝ 2007-ին, Է. Զոհրաբյանը վերատպում է իր «Հայրենի լեզենդ» գրքում:

<sup>320</sup> Զոհրաբյան Է., Լեռնային լեզենդ, Ե., 2007, էջ 115:

<sup>321</sup> Նույն տեղը, էջ 110:

## СТАЛИНСКИЕ ГОНЕНИЯ И ОСНОВА ПОВЕСТИ СЕРО ХАНЗАДЯНА «ДЯДЯ КОСТИ» И МОТИВЫ НАПИСАНИЯ

ЛИЛИТ ТУНЯН

В статье была рассмотрена повесть Серо Ханзадяна «Дядя Кости» опубликованная в прессе в 1991 году и не включенный в ни каком сборнике, в котором автор прекрасно изобразил сталинские диктаторские времена, когда даже близкие отрицали своих родственников из за безосновательных обвинений. Автор тоже прошел через все это, вкусил горечь жизни в изгании, пережил ужас потери матери и сестер и боролся с этим злом до последнего дня своей жизни. Наша задача состояла в том, чтобы проанализировать на основе реальных жизненных обстоятельстве это замечательное малоизвестное читателю прозведение, проведя некоторые параллели с отрывками из автобиографического романа «С отцом и без отца», которые связаны со сталинскими гонениями на семью писателя в сталинский период. В статье использовались биографические, исторические, аналитические сравнительные методы.

**Ключевые слова:** *Дядя Кости, сталинские, гонения, изгание, трагедия, учитель, творческое воображение.*

## STALIN'S PERSECUTIONS AND THE BASIS OF SERO KHANZADYAN'S STORY "UNCLE KOSTYA" AND THE MOTIVES FOR WRITING

LILIT TUNYAN

The article was considered on Sero Khanzadyan's story "Uncle Kosti" published in 1991 and not included in any collection, in which the author perfectly portrayed the Stalinist dictatorial times, when even relatives denied their relatives because of baseless accusations. The author also went through all this, tasted the bitterness of life in exile, lived through the horror of losing his mother and sisters, and fought against that evil until the last day of his life. In the article, we also examined the autobiographical novel "With and Without Father". We used biographical, analytical comparative methods in the article.

**Key words:** *Uncle Kosti, Stalinist, exile, persecution, tragedy, teacher, creative imagination.*



# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

---

## ՆՈՐԱՀԱՅՏ ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԵՎ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԼԻՔԱՆԱՆՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### ԹԵԿՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

*«Մէկը սակայն իր հոգիին մէջ քեզ բարձր պիտի դասէ:  
Այդ «մէկը», գիտցիր, այս պարագային ես չեմ, այլ գալիքն է, ապագան:  
Դուն մեծցար՝ գալիքի մէջ»*

### **Սիմոն Սիմոնյան**



Համո Սահյանի ստեղծագործական կյանքում կա ուշագրավ մի դրվագ, որը կապվում է սփյուռքի, մասնավորապես Լիբանանի հայ գաղթօջախի հետ: Բեյրութում 1958–1978 թթ.–ին Սիմոն Սիմոնյանի խմբագրությամբ հրատարակված «Սփիւռք» շաբաթաթերթը, հիրավի, հարուստ նյութ է պարունակում ժամանակի գրական–մշակութային անցուդարձի մասին՝ նաև ըստ ամենայնի լույս սփռելով հայրենիք–սփյուռք այդօրյա գրական

կապերի վրա, որոնք հաճախ դուրս են մնացել մամուլի հետազոտողների ուշադրությունից: Բանն այն է, որ խորհրդային տարիներին «Սփիւռք»-ի որդեգրած

ազգային–ազատական ուղղությունը անհամատեղելի էր խորհրդային մտակաղապարների հետ, ուստի և «Սփիուք»–յան միջավայրը մեծ հաշվով անծանոթ մնաց հայրենի ընթերցողին: Չնայած Խորհրդային Հայաստանի անհանդուժողական դիրքավորումին՝ «Սփիուք» պաբերականը ուշադրության կենտրոնում է պահել հայրենի գրական, մշակութային, հասարակական ու քաղաքական կյանքը՝ արձագանքելով կարևոր իրադարձություններին, մտահոգություններին՝ փորձելով ամեն կերպ սերտացնել գրական–մշակութային կապերը, կամրջել սփյուռքահայությանը: «Սփիուք» շաբաթաթերթին, թեև փոքր–ինչ զգուշավոր, բայց հաղորդակցվել են հայրենի բազմաթիվ նշանավոր գրողներ, մտավորականներ, որոնց թվում՝ Դերենիկ Դեմիրճյանը, Գուրգեն Մահարին, Խաչիկ Դաշտենցը, Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը և շատ ուրիշներ: Վերջինս գրեթե մշտական ներկայություն էր թերթում՝ հաճախ անտիպ ստեղծագործություններով, բաց նամակներով ու հրապարակումներով: Գրական ու մարդկային ջերմ շփումներ ունենալով հայրենի բազմաթիվ մտավորականների հետ՝ Սիմոնյանը «Սփիուք»–ում պարբերաբար հրապարակել է նրանց ստեղծագործությունները, ուսումնասիրությունները, նամակները, զանազան գրությունները, առողջ բանավեճեր ծավալել ազգային հիմնախնդիրների շուրջ, արձագանքել գրական, մշակութային, կրթական նորություններին, հոբելյաններին: Ուշարժան են Սիմոնյան–Դեմիրճյան, Սիմոնյան–Մահարի, Սիմոնյան–Շիրազ, Սիմոնյան–Սևակ, Սիմոնյան–Համո Սահյան գրական ու մարդկային առնչությունները, որոնք լավագույնս արտահայտություն են գտել «Սփիուք»–ի էջերում:

Հակամետ ենք կարծելու, որ հայ հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային կյանքի բազմաթիվ բարեփոխություններ, որոնք 1950–1980–ական թվականներին կատարվել են հայրենիքում ու սփյուռքում, մեծապես վերաբերում են «Սփիուք» շաբաթաթերթին և նրա երախտաշատ խմբագիր Սիմոն Սիմոնյանին:

1974 թվականին Լիբանանահայ գրական շրջանակի հրավերով Համո Սահյանը մեկնում է Բեյրութ, որտեղ պետք է նշվեր նրա 60–ամյա հոբելյանը: Սահյանի կենսագիրներին քիչ հայտնի այս անկյունադարձին արձագանքել է Լիբանանի հայկական մամուլը, հատկապես «Սփիուք» շաբաթաթերթը: 1974 թվականի ապրիլի 28–ի թիվ 18 համարում Սիմոնյանն ընթերցողին ուրախությամբ ծանուցում է Համո Սահյանի գալստյան մասին. «Կ’ողջունենք հայրենի բանաստեղծ Համոյ Սահեանը, որ 20 Ապրիլին(1974) ժամանեց Պէյրութ: Տաղանդաւոր, հաւաքաւոր, հայրենասէր ու համեստ բանաստեղծ մըն է Սահեան, որով զօրացաւ հայրենի բանաստեղծութեան արմատը: Վերջին փասնամեակին յարաճուն ու մշտանորոգ վերելք մը ապրեցաւ քերթողութիւնը Սահեանին: Ամենէն աւելի Սահեանով գոցուեցաւ մեծ բացը անդարձ մեկնող բանաստեղծներուն – Մահարի, Զարեան, Տարօնցի, Սեւակ: Իր լրջութիւնը եւ խոհականութիւնը կը յուսադրեն բեղմնաւոր իր վաղորդայնը: Բարի գալուստ կը մաղթենք հայրենի թանկագին բանաստեղծին»<sup>322</sup>:

<sup>322</sup> «Սփիուք», 28 ապրիլի, 1974 թ., թիվ 18, էջ 1:

Ծանուցման ներքո թերթը հրապարակում է Սահյանի «Ինչ արած, մարդ եմ» և «Անունդ տալիս» բանաստեղծությունները, ինչպես նաև լուսանկար՝ արված Վարուժան Սեթյանի կողմից:

Սահյանի այցը Բեյրութ կազմակերպել էր Լիբանանահայ գրական շրջանակը՝ տեղի հայ շնորհալի երիտասարդ գրողների ու արվեստագետների կազմակերպությունը, որի կորիզը կազմում էին մեծահամբավ մի շարք գրողներ: Գրական շրջանակը կազմակերպում էր գեղարվեստական երեկոներ, դասախոսություններ, բանավեճեր, սփյուռքահայ ու հայրենի գրողների ստեղծագործությունների քննարկումներ: Այդ տարիներին լիբանանահայության հետ կապերի հաստատման ու զարգացման գործում մեծ էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դերը, որը համագործակցում էր նաև Լիբանանի գրական-մշակութային կազմակերպությունների, այդ թվում՝ Գրական շրջանակի հետ, կազմակերպում փոխադարձ այցելություններ, որոնք կոմիտեի աշխատանքներում մեծ տեղ էին զբաղեցնում:

Գրական շրջանակը Համո Սահյանի հոբելյանը հանդիսավորությամբ նշում է 1974 թվականի մայիսի 3-ին Գյուլբենկյան հանդիսասրահում<sup>323</sup>: Բացման խոսք է ասել Մարտիրոս Գուշակճեանը, բանախոսները եղել են Վահե Վահյանը, Անդրանիկ Ծառուկյանը և Գառնիկ Ադաբայանը, ասմունքողները՝ Վահան Թեքեյանը, Թ. Սպիտանյանը, Դոնարան և Մհեր Մկրտիչյանը: Վերջում «հուսք բանքով» հանդես է եկել Համո Սահյանը, որ, խառնվածքով ակնհայտորեն չլինելով նման մեծաշուք հանդիսությունների սիրահար, իր կյանքի ամենաերջանիկ իրադարձությունն է համարել այդ տոնահանդեսը: Սահյանի խոսքն իր հոբելյանին նույն թվականի մայիսի 12-ի համարում հրապարակել է «Սփիւռք» շաբաթաթերթը, որը ներկայացնում ենք ստորև.

*«Միրելի բարեկամներ, իմ ապրած ու չապրած 22.099 օրերից ամենանշանակալից օրն է այսօր ինձ համար... Թերեւս, ամենաերջանիկ պահը:*

*Այս անտեղաւորելիւ անարտայայտելի երջանկութեամբ ես լցուած եմ ոչ իբրեւ բանաստեղծի, իմ հանրաճանաչութեան գիտակցումից: Դրանից ես վախեցած եմ էն գլխից:*

*Վաղուց եմ հասկացել, որ հանրաճանաչ լինելը վրանգաւոր բան է. նա շղթաներ է բերում գրողի համար, բերում է կախուածութիւն ընթերցողից, քննադատից, կախուածութիւն մինչեւ անգամ քո նախկին գրուածքներից:*

*Ես կուզենայի միշտ գրել այնպէս, որ թուար թէ առաջին անգամն եմ գրիչ առնում: Ինձ երջանկացնում է ուրիշ մի հանգամանք. ձեզ մօտ, ձեր կողքին, ձեր առջեւ լինելուս հանգամանքը...*

*Մեծ է իմաստն այս հանդիպման: Սփիւռքի Հայութիւնն իր պատմութեան մէջ, թերեւս, առաջին անգամ նշում է հայրենի գրողի, որպէս իր գրողի յոբելեանը իր յարկի տակ, յոբելյարի ներկայութեամբ: Սա ըստ էութեան հայրենիքի եւ սփիւռքի հայութեան մշակութային կապերի զարգացման կիզակէտն է... Աննախընթաց, իմաստալից մի փորձ: Ես կուզենայի, որ փորձի փոխանակութիւն լինէր սփիւռքի ու հայրենիքի*

<sup>323</sup> Թորանյան Թ., Լիբանանահայ գրական շրջանակի 40 տարին, Պեյրութ, 1990, էջ 56:

միջև: Կուզենայի, որ մեր հայրենիքը արժանի կերպով, առանց խտրականության, նշէր սփիւռքահայ բոլոր արժանաւոր գրողների, որպէս իր գրողների, յոբէյաններն իր յարկի փակ, իր նորօրեայ դահլիճներում, յոբէյարների ներկայութեամբ:

Ինձ ձեզ ներկայանալու պատիւը, հայրենի պոեզիան ներկայացնելու եւ հայրենիքի անունից խոսելու իրաւունքն ինձ փութել է չորս փաստամտակի անընդմէջ իմ փառապանքը հայրենական պոեզիայի բարդ ու դժուարին ոլորաններում:

Այդ մեծ փառապանքիս համար դուք լի ու լի ինձ վարձապարում էք այսօր, ձեր սրտագին ընդունելութեամբ, ձեր եղբայրական վերաբերմունքով, ձեր անմիջակա-նութեամբ, ձեր մտերմութեամբ, մեծարանքի ձեր յուզումնալից խոսքերով:

Սակայն այդ բոլորը ես ընդունում եմ ոչ իբրեւ վարձապարութիւն, ոչ իբրեւ ար-տոնութիւն ու նուէր, այլ որպէս նոր պատուէր ու նոր պարտք: Պատուէր, որ պիտի կարարեմ պատրուով, եւ պիտի հատուցեմ ինչ գնով էլ լինի:

Թող փութեք իմ հասցէին ասուած գնահատանքի եւ մեծարանքի բոլոր ձեր խօսքերը փոխանցել մեր հայրենի բանաստեղծներին, իմ սերնդակիցներին ու գրչակիցներին – Վահագն Դաթեանին, Սիլվա Կապուտիկեանին, Յովհաննես Շիրազին, Գէորգ Էմինին, Մարոյ Մարգարեանին, Հրաչեայ Հովհաննիսեանին եւ իր ստեղծագործութեամբ արդէն աւագի իրաւունք նուաճած իմ կրտսեր գրչեղբոր՝ Ռազմիկ Դաւոյեանին, մեր պոեզիան մարդամէջ եւ աշխարհամէջ հանող այդ փայլուն համաստեղութեանը և այլոց...

Այսօրուայ հաւաքը – յարգանքի այս երեկոն մի կրկին անգամ ցոյց է փայլիս Լիբանա-նի Հայութեան կենսունակութիւնը, նրա ամուր կապը հայրենի մշակոյթի հետ, նրա սէրը հայրենիքի եւ հայրենի արուեստի նկատմամբ, գոյատեւելու նրա հաւատն ու կամքը:

Ես լի ու լի կշտացած լինելով յոբէյանական ամէն տեսակ արարողութիւններից, ծափերի որոտից ու դիֆերամբների հրավառութիւնից, հաճոյքով ներկա եղայ այս երեկոյին, եւ նրանից ստացած փառաւորութիւններն անջնջելի կը մնան իմ մէջ մինչեւ օրերիս վերջը: Դրա համար ես անսահմանօրէն շնորհակալ եմ Գրական Շրջանակի ղեկավարութիւնից, ձեր մասնակցութիւնից, ձեր համբերութիւնից, բոլորից:

Շնորհակալ եմ նաեւ այն բանի համար, որ երկու շաբաթ գտնուելով Լիբանա-նում, ձեզ մօտ, ձեր յարկի փակ, ես ինձ փանտէր եմ զգում եւ փան տղայ: Մինչեւ անգամ փանս կարօտելու առիթ ու ժամանակ չեմ ունենում:

Այսպիսի պահերին սովորաբար յոբէյարները հանդիսաւոր խոստումներ են փայլիս հետագայ անելիքների մասին... բայց հասնելով որոշ փարիքի, սկսում ես հասկանալ, որ կեանքն ըստ էութեան անընդմէջ կորուստ է: Կորցնում ես ոչ միայն ապամներդ, մազերդ, աչքերիդ փայլը, այլ նաեւ հոգուդ ուժն ու հարստութիւնը:

Կորում ընկնում են մէկը միւսի ետեւից: Կորում են ոգին հողի հետ կապող պա-րանները, եւ հոգին, համարեա ազատագրուած ճօճում, օրօրում է իր սեպիական թեթեւութիւնից...

Հաւատանք, որ իմ այդ փարիքը դեռ չի հասել... Հաւատանք, քանզի առանց հա-ւատի ապրել չէինք կարող... Եւ դեռ հաւատալու շար բաներ կան»<sup>324</sup>:

<sup>324</sup> «Սփիւռք», 1974 թ., 12 մայիսի, թիվ 19–20, էջ 12:



Իր ելույթը Համո Սահյանն ավարտել է հետևյալ բանաստեղծությամբ.

Հաւատում եմ քեզ, Հայոց հանճար,  
Քեզ համար դեռ տոներ կգան,  
Նարեկացիներ կգան աշխարհ,  
Սայաթ-Նովաներ կգան...

Նրանց թռիքչը մենք չունեցանք,  
Երևի հնար էլ չկար:  
Բայց մի համարիիր մեղք ու յանցանք,  
Մի կոչիր խեղճ ու փկար:

Մենք հազար մազե կամուրջ անցանք,  
Տազնապով անցանք և ահով,  
Էլ մենք ինքներս կամուրջ դարձանք,  
Որ անցնես մեր վրայով...

Հավատում եմ քեզ, Հայոց հանճար,  
Քեզ համար դեռ տոներ կգան,  
Դեռ Վարուժաններ կգան աշխարհ,  
Սիամանթոներ կգան:

Նույն համարում «Սփիւռք»-ի խմբագիր Սիմոն Սիմոնյանը Սահյանի այցի և հոբելյանի առթիվ ծավալուն առաջնորդական է ստորագրում՝ «Համո Սահեան. Մարդ, կոմունիստ, հայ բանաստեղծ, ճշմարտության զինվոր» խորագրով<sup>325</sup>: Ներկայացնում ենք այդ անդրադարձն ամբողջությամբ.

«Ողջոյն հայրենի բանաստեղծ ՀԱՄՈՅ ՍԱՀԵԱՆԻՆ, որուն յորելեանը տօնուեցաւ Լիբանանի հայութեան մէջ, 3 Մայիսին, 1974:

Ողջոյն Չանգեզուրէն ծագած Հայոց բանաստեղծին, որ իր հետ կը բերէ պայքարական Սիւնիքի հպարտութիւնն ու ինքնիշխանութիւնը եւ անոր Գեազբել լեռնագագաթի 3800 մետր բարձրութիւնը:

Ողջոյն բանաստեղծին, որ գիտցաւ իր քերթուածներուն մէջ յաճախ աղաղակել թէ ինք «ամենից առաջ» մարդ է, կոմունիստ է, բանաստեղծ է եւ ճշմարտութեան զինուորն է անկեղծ:

Ողջոյն քերթողին եւ քաղաքացիին, որուն հոգին զերծ ու անաղարպ մնաց մարդու և ժամանակներու մեղքերէն, որոնք ծանրորէն բեռնաւորեցին ուրիշները, կամայ թէ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ:

<sup>325</sup> «Սփիւռք», 12 մայիսի 1974 թ., թիվ 19–20, էջ 1:

Ապա մեր սրտագին ողջոյնը մասնատենք. ինչպէս մեր Դիցզանավէպի «ողորմիները» և զանոնք ուղղենք Զանգեզուրի Գեազբել լեռան արժանաւոր զակիին:

ՈՂՋՈՅՆ ՄԱՐԴՈՒՆ – Իր քերթութեամբ մէջ Համոյ Սահեան յաճախ կը յիշէ եւ կը յիշեցնէ թէ ինք մարդ է, ոչ անշուշտ երկրագունդի երեք միլիառ ութ հարիւր յիսուն միլիոն մարդերէն ո՛րեւ մեկը, այլ՝ իր բառերով՝ «Ամենից առաջ մարդ եմ աշխարհում», «աշխարհում ընտրած իմ ճանապարհով», «իմ խոովքներով ու խղճմտանքով», «ես իմ իշխանն եմ, իմ գլխի տերը», «Հասկացէք էլի, ի՞նչ արած, մարդ եմ»...

Մարդ՝ կոչումով, գիտակցութեամբ, «խղճմտանքով», «ընտրած ճանապարհով», իբրեւ «հակառակորդը ինչ կայ աշխարհում մարդուն հակառակ», ընդունելով միաժամանակ որ «ինչ–որ չափով եւ ինչ–որ տեղ դեռ թիապարտ եմ»...

Մարդ, այսինքն՝ ազնիւ, որակաւոր եւ անկեղծութեամբ «ոսկեջրած»...

ՈՂՋՈՅՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԻՆ, որ հաւատարմ աշխարհի եւ մարդուն դարաւոր կեղտերէն մաքրագործումին՝ փշրումովը անարդարութեան ժանգոտած կապանքներուն, առանց սպասելու որ արդարութեան համար բարձրացող Կայծակէ Թուրը գործէ անարդարութիւն... Ողջոյն իր հաւատքին, «աշխարհում իր ընտրած ճանապարհին», մաղթելով իրեն պէս որ «պարտաւորանքները թեթեւան, թեթեւան նան մեր բեռները»՝ կրկին գտնելով «դժուար գտած եւ հեշտ կորցրած մեր ինքնութիւնը»...

ՈՂՋՈՅՆ ՄԱՆԱԻՄԱՆԴ ՀԱՅՈՒՆ, Սիւնեաց աշխարհի, նորօրեայ Զանգեզուրի զակիին, որ այնքան սիրեց հայրենի քարափները, «Նայիրեան դալար բարդիները», «Որոտանի եզերքին», սարալանջերը, մայրամուտը, հաւատարմով, խորապէս հաւատարմով որ «լեռան գագաթին օրն ու է մթնում», մինչ այնքան կանուխ կը մթնէ «քաղաքներու», նոյնիսկ Հայաստանի քաղաքներու մէջ... Սահեան բանաստեղծը սիրահարի սիրով սիրեց Հայաստան աշխարհը, որ «քարերով հարուստ է» եւ որ միայն երեւան ու Լենինական չէ, այլ՝ լեռ ու արօտավայր, գիւղ ու գիւղացիութիւն, որոնք մեր ժողովուրդի յաւերժութեան ողնասիւնն են: Գերազանց հայրենասիրութեան մըրմունջ են Սահեանի հետեւեալ տողերը.

«Հայաստան, անունդ տալիս,

ժայռի մէջ մի տուն եմ յիշում:

Արեւոտ մի սար եմ յիշում –

Ճակատին ձիւնի պատառիկ»:

Հայ ժողովուրդի ամենէն անքաղքենի եւ հողահաւատ բանաստեղծն է Սահեան եւ այդով՝ ամենէն իրաւ, հայրենասէր քերթողներէն մեկը: Հայաստանի հին ու նոր վէրքը ունի իր հոգիին մէջ:

ՈՂՋՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ, որ ստեղծագործեց արուեստով ու ոգիով, «էն գլխէն» իմաստութեամբ իրացնելով հայ բանաստեղծութեան ամենէն լուսաւոր ու մնայուն աւանդները՝ տոկուն, անփշրելի ու յաւերժական հայրենասիրութեան «քարափներու» վրայ:

Ողջոյն մանաւանդ իր յորդութեան ու բեղմնաւորութեան, որով ստեղծագործեց շոյլօրեն՝ հայրենի գարնան գեպակներուն պէս: Սահեանի գրիչը օրհնուեցաւ Վանապրեան բեղմնաւորութեամբ:

Գիտցաւ Հայոց բանաստեղծութեան տաճարին բարդ աստիճաններէն քայլ առ քայլ բարձրանալ, քրմական ծանրութեամբ, իր քերթողական մուտքը առանց ծանուցելու կոչնակներով, ծնծղաներով եւ հրթիռներով: Գիւցացիական անշուք մուտքով ուրք կոխեց առաջին աստիճանին՝ տասներորդին վրայ դառնալու համար քուրմ ու քրմական սրբազանութիւն:

Կ'ողջունենք իր յորդութիւնը, իր ցարդ գրած ՏԱՍ հատոր քերթողական հունձքը—«Որոտանի եզերքին»(1946), «Առագաստ»(1947), «Սլացքի մէջ»(1950) «Ծիածանը տափաստանում»(1953), «Բարձունքի վրայ»(1955), «Նայիրեան դալար բարդի»(1958), «Հայաստանը երգերի մէջ»(1962), «Մայրամուտից առաջ»(1964), «Քարահիւների երգը» (1968), յարկապէս «Սեզամ, բացուիր»(1972) եւ այլն, որոնց հանքերէն անպայման պիտի հանուին յիսնեակ մը «աղամանդներ»՝ հայ բանաստեղծութեան յաւերժական գանձարանին մէջ դրուելու համար Վարուժաններու, Սիամանթոններու, Մեծարենցներու եւ Թէքէեաններու կողքին, որոնց անունները մրմունջն են Սահեան բանաստեղծին:

Ի վերջոյ մեծ ու մեծագոյն ողջոյն ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐՆ: Սահեանինն են այս բառերը.

«Իմ երգերի մէջ խօսքերն են հիսում

Եւ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ,

Եւ դրա համար կուրծքս չեմ ծեծում,

Որ ինձ հաւատան:

Եւ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐՆ ԵՄ ԱՆԿԵՂԾ»:

Ողջոյն «ճշմարտութեան զինուոր» բանաստեղծին, որ իր գրածներուն համար կրցաւ իր «կուրծքը չծեծել», հակառակ անոր որ իր կեանքին առաջին եւ մեծ մասը ապրեցաւ երբ պատուանդանները թեթեւացած չէին, «սպառնալիքի եւ ահի մթին ամպերը դեռ անցած չէին» եւ «անմեղութիւնը զնդանից չէր ելած»...

Սահեան իբրեւ «ճշմարտութեան զինուոր» կեցաւ արդարին, յաւերժականին, հայրենիքին ու հայրենասիրութեան եւ մանաւանդ Գեղեցիկին կողքին, կոնակ դարձնելով յոռի բարքերուն, փառքին ու կողմնակալութեան՝ մեր կեանքին ու գրականութեան մէջ:

Ողջոյն սիրելի Համոյ Սահեանին, իր վաթսունամեակի սեմին, թող ան ըլլայ-Նայիրեան դալար բարդի, Լիբանանի Մայրիներուն յաւերժականութեամբ:

Ս. Ս.»

Համո Սահյանը Սիմոնյան գրողին անձնապէս ճանաչել է հենց Բեյրութում, խորապէս հիացել ու տպավորվել նրա հանրագիտակ կերպարով, վայելել առաջին ընթերցումի հրճվանքը: Սիմոնյանի ընկերակցությամբ Սահյանը շրջել է Լիբանանի պատմամշակութային վայրերում, շփվել լիբանանահայ համայնքի հետ, մասնակցել տարբեր ստեղծագործական հանդիպումների: Ս. Գրիգորյանն իր «Բազմատա-

ղանդ երախտավորը»<sup>326</sup> գրքում հրապարակել է մի բացառիկ լուսանկար Սահյանի՝ Բաալբեկի պատմական հուշահամալիր այցելությունից. լուսանկարում Սիմոն Սիմոնյանն է, Համո Սահյանը, Սիմոնյանի որդին՝ Սասուն Սիմոնյանը և գրող Երվանդ Պարսումյանը: Գրական սրտախոս զրույցներով հագեցած բեյրության երեկոների, Սիմոնյանի ու Սահյանի մարդկային ջերմ շփումների մասին է վկայում «Սփիւոք»-ի 1974 թվականի հունիսի 2-ի համարում «Խմբագրի օրատետրէն» խորագրի ներքո Սիմոնյանի հրապարակած փոքրիկ հուշակնարկը՝ վերնագրված «Համո Սահեանին հետ. «Մի շան պատմությունը»<sup>327</sup>:

«— Կեանքումս մի անգամ միայն արձակ եմ գրել,— ըսաւ հայրենի բանաստեղծ Համոյ Սահեան եւ յառաջացաւ դէպի երկու քայլ անդին գտնուող պատշգամբը՝ պանդոկի հինգերորդ յարկի իր սենեակին:

Իրիկնամուտ էր. անկէ՛ պատշգամբէն ցոյց տալով շէնքերու միտել գոյացած բացը, ըսաւ.

— Այսպիսի մի բաց շրջափակում, շէնքերի միջեւ, ապրում էր մի գեղեցիկ շուն, յաղթ հասակով, առաւ ստեղծերով, բոլոր իր նմաններից շատ գեղեցիկ մի շուն: Սիրում էինք նրան. բոլոր պատշգամբներից կերակուր էիրք զցում վար:

Մի օր, այսպիսի մի պահին, լսեցի գոռում-գոչում,, անհամար շների ահեղ հաջոց. Հարիւրատուր մանր-մունր շներ յարձակում են մեր թաղի գեղեցիկ շան վրայ. Որտեղից հավաքուել են, ինչպէս համաձայնել են իրար հետ, ո՛վ համաձայնեցրել է այս կեղտոտ շներին՝ այսպիսի մի միացյալ յարձակում գործելու գեղեցիկ ու մի հատիկ շան վրայ: Զայրագնած էի. Հէնց նոյն րոպէին՝ ճաշատեղանից վերցրի պահածոյ մսի փուփը, զցեցի վար՝ շների վոհմակի վրայ եւ ապա իջայ վար: Ինչ տեսնեմ... Մեր թաղի գեղեցիկ շունը փռուել էր գեպին, արհնլուայ... Մի քանի րոպե անց՝ փակեց աչքերը... Արդէն փախել էին նրան զգզող մանր-մունր, փողոցի կեղտոտ շները... Գզգզել, յօշոտել, սպանել էին նրան, որովհետեւ իրենց նման չէր մեր շունը, տարբեր էր իրենցից, գեղեցիկ էր, շատ գեղեցիկ: Համոզուեցի, որ իրար նման եղողները, այսինքն միջակութիւնները չեն հանդուրժի գեղեցկին...

Էի, սիրելիս,— վերջացուց իր խօսքը Համո Սահեանը,— էդպէս է նաեւ մեր գրականութեան մէջ. բազում միջակութիւններ չեն հանդուրժում սակաւ տաղանդատուներին: Բայց ամենից զարմանալին այն է, որ ինչպէս սերտորեն իրար հետ զինակցում են միջակութիւնները ընդդէմ մենակ մնացած տաղանդատուին, «գեղեցկին»... Կենդանիների մէջ միմիայն մարդը եւ նրա հետ ապրող եւ նրա բնատրոթիւններին ընդելացած շունն է, որ սպանում են իրենց նմաններին. միւս անասունները, առիծը, օձը, վագրը եւ այլն, չեն սպանում իրենց նմաններին. կուում են, բայց երբ տապալում են եւ յաղթում. դէն զցում յաղթուողին եւ հեռանում...


Համոյ Սահեան այս պատմությունը ըրաւ գիրքի մը առթիվ:

Առիթ պիտի ունենանք իր շան պատմությունը կրկնելու:

<sup>326</sup> Գրիգորյան Ա., Բազմատաղանդ երախտավորը, Ե., 1999, էջ 56:

<sup>327</sup> «Սփիւոք», 2 հունիսի, 1974 թ. թիվ 23, էջ 1:

իր արձակ այդ էջը փնտրեցինք, բայց չգտանք:  
Երանի՜ թե մէկը գտնէր եւ մեզի դրէր:  
Կուզենք արտատպիլի զայն՝ իր հարազատութեամբը:  
Ս. Ս.»



Իհարկէ, Սահյանը նման բովանդակու-  
թյամբ արձակ գործ չունի, և այս պատմության  
«միտք բանիով» պետք է հիշել միայն նրա  
«Շները» խորիմաստ բանաստեղծությունը՝  
«ուրիշ տեսակի շների մասին»: Այստեղ Սի-  
մոնյանը հետաքրքրական վկայություն ունի,  
որ իրենց բեյրության հանդիպման ու զրուցա-  
խոսության ընթացքում Սահյանը շան պատ-  
մությանն անդադարձել է մի գրքի առիթով:  
«Սփիհոք» շաբաթաթերթի նույն թվականի թիվ  
26-ի մի ուշագրավ հրատարակումը՝ Սիմոնյա-  
նին հասցեագրած Սահյանի նամակը, կարծես  
բացապարզում է, թե որ գրքի մասին է խոսքը:  
Բեյրութում գտնվելու օրերին Սիմոնյանը Սա-  
հյանին է նվիրում իր «Լեռ և ճակատագիր»  
հատընտիրը, որը հայտնություն էր Սահյանի  
համար: Սահյանը տեղեկանում է նաև Սիմո-  
նյան-«Սփիհոք»-խորհրդային Հայաստան ոչ  
այնքան հարթ հարաբերությունների մասին,  
որոնք հատկապես սրվել էին «Սփիհոք»-ում  
1960-ականներից Սիմոնյանի բարձրացրած  
ազգային հարցերի պատճառով<sup>328</sup>: Նամակը  
թվագրված է 22.05.1974 թ., որ միաժամանակ  
Սահյանի՝ Բեյրութից հայրենիք վերադառնա-  
լու օրն էր: Վերադարձից առաջ Համո Սա-  
հյանը նամակով արտահայտել է Սիմոնյանի  
նորահայտ ստեղծագործությանն առնչվելու  
գրական վայելքից ելքավորված անօրինակ  
հույզերը: Նամակն իրավամբ Սիմոնյանի  
գրական տաղանդի ինքնահատուկ գնահա-

328 «Սփիհոք»-ն իրավամբ դարձավ հայ մտավորականության անկախ մտածումի բեմը՝ գրական-  
գեղարվեստական արդյունավորումներից բացի կարևոր դերակատարություն ունենալով ազ-  
գային հիմնախնդիրների խորքային լուսաբանման, գաղթաշխատի մտահոգությունների վեր-  
հանման, դրանց լուծման ուղիների որոնման, հայի արդար դատն ու հայկական հողերի վերամի-  
ավորման պահանջն աշխարհայուր դարձնելու, ընթերցողներին ազգային տագնապների շուրջ  
մեկտեղելու, սփյուռքահայությանը կամրջելու երախտառատ գործում:

տություն է: Բանաստեղծը Սիմոնյանին տեսնում է հայ դասական արձակագրության *Բակունց*, *Համաստեղ*, *Շահնուր* ծիրում և ցավ ի սիրտ ափսոսում, որ նոր է ծանոթանում նրա «հմայիչ ու մեծ» ստեղծագործությանը: Սահյանը տողատակով նաև խոր մտահոգություն է արտահայտում Սիմոն Սիմոնյանի անվան ու գործի մասին հայրենի ընթերցողի անտեղյակության, մասամբ նաև հանիրավի ու միտումնավոր **լռության** առնչությամբ: Ահա այդ բացառիկ նամակն ամբողջությամբ.

«Հարգելի ընկեր Սիմոնյան,

Կարդացի «Լեռ և ճակատագիր» Ձեր գիրքը:

Ցավում եմ, որ նոր եմ ծանոթանում Ձեր հիանալի արվեստին, նոր եմ ուրբ դնում ձեր ստեղծած հարուստ և ինքնադրոշմ աշխարհի շեմքին...

Բայց և երջանիկ եմ առաջին ընթերցումի ուրախությամբ ու հրճվանքով:

Իսկապես, ինչպե՞ս է եղել, որ եղել է: Ինչպե՞ս է եղել, որ չեմ ճանաչել իմ ժամանակակից ու փարեկից գրողի այսքան հմայիչ ու մեծ ստեղծագործությունը: Արդարանալու հիմքեր կան, բայց, միևնույն է, հանցավոր եմ:

Ոչ մի շինծու և մտացածին բան չկա Ձեր արվեստում: Ամեն ինչ բնական է, փեսած. լսած, շոշափած, զգացած, ապրած ու ապրեցնող:

Հոգուս պարտքն եմ համարում մոտ ժամանակներս ժամանակ գտնել և հանգամանորեն գրել Ձեր գրքի մասին, ցույց տալ այն նորը, որ եզակիորեն Ձերն է, հնարավորին չափով ցույց տալ Ձեր արվեստի փեղն ու նշանակությունը մեր մշակույթի մեջ: Դժբախտաբար, մենք աշխարհամեջ հանելու արձակ չենք ունեցել: Բակունց, Շահնուր, Համաստեղ–սրանցով է սկսվում մեր արձակը: Նորերը՝ Մաթևոսյան, Խալափյան, Մեքոնյան, ծնվել են դրանցից և լայն հեռանկարներ են խոստանում:

Ձեր փեղը առաջին երեքի շարքում է: Քսաներորդ դարի արձակ է Ձեր արձակը, ըստ էության, ակունքից կտրված, բայց ակունքներով ապրող մարդիկ են Ձեր հերոսները: Մարդկային բարոյականության նորմաները պահպանող մարդիկ: Քսաներորդ դարի մարդկանց ճակատագրին ավելանում է նաև մեր ազգային ողբերգությունը, և մարդիկ ավելի են կոնկրետանում: Գիրքն ընդհանրապես ինձ շատ դուր եկավ, պատմվածքները գրված են առանց ճիգի, հայկական համ ու հուրով, բարբառի վարպետ օգրագործումով:

Դուք գրել եք պատմվածքներ, որոնք կարող են զարդերը կազմել ամեն մի ազգային գրականության: Չնայած համեմատություններ չեմ սիրում, կարդալով ձեր «Երեք օրակարգ»–ը հիշեցի Չարենցի «Երկիր Նաիրի»–ն և Բակունցի «Կյորես»–ը:

«Երեք օրակարգ»–ը առանց զեղչ ու զիջումի կանգնած է մեր գրականության գլուխգործոցների կողքին:

Տասնամյակներ առաջ իրենց բնօրրանից կտրված մարդիկ դեռ ապրում են այդ բնօրրանով և դեռ հող են կիսում: Աշխարհից կտրված խեղճեր: Հեղինակի թեթև ժպիտի մեջ ես տեսնում եմ այդ մարդկանց ճակատագրի համար ճնշվող սրտի ողբերգությունը:

Այս պատմվածքը լիովին ապահովում է հեղինակի անմահությունը, և անհնար է, որ երբևէ մեր գրականությունը չհպարտանա նրանով:

Բարոյականության պատրիարքի անզուգական կերպար է բեռնակիր Օհանը համանուն պատմվածքում:

Կան ուրիշ դասական պատմվածքներ էլ: Ավաղ, ժամանակ չունեմ նրանց մասին խոսելու:

Կգրեմ հանգամանորեն, առ այժմ համբուրում եմ արվեստագետի վաստակած ճակատը»<sup>329</sup>:

Ձեր՝ Համո Սահյան

22.5.74 թ. Բեյրութ

Սահյանի նամակը հրապարակելով «Սփիռք»-ում՝ Սիմոնյանը անչափ խորիմաստ ու հուզիչ պատասխան խոսք է գրում՝ ենթատեքստով դարձյալ ակնարկելով «շան պատմության» դառնադի իրողությունը, որ նաև իր ստեղծագործական ճանապարհին էր վիճակված.

«Սիրելի՛ Սահեան,

Շան պատմությունդ ետք՝ այս գիրը: Եղաւ՝ երկու:

Բայց ինչու՞ այս գիրդ, սիրելի՛ Սահեան, այն ալ՝ մեկնումիդ առաւօտը: Ինչու՞ այս բացականչությունը. «Իսկապէս, ինչպէս է եղել, որ եղել է»:

Ես ալ քեզի պէս չեմ գիտեր թէ «ինչպէս է եղել, որ եղել է»:

Բայց՝ «եղել է»: Փաստ է: Կ'երեւի թէ կ'ըլլայ եւ եղած են նման բաներ:

Երկուքս ալ բացատրություն չունինք, ունենալով հանդերձ:

Թերեւս միակ բացատրությունը կրնայ տալ քու «շան պատմություն»-ը, զոր պատմեցիր երեկոյ մը՝ միտքդ երկար չարչրկելէ ետք, կամ աւելի ճիշտը՝ մտքիդ չարչրկումը մեղմելու համար:

Բոլոր շուները, նոյն տիպի, նոյն հասակի, չենհանդուրժեր ներկայությունը, գոյությունը իրենցմէ փարբր շան մը, գեղեցիկ ու մեծ շան մը, կամ պէտք է ըլլան իրենց նման, կամ պէտք է յօշոտուին իրենցմէ **փարբեր** եղողները:

Միջակութեան ստեղծած ու պարտադրած դժխեմ օրէնքն է:

Շուները կը յօշոտեն իրենցմէ փարբեր եղողները, իսկ գրականութեան միջակութիւնները՝ ԼՌՌԻԹԵԱՄԲ կը շրջապատէն փաղանդաւորները:

«Իսկապէս, ինչպէս է եղել, որ եղել է»...

Բայց ես երջանիկ եմ եղածին համար: Երջանիկ եմ, որ փարբեր եմ լուութեան դարբիններէն (այս ափերու գրական թերթեր, գրականագէտներ, գրողներ):

Ու հիմա կը փորձես փշրել այդ լուութիւնը, այսինքն միջակութեանց վոհմակին կաղկանձը լուցնել:

Պիտի լռեն: Միջակութիւնները զինակցիլ գիտեն, փաղանդաւորները՝ ոչ: Այս վկայութեամբդ, պիտի հակադրուիս բանագէտ «բազմութեան» մը դեմ, պիտի անջա-

<sup>329</sup> «Սփիռք», 1974 թ. 23 հունիսի, թիվ 26, էջ 1:

տուխ անոնցմէ եւ ուղիղի կենաս Օշականի կողքին, որ 1947 թուին նոյնը վկայեց առաջին պատմութիւններու առթիւ: Օշականէն մինչեւ Համոյ Սահեան կամուրջ մը կը մղուի, որուն փակէն թող հոսին «լռութեան ձայները»...

Մէկը սակայն իր հոգիին մէջ քեզ բարձր պիտի դասէ:

Այդ «մէկը», գիտցիր, այս պարագային ես չեմ, այլ գալիքն է, ապագան:

Դուն մեծցար՝ գալիքի մէջ:

Սիրելի՛ Համոյ, դուն «մի քիչ մարդ» չես, ինչպէս յաճախ կը յիշեցնես քերթուածներուդ մէջ, այլ լիակատար, արժանատի ու արժանավայել մարդ, որովհետեւ գիտես վկայել խիղճովդ եւ ծառայել միջակութեանց դեմ:

Երախտապարտ եմ քեզի, որովհետեւ գիրդ զիս մղեց վերադառնալ սրբազորութիւններու, որոնցմէ ընդհատուած էի:

Կը սպասեմ խոստումիդ:

«Հոգու պարտքն եմ համարում մոտ ժամանակներս ժամանակ գտնել և հանգամանորեն գրել Ձեր գրքի մասին, ցույց տալ այն նորը, որ եզակիորեն Ձերն է...»:

Մեր ժողովուրդի փոքրիկները շատ փոքր են, եւ մեծերը՝ շատ մեծ:

Համբոյրով՝

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Յավոք, Համո Սահեանն այլևս չանդրադարձավ Սիմոնյանի ստեղծագործութեանը: Ամեն դեպքում մեզ որևէ անդրադարձ մինչև այսօր հայտնի չէ: Բացառված չէ, որ նրանց նամակագրությունը շարունակվել է, և Սիմոնյանի արխիվում պահպանված նյութեր լինեն: Անշուշտ, դրանք կամբողջացնեն այս գեղեցիկ ու նորահայտ գրական բարեկամության պատմությունը: Յավոք, այդ տարիներին խորհրդային գաղափարախոսության կրողները մեծապես խոչընդոտում էին «Սփիւռք»-ի ազատախոհ խմբագրի՝ հայրենի գրական միջավայրի հետ առողջ ու լիարյուն շփմանը: Անկախ քաղաքական հալածանքներից, «գրական միջակապետության» (Հակոբ Օշական) հաղթարշավից՝ Սիմոնյանը միշտ մնաց հայրենիքի ու իր գրչակից ընկերների կողքին: «Ես քու զաւակդ եմ հարագապ՝ ինձի ապրակ զարնես թէ ծափ, վասնզի ափսոս, շմտ ափսոս, նոյնն են քու ծափդ ու ապրակդ: Երեսուն տարի, մինչեւ երէկ, ինձի ապրակ զարկիր մէկ ափովդ, երբ ես Ղարաբաղ ու Նախիջեան պահանջեցի, Արեւմտեան Հայաստան, Վան ու Մուշ պահանջեցի, իսկ հիմա երկու ափերովդ ծափ կը զարկես երբ ես զանոնք չեմ պահանջեր, եւ կ'աղօթեմ առ Տէր, որ առ այժմ եղածը պահէ: Ապրակէդ, ես վրջեցի իմ հօրս ձիուն պէս, իսկ հիմա կուց-կուց արին կու լամ, երբ ծափ կը զարնես ինձի, այնքան ուժգին ու բուռն:»

Ծափդ ու ապտակդ երանի՛ թէ տարբեր, շատ տարբեր ըլլային:

Բայց դարձեալ, միշտ ու յաւիտեանս յաւիտենից, յարգանք քեզ, հայ ժողովուրդ»(Սիմոն Սիմոնյան):



## ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԵՐՈՍ ՀՐԵՏԱՆԱՎՈՐԸ՝ ԳՈՒՐԳԵՆ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԸ

ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ

1918 թ.-ի Մայիսյան հերոսամարտերում՝ Ղարաքիլիսայի ճակատամարտից առաջ և ճակատամարտում, բացառիկ դերակատարություն է ունեցել 1-ին հայկական հրաձգային բրիգադի 4-րդ լեռնային մարտկոցի հրամանատար Գուրգեն Տեր-Մովսիսյանը: Հրապարակման մեջ ներկայացրել ենք հրետանավորի սխրանքն ու անձնագոհությունը: Հերոսի ծագման ու ծննդավայրի մասին իրարամերժ ու մոլորեցնող են տեղեկությունները: Տեսակետ ենք հայտնում, որ նա Սյունիքի Շիկահող գյուղի Տեր-Մովսիսյան անվանի տոհմի զավակ է:



Հեռավոր 1976 թվականն էր. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր, անվանի պատմաբան Հայկազ Մանուկի Պողոսյանը պատմության ֆակուլտետի չորրորդ կուրսում «Հատուկ կուրս» էր կարդում: Նրա համար կաղապարներ գոյություն չուներին, ազատորեն իր կարծիքն էր արտահայտում, հաճախ դուրս գալիս թեմայի շրջանակներից, խոսում պատմության մուտք ծալքերից, անցկացնում էր քննարկումներ, լսում էր

ուսանողներին: Ռեկտորը դասին մինչև անգամ երգում էր ֆիդայական երգեր:

Մի օր, երբ խոսում էր Մայիսյան հերոսամարտերից, դիմեց լսարանին. «Ղարաքիլիսայում մենք ունեցել ենք հրետանու երիտասարդ հրամանատար՝ Գուրգեն Տեր-Մովսեսով, որին զինվորից մինչև գեներալ պաշտում էին: Ցավոք, նա հերոսաբար զոհվեց: Հիշեցե՛ք, նմանները պատմության մեջ դժվար են լինում: Ես փորձեցի

իմանալ, թե որտեղից է այդ ջահելը, ինձ չհաջողվեց: Հնարավոր է՝ ձեզնից պատմության մեջ խորացողներ լինեն, գտե՛ք Մովսեստվի ծննդավայրը»:

Տարիներ անց անվանի գիտնականին ես հանդիպեցի Ծավ գյուղում, որտեղ եկել էր Գևորգ Հայրյանի հետ միասին: Հիշեցրի, ասացի, որ Տեր–Մովսիսյանները Շիկահողից են: Ասաց՝ գուցե հրետանավորին պետք է փնտրել նրանց մեջ<sup>330</sup>:

\*\*\*

1918 թվականի մայիսն էր: Թուրքական ուժերն արագությամբ շարժվում էին դեպի Ղարաքիլիսա: Թուրքերը խաղաղության մասին լսել իսկ չէին ցանկանում: Դրությունն անորոշ էր: Եվ վճռական պահին թշնամու դեմ մահացու կրակ տեղաց Գուրգեն Տեր–Մովսիսյանի հրետանին:

«Խարխվեց, քայքայվեց թշնամու մարտակարգը: Ամեն մի հարվածը շարքից հանեց տասնյակ զինվորներ, հիացմունքով լցրեց հայ մարտիկների սրտերը: Նրանցից շատերը չէին էլ ճանաչում կապիտան Մովսիսյանին, նրա հրետանավորներին, բայց տեսնելով նրա մարտկոցի հունձը, համակվեցին պաշտամունքի նման ինչ–որ զգացումով դեպի այդ անծանոթ հերոսը: Միայն մարտում, մահվան մոտիկությամբ է ծնվում այդպիսի զգացումը՝ անխառն, դեռ հստակ չգիտակցված, երախտագիտությամբ լի:

— Հու՛ւ պ տուր, քե մա տաղ, Ղարաքաղի՛ արծիվ,— ոգևորությունը զսպել չկարողանալով՝ կանչեց մի նիհար, թուլակազմ զինվոր, որ պտակել էր փոխգնդապետից փոքր–ինչ առաջ և հուզմունքից անվերջ շուռումուռ էր տալիս ֆրանսիական «լեբել» հրացանը:

— Ա՛յ մարդ, ի՛նչ Ղարաքաղ, կապիտան Մովսիսյանը ախլցխացի է,— միջամտեց շեկ գանգուրներով մի ջահել զինվոր:

— Ի՛նչ ես գլխիդ զոռ տալի, տո՛ւ,— համատեց նիհար, թուլակազմ զինվորը,— բա որ ղարաքաղի չլեր, ըթենց հունձ կանե՛ր...»<sup>331</sup>:

...«Համա թօփ ձգողը, այ իգիթ եմ ասում. ղարաքաղի էր. ջանին մեռնեմ, նրա նման հինգը ունենայինք,— ո՛վ մեզ կարար մոտենալ, ո՛վ մեզ կարար դիպչիլ»,— մի առանձին ոգևորությամբ ասում էին ղշլաղեցիք<sup>332</sup>:

Համացանցում ներկայացված ուշագրավ մի հրապարակման մեջ հրետանավորը համարվել է ախալքալաքցի (առանց աղբյուրը նշելու)<sup>333</sup>:

Ո՛վ է Տեր–Մովսիսյանը, որտեղ է ծնվել, ի՛նչ տոհմից է: Նրա սխրանքի մասին շատերն են գրել ու գրում են: Տարիներ առաջ Տեր–Մովսիսյանի ով և որտեղացի լինելու հարցին փորձել է պատասխանել ՀՀ պետական արխիվի Իջևանի մասնա-

<sup>330</sup> Գուրգեն Տեր–Մովսիսյանի մասին մեր կողմից փոքրիկ ակնարկ է հրատարակվել Կապանում լույս տեսնող «Սյունիք» թերթում (խմբագիր՝ Գագիկ Դավթյան, 1997, 29 մայիսի, N 17–18):

<sup>331</sup> Ամիրբեկյան Մ., Վերջին հողակտորի վրա, վեպ, Երևան, 1973 թ., էջ 258–259:

<sup>332</sup> Ղազարյան Մ., Ղարաքիլիսայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920, հմմտ. Դավաթյան, Մարտության, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 115: Ի դեպ, այդ տարիներին Սյունիքը հաճախ ընկալվում էր որպես Ղարաքաղ:

<sup>333</sup> Համբարձումյան Ռ., Գարեգին Նժդեհ–Ղարաքիլիսայի հրաշունչ ոգին, Երևան, 2004:

ճյուղի տնօրեն Մ. Հ. Եգանյանը<sup>334</sup>: Սակայն Եգանյանի փաստարկները, մեղմ ասած, անհիմն են: Նրա կարծիքով՝ Ղարաքիլիսայի հերոսը ծնվել է Իջևանի Խաշթառակ գյուղում: Եվ հետո նա Գուրգեն Տեր-Մովսիսյանին դարձրել է Խաշատուր Սարգսի Մովսիսյան, որը զոհվել է «1918-ի մայիսի 28-ին՝ լուսաբացից առաջ: Նրա դին զորամասից փոխադրվեց և ամփոփվեց հայրենի Խաշթառակ գյուղում»:

Կապիտանի հետքերով գնալով, նրա մասին որոշակի փաստեր ու վկայություններ հավաքելով և հուսալով, որ ծննդավայրի մասին ստույգ տեղեկություններ կհայտնաբերեմ՝ դիմեցի ՀՀ Ազգային արխիվ: Դա չհաջողվեց, բայց այնուհանդերձ գտնվեցին նոր նյութեր, որոնք գալիս-լրացնում են հրետանային մարտկոցի հրամանատարի կերպարը:

Ֆրանսահայ պատմաբան Սերժ Աֆանասյանն իր «Սարդարապատի հաղթանակը» գրքում այդ օրհասական պահի մասին գրում է, որ մայիսի 23-ին «Ղարաքիլիսայում կայացած մի հավաքում Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, գեներալ Գամազյանը, գնդապետ Սամարցեն ու Նժդեհը, որոնք վերադարձել էին Դիլիջանից, որոշում են դիմադրություն ցույց տալ»:

Մայիսի 25-ին կազմակերպվեց Ղարաքիլիսայի ճակատը: Նույն օրը հրետանային նախապատրաստությունից հետո թուրքական բանակն անցավ հարձակման: Սկսվեց ճակատամարտը, որը տևեց մինչև մայիսի 28-ը:

Կապիտան Տեր-Մովսիսյանի 4-րդ մարտկոցը գնդապետ Սերոբ Սամարցյանի զորաբաժնի հետ տեղավորվում է ռազմաճակատի ձախ թևում և հանձնարարություն ունենում՝ պաշտպանել Գյաղամայմեխ (Անփայտ Մայմեխ) լեռնագագաթը Ղարաքիլիսայի հարավում: Թուրքական զորախմբերը փորձում էին առաջ շարժվել: Մովսիսյանի հրետանին գործում է հրաշալի: Այս մասին վկայում է առանձին հայկական հեծյալ բրիգադի հրամանատար Նիկոլայ Կորգանովի զեկուցագիրը. «Շտաբս կապիտան Մովսեսովի անձնուրաց գործողությունների շնորհիվ, որ դեմ-դիմաց բաց դիրքերից ոչնչացրեց թուրքերին, կասեցվեց թուրքերի առաջին գրոհը: Դրա շնորհիվ հեծյալ կազմավորումները քաջալերվեցին և հաջողությամբ, հետևակային վիճակով զսպեցին հակառակորդին»<sup>335</sup>:

Չորս ժամվա ընթացքում Տեր-Մովսիսյանի հրետանավորները հետ են մղում միմյանց հաջորդաձ երեք գրոհ: Տեղ չի հասնում գնդապետ Սամարցյանի ուղարկած օգնությունը: Կապիտանը ստիպված է լինում օգտագործել վերջին արկը և ապա հարկադրված է լինում թռչել ձիու վրա և գրոհի տանել իր հրետանավորներին:

Տեր-Մովսիսյանին անձամբ ճանաչել է Հովհաննես Բաղրամյանը և արժանիորեն բնութագրել նրան. «Հիշելով Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոսներին՝ ես ցանկանում եմ մի քանի բարի խոսք ասել հրետանային մարտկոցի հրամանատար, կապիտան Մովսիսյանի մասին: Նրանք, ովքեր գիտեն նրան, ասում էին, որ արիությունը, քաջությունը, այդ մարդու անսահման սերը հարազատ Հայաստանի նկատմամբ»:

<sup>334</sup> Բանբեր Հայաստանի արխիվների, 1987, N 3:

<sup>335</sup> ՀԱԱ, ֆ.123, ցուց. 2, գործ 79, թերթ, 7, 25 մայիսի 1918 թ.:

մամբ եղել է օրինակ հարյուրավոր և հազարավոր մարտիկների համար, որոնք պայքարում էին հանուն իրենց ժողովրդի ազատության... Ես անձամբ ճանաչում էի Մովսիսյանին և նրա մարտկոցի մարտիկներին, որոնց նկատմամբ նա վերաբերվում էր հոգաբարությամբ և սիրով: Ինձ միշտ հիացմունք է պատճառել այն, որ կապիտանի ստորաբաժանման սպաները և զինվորները եղել են, կարծես, ընտրովի, գեղեցիկ հանդերձավորված, ձգված, եռանդուն, ուժերին վստահ՝ և պատրաստ՝ ցանկացած պահի մարտի ներգրվելու: Ղարաքիլիսայի ճակատամարտը վերջինն էր, որին մասնակցեց փայլուն հրետանավորն ու վառ հայրենասերը: Այդ մարտում Մովսիսյանն ընկավ հերոսի մահով»<sup>336</sup>:

Մուշեղ Ղազարյանը, նկարագրելով ճակատամարտի հերոսական դրվագները, գրում է. «Պայքարը ճակատում եռում հա եռում է. մեր արտիլերիան երկու օր շարունակ յեպ է մղում 11-րդ ֆրգայի ուժեղ յարձակումները: Սկսում է Հաջի-Ղարայի ճակատամարտը: Գիւղի բարձունքները մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցնում: Ընկնում են մէկը միւսի յեպուկից հարիւրավոր քաջեր, որոնց հեպ նաև անանի հերոս— կորնեպ Տէր-Մովսիսեան»<sup>337</sup>:

Նույնպիսի գնահատական է տալիս նաև Սիմոն Վրացյանը. «Ղարաքիլիսայի ճակատամարտում հայ զինվորը երևան բերեց ռազմական բարձր կարողություն և անսահման հայրենասիրություն: Բազմաթիվ զոհեր տվեց նա: Շատերը ընկան հերոսական մահով: Դրանց մեջ էր թնդանոթային մարտկոցի հրամանավար հերոս Տեր— Մովսիսյանը: Դրանց մեջ էր և Հայաստանի ապագա վարչապետ Վ. Օհանջանյանի անդրանիկ զավակը՝ Մոնիկը, մի խումբ գաղափարական ուսանող ընկերների հեպ գրնվում էր առաջավոր դիրքերում, մասնակցել էր բազմաթիվ ճակատամարտերի, ստացել քաջության նշան և որ անհետ կորավ Ղարաքիլիսայի կռիվներում»<sup>338</sup>:

Պակաս կարևոր չէ նաև հետևյալ փաստաթուղթը. «Հերոսաբար ընկավ խիզախ կապիտան Գուրգեն Տեր-Մովսեսովը՝ տանելով իր մարտկոցը գրոհի» (Հայկական առանձին կորպուսի գործողությունների համառոտ նկարագրությունը 1917 թ. դեկտեմբերի 1-ից 1918 թ. օգոստոսի 1-ը տվել է Հայկական առանձին կորպուսի շտաբի սպաներից Կուլեբյագինը):

Հետաքրքիր մի վավերագիր ևս, որ վկայում է Տեր-Մովսիսյանի՝ բանակում ունեցած բացառիկ հեղինակության մասին. «Արեշովը (Հայկական կորպուսի 1-ին դիվիզիայի հրամանավար) դժգոհում էր Մովսեսովից և ցանկանում էր հեռացնել նրան հրամանավարությունից: Գործին միջամտում է Դրոն (կորպուսի քաղաքական կոմիսար) և հայտարարում, որ եթե Մովսեսովին հեռացնեն, ապա ինքը հրաժարական կտա»<sup>339</sup>:

<sup>336</sup> Բաղդավյան Հ., Իմ հիշողությունները, Երևան, 1979, էջ 88:

<sup>337</sup> Ղազարյան Մ., Ղարաքիլիսայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920, հմմտ. Դավլաբյան, Մարտության, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 109:

<sup>338</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993, էջ 121:

<sup>339</sup> Հայկական առանձին կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկովի հուշագրությունները. ՀԱԱ, ֆ. 45. ց. 1, գ. 16:

Թանկագին է ամեն գնահատական: Ահա թե ինչ է գրում Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից բժիշկ Իսահակ Տերտերյանը. «Գուրգեն Տեր Մովսիսեանը «Լեռնային» կոչուող 4-րդ հրետանային մարտկոցի հրամանատարը, որը յուսահատ բազմութիւններին դէպի ճակատ մղող եզակի սպաներից մէկն էր: Սկսած 1914 թուականից մասնակցելով տարբեր կռիւների՝ արժանացել է սպայական բոլոր պարգևներին, երեք անգամ վիրավորուել: 1918 թ. մայիսի 25-ին, երբ թշնամու դէմ իր մարտկոցի մղած ճակատամարտի ընթացքում վերջացան թնդանօթի արկերը, թրամարտի նետուեց դէպի ճակատի ամենավտանգաւոր հատուածը և առիծամարտ տալով թուրք զօրքերի դէմ, զոհուեց Դարբաս գիւղի մոտերքում գտնուող թիւ 750 բարձունքը գրաւելիս, որը վճռական նշանակութիւն ունեցավ մեր զօրքերի մայիսի 25-ի ընդհանուր յաղթանակի գործում: **Տաւօք, իր մասին այլ տուեալներ չունենք:** Նրա գլխաւորած հրետանային մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար Պետրոս Պետրոսեանցի (Պետրոս Տեր Պետրոսեանց, որը հրամանատարի զոհուելուց յետոյ փոխարինել է նրան) մի զեկուցագրից յայտնի է, որ ճակատամարտից յետոյ, նրա մարտկոցի ռազմիկները իրենց քաջ ու նահատակ հրամանատարի մարմինը մայիսի 28-ին, թշնամու զորամասերից շրջապատուած լինելու պայմաններում, Մայմեխի մօտերքից հասցնում են Դիլիջան եւ ամփոփում տեղի ս. Աստուածածին եկեղեցու բակում: Ղարաքիլիսայի ճակատամարտի բոլոր մասնակիցներն անխտիր, միաբերան վկայում են, որ Գուրգէն Տէր Մովսիսեանը անզուգական հերոս եւ մեծ հայրենասէր անհատականութիւն էր»<sup>340</sup>:

Այդ օրերին ստեղծված իրադրության և Գուրգեն Տեր-Մովսիսյանի մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնում ծագումով Ղափանի Ագարակ գյուղից, շտաբի կապիտան Սմբատ Թորոսյանի<sup>341</sup> ազգական Սարգիս Թորոսյանը<sup>342</sup>, ով մարտկոցի

<sup>340</sup> Ճակատամարտի մասնակից բժիշկ Իսահակ Տերտերյանի հուշերից, Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2008, էջ 159: Հմմտ. Ի. Տերտերյան, Երկերի ժողովածու, հտ. 3.6, Թեհրան, 1956–1957 թթ.:

<sup>341</sup> Սմբատ Թորոսյանի մասին հանգամանորեն՝ Գ. Սմբատյան, Սյունիք. Պատմություն և հիշողություն, Երևան, Անտարես, «Ճակատամարտ Քաշունիքում. Կապիտան Թորոսյանը և զինակիցները» գլխում:

<sup>342</sup> Սարգիս Թորոսյանը ծնվել է 1898 թ.–ին Երևանի նահանգային անասնաբույժ Վարդան Թորոսյանի ընտանիքում: Հայրը Ղափանի Ագարակ գյուղից էր և հետագայում՝ խորհրդային իշխանության տարիներին, եղավ Երևանի անասնաբուծական ինստիտուտի հիմնադիրներից: Սարգիս Թորոսյանն իր մանկությունն ու պատանեկությունը, ինչպես և վաղ երիտասարդության տարիներն անցկացրել է Երևանում: Երևանի դասական գիմնազիան ավարտել է 1916-ին ոսկե մեդալով, իսկ հայկական կրթությունը ձեռք է բերել մասնավոր դասերի շնորհիվ մեծանուն լեզվաբան Մանուկ Աբեղյանից: Նույն տարում նա ընդունվել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: 1917 թ.–ի վերջին Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո վերադարձել է Երևան, կամավորական դարձել ու մեկնել ռազմաձևակա՝ ծառայելով որպես բուժակ: Մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության օրոք Թորոսյանը կառավարության վարչապետի անձնակազմի քարտուղարն էր: Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ մնացել է երկրում և ապա մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը: Ապստամբության պարտությունից հետո Թորոսյանը բազմաժամկետ մտավորականների, քաղաքական գործիչների ու մարտիկների հետ միասին տարագրվեց: Թավրիզում ապրեց մինչև 1922 թ.–ի աշունը: Այդ ժամանակ նա կազմակերպեց երիտասարդ ուսանողներից կազմված սիրողական թատերախումբ, շրջագայություններ կատարելով՝ թատերական ներկայացումներ տվեց Իրանի, Սիրիայի,

հրետանավորներից էր, մասնակցել է ճակատամարտին, եղել է հերոսի մտերիմներից: Ցավոք, համերկրացի լինելու մասին ոչ մի խոսք. գուցե պատերազմական իրավիճակում ավելորդ հետաքրքրությունների ժամանակ չի եղել, կամ հայրենակից լինելը դուրս է մնացել Թորոսյանի հիշողությունից: Բայց և այնպես Սարգիս Թորոսյանի տեղեկությունները խիստ արժեքավոր են, իրադարձությունների շղթայում մեր աչքի առաջ հերոս հրետանավորն է. «Դասալիքուծինը կամաց–կամաց ծայր էր առնում: Ալեքսանդրապոլի անակնկալ գրավումը բարոյալքել էր որոշ զորամասեր: Դեպքերի բերումով մեր զորամասը լծուցեց պայքարի դասալիքուծեան դէմ: Ջղայնացած զինուորները բռնում էին դասալիքներին եւ բերում Մովսէսեանի մոտ: Կապիտան Մովսէսեանը դասալիքների ռիսերիմ թշնամին էր: Ներողամիտ էր առհասարակ, բայց պարտազանցների հանդէպ անողոք էր: Դասալիքները բոլորն էլ ունէին «յատուկ» բացատրութիւններ:

*Մեկը ասում էր.*

— Ախր, պ. կապիտան, մենք ինչ կարող ենք անել թուրքի դեմ, մեն–մենակ, ռուսը թորգաւ (թողեց) գնաց: Երկու ամիս է անվերջ կռիւների մէջ ենք, մեր չաստը (զորամասը) հըմեն (բոլորը) ցրուան (ցրուեցին): Գնանք, մի ճար անենք:

— Փախչելով ինչ ճար կարող էք անել,— պատասխանում էր Մովսէսեանը,— եթէ չկռուենք, բոլորիս էլ թուրքը կը կոտորի»:

Յիշում եմ՝ ինչպես մէկ օր ուրքից մինչեւ գլուխ զինուած մի դասալիք բերին գլխապետի մոտ:

— Ո՞ր զօրամասից ես,— խիստ հարցրեց կապիտանը:

— Բ գումարտակից:

— Էնպես որ,— պատասխանեց դասալիք զինուորը,— մենք կռուանք, կռուանք (կռուեցինք) մինչև վերջին գիւլեն (փամփուշտ): Մէկ էլ դարձանք պատրոն (փամփուշտ) վերցնելու՝ տեսանք, որ զմեն (բոլորը) փախել են: Ոչ մի ձիաւոր չէր մնացել:

— Իսկ ձեր հրամանատարը:

— Նա էլ չկար, փախել էր, չունքի (որովհետեւ) մեզի նման ուրաւոր չէր:

— Ո՞վ էր:

— Արսեն Շախմագեանը<sup>343</sup>:

Մովսէսեանի համբերութեան բաժակը լցուեց: Արսեն Շախմագեանը մեր անզուգական, լաւագոյն զինուորականներից էր: Ռուսական զինուորական իշխանութիւնների կողմից պարգեւատրուած էր Ս. Գէորգեան սպայական խաչով (շապ թիչ էր այդպիսիների քանակը ռուսական բանակում) մի տիպար հերոս–սպայ:

Դասալիքի սուրը այլեւս ակնյայտի էր:

Լիբանանի և Հունաստանի հայաշատ զաղութներում: 1923–1927 թթ. սովորել է Պրագայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Բնակություն է հաստատել Փարիզում, աշխատակցել հայ ազգային մամուլին: Երկրորդ աշխարհամարտի տարիներին օգնել է հայ ռազմագերիներին: 1954–ից ապրում էր Սյունիսեւում, վարում «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրությունը: ՀՅԴ–ի անդամ էր 1916 թվականից (կենսագրականը՝ ըստ Լևոն Մկրտչյանի, «Ազատություն» ռադիոկայան, աղբյուրը՝ Ռուբեն Թորոսյան, «Սարգիս Թորոսյան» անտիպ գրքույկը):

<sup>343</sup> Արսեն Շախմագյանը:

Գլխապետը Մովսեսէանը հրամայեց զինաթափել ստախոս զինուորին և բոլորի ներկայութեամբ լաւ ծեծ փունց, մինչեւ որ նա խոստովանեց իր սուտը:

— Ափսոս չի՛ Արսենի պես սպան քեզ նման զինուոր ունենայ, շուն շան որդի:

Ու դառնալով մեր զինուորներին՝ ասաց.

— Արսեն Շախմազեանը իմ լավ ընկերն է, կտրիճ փղայ է:

Յեպոյ իմացանք, որ Արսենը իր գումարտակի մեծ մասով հերոսաբար կոտուել է յառաջացող թուրքերի դէմ (ըստ վերջին տեղեկութիւնների, այդ աննման հերոսը Սիպերիոյ աքսորավայրերի մէջ է եղել բուլշեփկների օրոք):

Ծեծից հետո դասալիքը յետ ուղարկուեց իր զօրամասը: Այսպիսով ճանապարհին մենք բաւական թուով դասալիքներ վերադարձրինք իրենց զօրամասերը մեր զինուորների հսկողութեան տակ»<sup>344</sup>:

Խուճապը կատարյալ էր: Ղարաքիլիսայում ու շրջակայքում սոսկալի իրարանցում էր: Գաղթականությունը եկել էր այս փոքրիկ ու անշուք գյուղաքաղաքը, բայց իրեն ապահով չէր զգում: Նա շարժվում էր դեպի Դիլիջան՝ հույս ունենալով այնտեղից հասնել Թիֆլիս: Չկար, բացակայում էր զորավոր այն ուժը, որ պիտի կանգնեցներ թշվառ այս ժողովրդի վերջին բեկորներին: Իսկ ամենից մտահոգողը որք երեխաների խնդիրն էր: Չինվորականները փորձում էին համախմբել նրանց մեկ տեղ և ուղեկցել դեպի Դիլիջան: Մթնոլորտը ծանր էր ու ճնշող, սոսկալի:

«Չինուորները տխուր էին եւ մտազբաղ: Ճաշում էին, բայց իրենց կերածը, ինչպես ասում էր զինուորներից մեկը, «կուլ չէր գնում»: Գլխապետը {հրամանատարը} Մովսեսէանը յոգնած տեսք ուներ և սարսափելի դժգոհ էր: Մեծ դժուարութեամբ հեռախօսով կապուել էր Դիլիջանում գտնուած հայկական կորպուսի սպայակույտի հետ և հրահանգ էր ստացել մարտկոցը առաւօտեան շարժել դեպի Դիլիջան:

Այս հրահանգը իրեն համար անսպասելի էր: Նա կարծում էր, որ Ղարաքիլիսէի շուրջ գոնէ կարելի պիտի լինի կազմակերպել դիմադրություն: Մեր որոշ զօրամասերը գրառուած էին դիրքեր: Բայց քիչ էին, բարոյալքված եւ մասամբ խոնուած գաղթականության հետ: Ինձ պատուիրեց կանչել աւագ սպային: Գնացի, գտայ նրան և միասին եկանք գլխապետի մոտ:

Մովսեսէանը ասաց. «Կարգադրէք բոլորին կարգի բերել ամեն ինչ և պատրաստ լինելու առաւօտեան շուտ շարժուելու Դիլիջանի ուղղութեամբ»<sup>345</sup>:

Նահանջ բյուրոց, անփառունակ նահանջ դեպի անորոշություն՝ Դիլիջան տանող ճանապարհով, լի մարդկային թշվառ կերպարանքներով:

Մինչև ու՛ր: Իսկ ավելի դժվարինը թնդանոթների շարժումն էր: Մարտկոցը արդեն ամբողջություն չէր՝ կին, երեխա, անասուններ խառնվել էին միմյանց, իրենց մեջ առել թնդանոթներն ու ձիերին և խաթարել շարժումը դեպի Դիլիջան:

«Միայն Մովսեսէանի նման հրամանատարը կարող է գլուխ հանել այս կատարեալ դժոքից: Խնդրելով, համոզելով, բացատրելով եւ, ու որ պետք էր, կտրուկ

<sup>344</sup> Թորոպյան Ա., «Հայ-թրքական պատերազմի օրերուն», Հայրենիք, Բոստոն, 1951, N 8, էջ 70:

<sup>345</sup> Նոյնը, էջ 71:

համաններ տալով նրան յաջողեց գոնե՝ որոշ տարածութեան վրայ համեմատական կարգ հաստատել, վերականգնել մարտկոցի բաժան-բաժան եղած մասերը»<sup>346</sup>:

\*\*\*

Անասելի դժվարություններ հաղթահարելով, շարժվելով զգույշ ու դանդաղ՝ Տեր-Մովսիսյանի գլխավորությամբ, մյուս հրամանատարների ջանքերով և զինվորների կարգապահության շնորհիվ մարտկոցը հասավ Դիլիջան և դիրք գրավեց անտառի մոտ՝ բարձունքում: Մարտկոցի երևալը համընդհանուր հուսալքության և քաոսի մեջ գտնվող մարդկանց ոգևորեց և ուժ ու կորով ներշնչեց: Դիլիջանը տարբերվում է Ղարաքիլիսայից: Այստեղ գոնե կարգ ու կանոն կար: ՀՅԴ տեղական մարմինները զգալի աշխատանք էին տանում իրավիճակը բաց չթողնելու, դրությունը փրկելու համար: Ղարաքիլիսայից Դիլիջան նահանջած գեներալ Նազարբեկյանը, թուրքերին դիմագրավելու հույսը կորցրած, դիմում է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հաշտություն կնքելու առաջարկով: Բայց թուրքական հարձակումը կանգ չէր առնում: Նազարբեկյանի տեղակալ գնդապետ Ալեքսանդր Բեյ Մամիկոնյանը Դիլիջանում հրավիրում է զինվորականների խորհրդակցություն և ներկայացնում Նազարբեկյանի հրամանը՝ զորքի մի մասը ցրել, մյուս մասը վերածել պարտիզանական ջոկատների և վարել պարտիզանական պատերազմ: Հրետանու մասին ասում է, որ այն պիտի տանել Սևան և թաղել Չիբուխլու գյուղի մոտ: Մեծամասնությունը կողմ էր առաջարկին:

*«Ճնշող, ուղղակի խեղդող պահ... Շաբերը կսպասեին նման յայտարարութեան մը, շաբեր ալ ուրիշ ելք չէին տեսներ: Եվ տեղի ունեցավ այն, ինչ հաճախ չի լինում պատերազմների պատմության մեջ: Բայց փառք ու պատիւ հայ արեան: 4-րդ հրեպանհի մարտկոցի պեպ երպասարդ սպայ Գուրգեն Տեր Մովսեսեանը կրակ կտրած վեր ցարկելով իր տեղեն, որոտաց. «Ես չեմ հնազանդի այդ որոշման, դա դաւաճանութիւն է: Ո՛չ ոք իրաւունք ունի այդպես վարուելու Հայոց ճակատագրի հետ: Ես իմ թնդանոթներով այս իսկ թոպեին կը մեկնեմ ճակատը՝ մեռնելու: Ով պղամարդ է և հայու արին ունի իր երակներում՝ թող իմ երկից գայ»:*

Մթնոլորտը մէկէն փոխուեցաւ: Կրտսեր սպայի մը համարձակ ժեստը սեւ ստուեր մը ձգեց զորահրամանատարութեան հրահանգին վրայ: Ընդհանուր ոգեւորութիւն մը ծայր տուաւ: Նժդեհ, հետեւելով Տեր-Մովսեսեանին, ոգեշունչ ու կրակոտ ճառ մը խոսեց կրկնելով և ւսելի պարզելով իր նախորդի սպարտական մտքերը: Տեղի տուաւ նաև ընդհանուր հրամանատարութիւնը: Գնդապետ Բեյ Մամիկոնեան, անտես առնելով քանի մը թոպէ առաջ կարդացուած իր հրահանգը, հրամայեց անմիջապէս կազմակերպուել եւ վերադառնալ Ղարաքիլիսէի թափուր մնացած դիրքերը»<sup>347</sup>:

Նախախնամության ոչ միայն ընտրյալը, այլև պարզը... Ղարաքիլիսայի Աստեղային ժամը... Մեր պատմության գուցե վճռական ու ճակատագրական ակնթարթնե-

<sup>346</sup> Նույնը, էջ 72:

<sup>347</sup> ՀՅԴ գործիչ Վահե Արծրունու հուշերից՝ «Հայ-տաճկական պատերազմը և հայ սպայությունը», Դալլաքյան, Մարության, էջ 163, հմմտ. Նույնը՝ Շատախ, Երևան, 2002, էջ 362-365:



րից մեկը, երբ հայկական բանակի սպան կանխորոշեց իրադարձությունների հետագա ամբողջ ընթացքը... Չլինե՞ր Տեր Մովսիսյանը, Աստված գիտե թե ինչ կլինե՞ր հետո... Կլինե՞ր լիակատար ջախջախում, նահանջ, մղձավանջ, վերջին հույսի մարում: Արդյո՞ք նաև նրան չենք պարտական Հայոց պետականության վերածննդի համար:

Հաջորդ օրը Դիլիջանի եկեղեցու մոտ տեղի ունեցավ մեծ հանրահավաք: Սարդարապատից ոգևորիչ լուրեր էին հասել: Դիլիջան էին լցվում կամավորականներ: Լինում էին կրակոտ ելույթներ, որոնք կոչ էին անում դիմադրել թուրքերին:

«Մայիսի 23-ին սրանալով Սարդարապատի առաջին հաղթանակի ոգեշունչ լուրը՝ բազմամարդ միտինգ գումարվեց եկեղեցու բակում, որտեղ կենաց ու մահու կռվի կոչով հանդես եկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյանը, գեներալ Համասյանը և ուրիշներ»<sup>348</sup>:

«Ճառերից ինձ յաջողուեց լսել միայն երկուսը: Խոսում էր Գարեգին Նժդեհը: Շարերը ծանոթ են Նժդեհի պերճախօսութեան և հոեպորական կարողութիւններին: Բայց այդ օրուայ նրա ճառը խոր փայլորոտութիւն ձգեց բոլորի վրայ: Նրան յաջողուեց շարերի սրտի և հոգու մէջ նորից վառել հաւաքը դեպի մեր ժողովրդի ապագան: Ընդհանուր ցնծութեան մեջ նա կոչ արեց բոլորին անմիջապէս շարժուել դեպի Ղարաքիլիսէ, բռնել դիրքեր, ուր դեռ կանգնած էին նահանջած զորամասերից ոմանք եւ կեցնել թուրքերի առաջադաշումը»<sup>349</sup>:

«Յեպոյ զարմանքով րեսայ կապիտան Մովսէսեանին: Նա բոլորովին կարծես վերացած էր: Իր պարթև հասակը, առնական կեցուածքը և զինուորականի կատարեալ ֆիզիքականը ինքնին արդէն մեծ փայտութիւն էին ձգում: Իր ուժեղ ձայնով այդ անզուգական հերոսը համեստորեն ասում էր. «Ես ճառ խոսել չգիտեմ. ես զինուորական եմ, ենթակա հրամաններին: Բայց մի բան լավ գիտեմ: Եթէ այդպէս շարունակուի, և մենք չկոտենք թուրքերի դեմ, նրանք կոչնչացնեն բոլորովին ամբողջ հայութիւնը: Երկար մրաժելու ժամանակ չկայ: Բոլորս մի մարդու պես՝ դեպի ճակատ»<sup>350</sup>:

Թորոսյանը շարունակում է. «Դիլիջանի եկեղեցու»<sup>351</sup> գաւիթի մէջ րեղի ունեցած միտինգից յետոյ, ամէն ոք շրտապում էր իր կարելին անել՝ օգնելու համար ճակատին: Դէպի Ղարաքիլիսա,— ահա միակ միտքը, որ պաշարել էր բոլորին: Դաշնակցական րեղական մարմինը եւ անհատ ընկերները գիշեր ցերեկ աշխատանքի վրայ էին եւ կազմակերպում էին պարենաւորման գործը զինուորական պատկան իշխանութիւնների հետ միասին: Կորպուսի շրտաբը լեցուն էր բազմաթիւ զինուորականներով, որոնք սրանում էին համապատասխան հրահանգները: Նազարեկեանը ինքն էլ վարակուեց ժողովրդի ընդհանուր խանդավառութիւնից: Մովսէսիանի հետ մրանք շրտաբը, ուր ես րեսակցութիւն ունեցայ զօր. Վիչչինսկիի (շրտաբի պետը) եւ գնդա-

<sup>348</sup> Թորոսյան Հ. Գ., Սարդարապատի հերոսամարտը:

<sup>349</sup> Թորոսյան Ս., «Հայ-թրքական պատերազմի օրերուն», Հայրենիք, Բոստոն, 1951, N 8, էջ 70:

<sup>350</sup> Նույնը, էջ 72:

<sup>351</sup> Սբ Աստվածածին եկեղեցին է:

պետր Բէյ Մամիկոնեանի հետ: Գնդապետի ծայնը խռպոտել էր. երեք գիշեր գրեթէ չէր քնել: Արտակարգօրէն աշխոյժ՝ նա բառիս բուն իմաստով վազում էր ամէն կողմ եւ անում բազմաթիւ կտրուկ կարգադրութիւններ:

Առանձնաստեղծակից դուրս եկաւ զօրավարը: Դէմքը հանգիստ էր, բայց գունապ: Վերջին գերմարդկային փորձն էր անում նա՝ կանգնեցնելու համար թուրքական արշաւանքը: Այդ վայրկեանին անշուշտ նրա մտքովն անգամ չէր անցնում, որ այս ճակատագրական վայրկեանին որոշուելու էր մի մեծ պատմական հարց եւ որ 600 տարի իր անկախութիւնից զրկուած հայ ժողովուրդը պիտի հիմքը դնէր հայ անկախ պետականութեան շէնքին: Չեմ կարծում, թէ որեւէ մէկը այդ ժամանակ կը մտածէր այդ մասին: Բոլորի միտքն էլ զբաղուած էր գոյամարտով: Ապրիլ կամ Մեռնիլ: Ոչնչանալ կամ փրկել հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը: Առաջին շարժումները եղան Նժդեհի ձիաւոր գունդը եւ մեր մարտկոցը: Հետեակային որոշ մասեր արդէն շարժուել էին առաջ: Մեզ հետ էին նաեւ Ղազախի գիւղացի կամաւորները: Անաղմուկ, ինքնավարահ, լուրջ դէմքերով հայ ժողովրդի այդ ընտիր զաւակները գնում էին դէպի մահ: Առ հասարակ այդ գիւղացի կամաւորների ներկայութիւնը մեծ ոգեւորութիւն առաջ բերեց կանոնաւոր զօրքերի մէջ: Ընդհանուր խանդավառութեան մասնակից չեղաւ միայն Անդրանիկը իր զօրամասով, որ չենթարկուելով զօր. Նազարբէկեանի հրամաններին՝ ինքնագլուխ կերպով հեռացեր էր Զալալ Օղլի (Ստեփանավան) եւ մինչեւ վերջն էլ չմասնակցեց կռիւներին...»<sup>352</sup>:

Եվ տեղի ունեցավ այն, ինչ կարելի է համարել հրաշք: Բարոյալքված ժողովուրդը, բանակը նետվեցին առաջ՝ դեպի Ղարաքիլիսա: Լոռու գյուղացիները միացան մարտնչող զօրքին: Առաջին մեկնողներն էին Ղազախի կամավորականները, Տեր-Մովսիսյանի մարտկոցը, Նժդեհի այրուծին, հետևակը: «Սպայութեան ու զօրքի տրամադրութիւնը շատ բարձր էր, նրանք գնում էին մեռնելու: Այստեղ պիտի ասել. Ղարաքիլիսա վերադառնալու գործի մեջ մեծ դեր խաղաց չորրորդ թնդանօթածիգ գումարտակի հրամանատար, երիտասարդ սպայ Մովսէսեանը: Առաջինը Մովսիսեանի թնդանօթածիգ գումարտակն էր, որ մեծ օվացիաներով ճանապարհուեց Ղարաքիլիսա»<sup>353</sup>:

Գուրգեն Տեր-Մովսիսյանին մոտ կանգնած զինվորականներից մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար, շտաբս կապիտան Պետրոս Տեր-Պետրոսյանցը, որ կողք կողքի մարտնչում էր հրամանատարի հետ, կատարում նրա հրամանները, նկարագրում է իրադարձությունների ընթացքը Դիլիջանից մինչև ճակատամարտ և հերոսի նահատակությունը. «Ինձ համար, որը չի տիրապետում գրչին, դժվար է նկարագրել Հայաստանի պատմական այդ օրը, որն հավանաբար ապրելու իրավունք տվեց մեր ժողովրդին: Ժամերի ընթացքում կազմավորվեցին մի քանի գնդեր: Երեկոյան կողմ մեր մարտկոցը, որպես հեծելազորային-լեռնային հաշվարկ և կազ-

<sup>352</sup> Թորոսյան Ս., Ղարաքիլիսէի ձակատամարտը, Հայրենիք, Բոստոն, 1951, N 9, էջ 54:

<sup>353</sup> ՀՅԴ Գյումրիի կենտրոնական կոմիտեի ղեկավար գործիչ, «Ժայռ» շաբաթաթերթի նախկին խմբագիր, բժիշկ Արշակ Ղազարյանի հուշերից (Ա. Ղազարյան, «Ռեալական տեսութիւն» օրաթերթ 1920, 22 նոյեմբերի, N 28, հմմտ.Դալլաքյան, Մարության, էջ 160:

մով ամենաուժեղը, հրաման ստացավ մտնել հեծելազորային ավանգարդի կազմը և շարժվել դեպի Ղարաքիլիսա: Աննկարագրելի է ոգևորությունը և հավատը հաջողության հանդեպ: Հինգ թուպեում մարտկոցը հանդես եկավ հանձին իր գեղեցկադեմ-հերոս հրամանատար կապիտան Մովսեսյանի: Նրան հավատում էր յուրաքանչյուր սպա և զինվոր: Ձիերի վրա, երգ ու պարով, մարտկոցը շարժվեց չլող «ուռա» կանչերի և ծնկաչոք կանանց օրհնանքների ուղեկցությամբ: Մարտկոցն ամբողջ գիշերը առանց ընդմիջման շարժվում էր առաջ և մայիսի 24-ին առավոտյան հասավ Ղարաքիլիսա, ոգևորությամբ վարակելով Ղարաքիլիսայի բնակիչներին, որոնք նույնպես կամավոր կերպով անցան մարտիկների շարքերը: Մարտկոցն այդ օրը հանգրվանեց Ղարաքիլիսայում, իսկ մայիսի 25-ի առավոտյան ուղղություն վերցրեց դեպի Ղշլաղ և Դարբաս գյուղեր, հեծելազորի ոչ մեծ ջոկարի հետ միասին: Դարպասում մարտկոցը կանգ առավ: Դեպի առաջնագիծ ուղարկվեցին հեծյալ հետախույզներ, թուրքերի գտնվելու վայրերը որոշելու նպատակով»<sup>354</sup>:

\*\*\*

Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին հիանալի գրքի հեղինակ է Միքայել Ամիրբեկյանը: Գիրքը, որ գեղարվեստական վավերագրություն է, ցավոք, լուրջ ուշադրության չի արժանացել: Գնահատել է պետք գործը, չհենվել միայն պատերազմական ժամանակների զեկուցագրերի, հրամանների, հետագա աղոտ հիշողությունների վրա: Անկասկած, արժեքավոր այս գործը նա գրել է՝ հանդիպելով ու գրուցելով Ղարաքիլիսայի այդ օրերի իրադարձությունների մասնակիցների հետ, խոսել է ականատեսների հետ, արդյունքում մենք ունենք հրաշալի պատմավեպ, որտեղ սոսկալի օրերի մոռացված իրադարձություններն են, դրանցում դերակատարում ունեցած զինվորականներ, կամավորականներ, մարդիկ:

Մեր հայրենակից, անվանի պատմաբան Աշոտ Հարությունյանը, որ լրջորեն ուսումնասիրել է Մայիսյան հերոսամարտերի պատմությունը, Տեր-Մովսիսյանի հրետանավորների աներևակայելի վարքագիծը համեմատում է 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտում հռչակավոր Ռուսկու հրետանավորների անմահ սխրանքի հետ<sup>355</sup>: «Ձորակի ծախ կողմում՝ Դարբաս և Հաջիղարա {Լեռնապար} գյուղերի

<sup>354</sup> Մեծ Ղարաքիլիսայի մոտ 1-ին Հայկական հրաձգային բրիգադի 4-րդ լեռնային մարտկոցի ռազմական գործողությունների նկարագրությունը, Դավաքյան, Մարության, էջ 92-93:

<sup>355</sup> **Հարությունյան Ա.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 204:

Միքայել Ամիրբեկյանի գրքում մենք հանդիպում ենք երիտասարդ հրետանավորի մարդկային կերպարն արտացոլող հուզիչ մի պատմության: Կապիտանը գրկել էր փոքրիկ մի երեխայի, թևը դրել այս գեղեցիկ տղայի գլխի տակ, կարծես պաշտպանելու, գորովանք տածելու համար: Իսկ որտեղից հայտնվեց այս երեխան, որ հիմա իր հետ հայտնվել է ձակատային գծում: Երեխան հրամանատարի հետ պատերազմի դաշտում, առաջնագծում... Գաղթական որբերից է: Մարտկոցը հարկադրական նահանջ էր կատարում Կարսից, նահանջում էր Արգինեի ձորով, երբ կամուրջի տակ հայտնաբերեցին մի խումբ երեխաների: Նրանցից ավագը Գուրգենն էր: Տեղավորեցին սայլերի մեջ, կերակրեցին: Ճանապարհին ուրիշ երեխաներ էլ հավաքեցին: Ալեքսանդրապոլում բոլորին հանձնեցին ամերիկյան մանկատուն, բացի Գուրգենից: Գուրգեն Մովսիսյանը սիրեց իր անունը կրող փոքրիկին, վերցրեց իր հետ, խաղաղ ժամանակներում որդեգրելու նպատա-

միջև ընկած անտառապատ լեռների թեք լանջերին, դիրքեր էին գրավել հայկական առաջին հեծյալ բրիգադի առաջին գնդի հետիոտն դարձած մոտ երկու հարյուր մարտիկներ... Այսպեղ էր և հայկական բանակի փառաբանված 4-րդ մարտկոցը: Առաջին դասակը՝ երկու թնդանոթով, մարտկոցի հրամանատար, կապիտան Գուրգեն Մովսիսյանի հրամանատարությամբ, կանգնել էր Դարբաս գյուղից փոքր-ինչ վերև՝ գերեզմանոցի մոտ, երկրորդը՝ էլի երկու հրանոթով, երկաթուղային կամուրջի մոտ, ուռենիների տակ: Ռազմաճակատի այս հատվածի հրամանատարը գնդապետ Նիկոլայ Ղորղանյանն էր՝ Ղրիմի պատերազմում աչքի ընկած ռուսական հեծյալ բանակի հրամանատար Ադամ Կորգանովի որդին: Միջառասակ, չոր ու թուխ դեմքով, քառասունին մոտ մարդ էր, փոքրիկ, սև բեղերով: Հայկական բանակը սպեղծվելուց հետո նշանակվել էր հայկական հեծյալ բրիգադի հրամանատար, մասնակցել շար մարտերի և հիմա էլ այսպեղ՝ Ղարաքիլիսայի պաշտպանության աջ թևի հրամանատար և ընդհանուր հրամանատարի օգնական: «Բեյ Մամիկոնյանը նորից նայեց գեներալ Համազյանին<sup>356</sup>: «Սկսել»,— հրամայեց նրա սուր, հափու հայացքը: Բեյ Մամիկոնյանը շրջվեց դեպի կապավորը, ասաց.

— Հաղորդեք կապիտան Մովսիսյանին, թող կրակ բաց անի...

Ձախակողմյան լեռների լանջին՝ Դարբաս գյուղի գերեզմանոցի մոտ ձգվող փոքրիկ ձորակում, որոպաց հրանոթային համազարկը: Երկու արկ, սուվելով ու թրափելով ձորի սառնաշունչ օդը, թռան դեպի հեռուները: Դիպակետում բոլորը նայեցին թռչող արկերի ետևից: Դրանք պայթեցին հենց թշնամու առաջացող խմբերի մեջ: Շարքերը ցաքուցրիվ եղան: Կանաչ լանջին բարձրացան հողի սև սյուներ:

— Կապիտան Մովսիսյանն էր,— Նազարբեկյանը անշտապ հանեց հեռադիպակը, աչքերը կկոցելով՝ նայեց այն լեռնալանջին, որտեղ տեղավորված էր Մովսիսյանի մարտկոցը: Մանիշակագույն ցրվող ամպ էր չոքել գերեզմանոցի եզրին. չէր երևում ո՛չ մարտկոցը, ո՛չ էլ որևէ մեկը: Ձորից փչող հովը ծածանում էր մանիշակագույն ամպը, բայց այն համառաբար չէր ցրվում: Հնչեց երկրորդ որոպը: Նորից երկու ամպ թռան ձորի վրայով, պայթեցին թշնամու առաջ շարժվող շղթաների մեջ: Ասես ձայնակցելով Մովսիսյանի մարտկոցին, դեպի Ղշլաղ գյուղը առաջացող զորքերի

---

կով: Իսկ երբ մարտկոցը տեղավորվեց Քափանակ գյուղում, կապիտանը կարգադրեց դերձակ Մուկուչին զինվորական շորեր կարել փոքրիկի համար: Վարպետը կարեց զինվորական վերնաշապիկ, շինել, լամպասավոր անդրավարտիք, կարակույե փափախ: Հագցրին, սագեց, երեխայի ուրախությանը չափ չկար: Փոքրիկը միշտ մարտկոցի հետ էր լինում թե՛ հանգստի և թե՛ պարապմունքների ժամերին: Ալեքսանդրապոլ մեկնելիս կապիտանը երեխային տանում էր իր հետ: Չճանաչողները հիացմունքով նայում էին ու մտորում. «Երևի մայրը մահացել է, հայրն էլ ստիպված վերցնում է իր հետ»:

Նիկոլայ Նիկոլանիչ Ռասևսկին(1871–1829) հայրենասիրության անօրինակ արարք է դրսևորել Բորոդինոյի ճակատամարտի ժամանակ, մարտկոցի մոտ տանելով իր 11 և 17 տարեկան հարազատ որդիներին: Ավագ որդին, մահացու կրակի տակ, տանում էր գնդի դրոշմ, իսկ կրտսերը քայլում էր հոր հետ: Այստեղ, ինչպես նկատում ենք, հրետանավորներին գրոհի տանելուց բացի, Ռասևսկու հետ համեմատելու այլ դրվագ կա: Տեր-Մովսիսյանն էլ իր հետ մարտկոցի մոտ էր տարել իր ապագա որդեգիր տղային՝ Գուրգենին: Նման չեն արդյոք հրետանավորներն իրենց վարքով ու վեհությամբ:

<sup>356</sup> Գեներալ Համազյանը հրետանու ընդհանուր հրամանատարն էր:

վրա սկսեց կրակ տեղալ Ղշլաղ գյուղում կանգնած հրեպանային մարտկոցը: Սուվե-  
լով թռան արկերը, ընկան սարալանջին: Մեկը ընկավ թշնամուց շապ հեռու, մյուսը  
պայթեց հենց շղթայի մեջ:

— Ո՞վ է կրակողը,— հարցրեց գեներալը:

— Կապիտան Վեքիլյանի մարտկոցն է,— պատասխանեց Համազյանը,— ջա-  
հել է, բայց շնորհալի նշանառու է:

— Շնորհալի,— արձագանքեց գեներալը և ուզում էր ինչ-որ բան ասել, բայց այդ  
պահին լեռների ետևից լսվեց թշնամու հրանոթների ձայնը, և նրա խոսքը կիսապ  
մնաց: Երեք արկ սուվելով եկան, ընկան այն լանջին, որտեղ կապիտան Մովսիսյանի  
մարտկոցն էր: Գերեզմանոցում, իրարից բավական հեռու, վեր բարձրացան երեք սև  
հողեղեն սյուներ: Արկերը չէին հասել մարտկոցին:

— Պեպք է շարքից հանել թշնամու մարտկոցը,— չգիտես ում և ումից դժգոհե-  
լով, ասաց Համազյանը:

— Գեներալ,— դիմեց Համազյանին Նազարբեկյանը,— ասում են՝ շնորհալի են,  
բայց ինչու՞ չեն կրակում թշնամու մարտկոցի վրա, եթե շնորհալի են: Չեն հասկա-  
նում, որ նախ անհրաժեշտ է շարքից հանել իրենց սպառնացող վրանգը...

Նազարբեկյանը դեռ չէր ավարտել միտքը, երբ բարձունքից նորից որոտացին  
Մովսիսյանի հրանոթները: Այս անգամ արկերը սլացան ոչ նախկին ուղղությամբ,  
այլ այն, որտեղից կրակում էր թշնամու հրեպանին: Գեներալ Համազյանը բազման-  
շանակալից նայեց Նազարբեկյանին: Սա գոհ ժպտաց: Արկերը պայթեցին սարի  
եզրում ինչ-որ տեղ, որը չէր երևում:

— Դիպան,— արձագանքեց Համազյանը ու, նորից ձեռքը կոխելով շինելի ծոցը,  
ոգևորված քայլեց առաջ ու ետ: Նազարբեկյանը ուշադիր նայեց Համազյանին: Նա  
չէր սիրում այդ անհանգիստ, փառարյուն զինվորականին, բայց գիտեր, հավա-  
պում էր նրա հմտությանը ու հիմա էլ հավատաց: Նազարբեկյանը աշխուժացավ,  
առաջին անգամ շարժվեց տեղից, ինչպես հսկա փիղ, ծանր ու մեծ մոտեցավ Բեյ  
Մամիկոնյանին»<sup>357</sup>:

\*\*\*\*

«Թուրքական հարձակվող զորաշղթան մոտենում էր դանդաղ, ալեձև փափան-  
վելով: Փոխգնդապետ Մելիք-Շահնազարյանը, հեռադիտակը աչքերից չհեռացնե-  
լով, հեղում էր առաջացող թշնամուն, մեկ-մեկ շրջում դեմքը, նայում խրամափա-  
վորված զինվորներին: Նրանց բոլորի դեմքին կարծես նույն դրոշմով փայլած էր.  
«Գալիս են... ինչ է սպասում մեզ»: Կապիտան Մովսիսյանի մարտկոցից վզվզալով  
թռան արկերը, պայթեցին թուրքական շղթաների մեջ՝ թրանիկ-թրանիկ...

Ամեն մեկին թվաց, թե հենց իր կրծքի փակ հնչեց այդ միտքն, համաչափ  
ձայնը՝ թրանիկ-թրանիկ...

<sup>357</sup> Ամիրբեկյան Մ., Վերջին հողակտորի վրա, էջ 256–257:

«Դարբաս գյուղից դեպի հարավ, գերեզմանոցի ծայրին, որտեղ կնճիռի նման ձգվում էր անտառապատ լեռներից իջնող լայնաբերան, ոչ խոր ձորակը, կանգնած էր կապիտան Գուրգեն Մովսիսյանի մարտկոցը: Երեք դյուցմանոց երկու հրանոթ երախները պարզել էին դեպի արևմուտք և որսի շների նման կարծես հոտոտում էին երկինքը: Ձորակի երկու լանջերում կողք-կողքի քնել էին հրեպանավորները և դեռ ոչինչ չէր խանգարում նրանց կարճ, բայց անուշ քունը»<sup>358</sup>:

Նայեցեք կապիտան Տեր-Մովսիսյանի լուսանկարին ու այն համեմատության մեջ դրեք հեղինակի նկարագրության հետ: Կարծես թե նա մտքիկից տեսել է հրեպանավորին, ճանաչել է նրան վաղուց, շատ վաղուց. «Առաջին հրանոթի տակ, գլուխը դրած մի ժեռ քարի, քնած էր կապիտան Մովսիսյանը՝ թխահեր, բեղի սև, փոքրիկ սյունիկը արծվենի քթի տակ, սև հմայիչ աչքերը փակված թավ հոնքերի ստվերում»<sup>359</sup>:

— Թուրքական հեծելազորը...

Կապիտան Մովսիսյանը վազեց, թռավ մի գերեզմանաքարի, նայեց հեռադիրակով:

Հեծյալ զորախումբ էր, գալիս էր սրարշավ, իսկ ձախ կողմում լանջն ի վեր դեպի Արևասար բարձրունքն էին շարժվում թուրքական գումարտակի հետիոտն շրջանները: Նրանց ետևում երևում էին մի քանի եզ՝ գնդացիները մեջքների վրա: Թուրքական հրամանատարությունը հավանաբար որոշել էր անակնկալ գրոհով շարքից հանել իրենց այդ ամենաուժեղ հակառակորդին՝ հայկական հրեպանին: Ինչ անել... Կապիտանը մի արագ հայացք գցեց Արևասար բարձունքին՝ դատարկ էր: Հեծյալները, որոնք պետք է հսկեին ու պաշտպանեին մարտկոցը, դեռ չէին եկել գյուղից...

— Հովհաննիսյան, երկրորդ հրանոթի մոտ, մյուսները՝ հեծնել ձիերը, սպասել հրամանի, ճշաց գերեզմանաքարի վրայից Մովսիսյանը և արծվի նման թևերը պարզած՝ թռավ ձորակը, վազեց, չոքեց առաջին հրանոթի մոտ:

— Հովհաննիսյան, կարտեչով կրակ,— նորից անմարդկային, որոտընդոստ ճշաց Մովսիսյանը և նշանառություն բռնեց: Իրար ետևից որոտացին առաջին և երկրորդ հրանոթները: Արկերը թռան, պայթեցին օդում, ինչպես պողպատի անձրև մաղվեցին առաջացող հեծելազորի վրա: Նրա մարտակարգը խախտվեց, ձիերից շարքերը ծառս եղան, շարքերը թփոցով ընկան: Աղեխարշ խրխինջը, ընկած հեծյալների աղեկտուր կանչերը սարսափով լցրին կանաչ լանջահովիտը: Շփոթված հեծելախումբը մի պահ կանգ առավ, նորից անցավ գրոհի: Նորից որոտացին հրանոթները, նորից նրանց գլխին թափվեց մետաղի անձրև: Հեծյալների շարքերը նկատելի նոսրացան, բայց շատ էին, հաշվի չառան կորուստները, դարձյալ առաջ սլացան: Արդեն մոտ, բոլորովին մոտ հնչեց պայտերի ձայնը, լավեցին նույնիսկ ձիերի հևոցներ: Մովսիսյանը վազեց, թռավ իր ձիու վրա: Ձին փռացրեց ոունգները, մի խենթ պտույտ գործեց»<sup>360</sup>:

358 Նույնը, էջ 270:

359 Նույնը:

360 Նույնը:

Իրադրությունը դառնում էր սպառնալից, Ղարաքիլիսան շրջապատող բլուրների լանջերին տիրացած թուրքերը սկսեցին 5 գնդացիներից կրակ տեղալ հայկական գերեզմանատան ուղղությամբ, որտեղ Տեր-Մովսիսյանի հրետանին էր: Թուրքական կրակն աստիճանաբար դառնում էր ավերող, հասնում էր նպատակակետին: Մովսիսյանը ձգտում էր թուրքերին հետ քշել գրաված դիրքերից՝ բարձունքներից, բայց թուրքերն ավելի էին մոտենում: Նրանցից ոմանք հայտնվեցին հայկական դիրքերին մոտ տարածության վրա: Այդ ժամանակ հրազենային կրակի տակ հայտնվեց հետախուզության մեկնած հեծյալ ջոկատը, տրոհվեց առանձին մասերի ու նահանջեց: Իրադրությունը միանգամից լրջացավ: «Մարտկոցի հրամանատար կապիտան Մովսիսյանը հրամայեց ինձ, իմ II դասակով արագությամբ շարժվել առաջ՝ N 752 բարձունքի լանջը և գնդակոծել Արչուր գյուղը, իսկ ինքը I դասակով, ենթասպա Մանասյանի հետ թեքվեց դեպի ձախ՝ գերեզմանատուն, — հայտնում է Պետրոս Տեր-Պետրոսյանը:— Ես իմ դասակով, քառաբորով վարձով բարձրացա 752 բարձունք, դիրք գրավեցի և սկսեցի հրաձգությունը: Հանկարծ բարձունքում 200 քայլի վրա անսպասելի հայտնվեցին թուրքերը և մեզ վրա բացեցին շեշտակի գնդացրային և հրաձգային կրակ: Պարզվեց, որ մեր ուղեկալը, առանց զգուշացնելու լքել է 752 բարձունքը, և թուրքերը մեզ հանկարծակի են բերել:

Շնորհիվ այն բանի, որ բոլոր զինվորներն ունեին ձիեր, վարժեցված և կոպված էին մարտերում, ինձ հաջողվեց առանց խուճապի վերցնել հրանոթները և նահանջել: Գնդացրային կրակից փրկվեցինք շնորհիվ խանդակների, սակայն կորցրինք երկու զինվորի:

Կապիտան Մովսիսյանը, գերեզմանատանից կատարյալ կրակ տեղալով թուրքերի վրա, օգնեց ինձ իմ դասակով հեռանալ որոշ տարածություն: Հավասարվելով Դարպաս գյուղին, ես բաց դիրքից կրակի տակ առա թուրքերին, որոնք իջնում էին 752 բարձունքից, նպատակ ունենալով ձախից՝ անտառով շրջանցելու մեզ, կտրելու դեպի Ղարաքիլիսա տանող մեր նահանջի ուղին: Իսկ դա միակ նեղ արահեպն էր, որ տանում էր Ղարաքիլիսա»<sup>361</sup>:

**«Այն ժամանակ վրայ հասավ այն խորհրդով հարուստ վայրկեաններից մէկը, երբ անհատը բարձրանում է շրջապատից մահու վճռականութեամբ եւ խիզախօրեն քաշ է փալիս իր յետևից ամէնքին-լինին նրանք արի՛ թե անարի-դեպի լինել-չլինելու «մի շքեղ ու զարհուրելի ճակատագիր»:** Հրետանիի սպայ Տէր Մովսէսեանն եղավ այդ քաջամարտիկ, նախախնամական ընտրեալը, որ իր թնդանօթներից յոյսը կտրած, մի հիսնեակ ձիավորների զլուխն անցաւ եւ թշնամու շարունակուող զարհուրելի կրակի տակ, մրկաշունչ արշաւով դէպի թշնամին խոյացաւ մահու գնով, թիկունքից նրան զարկելու համար: Քաջարի այս հիսնեակի եւ իր խիզախ առաջնորդի համար երկրնտրանքը յստակ էր ու անդառնալի՝ մահ կամ Յաղթանակ: Նորանոր համազարկերի փազնապով բռնւած

<sup>361</sup> Դալլաքյան, Մարության, էջ 93:

թշնամու եւ... գլխապետ Տեր Մովսեսեան իր մրրկոյ սլացքի մէջ կրծքից զարկուած դիաթավալ ընկաւ հազիւ մրմնջալով՝ «մի՛ թողէք դիակս թշնամու ձեռքին» եւ շունչը փչեց»<sup>362</sup>:

Կապիտան Մովսիսյանը,— գրում է Տեր Պետրոսյանցը,— զգալով մահացու վտանգը, հրամայեց հրեպանավորներին և հեծյալներին դիմել գրոհի, ինքն անցնելով նրանց գլուխ, թողնելով ինձ մի քանի հրեպանավորի, որոնց հետ ես շարունակեցի գնդացրային փարափի փակ կրակել թշնամու վրա: Թուրքերը մեզնից բարձր դիրքում էին և հնձում էին գնդացիրներով: Հազիվ փրկվեցինք ամրությունների շնորհիվ: Ընկան մի քանի հրեպանավորներ, փապալվեցին շար ձիեր: Հանկարծ նկատեցինք, թե ինչպես հրամանատար կապիտան Մովսիսյանը ընկավ ձիուց, իսկ ձին սլացավ մի կողմի վրա: Հրեպանավորներն ու հեծյալները ինձ հետ միասին նետվեցին առաջ, բարձրացրին նրան, բայց մեր հերոս հրեպանավորն այլևս չկար: Գնդակը խոցել էր որովայնը: Նա հասցրեց ասել. «Զթողնեք ինձ այսպետդ և վրեժս կլուծեք»:

Իրադրությունն ավելի վարթարացավ: Բոլոր հեծյալները, հաշվարկը թողնելով, հրանոթները, հրացաններն առած նետվեցին առաջ՝ կանչելով. «Չկա հրամանատարը, էլ ինչու՞ ապրենք մենք»: Գնդացրային և հրացանային աներևակայելի կրակի փակ, երբ գնդակներն ընկնում և չորս կողմը փոշի էին բարձրացնում, ինձ վիճակվեց վարճով առաջ գնալ և հորդորելով հավաքել ու վերադարձնել նրանց մարտկոցի մոտ: Կապիտան Մովսիսյանի ազնիվ զավակները՝ բազմաթիվ հերոս զինվորներ, որոնց քանակն այդ ժամանակ ինձ հայտնի չեղավ, իրենց գլուխը խոնարհեցին հանուն Հայրենիքի: Մեր գրոհը, որ խլեց թանկագին հրամանատարի և շար զինվորների կյանքը, հարկադրեց արդեն N752 բարձունքից իջած թուրքերին կրկին բարձրանալ վեր ու ամրանալ այնտեղ: Բաց փարածքում մնալը՝ երբ մեզնից վեր թուրքերն էին, անհնարին է»<sup>363</sup>:

Ստանձնելով հրամանատարությունը՝ Պետրոսյանցը հրանոթներով, նեղ արահետով դուրս եկավ խճուղի՝ մարդկանց կոչ անելով հրամանատարի վրեժը լուծել: Հասան Ղշլաղ և մինչև երեկո հրետակոծության ենթարկեցին բարձունքն ու անտառը՝ հնարավորություն չտալով թուրքերին բարձունքից իջնել: Առավոտից մինչ կեսօր արձակվել էր 2000 արկ: Ոչնչացվեցին թուրքական գնդացիրները: Իրադրությունը փրկվեց Տեր-Մովսիսյանի ու իր մարտիկների կյանքի գնով: Երեկոյան տեղ հասավ հետևակը՝ մարտկոցներով, և վստահ ու կանոնավոր շարքերով անցավ հարձակման և գրավեց բարձունքը: Թուրքերը լքեցին բարձունքը՝ թողնելով զենք, զինամթերք ու անթիվ սպանվածներ<sup>364</sup>:

<sup>362</sup> Ղարաքիլիսայի ձևկատամարտի վաշտապետ Վախթանգ Տեր-Հարությունյանի հուշերից, Դալլաքյան, Մարուքյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 181–182:

<sup>363</sup> Մեծ Ղարաքիլիսայի մոտ 1–ին հայկական հրաձգային բրիգադի 4–րդ՝ լեռնային մարտկոցի ռազմական գործողությունների նկարագրությունը, Դալլաքյան, Մարուքյան, էջ 93–94:

<sup>364</sup> Վավերագրերից մեկում ուշադրություն է գրավում Մելիք-Փարսադանով ազգանունը: Դա 5–րդ լեռնային մարտկոցի ենթասպան է, ով, կարծում ենք, կապանցի է: Չէ որ Հայոց աշխարհում միակ Մելիք-Փարսադանյանները Կապանի Բեխ գյուղից են (1–ին Հայկական հրաձգային հրետա-



\*\*\*

Կրկին դիմենք գեղարվեստական գրականությանը. «Մովսիսյանը նորից նայեց պոպո արևին, նայեց թշնամուն: Հետզհետե ուժեղանում էր քառապորոպի մոտեցող ձիերի փնչոցը, պայտերի դղիրդը: Արդեն մոտ էին, հարձակման ամենահարմար պահն էր, այդ պահը չէր կարելի բաց թողնել: Մովսիսյանը զգաց, հասկացավ այդ, ձայն տվեց.

— Հառա՛ց, քաջե՛ր... ի մա՛րտ, հանուն ազատ Հայաստանի...

Կապիտանի վերջին խոսքերը դրոշի նման փողփողացին սրարշավ առաջ թռած նրա ձիու ցնցումից: Քառապորոպի սլացան և մյուս ձիերը»<sup>365</sup>:

Շարունակությունը կապիտանի հաղթական սրամարտն է թուրք սպայի դեմ և ընկերների՝ Օնոյի, Սուրենի, Շմոյի սխրանքները:

«Հանկարծ Արևասարում ճպուռի նման ճարճաբեց ինչ–որ գնդացի: Կարծես մեկը փայտի հարվածով ուժգին խփեց Կապիտան Մովսիսյանի կրծքին: Օրորվեց, ընկավ... Նրա գլխավերևում սկսեց պտտվել երկինքը, նրա մեջ էլ՝ արևը, ինչպես անպարզ երազում գետակն ընկած կարմիր խնձոր. անհասկանալի, խառնիխուռն շշուկներ, ինչ–որ փեղ կեռնեխի կուշտ կշկշոց...

Զինվորները շրջապատեցին, ծունկի եկան.

— Ի՛նչ եղավ, հրամանատար...

— Կրծքին է կպել:

Մովսիսյանը բացեց աչքերը, պղտոր հայացքով նայեց զինվորներին, նրանց գլխավերևում կախված արևին. արդեն լրիվ դուրս էր եկել, բայց կարծես մեռելի չոված ու սառած աչք լիներ...

— Տղերք, չգցե՛ք ինձ անօրենների ձեռքը...— վիրավորը կոթնեց արմունկներին, փորձեց բարձրանալ: Նորից ընկավ, վերջին անգամ խոր ու սուլելով շնչեց հայրենի երկրի զովաշունչ օդը, անշարժացավ:

Զինվորները սիրված հրամանատարին առան ուսերի վրա, իջան դեպի Դարբաս գյուղը: ...Հրեպանավորներն ուսերի վրա հրամանատարին իջեցրին մինչև Դարբաս գյուղը: Դեռ գյուղ չմտած՝ հանդիպեցին հեծյալ խմբի փղաներին, որոնք պետք է պաշտպանեին մարտկոցը, բայց իջել էին գյուղ, մնացել այնտեղ: Զոկի հրամանատար Հովհաննես Հովհաննիսյանը, որ գնում էր թափորի կողքից, ճանաչեց նրանց, դուրս եկավ գլխահակ քայլող հեծյալների դիմաց, հայիոյեց.

Դարբասում հրեպանավորները Մովսիսյանի դիակը տեղավորեցին կառքի մեջ, փարան դեպի Ղարաքիլիսա: Ղշաղ գյուղի փղաները լսել էին իրենց հրամանատարի

նային բրիգադի 5–րդ մարտկոցի հրամանատար Ի. Վեքիլովի զեկուցագիրը, 14 հունիսի 1918 թ., Դալլաքյան, Մարուքյան, էջ 60):

Ենթասպա Մելիք–Փարսաղանյանին հիշատակում է նաև Հրանտ Ավետիսյանը. «Մայիսի 28–ին Ղշաղից հյուսիս դիրքեր գրավեց միակ հրանոթը՝ ենթասպա Մելիք–Փարսաղանյանի հրամանատարությամբ» (Հ. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թվականի մայիս, Երևան, 1998, հմմտ. Դալլաքյան, Մարուքյան, էջ 229):

<sup>365</sup> Ամիրբեկյան Մ., էջ 272– 273:

զոհվելու լուրը, հրանոթները թողել էին ուռենիների փակ, եկել սպասում էին: Երբ դիակառքը մոտեցավ, բոլորը արտասվելով եկան, գրկախառնվեցին ընկերների հետ:

Սգո թափորը մեծացավ, ձգվեց քաղաք: Այստեղ էլ միացան բնակիչները, և Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում արդեն հսկայական բազմություն դարձավ:

Հերոսի դիակը դրեցին մի սև, մամոտրած գերեզմանաքարի վրա: Փոքրիկ որբուկը, որին մոռացել էին մի պահ, կարծես դուրս սողաց հավաքվածների ոտքերի փակից, եկավ, կանգնեց դիակի գլխավերևում: Մեծերին նայելով՝ չէր արտասվում, բայց նրա ներկայությունը, զինվորականի նրա փեսքը ինքնին այնքան հուզիչ էին, որ բոլորը լաց եղան:

Խաչով-խաչվառով եկեղեցուց դուրս եկավ ավագ քահանան՝ փեր Խորենը, եկան և ռազմաճակատի հրամանատար Բեյ Մամիկոնյանը, հրետանու գեներալ Համազյանը, գեղապետ Ղորղանյանը, շրաբի պետ, փոխգնդապետ Մացնիկը և այլ բարձրաստիճան հրամանատարներ: Կարճ, բայց սրտահույզ խոսքեր ասաց գեներալ Համազյանը.

— Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում շատ հերոսներ է ծնել: Կապիտան Գուրգեն Մովսիսյանը այդ հերոսներից մեկն էր, որին դեռ երկար, շատ երկար կհիշի երախտագետ ժողովուրդը: Նա մեր օրերի, մեր ծանր, փորձություններով լի ժամանակի Սասունցի Դավիթն էր, որ էպոսի անմահ պատանու պես իր բարի սրտով սիրեց իր ժողովրդին և իր ջախել կյանքը, իր վիթխարի ուժը նվիրաբերեց նրա ազատության գործին:

Մնան բարով, մեր թանկագին ընկեր, մեր նորօրյա հերոս...

Հուզմունքը սեղմեց ծեր գեներալի կոկորդը, չկարողացավ շարունակել, աչքերը լցվեցին արցունքներով: Բան հասկացավ գեներալի խոսքերից, թե չէ, փոքրիկ որբուկը հանկարծ լաց եղավ: Նրան արձագանքեց ժողովուրդը. լալիս էին կին ու տղամարդ, լալիս էին մեծ ու փոքր:

Հրաժեշտի խոսք ասաց շրաբի պետ Մացնիկը: Նա էլ կարճ, բայց հուզմունքով բնութագրեց զոհված հրամանատարին, հեփո հրապարակեց հրամանատարության որոշումը՝ կապիտան Գուրգեն Մովսիսյանին երմահու Գևորգյան չորրորդ աստիճանի խաչով պարգևատրելու և հայկական չորրորդ լեռնահրաձգային մարտկոցը նրա անունով կոչելու մասին:

Օդում ճոճելով ադամանդյա խաչը՝ մոտ եկավ փեր Խորենը<sup>366</sup> և այն է՝ ուզում էր թաղման աղոթք ասել, մեկ էլ ժողովրդի մեջ նկատեց ինչ-որ շարժում: Մանր աչքերը կկոցելով, նայեց այն կողմը: Բազմությունը ճանապարհ էր բացում զինվորների առաջ: Տեր Խորենը սպասեց մինչև մոտեցան: Մարտկոցի տղաներից էին՝ Սուրենը և Մարկոսը: Մինչև այստեղ ճառեր էին ասում, նրանք գնացել էին քաղաք, շրապ պատրաստել տվել մի դագաղ, բերել, որ առանց դագաղի չթաղեն սիրված հրամանատարին: Տարբեր փայտերից շրապ պատրաստված դագաղ էր, չէին հասցրել նույնիսկ ներկել, զարդարել: Բերին, իրենց ձեռքերով հրամանատարին տեղավորեցին մեջը: Այդ ժամանակ եկավ **Գուրգեն Մովսիսյանի հորեղբոր տղան: Միակ**

<sup>366</sup> Տեր Խորեն Խանգաղյան, Ղարաքիլիսայի հոգևոր հովիվ, ավագ քահանա, ուսուցիչ: Նրա մասին՝ Վ. Տեր խաչատրյան, Խօրեն ք. Խանգաղեանի յոթելեանը, Արև, Բաքու, 1916, N19:

**հարազատն էր:** Խնդրեց դիակը տեղափոխել Դիլիջան: Կիսապ թողեցին փորվող գերեզմանափոսը: Դագաղը նորից դրեցին կառքի մեջ, և բազմության լաց ու կոծի ուղեկցությամբ մարտկոցի տղաները՝ Հովհաննես Հովհաննիսյանը, Սուրեն Եղշապյանը և Մարկոս Սուքիասյանը տարան Դիլիջան, առանց հանդիսավորության թաղեցին եկեղեցու բակում»<sup>367</sup>:

\* \* \*

Ղարաքիլիսայում Տեր-Մովսիսյանի մարտկոցի գործողությունների ու նրա հրամանատարի՝ հերոսաբար զոհվելու մասին Ս. Թորոսյանը գրում է. «Ճանապարհը դէպի Ղարաքիլիսե՝ համեմատաբար անելի ազատ էր: Գաղթականության մեծ մասը արդեն անցել էր: Իրիկնադէմին հասանք Ղարաքիլիսե, եւ մեր մարտկոցը դիրքեր գրաւեց Դորպաղ<sup>368</sup> գիւղի մօտ, Ղարաքիլիսիեից ոչ շատ հեռու: Միւս օրը առաւօտեան սկսուեց պատմական ճակատամարտը: Դիրքերը մի քանի անգամ անցան ձեռքից ձեռք: Թուրքերը ամէն գնով աշխատում էին գրաւել Մայմեխի բարձրունքներն ու կրակի տակ առնել Դիլիջան-Ղարաքիլիսե խճուղին եւ հետագային փորձել կտրելու մեր զօրամասերը Դիլիջանից՝ անցնելով նրանց թիկունքը: Մեր մարտկոցը անդադար ունեւորեց էր թրքական դիրքերը: Թշնամին մի քանի անգամ մօտեցաւ մարտկոցին, բայց Մովսէսեանը կարտեջ կրակով նրանց յետ շարտեջ՝ մեծ կորուստներ պատճառելով: Թուրքերը գազազած էին: Կենտրոնացնելով մեծ ոյժեր՝ նրանք ուժեղ գրոհ փորին եւ գրեթէ հասան մարտկոցին: Մի վայրկեան եւս, եւ յառաջացած ու անպաշտպան մնացած մարտկոցը պիտի գերի ընկնէր ձեռքը:

Մովսէսեանը, սակայն, չկորցրեց իր պաղարհունութիւնը եւ հերոսական գրոհով փրկեց թնդանօթները: Հաւաքեց զինուորների մի մասը, դարձրեց նրանց հետիոտն եւ, առնելով իր հետ նաեւ ձիաուր հետախուզական խումբը գնդացիների հետ միասին, ուղղակի ընկաւ թշնամու մէջ: Թուրքերը, անակնկալի գալով, մեծ զոհերով նահանջեցին: Թնդանօթները փրկուած էին եւ աւագ սպայի առաջնորդութեամբ նահանջեցին, իսկ ինքը՝ կապիտան Մովսէսեանը, այս աննման հայ սպան, հերոսաբար ընկաւ թշնամու գնդակների տարափի տակ: Կային նաեւ վիրաւորներ, որոնց մէջ եւ իմ եղբայրս:

Կառքի հետ միասին ես գտնուում էի մէկ քիլոմէթր հեռաւորութեան վրայ: Արագօրէն կապելով վիրաւորների վերքերը՝ մարտկոցի հետ միասին նահանջեցինք Ղարաքիլիսե: Դորպաղի կոհիւր վերջացաւ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Մարտկոցը սուգի մէջ էր: Վերցնելով Մովսէսեանի դիակը՝ թնդանօթի վրայ դրինք զայն եւ այնպէս բերինք Դիլիջան, ուր տեղի ունեցաւ հերոսի թաղումը: Մովսէսեանը ոգին էր ամբողջ մարտկոցի: Նրա մահից յետոյ, ընդհանուր շուարումի մէջ արագօրէն քայքայուեց այս զօրամասը: Զինուորների մէկ մասը անցաւ Զանգեզուր, մնացած մասն էլ միացուեց ուրիշ մարտկոցի»<sup>369</sup>:

<sup>367</sup> Ամիրբեկյան Մ., էջ 276–278:

<sup>368</sup> Դարպաս գյուղը:

<sup>369</sup> Թորոսյան Ս., Ղարաքիլիսեի ճակատամարտը, Հայրենիք, 1951, N 9, սեպտեմբեր, էջ 54–55:

Վստահորեն կարելի է պնդել, որ Գուրգեն Տեր-Մովսիսյանը պյունեցի է, Կապանի Շիկահող գյուղից, հայտնի Տեր-Մովսիսյան-Մելիք-Նուբարյան տոհմից: Նա ծնվել է 1893 թ.–ի մայիսի 16–ին գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցու դպիր Դանիել Տեր-Մովսիսյան-Մելիք-Նուբարյանի ընտանիքում: Զափաբերական մատյանում նա կնքվել է Ամովս Տեր-Մովսիսյան: Սակայն դա չպետք է մոլորություն առաջացնի, քանի որ քիչ չեն դեպքերը, երբ մարդիկ հետագայում չեն կոչվել ավագանի անունով: Իսկ հետագայում գյուղում նրան ճանաչել են երկու անունով: Տեր-Մովսիսյանի՝ որպես Գուրգեն Ղարաքիլիսայում զոհվելու մասին հիշում էին համագյուղացիները, այդ մասին ավելի լավ գիտեն հարազատները:

Կա նաև անհերքելի, բացառիկ մի ապացույց: Դա Առաջին աշխարհամարտի կամավորական, Գեորգիկյան Խաչի ասպետ, Ծավ գյուղից Բագրատ Հարությունյանի հուշագրությունն է<sup>370</sup>: Հարությունյանը պատահական անձնավորություն չէր, առասպելական կյանք է ունեցել: Բաքվում սովորել է ռուսական գիմնազիայում, ստացել ռուսական կրթություն, կամավոր մեկնել Կովկասյան ճակատ, մասնակցել Դիլմանի ճակատամարտին, Վանի, Բիթլիսի գրավմանը, Կարսի պաշտպանությանը, Ղարաքիլիսայի ճակատամարտին, Գարեգին Նժդեհի հետ կողք կողքի կռվել Զանգեզուրի համար, ապա 1937–ին բռնել աքսորի ճանապարհը... Ամեն անգամ, երբ խոսք էր լինում Սարդարապատի մասին, նա ասում էր, որ ինքը հպարտանում է Գուրգեն Տեր-Մովսիսյանի նման հայրենակցով:

Տեր-Մովսիսյանին Հարությունյանը ճանաչել է 1917–ի փետրվարից. «Գնում, ներկայանում եմ 4–րդ հայկական հեծյալ լեռնային մարտկոցի պետին: Կապիտան էր՝ կուրծքը խաչերով զարդարված, սկսած «Սվյատա Աննա»–ից, հարց ու փորձ է անում՝ ով ես, որտեղից: Պատասխանում եմ: **Զարմացած նայում է՝ հայրենակիցներ ենք,— ասում է,— ես էլ շիկահողի եմ: Դա Գուրգեն Մովսեսովն էր: Առնական, գեղեցիկ փղամարդ էր՝ առինքնող, խոշոր աչքերով, ասաց, որ ես կլինեմ իր թիկնապահը:**

Շուրով փռելի ունեցավ Հոկտեմբերյան հեղաշրջումը, սկսվեց ռուսական բանակի անկանոն նահանջը. «Братыи, за кого воюет русский солдат? Разве русскому мужику нужна земля?»,— ասում էին ռուս զինվորները և վայր դնում զենքը: Ռազմաճակատը մերկանում էր, ռուսների փոխարեն թուրքերի դեմ պիտի հայերը կանգնեին: Այդ ժամանակ Կարսի հույները որոշեցին առանձին զորաջոկատ կազմել՝ մեկնել Սարիղամիշ՝ հայերին օգնելու համար:

Սարիղամիշի ճանապարհին շուրջ 200 հույներ գիշերում են թուրքական մի գյուղում՝ արժանանալով թուրքերի «սիրալիր ընդունելությանը», սակայն ենթարկվում գիշերային հարձակման և կոտորվում: Հրաշքով փրկված՝ մի քանիսը փախչում են

<sup>370</sup> Առաջին աշխարհամարտի կամավորական, 1937 թ. աքսորական, մի շարք մարտերի մասնակից, Զանգեզուրի գոյամարտի զինվոր, հուշագրությունների հեղինակ: Հուշագրությունները պահպանվում են մեզ մոտ: Նրա մասին հանգամանորեն՝ Սմբատյան Գ., Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, Զանգակ, 2009:

Կարս, ներկայացնում եղելությունը: Դա անչափ ծանր տրավմորոություն է թողնում Տեր–Մովսեսովի վրա, և նա որոշում է վրեժխնդիր լինել զոհված հույների համար: Մշակվում է գործողության պլան, որին մասնակից է դառնում նաև Հարությունյանը:

«Մովսեսովը կանչում է ինձ և հայրնում, որ փոխում է իմ գործը: Տխրում եմ: Իսկ նա ասում է, որ ավելի կարևոր գործ կա, որ թուրքերը պատրաստան պիտի տան մեր եղբայրների արյան համար: Ինձ հանձնարարեց ղեկավարել մարտկոցի հետախուզությունը: Մարտկոցը Տեր–Մովսեսովի հրամանատարությամբ շարժվեց Սարի-ղամիշի ուղղությամբ: Ես հետախույզների իմ խմբով գնում եմ առջևից: Բռնում ենք երկու հեծյալի, որոնք ներկայացան որպես ասորիներ: Մեկը՝ 40 տարեկան, մյուսը 18 տարեկան էր, լեզուն չգիտեր: Լամպի լույսի տակ նրանց քննեց Տեր–Մովսեսովը, հետո ինձ հանձնարարեց շարունակել քննությունը: Երբ ջախելը կոռացավ, նկատեցի գիմնագիտի հագուստի կոճակները: Թուրքիայում ինչ գիմնագիտ: Ճնշեցի, ջախելը խոսեց ոռուսերեն, ասաց, որ ինքը Բաքվից է, թուրք է, բժիշկ Խուրշուդ Բեկի եղբայրն է և հանձնարարություն է կատարում, տեղյակ է հույների ողբերգությանը... Խուզարկեցի և հայրնաբերեցի ռազմական այնպիսի քարտեզ, որ միայն բարձր հրամանատարության մոտ է լինում: Մովսեսովը հանձնարարեց ինձ առանց աղմուկի ոչնչացնել երկուսին էլ: Կամրջի տակ լուծվեց նրանց հարցը: Գիշերեցինք մոլորկանների գյուղում, առավոտյան շրջապատեցինք գյուղը, թնդանոթները ուղղեցինք խորի դեզերին: Գյուղը հրդեհվեց: Կենդանի մարդ գրեթե չարձավ»<sup>371</sup>:

Շուտով եղավ հայրենակիցների երկրորդ հանդիպումը, այս անգամ Ղարաքիլիսայում: Կռվող զինվորի, ականատեսի աչքերով է նկարագրված Ղարաքիլիսայի հերոսամարտը. «Թուրքերը գրոհում են, ոռուսերն այլևս չկան, իսկ մենք նահանջում ենք: Ընդհանուր հրամանատարը գեներալ Նազարբեկովն է: Հասնում ենք Ալեքսանդրապոլի մարտույցների: Մենք արագորեն նահանջում ենք դեպի Ղարաքիլիսա: Համամյուրի տափաստանը թուրքերը գրավել են: Ալեքսանդրապոլի գունդը փախուստի է դիմում: Ճանապարհը լեփ–լեցուն էր գաղթականներով: Այդ օրհասական պահին Մովսեսովը հրամայում է կանգ առնել և թնդանոթային կրակի տակ վերցնել թուրքերին: Թնդանոթները գործում են անդադար: Կռվի պահին ձիուց գլորվում է Մովսեսովը: Դա Ղարաքիլիսայի մոտ էր՝ գետի մյուս ափին: Թվում է՝ ամեն ինչ վերջացած է: Հանկարծ Համամյուրի<sup>372</sup> կողմից երևաց հեծելագործը: Պարզվեց, որ դա Նժդեհն է՝ իր 400 զինվորներով: Նա մաքրեց հարթավայրը, թուրքերը նահանջեցին սարերը: Նժդեհը հասավ մեզ և, տեսնելով զոհված Մովսեսովին, մոտեցավ, գրկեց նրան, շուրթերը դրեց շուրթերին և ուղղակի ողբաց. «Ո՛ւմ համար կյանքդ տվիր, սիրելի՛ Գուրգեն»: Մովսեսովի դիակն այդպեղից փոխադրեցինք Դիլիջան և այնտեղ էլ հողին հանձնեցինք»<sup>373</sup>:

<sup>371</sup> Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 183–184:

<sup>372</sup> Սպիտակը:

<sup>373</sup> «Հորիզոն»–ը իր 1918 թ. հունիսի 1–ի (N 104) և 2–ի (N 105) համարներում գուժում է «Գուրգեն Յովհաննիսեան Մովսեսեանի» մահը և ցավակցություն հայտնում ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի, Հայ զինվորական խորհրդի մարմնի, հարազատների, բարեկամների անունից և տեղեկացնում Թիֆլիսի Վանքի եկեղեցում տեղի ունենալիք հոգեհանգստի մասին: Փակվումի:

Իր բազմաթիվ զրույցներում արդեն ծերունագարդ զինվորը բազմիցս նշում էր, որ Մովսեսովին թաղել են Դիլիջանի եկեղեցու բակում, որ բոլորը, այդ թվում՝ Նազարբեկովը, սիրում էին նրան, որ նրան դիմում էին «սիրելի Մովսեսով», որ նա հայտնի էր «любимец армии» (բանակի սիրելի) անունով:

Հարությունյանը նաև նշում էր, որ Տեր-Մովսեսովի նկատմամբ խորին հարգանք է ունեցել 7-րդ առանձին կովկասյան բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Չեռնոզուբովը, որը հրամայում էր ներկաներին ոտքի կանգնել և պատիվ տալ կապիտանին, երբ նա մտնում էր գեներալի մոտ<sup>374</sup>:

Վերադառնանք «Վերջին հողակտորի վրա» վեպում հանդես եկող հրետանավորի միակ հարազատին՝ հորեղբոր տղային: Այդ նա խնդրեց նահատակված Գուրգենին տեղափոխել Դիլիջան և հուղարկավորել այնտեղ: Ուշադրություն դարձնենք՝ ոչ թե Խաջթառակ գյուղում: Ի դեպ, հայտնի է, որ Խաջթառակում թաղված զինվորականի գերեզմանաքարին մահվան տարեթիվ է նշված 1919 թվականը: Անվիճելի է, որ հայտնի հրետանավորի հորեղբոր տղան նշանավոր հոգևոր և հասարակական գործիչ, վառ հայրենասեր, 1865-ին Շիկահողում ծնված Մեսրոպ Արքեպիսկոպոս, Մագիստրոս Տեր-Մովսիսյանն է: Այդ ժամանակ նա Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի՝ գաղթականության գծով հանձնաժողովի նախագահն էր, եկեղեցու բակում ելույթ ունեցողներից: Հոգևոր գործիչը Նազարբեկովին հորդորել է ճակատամարտ տալ, զորքին և ժողովրդին դիմադրության կոչ է արել<sup>375</sup>:

Մեսրոպն ու Գուրգենը եղել են Վարդան ու Դանիել եղբայրների որդիները (հիմք՝ Շիկահողի եկեղեցու չափաբերական մատյանը և հարազատների վկայությունները):

---

Ինչ Հովհաննիսյան: Խառը ժամանակներ էին: Ինչպես Իջևանի, Ղարաբաղի, Ախալքալաքի ու Ախալցխայի դեպքում, սա էլ գուցե հերթական շփոթմունք է: Չմոռանանք, տասնյակ տարիներ Խաջթառակ գյուղում կարծում էին, որ իրենց գյուղում թաղված է Ղարաբիլիսայի ճակատամարտի մարտկոցի հրամանատարը: Ինչու՞ այդ ժամանակ կամ դրանից հետո մեկն այդ կողմերից հանդես չեկավ հրետանավորների մասին որևէ հուշով և չիրապարակեց լուսանկարը... 100 տարի անց արդեն դժվար է Թիֆլիսի հարազատների ժառանգներին հայտնաբերելը: Թեև պիտի ասել, որ այդ ժամանակ բազմաթիվ շիկահողցիներ և գորիսաբնակ շիկահողցիներ փոխադրվել էին մի շարք կենտրոններ, այդ թվում՝ Թիֆլիս, բնակվում էին այստեղ, որտեղ և սովորել է հրետանավորը: Լավ, իսկ ինչու՞ այսքան ժամանակ հարազատներից որևէ արձագանք չկա իրենց հերոս ազգականի մասին: Ցանկալի կլիներ լսել նաև նրանցից մեկին: Թեև միևնույն է, փաստարկները կապանցի լինելու օգտին են:

<sup>374</sup> Տեր-Մովսիսյանին ռազմաճակատում հանդիպել է նաև իր համագյուղացին ու մորաքրոջ տղան՝ Սաշա Մարտիրոսյանը, ով ինձ հետ զրույցում (1989 թ.) պատմում էր, որ սպան շտապում էր և հազիվ հասցրեց նրա հետ մի քանի խոսք փոխանակել: — Հետագայում լսեցի, որ նա գոհվել է Կիրովականի մոտ, — ասաց իննսունամյա Մարտիրոսյանը:

<sup>375</sup> Հարություն Թուրշյանը ևս գրում է, որ զորքին և ժողովրդին ռազմաճակատ ուղարկելու, նրանց մարտական ոգին բարձրացնելու գործում մեծ ավանդ է ունեցել Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը: Նա մեջբերում է նաև Մագիստրոսի մի գրությունը, որը ցույց է տալիս անկառավարելի խուճապն ու անկումը. «Երկու օր անց ավտոմոբիլով վերադարձա Ղարաբիլիսա, ականատես եղա սուկալի փախուստի աննկարագրելի ավերին: 38 վերստ տարածության ճանապարհը լցված էր անթիվ սատկած կենդանիների լեշերով, կոտորատված սայլերով, թափված բեռներով, որոնց փտումից երկիրը պիտի ապականվի» (Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 175):

Ցավոք, մյուս տեղեկությունները, չնայած հավաստի, սակայն կցկտուր են: Հայտնի է, որ հոր՝ Դանիելի մահից հետո Գուրգենը տեղափոխվել է Գորիս, ապա Մեսրոպ արքեպիսկոպոսի մոտ՝ Թիֆլիս, կրթություն ստացել Թիֆլիսում: Գուրգենը հաճախ է եղել գյուղում, հանդիպել եղբայրներին: Ի դեպ, Տիգրան եղբայրը մասնակցել է հայ-թաթարական բախումներին Բաքվում, իսկ 1909-ին մահացել է հիվանդանոցում: Տրդատը 1938-ին որպես ժողովրդի թշնամի քշվեց տաժանակրության<sup>376</sup>: Գուրգեն Տեր-Մովսիսյանից մնացին միայն հուշեր ու լուսանկարներ, որոնք երկար տարիներ պահպանել էին Տրդատի որդին՝ Սերաբիոնը և Մեսրոպ Մագիստրոսի հարազատներից Հարություն Մելքոնյանը:

Այսպիսով՝ համադրելով գրական, պատմական արխիվային նյութերը, Գուրգեն Տեր-Մովսիսյանի ժամանակակիցների վկայությունները՝ ձևավորվում է նրա կերպարը, միաժամանակ բավականին համոզիչ փաստարկներով հաստատվում է, որ Գուրգեն Տեր-Մովսիսյանը ծնվել է Կապանի Շիկահող գյուղում:

Ղարաքիլիսան ընկավ քառօրյա մարտերից հետո՝ մայիսի 28-ին: Տեղի ունեցավ խաղաղ բնակչության կոտորած, թալան, կողոպուտ: Սակայն այս ճակատամարտը բացառիկ էր Մայիսյան հերոսամարտերում: Ի վերջո, կանգնեցվեց թուրքերի առաջ-խաղացումը, ձախողվեց նրանց կողմից Արևելյան Հայաստանի նվաճումը, նախադրյալներ ստեղծվեցին Հայոց պետականության վերականգնման համար: Զուր չէ, որ Ավետիս Ահարոնյանը Ղարաքիլիսան համարում է «20-րդ դարի Ավարայր»:

<sup>376</sup> Պատմում են, որ Տրդատին կալանավորելու առիթ է հանդիսացել եղբոր՝ Գուրգենի նվիրած մատուցերը:

## ՉԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 1919 Թ.-Ի ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Վերոհիշյալ լրագրերի էջերում համառոտակի ներկայացված են 1919 թ.-ին Չանգեզուրում տեղի ունեցած կարևոր կենսական նշանակություն ունեցող իրադարձությունները, մասնավորապես 1919 թ.-ի նոյեմբեր 4-7-ը տեղի ունեցած քառօրյա հերոսամարտում Ադրբեջանի կանոնավոր զորամասերի և թուրք-քրդական հրոսակախմբերի դեմ Չանգեզուրի ռազմական ուժերի նվաճած հաղթական կռիվները:*

*Լրագրերի էջերում լուսաբանվում են նաև Չանգեզուրի կարգավիճակի նկատմամբ ՀՀ կառավարության, Ադրբեջանի իշխանությունների, ինչպես նաև Հարավային Կովկասում հավատարմագրված Անգլիայի ու Ամերիկայի դիվանագիտական ներկայացուցչությունների դրսևորած վերաբերմունքը:*

1918 թ.-ի մայիսին, երբ Անդրկովկասյան Սեյմի (պառլամենտ) ու Կոմիսարիատի (կառավարություն) լուծարմամբ, համաձայն Բաթումի պայմանագրի (1918 թ. հունիսի 4), Հարավային Կովկասում ձևավորվում են երեք անկախ հանրապետություններ, Հայաստանի Հանրապետության վարչական տարածքից դուրս էին մնացել պատմական Հայաստանի բազմաթիվ տարածքներ, որոնց թվում նաև Արցախն ու Չանգեզուրը, որոնց բնակչությունը դարերի ընթացքում երբևէ չհանդուրժելով օտարի լուծը՝ գեները ձեռքին հերոսական պայքար էր մղել՝ հանուն ազատության ու անկախության:

Չանգեզուրի հայության ազատագրական պայքարն առավել ուժգնությամբ ծավալվում է 1918-1920 թթ.-ին՝ պատմական մի այնպիսի ժամանակահատվածում, երբ կովկասյան թուրքերը Թուրքիայի գործուն անջակցությամբ հռչակելով իրենց անկախ պետականությունը՝ Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն, որը Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի և Ջեմալ-



Ջահիդ բեյի գլխավորած թուրքական զորքերի կողմից 1918 թ.–ի սեպտեմբերին Բաքու քաղաքը գրավելուց հետո կոչվեց Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություն, ձգտում էին բռնազավթել Չանգեզուրը:

Հարավային Կովկասում ձևավորված երեք նորանկախ հանրապետություններն ի սկզբանե ունեին որոշակի հակասություններ, որոնք վերածվում են բացահայտ թշնամական գործողությունների, անգամ՝ պատերազմի:

Ռուբեն Տեր–Մինասյանի բնութագրմամբ՝ «...Անդրկովկասի երեք հանրապետությանց գլխավոր երեք ժողովուրդները՝ հայ, վրացի և թաթար, ունեին չլուծված թէ՛ ազգային–մշակութային, թէ՛ մանավանդ սահմանային ու տնտեսական վեճեր, որոնք անդրադառնում էին ոչ միայն իրենց փոխհարաբերությանց վրա, այլև իրենց արտաքին օրինտացիայի և հանրապետութեան ներքին կեանքի վրա: Այդ դրությունը անխուսափելիորեն ստեղծելու էր հակամարտություն և արյունահեղ կռիվներ, որոնց առաջքն առնելու համար բարեկամությունները պիտի մնային դատարկ ու սին խոսքեր»<sup>377</sup>:

Չանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից Չանգեզուրը բռնազավթելու նկրտումներն առավել ուժգնությամբ են ծավալվում ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը լքելուց հետո, երբ բազմաթիվ ճակատամարտերում պարտություն կրած Թուրքիան կարողանում է ոչ միայն փրկվել անխուսափելի կործանումից, այլև համարել ու վերակազմավորել բանակը և ներխուժել Հարավային Կովկաս:

Թուրք իշխանությունների գլխավոր խնդիրն է դառնում տեր դառնալ Բաքվի նավթային հարստությանն ու հօգուտ Ադրբեջանի լուծել վիճելի տարածքների, այն է՝ Շարուր–Նախիջևանի, Սյունիքի և Արցախի խնդիրը:

Պատմական տվյալ ժամանակահատվում Չանգեզուրում տեղի ունեցած դեպքերի մանրակրկիտ ուսումնասիրությունն աներկբա հավաստում է, որ Չանգեզուրի քաջակորով հայորդիները թուրքական կանոնավոր զորամասերի և նրանց զինակցությամբ Չանգեզուրի բնակավայրերն ասպատակող թուրք–քուրդ հրոսակախմբերի դեմ մղած բազմաթիվ կռիվներում կարողացել են հերոսական ինքնապաշտպանությամբ պաշտպանել իրենց ազատությունն ու անկախությունը:

Չանգեզուրի հայ բնակչության ազատամարտը շարունակվել է նաև Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ Հարավային Կովկասում Մուդրոսի զինադադարի կնքելուց հետո հաստատվում է Անտանտի տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ) դիվանագիտական ու զինվորական ներկայացուցչությունը:

Անտանտի տերությունների ներկայացուցիչները Հարավային Կովկաս էին ժամանել 1918 թ. Մուդրոսի զինադադարի պայմանները կատարելու և խաղաղություն հաստատելու առաքելությամբ: Սակայն ժամանակը հստակորեն ցույց տվեց, որ նրանց ներկայությունը Հարավային Կովկասում բնավ սահմանափակված չէր միայն խաղաղություն հաստատելու առաքելությամբ:

<sup>377</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Պեյրուֆ, 1979, էջ 177–179:

Հայաստանի Հանրապետության 2-րդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի գնահատմամբ՝ անգլիացիները, 1918 թ.–ի վերջերին ու 1919 թ.–ին սկզբներին հայտնվելով Կովկասում, հետապնդում էին երկու հիմնական նպատակ.

1. «...նախ ամրացնել անդրկովկասեան հանրապետութիւնների անկախութիւնը՝ օգտուելով միաժամանակ Բաքու նաւթէն...»:

2. «Ստեղծել հիմունքներ ադրբեջանական մահմետական հանրապետութեան՝ դարձնելով այն ուժեղ և կենսունակ: Այդ քաղաքականությունը կտաներ Բաքուի մեջ զորաւար Թոմսոնը՝ առաջին անգլիական զորավարը, որ մտեր էր Բաքու Միջագետքէն և Պարսկաստանէն: Անոր տված հրահանգները Ղարաբաղի և Ջանգեզուրի մեջ կիրազործեր գնդապետ Շատելվորդը»<sup>378</sup>:

Հայաստանի Հանրապետությունը թեպետ համարվում էր Անտանտի փոքր դաշնակից տերություն, այնուամենայնիվ Անտանտի տերությունները, առանձնապես Անգլիան, ի զարմանս հայկական կողմի, վիճելի տարածքների, մասնավորապես Արցախի ու Ջանգեզուրի պատկանելիության հարցում ի սկզբանե հանդես է եկել ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշմամբ: Անգլիական ներկայացուցչության համանման դիրքորոշումը հայկական կողմի համար ավելի քան տարօրինակ էր ու անհասկանալի. չէ՞ որ 1-ին աշխարհամարտի տարիներին Անտանտի տերությունների դաշնակիցը ոչ թե թուրքերն ու կովկասյան թաթարներն էին, այլ հայերը:

Ջանգեզուրում ու Արցախում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը միանշանակ ցույց է տալիս, որ Ջանգեզուրի ու Արցախի հայության ազատագրական պայքարն ընդդեմ Անգլիական ներկայացուցչության հովանավորությունը վայելող Ադրբեջանի զավթողական նկրտումների չթուլացող ուժգնությամբ շարունակվել է նաև այդ նույն ժամանակաշրջանում:

Ջանգեզուրի հայ բնակչության ազատագրական պայքարն իր արացույուն է գտել ոչ միայն աշխարհասփյուռ հայության նախաձեռնությամբ տարբեր երկրներում հրատարակվող հայկական լրագրերում ու ամսագրերում, այլև ռուսալեզու մամուլում, մասնավորապես «Слово», «Грядущий День», «Обновление», «Борьба», «Возрождение», «Ашхатавор», «Ашхатанк», «Азербайджан» լրագրերի էջերում:

Վերոհիշյալ լրագրերի էջերում տեղ գտած Ջանգեզուրյան դեպքերի լուսաբանմանը նվիրված հաղորդագրությունները հիմնականում ներկայացնում են՝

Բուն Ջանգեզուրում տեղի ունեցող դեպքերը,

Ջանգեզուրի հարցում Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների փոխհարաբերություններն ու ձեռնարկած քայլերը,

Ջանգեզուրի նկատմամբ Հարավային Կովկասում հավատարմագրված Անտանտի տերությունների ներկայացուցչության դրսևորած դիրքորոշումն ու գործնական միջոցառումները,

Անտանտի տերությունների ներկայացուցչության և Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների փոխհարաբերությունները:

<sup>378</sup> Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, Համագրային, 1968, էջ 178:

Թվարկած լրագրերի էջերում տեղ գտած հաղորդագրությունները գլխավորապես լուսաբանում են 1919 թ.-ին տեղի ունեցող դեպքերը, և դա, կարելի փաստել, պատահական չէր: Այդ նույն ժամանակահատվածում, երբ Հարավային Կովկասում գերիշխող դիրք ուներ Անգլիական ներկայացուցչությունը, Ադրբեջանի կառավարությունը այդ նույն ներկայացուցչության ղեկավար գեներալ Թոմսոնի համաձայնությամբ 1919 թ.-ի հունվարի 15-ին Չանգեզուր-Արցախի գեներալ-նահանգապետ է նշանակում դոկտոր Խոսրով Բեկ Սուլթանովին, որն առավելապես հայտնի էր իր բռնապետական հակումներով ու հայության նկատմամբ դրսևորած թշնամական վերաբերմունքով<sup>379</sup>:

Ի դեպ, Սուլթանովին Արցախ-Չանգեզուրի գեներալ-նահանգապետի պաշտոնում նշանակելիս Անգլիայի ներկայացուցչությունն ու Ադրբեջանի կառավարությունը բնավ հաշվի չեն առել ոչ միայն Արցախի ու Չանգեզուրի հայ բնակչության, այլև Հայաստանի Հանրապետության կարծիքն ու դիրքորոշումը:

Իսկ պատմական այդ ժամանակաշրջանը բնութագրող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը միանշանակորեն հավաստում է, որ Հայաստանի Հանրապետության նկատմամբ Անտանտի տերությունների, հատկապես Անգլիայի որդեգրած քաղաքականությունը, դրսևորած վերաբերմունքն ու դիրքորոշումը շատ հաճախ ոչ միայն հայամետ չէին, այլև ավելի ստույգ՝ թուրքամետ:

Լեոի անքննադատելի գնահատմամբ՝ «...յուրաքանչյուրն այդ հաղթող պետություններից աշխարհե աշխարհ էր ընկել ոչ թե ուրիշներին լավություն անելու, այլ իր սեփական օգուտները քաղելու համար: Անգլիան՝ այդ «բուխալտերը», ինչպես միշտ, Կովկաս գալով առաջին իսկ քայլերից հաշվի առավ, թե ումից ինչ կարող է վերցնել: Հաշիվը շատ պարզ էր, Ադրբեջանը նավթ ուներ, Իսկ Հայաստանը՝ միայն որբեր ու մեռնող ժողովուրդ: Եվ բնականաբար, Ադրբեջանը նրա համար Հայաստանից նույնիսկ շատ լավ էր: ...Նույն «բուխալտերի» համար այս նույն թշվառ Հայաստանից լավ էր նաեւ Վրաստանը իր մանգանով, Բաքվից Բաթում իր ճանապարհով...»<sup>380</sup>:

Խոսրով Բեկ Սուլթանովը, ստանձնելով գեներալ-նահանգապետի պաշտոնը, անհապաղ վերջնագիր է ներկայացնում Չանգեզուրին ու Արցախին ու խստագույնս պահանջում ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը: Ավելին՝ նորանշակ գեներալ-նահանգապետը սպառնում է իր պահանջը չկատարելու պարագայում գեներալ ուժով հարկադրել Չանգեզուրին ու Արցախին՝ ընդունելու իր առաջադրած պահանջը և իրենց հայտարարելու Ադրբեջանի անքակտելի մաս:

Խոսրով Բեկ Սուլթանովի՝ գեներալ-նահանգապետ նշանակմամբ իրավիճակը Չանգեզուրում ու Արցախում ավելի ու ավելի է շիկանում ու տագնապալի դառնում:

Համանման կացությունում ՀՀ կառավարությունն անհրաժեշտաբար պիտի ձեռնարկեր վճռական քայլեր և հնարավորինս սատար կանգներ Չանգեզուրին ու Արցախին: Քանի դեռ ՀՀ կառավարությունը դեռևս ի գործու չէր ռազմական

<sup>379</sup> Տե՛ս ՀՅԴ ԿԱՀՅԴ ԲԿԱ(Հ. Յ. Դաշնակցության Բոստոնի Կենտրոնական Արխիվ, թծ (թղթած-ըպր), 3/3-3.3, գ. 3, թ. 2:

<sup>380</sup> Լեո, Անցյալից, Երևան, 2009, էջ 381:

Ծանրակշիռ օգնություն ուղարկել Զանգեզուր, ուստի պիտի այնտեղ գործուղեր ռազմագիտական ակնառու կարողություններով օժտված գործիչների, որոնք կարողանային պատշաճ մակարդակով կազմակերպելն ու առաջնորդելն գավառի ռազմական ուժերը:

Ի պատասխան Ադրբեջանի՝ ՀՀ կառավարությունը դիմում է պատասխան քայլի: Վերոհիշյալ դեպքերի թելադրանքով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր ընդունած որոշմամբ (1919 թ. հունվարի 21), հաստատում է Արցախ-Զանգեզուրի ժամանակավոր վարչություն, իսկ կապիտան Արսեն Շահմազյանին տալով գնդապետի զինվորական աստիճան՝ նշանակում Արցախ-Զանգեզուրի գեներալ-կոմիսար (գեներալ-նահանգապետ)և ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար<sup>381</sup>:

Ժամանակը միանշանակորեն ցույց տվեց, որ այդ նշանակումն ավելի քան տեղին էր ու արգասաբեր: Գեներալ-նահանգապետի պաշտոնում Արսեն Շահմազյանը իրեն դրսևորում է որպես ոչ միայն շնորհալի, կարող կազմակերպիչ ու ժողովրդական առաջնորդ, այլև քաջարի ու տաղանդավոր զորահրամանատար:

Անգլիացիների գործուն աջակցությամբ բազմիցս կրկնվող սպառնալիքների միջոցով իր գերիշխանությունը Զանգեզուրում հաստատելուն միտված Ադրբեջանի կառավարության ձեռնարկած բոլոր փորձերն անցնում են ապարդյուն: Զանգեզուրի խնդիրը Ադրբեջանը կարող էր լուծել միայն զենքի միջոցով: Զանգեզուրն ու Արցախը բռնազավթելու՝ Ադրբեջանի իշխանությունների ծրագրած մարտավարությունն առավել վճռականությամբ դրսևորվեց 1919 թ.-ի մայիսի վերջերին, երբ Հարավային Կովկասից հեռացան անգլիական զորքերը: 1919 թ.-ի ամռանը՝ հունիս և հուլիս ամիսներին, Ադրբեջանի կանոնավոր զորամասներն ու նրանց համագործակցությամբ գործող մահմեդական զինախմբերը հարձակումներ են գործում հայկական մի շարք բնակավայրերի վրա և փորձեր ձեռնարկում բռնությամբ, զենքի ուժով տիրել Զանգեզուրին<sup>382</sup>:

Արժանին պիտի մատուցել Զանգեզուրի քաջակորով մարտիկներին: Գորիսի ու Կապանի շրջաններում տեղի ունեցած հունիս-հուլիսյան ինքնապաշտպանական մարտերում գնդապետ Արսեն Շահմազյանի հրամանատարությամբ գործող զանգեզուրյան մարտական ուժերը ոչ միայն հուսալիորեն դիմակայում ու աննահանջ պաշտպանում են իրենց դիրքերը, այլև դիմում են հակահարձակման ու արժանի ջարդ տալիս ու փախուստի մատնում իրենց բնակավայրերի վրա հարձակված թուրք կանոնավոր զորամասերին ու նրանց աջակցող մահմեդական հրոսակախմբերին<sup>383</sup>:

1919 թ.-ի օգոստոսի 20-ին, ճիշտ և ճիշտ այն օրերն, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում բորբոքվում էին մահմեդական զինված խմբավորումների զանգվածային հակապետական շարժումները, Երևան է ժամանում դաշնակից

<sup>381</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 4:

<sup>382</sup> Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թժ. 160, գ. 59, էջ 5:

<sup>383</sup> Տե՛ս Նույն նստեղում, էջ 5-6:

տերությունների կողմից Հարավային Կովկասում գերագույն կոմիսար նշանակված ամերիկյան բանակի գնդապետ Վիլյամ Հասկելը:

«Նրա նշանակումը,— գրում է Ս. Վրացյանը,— մեծ ոգևորություն առաջացրեց հայերի մեջ: Բաթումիից մինչև Երևան, ամեն տեղ, նրան ցույց տրվեց խանդավառ ընդունելիություն: Ընդունելիությունը շատ ջերմ էր, նամանավանդ, Հայաստանում»<sup>384</sup>:

Ադրբեջանը, ճիշտ է, Ջանգեզուրում հերթական անգամ մատնվում է անհաջողության, բայց դա բոլորովին չէր նշանակում, որ գավառում հետայսու տիրելու էր խաղաղ կարգավիճակ:

Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրած ուղերձում ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը գրում է. «Անգլիացիների գնալուց հետո մենք գտնվում ենք Ամերիկացիների հովանավորության տակ, բայց այդ հովանավորությունը կրում է միայն պլատոնական բնավորություն, որովհետև ամերիկացիք զրկված լինելով զինվորական ուժից, ոչ մի հնարավորություն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարգադրությունները»<sup>385</sup>:

Ադրբեջանի իշխանությունները, հավատարիմ գտնվելով իրենց որդեգրած քաղաքականությանը և լավագույնս օգտվելով Հարավային Կովկասում բրիտանական հրամանատարությանը փոխարինած ամերիկյան կողմի զինուժի բացակայությունից, հերթական անգամ փորձում են առավել մեծաքանակ ու կազմակերպված ռազմական ուժով բռնազավթել Ջանգեզուրը: 1919 թ.–ի նոյեմբերի 4–7–ը գեներալ Շիխլինսկու առաջնորդած ադրբեջանական զորքերը թուրք և քուրդ տասնյակ հրոսակախմբերի զինակցությամբ Տեղ–Կոռնիձոր ուղղությամբ հարձակվում են Ջանգեզուրի վրա:

Քառօրյա հերոսամարտ անվանումը ստացած ճակատամարտում գնդապետ Արսեն Շահմազյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող Ջանգեզուրյան ռազմական ուժերը գլխովին ջախջախում են Ադրբեջանի կանոնավոր զորամասին և թուրք–քուրդ հրոսակախմբերին:

Այդ կապակցությամբ ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը, Վաշինգտոնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրած ուղերձում արժանավույնս գնահատելով Ջանգեզուրի ռազմական ուժերի փայլուն հաղթանակը, նշում է. «...Ադրբեջանի զորքերը, մոտ 7000 սվին, հազարավոր քուրդ և թուրք խուժանի հետ միացած, հռչակավոր Սուլթանովի և Շիխլինսկու առաջնորդությամբ, շարժվել են դեպի Ջանգեզուր: Այսօրվա ստացած տեղեկությունների համաձայն քաջ Ջանգեզուրցիք 4 օրվա կատաղի կռիվներից հետո, Գորիսից ոչ հեռու Խոզնավար և Բայանդուր գյուղերի մոտ, մեծ ջարդ են տվել թաթարներին և հետ մղել դեպի Ղարաբաղ: Թուրքերը թողել են 14 գնդացիր, 150 գերի, ահագին քանակությամբ մթերք, փամփուշտ, վրաններն այլն...»<sup>386</sup>:

<sup>384</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Թհիրան, «Ալիք» էջ 302:

<sup>385</sup> ՀՅԴ ԿԱ, թծ. 3/3–3.3, գ. 3, թ. 1:

<sup>386</sup> Նույն տեղում, թ. 2բ.:

Ընդհանրացնելով՝ հարկ է աներկբա արձանագրել, որ արժանավույնս պիտի գնահատել Թուրքիայի ու անգլիացիների գործուն աջակցությամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից բազմիցս ձեռնարկած զինված հարձակումներին, ճնշումներին ու սպառնալիքներին հաստատակամորեն դիմակայող Ջանգեզուրի հայության անհողդողդ կամքն ու վճռականությունը: Ադրբեջանի և գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի գերիշխանությունը Ջանգեզուրում հաստատելուն միտված բոլոր փորձերը տապալվում են՝ հանդիպելով Ջանգեզուրի հայության անկոտրում դիմադրությանն ու վճռականությանը<sup>387</sup>:

---

<sup>387</sup> Ջանգեզուրի Ազատամարտի մանրամասները տես **Գևորգյան Հ.**, «Հայաստանի Հանրապետության կառավարության մարտավարությունը Սյունիքում և Արցախում 1918–1920 թթ.», Երևան, 2018, էջ 17–390:

**(Փաստաթղթի արխիվային ուսերեն բնագիր)**  
**ՀՅԴ ԲԿԱ(Հ. Յ. Դաշնակցության Բուստնի Կենտրոնական Արխիվ, թժ**  
**(թղթածրար) 8/8, գ.37, էջ 160-182)**  
**«Слово», «Грядущий День», «Обновление», «Борьба», «Возрождение»,**  
**«Ашхатавор», «Ашхатанк», «Азербайджан»**

ЗАНГЕЗУРСКАЯ СОБЫТИЯ

Первые сведения о начавшихся в Зангезуре событиях были помещены в N 7 газ. «Слово» от 16 ноября, где появилось следующее сообщение: «По совершенно достоверным сведениям, полученным в Тифлисе, 29 октября в 14 ч. Дня в Забух прибыл Азербейджанский офицер с 30 всадниками и позвал четных сел. Дигь и передал им письменное требование о признании Зангезуром власти Азербейджана». 1 ноября начато общее наступление на Зангезур тремя колоннами—со стороны Шуши, Карягинского у. и Нахичевани. из Шуши двинуто 3 пехотных полка, численностью 6.600 солдат, 2 кавалерийских полка, всего 800 сабель, 8 легких орудий, 4 гаубицы и 4 00 конных курдов. из Нахичевани двинуто 3.000 чел., в других же направленных действуют многочисленные курды. Операциями руководят генерал Едигаров и брат ген. Губ. Султанова Султан-бек. Во главе всех войск стоят ген. Али Ага Шихлински.

Сведения от 6 ноября говорят, что азербейджанцы переходят в общее наступление на селения Хознаварь, Диг, Баяндур и стремятся прорваться через сел. Диг на Герюсы, но, на превосходство их сил и интенсивный пулемютный и бомбометный огонь, жители стойко выдержали натиск. На Хознаварском направлении татары от горы Качал-Дагь, которую они заняли накануне одновременно с Хознаваром и Баяндуром, оставили 7 пулемютов.

В газ. «Грядущий-День» N 12 от 17 ноября помещено сообщение Армянского Телеграфного Агентства: «Полученными из Зангезура сведениями послы четырехдневных боев азербейджанские войска, разбитые наголову, бежали в сторону Карабаха, оставив в руках армян-зангезурцев много пленных, 14 пулеметов, огромное количество патронов, сахара и другого продовольствия».

В газ. «Слово» N 76 от 18 ноября находим след. Две заметки. Первая. «Из достоверных источников сообщают, что представитель Азербейджана в Армении Ахвердов заявил премьеру Армений, что Азербейджанские регулярные войска не принимают участия в Зангезурских боях и что нападающим являются курдские банды» и вторая заметка, сообщение Армянского Телеграфного Агентства: «По дополнительным сведениям, в боях в Зангезур взяты 22 пулемета, уничтожено 2 орудья. Один из конных полков действовавший против Зангезура, совершенно уничтожен огнем. Среди убитых офицеров 1 русский и два турецких. Взято больше ста тысяч патронов. На позициях оставлено татарами свыше 500 трупов. По слоям пленных в бо-

ях участвовало от 8–10 тысяч регулярных войск: Закатальский, Ганджинский, Нухинский и Карабахский полки, кроме массы татарских бандь.

Во время панического бегства пришедших войск, Карабахская войска открыли по ним пулеметный огонь с тыла».

В газ. «Обновление» N 48 от 19 ноября читали заметку, в которой сообщается, что по полученным газетой из достоверных источников сведениям, сообщения армянских газет о просадающихся в Зангезуре боях между азербейджанскими войсками и армиями у о поражений, якобы понесенных первыми, не соответствуют действительности. В Зангезуре имела место лишь попытка армянских бандь поднять повстанческое движение, быстро подавленная отрядом азербейджанских вуйскь.

ВN 79 газ. «Слово» от 19 ноября помещен перепечатанный из газета «Арач»<sup>388</sup> текст двух телеграмм одинакового содержания, полученных 13 ноября правительствами Армений и Азербейджа—одну от главного британского комиссара Уордропа и другую от заместителя верховного союзного комисара полковника Рейа.

Содержание ихъ такога: «М–тру Председателю Хатисовы. Все полученным сведени показывают, что положение в Зангезурском пайоне крайне напряаенно, что нелзя дать поводь къ столкновениямь между Арменией и Азарбейджана. Признаю, что вопрось о разрешении судьба Зангезура является чрезвычайно спутнымь, и что стороны могут многое сказать вь пользу своихь правь, я хочу только указать, что всякое стремление разрешит етотъ вопрось силой совершенно нежелательно и возбудит сильное враждение. Относительно провомерное требований обеихь сторон какъ вь глазахъ всего мира вообще, такъ и мирной конференций в частности. Поетому я настоятельно советую вамь всякой ценой постараться предотвратить столкновения и всеми возможными мерам содействовать востоновлений спокойствия, и предупреждаю вась, что всякая попытка решит етотъ вопрось силою оружия послужит во вредь вашимь жизненнымь интересамь».

В N 49 газ. «Обновление» от 20 ноября помещено следующее сообщение информационного отдела азербейджанской миссли:

Информационный одель при дипломатическомь представительствь Азербейджанской республик вь Грузий сообщает, то м–тром председателемь Азербейджанской республик была послана на амя заместителя верховного союзного комисату полковника Рей телеграмма след. Содержания:

В ответь на ваши телеграммы от 14, 15 и 16 ноября сего года имею честь сообщить вамь нижеследующее: В зангезуре военный операций со стороны Азербейджанского правительского неть. Зангезур ест неотъемлемая часть Азербейджанской республик, и онь рассматривался всегда какъ таковая. Ето призють союзниками в лице английско-го командования, и сам верховный комисарь мирной конференций полковник Гскель,

<sup>388</sup> Խոսքը վերաբերում է ՀՅԴ «Հառաջ» լրագրին:



признавая наши неотъемлемые права на зангезурский уезд, в одном из пунктов соглашения по Нахиджеванскому яопросу требоваль от армянского правительства помоч Азебейджанской власти мирнымь путем ликвидировать повстенческое движение в Зангезурском уезде и тем самым заставить армянское население этого уезда подчиниться государственной власти Азебейджанской республики, и он разсматривался всегда как такаовая не только нами, но и союзниками в лице англисйского командования, и сам верховни

## 7-8

Коммисар мирной конференции полк. Гаскель, признавая наши неотъемлимые права на зангезурский уезд, в одном из пунктов соглашения по Нахичеванскому во-просу требовал от армянского правительства помоч азербейджанской власти мир-ным путем ликвидировать поветанческое движение в зангезурском уезд и тем самим заставить армянское население этого уезда подчиниться государственной власти Азербейджанской республики. По последним сведениям полученным азербейд-жанским правительством армянское правительство не только не исполнило этого своего обязательство перед полк. Гаскельем, но наоборот, послало в Зангезвурский уезд свои регулярные войска для поддержания и усиления поветанческого движе-ния. Этим самым азербеджанское правительство было вынуждено послать военную помощ карабахскому ген.-губернатору для восстановления парядка и воздействия на непокорное анархо-большевитское настроение банды армянских поветанцев. В Зангезуре азербейджанская власть имеет в виду прекратить дальнейшее разоре-ние мусульманских селений армянскими повестанцами, вернуть шестьдесять тысяч обездоленных мусульманами беженцев к их очагам, востоновить правопорядок. Во внимание вашей просьбы изложенной в ваших упомянутых телеграммах, мною предложено Карабахскому ген.-губернатору никаких боевых действий не предпри-нимать: токовы против повестанцев Зангезура фактически уже првкращены. Готов дватцатого ноября, в одиннатцать часов утра, встретиться с вами и Хатисовым, но это все же не должно остановить привзд делегатов Армении на конференций в Баку. Министр председатель Усуббеков.

В том же номере газеты «Обновление» читаем другое сообщение того же бюро: По поводу появляющихся в печати сообщений о событиях происходящие в Зангезу-ре, информационный отдел при дипломатическом представительстве азербейджанс-кой республики в Грузии сообщает, что, по полученным официальным сведениям в Зангезуре имело место лиш незначительное столкновение между азербейджанскими военными частями и вооруженными засевшими в одном из ущелий, бандами, при-чем последнии были без труда рассеяны и обезоружены. Слухи о происходящих тем кровопролитных боях не соответствует дествительности. В настоящее время в Зангезу-ре все спокойное.

В N 265 газ. «Борьба» от 20 ноября появилось официальное сообщение министерства иностранных дел Грузии, с приведением ряда документальных данных, направленное к освещению события в Зангезуре. Сообщение это следующее: События в Зангезуре находятся ныни на пути к желательному для всего населения Закавказия разрешению: обе стороны согласились приустановить военные действия, преступлено к переговорам. Ввиду этого Министерство Иностранных дел Грузии считает своевременным остановить население в известность о тех шагах, какие были предприняты ими в целях мирной ликвидации конфликта.

В двадцатых числах октября Министерство Иностранных дел Грузии было получено сообщением из Зангезура о событиях. Министерство Иностранных дел Грузии немедленно поручил находившемуся в тот момент в Тифлисе дипломатическому представителю Грузии в Азербейджан предпринять перед Азербейджанским правительством срочные шаги в целях предовращения конфликта.

22 октября Министерство Иностранных дел Грузии получило от дипломатического представителя Грузии при Азербейджанском Правительстве официальное подтверждение имевшихся уже сведений о готовившемся в Зангезурском у. Воруженном толкновении.

23 октября дипломатическому представителю Грузии в Боку было послана следующая телеграмма:

... Результаты столкновения будут губельны для всего Закавказия: в то время, когда наш вопрос стоит в порядке дня парижской конференции, это столкновение двух народов уничтожит в корни дело независимости.

По поручению министра предлагается вам принять всякии меры для избежания кровопролития. Мнение министра по этому вопросу передать министру председателю Джафарову.

Таварищ Министру Иностранных Дел Карцивадзе.

Аналогичная телеграмма было послана одновременно дипломатическому представителю в Эривани Махарадзе.

27 октября из Баку министерство иностранных дел получил сообщение о важности военного столкновения в Зангезуре.

Тотчас же по получении этого сообщения министр иностранных дел послал верховного британского комиссара, мистера Оливера Уордропа, которого он просил от своей стороны принять срочные меры к предотвращению возможного конфликта.

Такое же представление министром иностранных дел было сделано словесно при личном свидании, помощнику верховного комисара мирной конференции, и начальнику французской военной мисии, полк. Де— Нонанкуру.

4 декабря министр иностранных дел Грузии обратился к дипломатическим представителям Азербейджана и Армении со следующей нотой:

По имеющемуся у нас сведениям, в Зангезурском уезде нарастают события могущии повлеч за собой вооруженное столкновение между соседними республиками Арменией и Азербейджан.

9–10

В том же 265 номере «Борьба» помещено сообщение редакции: 19 ноября в Тифлис прибыли председатель Азербайджанской республики Хатисов.

В N 266 газ. «Борьба» от 21 ноября помещено следующее:

«Сообщаем текст телеграмм верховного британского комиссара и заместителя союзного верховного комиссара, посланная на имя азербайджанского сов. Министров»:

Министру президенту Усуббекову. Баку.

Все полученные сведения указывают на серьезное положение в Зангезурском уезде между армянами и азербайджанцами, которое может в любой момент дойти до столкновения. Сознвая, что вопрос о судьбе Зангезурского уезда полон затруднений и что много остается выяснить (договорить) с обеих сторон, я желаю указать, что прибегать к силе для разрешения этого вопроса совсем не желательно и в высшей степени повредить интересам обеих старон в общественном мнении вообще и в особенности на мирной конференции. Поэтому я горячо советую во что бы то ни стало избежать столкновений и принять всевозможные меры успокоить положение и предупреждаю вас серьезно, что употребление силы для решения этого вопроса только повредит вашим лучшим интересам. Точная копия этого сообщения послана министру – президенту Армении.

Уордроп, верховный британский комиссар в Закавказии.

Премьер – министру Усуббекову. Баку.

Номер 308. Несмотря на мои настойчивые советы, чтобы военные действия в Зангезуре немедленно првкратились, я уведомлен о том, что война продолжается. Я обеспокоен тем, что местные конфликты не должны далее затруднять решения мирной конференции по вопросу Заковказя в настоящее время. По этому и во имя мирной конференции, я уселенно советую вашему превосходительству и министру – презеденту Армении встретить меня в моем управлении в Тифлисе в одиннадцать часов утра двадцатого ноября для конференции, которая будет иметь целью мирное разрешение вопросов, кои вы теперь стараетесь разрешить кровопролитием, идя против желания мирной конференции пренебрегая мнением цивилизованного мира. В ожидании вашего ответа я просил делегатов Армении, которые были в дороге в Баку для совещания по этому вопросу с таким же представителями Азербайджана, остаться здесь. Жду немедленного ответа, чтобы я мог сообщить мирной конференции как вы к этому относитесь.

Рей – заместитель союзного верховного комиссара.

16 ноября 1919г. г. Тифлис.

Правительство Армений отправило полковнику Рею след. Телеграму:

«Правительство Армений, ознакомившись с телеграммой, посланной на имя министром председателем азербейджанского правительства 17 сего ноября, не может оставить последнюю без ответа в виду полного несоответствия указанных в ней положения действительности и документальным данным, имеющимся в распоряжении Пр-во Армений.

Первое: согласно последнего решевого английского командования в Закавказье, Зангезур сохранивший свой неприкосновенность до самого конца мировой войны, в борьбе с наступающими турками был оставлен в управление армянского Зангезурского национального совета в предвидении окончательного решения вопроса о Зангезуре мирной конференцией, от 1 июля N 13-121, генерал Кори еще раз подтверждает факт сосланного им предложения азербейджанскому правительству воздержаться от попыток распространения власти Азербейджана на Зангезур.

Второе: как вам известно, верховный союзный комиссар полковник Гаскел в последнем соглашении своем с правительством Азербейджана подтвердил существующий порядок управления Зангезура, оставив последний попрежнему в руках Зангезурского Национального Совета.

Третье: Никаких войск Армений в район Зангезура не посылало, находящийся в район войска-местных, организованных для самозащиты, единицы.

Четвертое: Никакие постановки выселения в Зангезур против азербейджанскому правительству не могли иметь место уже потому, что власть Азербейджана никогда на Зангезур не распространялась. Тем более непонятно и странно ссылка премьер Азербейджана на анархо-большевицкий выступления Зангезура, имея в виду местные условия, при которых идеи большевизма не только никогда в последнем не возникали, но и не могли возникнуть.

Пятое: Никаких насилий над мусульманами Зангезура армянами произведено не было, что легко проверить через находящихся в Зангезуре американских офицеров связи. Азербейджан же неоднократно делал попытки захвата Зангезура вооруженной силой, при чем факт последнего наступления не отрицается самим министром председателя Азербейджана.

Нимерь 4946, ноября девятнадцатого. За министра председателя Арапатьян в N84 газ. «Слово» от 25 ноября помещена следующая заметка:

«Как нам сообщает из достоверных источников, по заявлению заместителя Верховного Союзного комиссара полк. Рея, сделанному им министром-председателем Армений и Азербейджана, все распоряжения английского командования в отношении спорных вопросов сохраняют силу до тех пор, пока не последует особого постановления Верховного Комиссара об их отмене. Поэтому распоряжение бывшего командующего британскими войсками в Зангезуре генерал-майора Шательворта от 14 мая с. г., об оставлении управления Зангезуром в руках местного Армянского Национального Совета также теряет своей силы и вперед».

Въ N 54 газ. «Обновление» отъ 26 ноября напечатанъ текстъ:

1. Сообщение Азербайджанскаго правительства о событьяхъ въ Зангезурь.

2. Сообщение информационнаго отдела министерства иностранныхъ дель Арменій о томъ же и текстъ соглашения между Азербайджаномъ и Арменіей.

Текстъ сообщения азербайджанскаго правительства слѣдующій:

Въ последнее время въ обществѣ и въ печати муссируются разные слухи по поводу такъ называемыхъ событій, при чемъ некоторые органы печати, сообщенно газ. «Слово» издающееся въ Тифлиси, помещая сообщенія пфиціального армянскаго телеграфнаго агенства, изображаютъ эти событія въ формѣ какихъ то кровавыхъ и непрерывныхъ боевъ между регулярными войсками, со проваждающихся массой убитыхъ и раненыхъ и т. д.

Во избежаніе всякихъ должныхъ представленій, правительство считаетъ не обходимымъ сообщить слѣдующее:

Въ теченіе почти цѣлаго года въ части зангезурскаго уезда действовали различныя вооруженныя банды изъ местныхъ бильшевикстски настроенныхъ армянъ. Банды эти не признавая власти азербайджанскаго правительства, нападали на мусульманскія селенія, кототое вынуждено было покидать места и бродить въ поискахъ пристанища по соседнимъ уездамъ. Свыше 60.000 мусульманскихъ беженцевъ продолжаютъ и нынѣ еще остаться подъ открытымъ небомъ, испытывая все ужасы голода и холода. въ теченіе шести месяцевъ администрація Карабаха прминали меры къ мирной ликвидаціи этой анархіи, были сделаны соответствующія обращенія къ населенію съ указаніемъ необходимости выдачи главарей, не поддаваться приступной агитаціи, при чемъ населенію гарантировалась на оснаваніи законовъ республики личная безапасность.

Однако, все мирныя способы воздействій не могли повліять на главаремъ этихъ бандъ, которые по прежнему продолжали свое приступное дело, получая извне помощь деньгами и оружіемъ. Затемъ были получены свѣденія, что правительствомъ Арменій посилаются въ зангезурскій уездъ регулярныя войска и боевые припасы. Это вынудило азербайджанскаго правительства послать въ распоряженіе генерал-губ. Карабаха небольшой войска отрядъ для возстановленія порядка и защиты мирнаго населенія, также для воздействия на бильшевикстскія банды армянъ, темъ болѣе, что предствлялось крайне необходимымъ какъ можно скорѣе прекратитъ все продолжающееся разореніе мусульманскихъ селеній, а также вернуть беженцевъ на свои места.

Во время продвигенія посланной въ Зангезурь для возстановленія порядка, воинской части, передъ вступленіемъ ея въ Зангезурское ущелье, на плато передъ селеніемъ Дыгъ были замечены укрепленныя позиціи, занятыя вооруженными нудыми, начавшими внезапно обстрель шоссе, по которому двигались войска. На требованіе дать свободный проходъ отряду въ Герюсы, засевшія на позиціяхъ

бандыответили ружейнымь огнемь, при чемь одинь изь посланныхь съ указаннымь требованиемь солдатъ былъ ранень.

Одновременно съ этимь было получено донесение, со стороны Ханазака и Хознава-ра дьяжутся дисциплинированныя армянския части съ артиллерей въ обходь нашего отряда. Эти винудило начальника отряда поставить въ селе Абалляръ заслон, который бвлъ обстрелянь артиллерийскимь огнемь противника, на что, съ своей стороны, онь отве-тилъ темь же и заставилъ армянский отрядъ отступить отъ сел. Хознаварь, при чемь отъ перестрелкимь этоь селений возникъ пожаръ. Также былъ обстрелянь неприательской артиллерией нашъ отрядъ въ Забухъ и были сделаны попытки къ наступление, но это движение было остановлено нашимь артиллерийскимь огнемь.

Въ происшедшихь столкновенияхь нащъ отрядъ потеряль въ сел. Хознаварь 1 уби-тымь и 4 ранеными, а въ Ханазакъ убитыми и ранеными всего 10 человекъ. Армянскими частями на полье стажения оставлено у сел. Хознава и Кечаль–Дага 40 труповъ и передъ Дыгомь 30 труповъ. Затемь въ 8 ноября с. Г. По настоящее время никакихь боевыхь действий не происходило.

Токовы действительные факты, происшедшие въ Зангезуре.

Изъ этихь фактовъ ясно, насколько тенденциозны и не соответсвуютъ действительности все эти сообщения враждебной азербайджанской гасударственности прессы, которая старается представить зангезурския события, какъ какой то рядъ непрерывныхь боевь, цопровождающихся взятемь пленныхь захватомь оружий, боевого снаряжения и продовольственныхь припасов.

Тексть сообщения информационного бюро при министерстве инастранныхь дель Армений следующий:

Информационный отделъ министерства инастранныхь дель республики Армений въ ответь на заявление информационного отдела при дипломатическимь представителъ Азербайджанской республики въ Грузии о томь, что въ Зангезуре имело место незначительное столкновение между азербайджанскими военными частями и вооруженными бандами, засевшими въ ущель, причемь последняя были безъ труда рассеяны въ обезоружены настоящимь, на основании точныхь сведений и документальныхь данныхь, сообщаетъ слкедующее:

«Непосредственно за возстанаиемь мусулманского насилениа въ Шаруреи Нахичеван, азербейджанское правительстого лихарадочно готовилось къ занятию вооруженною силой района Зангезура. Все сведения того веремени, поступающия на им правительстжа Армений, указывають на усиленную концентрацию азербейджанскихь регунярныхь вуйскъ на границь указанного и близъ лежащихь смежныхь районовь. въ двадцатыхь числяхь минувшего сентября зербейджанскими войсками съ участиемь курдскихь бандъ было предпринято наступление на Зангезуръ со стороны джебраильского уезда отъ долины реки Аракса въ районъ армянскихь селений Карабахъ, Агаракъ, Егварть и Ужанись. Бой носили ожесточенныхь характерь. въ результатеазербейджанския войска были разбиты и

отогнаны армянским насилением Зангезура. Найденные на убитых документы свидетельствовали о намерении азербейджанского правительства подчинить силой оружия весь зангезурский вайонь и соединиться с повстанцами мусульманами Нахичевана и Шарура. Все последующие сведения говорят о продолжающейся усиленной концентрации азербейджанских войск на границы Армении. В двадцатых числах октября в распоряжение карабахского генерал-губернатора доктора Султанова азербейджанским правительством было послано до 7.000 солдат разных родов оружия под командой генерала Шихлинского для соединения с ранее находящимся в распоряжении доктора Султанова регулярными частями и курдскими бандами.

В начале текущего ноября в селении Дигь появился азербейджанский офицер, созвал старшин окрестных сел и предложил им подчиниться Азербейджану, угрожая в противном случае наступлением азербейджанских войск. Не получив ответа, через несколько дней указанные части были вновь двинуты на Зангезурь в направлении селений Забухь, Дигь, Хознаварь, Гарендзорь. Одновременно с восточными татарами Нахичевании и Шарура было предпринято наступление в даралагязском районе с целью окружения Зангезура и перерыва связи между последним и Даралагязом. После четырехдневных непрерывных боев войска Азербейджана были разбиты большими для них потерями, отброшенные со всех позиций, отступили в Карабах. Армянским насилением Зангезура захвачено до ста пятидесяти пленных, одно орудие, двадцать пулеметов и военные припасы. В тот же конный полк Азербейджана, действующий против Гарензора, почти целиком уничтожен огнем зангезурцев. Против Зангезура действовали закавказский, текинский, карабахский и дживанширский пограничные полки. Во время боев в числе других убит офицер Козиервь, у которого найдены подручными указаниями движения азербейджанских войск на Зангезурь. Ототив зангезурцев действовали также хаубичная батарея. Найденные на убитых пленных документы вновь определенно утверждают приведенное выше намерение азербейджанского правительства захватить силой оружия как Зангезурь, так и шаруро-нахичеванский вайонь. Из указанного ясно, что сообщены азербейджанского информационного отдела Грузии о зангезурских событиях несоответствуют действительной картине происшедших.

Ноября, двадцать второго».

Текст соглашения между Азербейджаном и Арменией следующий:

Настоящим соглашением, заключенным в Тифлисе 23 ноября.

1919 г. между председателем правительства Армении Хатисяном, представляющим правительство Армении, и председателем правительства Азербейджана Усуббековым, представляющим правительство Азербейджана постановлено нижеследующее:

Правительства Армении и Азербейджана обяжаются прекратить происходящая ныне столкновения и не прибегать вновь къ силе оружия.

Правительства Армении и Азербейджана соглаются принять действительныя мери для исправления и открывия дорогъ, ведущихъ въ Зангезур для ширного движения по нимъ.

Правительства Армении и Азербейджана обяжутся разрешить все спорные вопросы, включая вопросъ о границахъ, путемъ мирныхъ соглашений, впредь до пешений, имеющихъ быть принятыми конференцией, предусмотрпенной следующей статьей. въ случае если не представится возможнымъ досичь мирного соглашения, оба правительства обяжутся избрать нейтральное ницо въ качестве третейского судьи, решения которого они соглашаются признавать обязательнымъ для себя. Въ настоящее время таковымъ нейтральнымъ лицомъ признается полк. Джемсъ С. Рея армии Соединенныхъ Штатов.

## 15-16

4. Правительства Армении и Азербейджана обяжутся немедленно назначить делегатовъ въ разнеь числа на конференцию, имеющую состояться въ Баку въ среду 20 ноября съ перенесениемъ таковой въ Тифлисъ 4 декабря, где заседания конференции будутъ продолжаться, если по взаимному соглашению не будетъ признано нужнымъ перенести ихъ въ другое место. Конференция эта будетъ обсуждать все вопросы, являющиеся причиной споровъ или трений между обоими правительствами, и будетъ иметь полномочие разрешать таковые путемъ соглашения или арбитража.

5. Настоящее соглашение считается действительнымъ со дня подписания и приобретаетъ постоянную силу по ратификций парламентами обойхъ государства председатели правительства Армении и Азербейджана настоящимъ обязываютъ свои правительства добросовестно поддерживать и выполнять все постановлени вышеприведенного соглашения, въ свидетельство чего они укрепляютъ обоими подписями настоящее соглашение, с оставленное въ Тифлисъ 23 ноября 1919 г., въ трехъ экземплярахъ на английскомъ и еусскомъ языкахъ, причеь по одному экземплярахъ на каждомъ языке вручается предсавителю союзного верховного комиссара и правительстве Армении и Азербейджана.

Ал. Хатисовъ. Председатель правительства Армении. Н. Усуббековъ, председатель правительства Азербейджана. Подписано въ присутствии: свидетели: Гегечкори, министр инастранныхъ дель Грузии. Д. С. Рея, пол.ген. Штаба, армии Соединенныхъ Штатовъ, заместитель союз. Верх. Ком.

Кроме того въ томъ же номере газ. «Обновление» помешена телеграмма дипломатического Азербейджана, республики въ Армении Ахвердова въ которой онъ отрицаетъ сведения газете о томъ, что въ беседе съ Хатисовымъ онъ высказался въ томъ духе, что въ Зангезуре действуют курдския банбды. въ телеграмме сказано, что Ахведовъ имелъ



Йищъ частный разговоръ съ генеральнымъ секретаремъ Тер-Акопяномъ, при чѣмъ, судя по картѣ, высказана была предложенье, что имѣть место столкновение курдовъ и армянъ. Далѣе въ телеграммѣ сказано: «официальныхъ свѣдѣній къ этому времени миссія не имела. Выраженіе «курдскія банды» не только не было употреблено мною, но и не могла имѣть место».

Въ N. 253 газ. «Ашхатаворъ» отъ 28 ноября помещена беседа съ министромъ—председателемъ Армении А. И. Хатисовымъ, въ которой онъ по Зангезурскому вопросу высказался въ слѣдующемъ духѣ: Зангезуръ естъ неотемленная часть Армении. Мы могли бы подчинить его силой оружія, но не сделали этого изъ нежеланія противоречить ему силой оружія, но не сделали этого про-тиворечить союзникамъ. Азербейджанъ же союзникамъ не подчиняется и открылъ военныя дѣйствія противъ Зангезура. Пави-тельство Армении решило начать войну съ Азербейджаномъ и объявило мобилизацію, которая прихадила успешно. Нежеланіе же зангезура подчиняться Азербейджану выразило въ сопротивленіи, оказанномъ зангезурцамъ азербейджанскимъ войскамъ.

Въ N. 39 «Возрожденіе» отъ 6 декабря напечатано слѣдующее:

Вр. Карабахскій генераль-губернаторъ Х. Б. Султановъ телеграфируетъ министру председателю Азербейджана изъ Шуши слѣдующее:

«После мирнаго соглашенія съ армянскимъ правительствомъ, казалось бы не должно было быть въ зангезурскомъ уезде никакихъ враждебныхъ выступленій сторонъ. Между тѣмъ, 23 ноября въ этомъ уездѣ, въ Охчинскомъ ущелии большими армянскими регулярными силами совершенно разграблено шесть мусульманскихъ селеній: Охчи, Пирдаву-Дань, Щабадин, Атгизь, Аджимъи Кизила. Большинство жителей безпощадно перебито. После этого, какъ заявляютъ прѣбывшіе представители охчинскаго ущелья, те же армяне, не считаясь ни съ чемъ и продолжая дальнѣйшія выступленія въ названномъ ущельѣ, осодили двадцати мусульманскихъ селеній, лишенныхъ всякой помощи и обреченныхъ на полную гибель. Все мусульманское населеніе глубоко возмущено этимъ дѣйствіемъ и требуетъ экстренныхъ меръ къ прекращенію активныхъ дѣйствій армянъ и проиствовленію систематическаго истребленія ими мусульманъ. Прошу срочно распоряженія о проиствовленіи дальнѣйшихъ агрессивныхъ выступленій армянъ въ Зангезурскомъ ущелии».

Въ томъ же номерѣ газ. «Возрожденіе» читаемъ:

Въ виду полученія свѣдѣній о все проидолжающихся разгромахъ мусульманскихъ селеній въ Зангезурѣ, министромъ инастранныхъ делъ Азербейджана была отправлена 29 ноября министру инастранныхъ делъ Армении нота слѣдующаго содер-жанія:

«23 ноября состоялось между председателями правительствъ Армении и Азербейджана соглашеніе о немедленномъ прекращеніи вооруженныхъ столкновений, о передаче всехъ спорныхъ вопросовъ на разрѣшеніе созываемой армяно—азербейджанской конференціи. Между тѣмъ сейчасъ получены сообщенія, что войсками вашего правительствѣ разгромлены: въ зангезурскомъ уездѣ селенія Очунирь, Давидань, Ак-

тизь, Шабандань, Анишу и Кушнейларь. Мась убитыхь. Селение же Килитахь и все окрастные съ нимь мусульманския селены всякого сообщения и осаждень армянами, и въ даралагязскомь уезде селения Коча-бекь-Кисирь-Марь, Каялы, Лейликачань, Баало, Гешкенды Идтиль, причемь убито въ этихь селенияхь 300 мужщинь и взяли пленъ 30 женщинь. При этомь, по имеющимся сведениямь, въ указанныхь направленияхь продлажается посылка регулярныхь войскь. Въ виду изложенного и во избежание о могущихь быть осложнении прошу принять меры немедленному прокращению посылки войскь и пазрушений мусульманское селений».

## 17-18

На эту ноту министр инастранных дель Армении прислалъ ответь:

«Въ ответь на телеграмму вашу имю честь сообщить вамь сведующее: въ средних числахь ноября колонна Халиль-бея, при участие некоторых мусульманскихь сель Даралагеца, повела наступление на армянския селения Султанабекь, Пашалуи и далие съ целью занятия всего даралагезского района и отарвать последний отъ Зангезура. Указанноен наступление, явищеся выполнениемь общего плана занятия азербейджанскими регул-ярными часями армянском Зангезура, вынудило предпринять хообходимые шаги къ ликвидазии наступление и занять наиболееугражающия безопасности уезда места. Занятие это никакими убиствами и грабежами надь мурнымь мусульманскимь насилениемь не сопровождалось, и въ настоящеее время все военныя действия въ даралагезского райоане приостановлены. ПравительствоАрмении не имееть никакихь сведение о происшествияхь, указыаемыхь вами, въ районе Зангезура. Также никакихь войскь не послано. Перечисленные вами мусульманския деревни Зангезура на военных картахь не обозначены. Провительствомь приняты все меры къ прекращению повсеместно какихь бы то ни было столкновений, и, по полученнымь сведениямь, за последние дни въ зангсзурскомь районе также царить полное спокойствие. Прошу бась принять уверения, что правительствоАрмении всегда готово точно исполнять принятыя на себя обязетельства.

Министрь инастранных дель Армении Хатисовь».

Въ томь же номере газ. «Возраждение» напечатано:

Информационный отдель при дипломатической Миссии Армении въ Баку объявляеть:

Въ газ. «Азербейджань» отъ 30 ноября, за Ном. 260, въ заметке «Въ Зангезур сообщалось о военных действияхь армянь, якобы совершенныхь после подписания соглашения въ гор. Тифлисъ 24-го ноября, 1919 года представителями Армении и Азербейджана. Информационный отдель дипломатической миссии республики Армении и Азербейджань считаютъ необходимымь, въ целяхь возстановления истены, сообщаеть следдующее: по имеющимся въ миссии

сведениям подобных события в Зангезур в ноябрь не было, но если бы даже они были, то и само сообщение относить их к времени 23 ноября, до подписания соглашения в Тифлисе, когда из Зангезура об этом ничто не могли знать и могли продолжаться военные действия, как отголоски вступления на Дыге, начатого не зангезурцами. Не было бы ничего удивительного даже и в том случае, если бы военные действия в Зангезуре происходили бы еще и в течение нескольких дней после подписания соглашения, пока до Зангезура дошло бы распоряжение правительства республики Армении о состоявшемся соглашении и прекращении военных действий.

Из полученное сегодня в миссии телеграммы главы армянского правительства А. И. Хатисова ответ на сообщение об этих событиях в Зангезуре видно, что распоряжение правительства Армении о прекращении всяких военных действий уже дошло до мест назначения и повсюду в Зангезуре и Шаруро–Даралагеазь оно принято к неуклонному руководству. В другой телеграмме на имя председателя совета министров Азербейджанской республики, А. И. Хатисов заверяет Усуббекова в искреннем и неуклонном решении правительства республики Армении твердо хранить состоявшееся в Тифлисе соглашение и просить лишь отсрочить на несколько дней начало–созыва конференции в Баку, т. к. А. И. Хатисов вернулся в Эривань лишь 1 декабря. Сейчас же после его доклада правительству, делегаты введут, снабженные соответствующими полномочиями и инструкциями. 10 дне приезда делегатов информационный отдел имеет ответить своевременно.

В 45 той же газеты «Возрождение» от 14 декабря читаем:

10 декабря министерством иностранных дел Азербейджана была послана министру иностранных дел Армении телеграмма с извещением, что 1 декабря армянские регулярные части повели наступление на находившийся целый год в осажденном положении селения кичинского ущелья и разгромили их.

Заявляя ергичный протест против нарушения состоявшегося 23 ноября между Арменией и Азербейджаном соглашения, М. Ю. Джафаров просит Армянское правительство принять меры в полном прекращении всяких военных операций, в противном случае, говорить о том, Азербейджанское правительство слагает с себя ответственность за могущие произойти последствия».

В том же номере газеты помещена следующая заметка:

14 декабря в Баку открылась армяно–азербейджанская конференция. Представителями Армении на конференции являются член парламента Мартирос Арутюнян, Жаган Папазян и дипломатический представитель республики Армения в Азербейджане Т. А. Бекзадян.

Представителями Азербейджана на конференцию назначены: Фатали–Хан–Уойский, Мамед бек Гяджинский и Мамед–Ряза бек Векилов.

19–20

Въ газ. N. 101 «Слово» отъ 16 декабря напечатано сообщение армянского телеграфного агенства.

Эривань, 13 декабря. къ армяно–азербейджанскимъ отношениямъ.

Телеграма полк. Гаскела.

Получено телеграмма отъ полковника Гаскела на имя премьера следушаго содержания: Получена отъ следующая телеграмма отъ генераль–губернатора Султанова: «Сегодня, 13 декабря, зангезурский уездный начальник доносить, армянския регулярныя войсковыя части съ гвмя пушками и шести пулиметами птибыли и напали на слегующия селения Кичинского ущелья, которыя целыи годъ находилось въ осадномъ положений–Шахартыхъ–20 дымов, Очаги–60 дымовъ, Дурсунлу–50 дымов, Кирть–30 дымов, Качали–30 дымов и Чишь–Самалу–160 дымовъ».

Население, охваченное паникой, бежало, оставив имучество и дома. Села была разгромлены и сожены. Мирное население не можетъ противостоять продвижению регулярныхъ частей, имеющихъ артилерю и пулиметы. Повидиму армяне Зангезура, освеломленные о перемирия и удеветворенные темъ, что азербейджанское провительство не предприметьвраждебныхъ меръ, нарушающихъ перемирие, пользуются обстоятельствомъ и убиваютъ беззашитныхъ жителей. Очевидно, мчто оссрочка дня созыва конференсий отвечаетъ также намеренью армянъ Зангезура, которые должны быть постоянномъ связи съ армянскимъ провительствомъ, получая оттуда пегулярый части и военныя снаряжения.

Очень необходимо предпринять военныя действия для прекращения движение наглыхъ армянскихъ регулярныхъ частей или же переселить вес мусулманское население Зангезура безапасно место. Динисение жителей разоренныхъ сель мною послоню газете «Азербейджанъ». Объ этомъ телеграфировала председателю совета министровъ и председателю Карабахского месного общества–Баграмъ–беку Ахундову. 26–го ноября разрушены селения район Охчи, которыя жили мирно съ армянами до того, какъ мужское население, способное носить оружие, было созвани въ одинъ домъ, взирванный зарание подложеннымъ динамитомъ. А старики, дети и женщины были убиты въ мечетье, где они были собраны. Не имея подь моймъ распоряжениемъ регулярныхъ частей съ артилерией, я не не имею возможности защищать мусулмань. Зангезуръ сильно охваченныхъ паникой.

Если эти обвинения оправдаются после расследония, то они понесутъ очень серьезны ударъ будщность Армений. въ томъ случае въ Зангезуръ посланы какие–либо военныя силы, то настивайте на обратный ихъ и подробно сообщите мне.

**Ответъ А. И. Хатисова**

«Въответъ на вашу телеграмму относительно въ зангезурскомъ и нахичеванскомъ районахъ, имею честь сообщить слердующей:

Первое, въ указанный въ телеграмме районах армянское правительство никогда не имело регулярных войсковых частей и таковых не посылает.

Второе. О каких-либо активных действиях со стороны армян после соглашения. Армянское правительство официально проверенных сведений не имеет. Токовые затребованы и в случае подтверждения их виновные понесут наказание.

Третье, эти изолированные районы вполне естественно организовали уже давно местные силы для отражения неоднократных и непрекращающихся подний мусульманских вооруженных банд.

Четвертое, указание Султанова на нападение армяна является отголоском отражения армянами активных наступлений татарских войск двигающихся на Сисиань и Даралагыз со стороны Нахичевани, о которых в свое время были убедомлены полковник Рей.

Пятое, я должен указать на ставшее обычным явлением со стороны татар замалчивать свой активные шаги, а на нападения на татарское население поднимит шум и протестовать в случае не удачи этих активных действий и на неправильное толкование вполне естественных мер, принимаемых армянским населением для отражения, в результате чего могут, конечно, быть и разрушения и убийства.

Шестое, нельзя забывать общей тенденций Азербейджана подчинить себе силой оружия районы Шарура, Нахичевани и Зангезурь. Под видом народных волнений проводится строго продуманные политические программы.

Седмой, армянское правительство искренно желает и пренимает все меры к полному соблюдению соглашения 23 ноября.

Восьмое, одновременно армянское правительство убеждено, что эти столкновения прекратятся лишь тогда, когда осуществится ваше решение относительно введения амерканская генераль-губернаторства в Нахичевани и азербейджанское правительство отрешится от решения силое оружия присоединить к своей территории армянския Зангезурь».

## 21-22

Пресса неоднократно высказывалась по Зангезурскому вопросу.

В газете «Обновление» /грузинск. Нац.-дем./ появились по этому поводу статьи следующего содержания:

В № 47 от 13 ноября газета высказывалась в следующей дух:

Отношения между Армение и Азербейджаном поражает своей загадочностью: однако источники обеих республик сообщали о приготовлениях к армяно-азербейджанской конференций, как вдруг появилось о начитий азербейджанскими войсками наступательных действий, что явствует из ноты министра иностранных дел Армений правительству Азербейджана по поводу наступления войск генерала Али Ага Шихлинского.

Дальше получались сведения о том, что войска Шихлинского разбиты и в беспорядке отступили, оставив на месте боя громадное количество биевых оринадлежностей. Дальше газета говорить, что независимо от того, какая сторона выйдет победительнице, сам конфликт от этого не лишится своего погубного значения для дальнейшего направления вопроса о признаний независимости закавказких госудаественных образований. Кто виноват в последнем кровавом инциденте и что побудило азербайджанские власти тинуть войска в Армению газета может установить, но полагает, что представители пбеих республик должны были быть сугубо осторожны и обнажать меч разве лишь по исчерпавших мирных способов уругулирования спорных вопросов.

Газета говарит, что последний факт указывать, что не быть миру и спокойствию в Закавказье, пока Грузия, Армения и Азербайджан не столкнутся и сами не созидить условия для нормальных взаимоотношений между государствами, причём первую очередь должен быть разрешен вопрос о территориальном разграничений.

В № 49 от 20 ноября газета по тому же вопросу высказывается в следующем смысле: Зангезурь и этнографически, и экономически, и по своему геограческому положению примыкает к Азербайджану, составляя его неотъемленную собственность.

Еще в конце прошлого и в начале нынешнего года вооруженная армянская банда во главе с Андраником, для создания Великой Армении. Со соглашением армянским насилением, подвергли пазгому 120 селений, 500 разоренных жителей которых остолись без крова и принуждены были покинуть свои места.

Теперь, когда в Арагатской Республике мусульманское насиление частью вырезано, частью бежало из его пределов, дашнакцаканы нашли подходящий для продолжения осуществления своей мечты о Великой Армении с армянским насилением в Зангезурь.

С этой целью из Армении в Зангезурь направлялось масса оружия и агенты с назначением поднять возстание. Получив эти сведения, азербайджанское правительство не могло остаться безучастным и приняло меры представращению могущих быть в Зангезурь безчинств.

Общественное мнение Азербайджана требует от правительства не только защиты жизни и имущества оставшейся Зангезурь мусульманского населения и возвращения на места изгнанных из пределов Зангезура беженцев мусульман.

По мнению газеты, правительство Азербайджанской республики без сомнения обладает достаточными средствами, нужными для восстановления порядка в своем государстве, причём оринятые и примаемые им меры не могут смущать мирное насиление, которому гарантирована полная неприкосновенность.

В № 50 от ноября «Обновление» высказывается так:

Кровавое столкновение в Зангезуре было неизбежно. Представители Армении и Азербайджана, зная об этом, не предприняли должных шагов к предотвращению.

щению военных действий, предоставив события развиваться инерцией. Не помогло также вмешательство министра иностранных дел Грузии, предупреждавшего о последствиях, которыми грозило могущей произойти столкновение.

Все это убеждает газету, что поднимавшиеся меры, до последнего времени предпринимаемые представителями закавказских республик, не гарантируют от опасности подобных столкновений впереди. Единственная мера – соглашения между этими республиками по всем спорным пунктам территориально разграничения.

В № 52 от 23 ноября, газета касаясь вопроса приезда в Тифлиси премьеров Армении и Азербайджана для ведения совещания по установлению нормальных взаимоотношений говорит, что по видимому на этих совещаниях будут присутствовать представители союзников.

Это присутствие вызвано обращением к министру иностранных дел Грузии и тем, что заинтересованные стороны до сих пор не могли прийти к соглашению по ряду первоочередных вопросов.

Газета говорит, что не так важно если в силу обстоятельств государства Закавказья принуждены обращаться к третьей силе. Лишь бы цели, преследуемые новыми государственными образованиями для достижения столь желательного мира и добрососедских отношений между собой оправдались целиком.

Газета выражает пожелание, чтобы на предстоящих совещаниях были бы разработаны общий согласованный план для дальнейшего направления всех кардинальных вопросов и чтобы ответственные руководители народов Грузии, Армении и Азербайджан пришли к убеждению, что при существующих условиях исключается возможность благоприятного направления вопроса самостоятельности этих государств.

## 23–24

В № 53 от 5 ноября высказываясь по поводу соглашения, состоявшегося между Азербайджаном и Арменией 29 ноября говорит о тяжелых последствиях, которые могут иметь враждебные действия между Закавказскими республиками и выражает уверенность, что во вопросы между Закавказскими республиками могут быть решены мирным путем, если будет наличие уважения к правам сосчитать его культурно-исторически данных и пр.

Газета приветствует достигнутое армяно-азербайджанское соглашение.

Газ. «Борьба» /Грузинск. Соц. Дем./ также указала по поводу Закавказских событий.

В № 266 от 21 ноября газета высказывается в следующем духе:

Если бы события в Закавказье разрослись в войну – это явилось бы несчастием для всех трех республик Закавказья на руку врагам их, старающимся наложить иго рабства на народы Закавказья.

Газета говорить, что теперь не время искать виновников событий в Зангезурь. Нужно продовратить конфликт во что бы не стало. Судьба Зангезурья зависть от насъ самых и отъ того, что бы создать условия мирного сожительства другъ съ другомъ. Отсутствие этого сожительства между Арменией и Азербейджаномъ, непризнание какой либо из Закавказскихъ республикъ, погубить дело и прочихъ республикъ Закавказья.

Поетому естественно мирное вмешательство Грузий в армяно-азербейджанский конфликт, вмешательство, кь общему счастью не оказавшееся безпиднимъ. Главы правительстве Азербейджана и Армений прибыли в Тифлисъ, что бы искать мирное способы разрешения конфликта.

Газета выражает уверенность, что обе староны сумеють подчинить свой домогательства властному велению общихъ всемъ народамъ Закавказия интересовъ мира и согласия и что путемъ взаимныхъ уступокъ будетъ найдень путь исключяющий всякую угрозу миру и свободу народовъ Закавказья.

Въ N. 270 отъ 26 ноября газета высказываясь по вопросу о соглашенияхъ, ключенномъ между Арменией и Азербейджаномъ говорит, что это соглашение нужно считать историческимъ, кладующимъ грань между двумя народами армяни-тататскихъ отношений.

Газета высказываетъ глубокою радость по поводу заключенного соглашения, хотя признаеть, что это пока юридическия обязательства, на пути претворния койхъ в жизнь могутъ встретиться немалыя препятствия. Указывая на правительства Грузий в деле заключения соглашения, газета говарить, что эта роль имъ еще не окончена.

Газ. «Ашхатанк» в N. 250 отъ ноября даеть переводъ изъ Грузинскигаз. «Сахалхо Сакмэ» / грузинск. Соц. Федер./ . Въ этой статье газета «Сахалхо Сакмэ», касаясь армяно-азербейджанскихъ переговоровъ указываетъ на традиционную примерущую поль, которую играетъ Грузия в Закавказье.

Зангезурския события грозили вайной и бедствиями всему Закавказью и поетому попытка правительстве Азербейджана и Армений прийти кь соглашеинию путемъ мирныхъ переговоровъ вызываетъ радость в старонникахъ солидарность Закавказскихъ народовъ. Теперь, когда судьба Закавказия релается, очень важно, чтобы Закавказския республики мирно разрешали возникновение между ними спори.

Опаасность, грозившую отъ столкновения, прежде всего почувствовала Грузия, которая взяла на себя поль посредника и в столице которой было достигнуто саглашение

Газета выразеть пожелание обь установление добрососедскихъ отношений между правительстве Арменией и Азербейджаномъ.

Та же газета «Ашхатаворъ» в N. 251 отъ 236 ноября даеть переводъ другой статьи изъ газ. «СахалхоСакме» касающейс зангезурскихъ столкновений. Газета пишеть, что столкновение между Азербейджаномъ и Армений можетъ вызвать вмешательство третьей силы. Поетому недопистимо, чтобы благодаря неправильной политике



армяно-азербайджанских руководителей, независимость закавказских республик была бы уничтожена.

Грузия вступила в соглашение с своими соседями для разрешения спорных вопросов путем соглашения и арбитража, но руководители Азербейджана и Армений пока не сумели прийти к соглашению и поэтому сама демократия этих двух республик должна приостановить кровопролитие.

Грузия должна употребить весь свой авторитет для приостановки этого кровопролития и добиться заключения союза между двумя республиками Закавказья.

Газ. «Слово» /армяно-русская/ высказываясь по Зангезурскому вопросу, говорить в N. 76 от 15 ноября нгезура возмуждают тревогу и опасения. Азербейджанское правительствя держится в Карабахском и Зангезурскомь вопросах явно агрессивной политики. Азербейджань, вопреки выраженнымь условиямь Карабахского соглашения пазсматеиваеть это соглашение не какь временную меру, а какь окончательное разрешение вопроса. По отношению кь Зангезура Азербейджанское провительство явно принимает мер чтобы привести его вооруженнымь насилиемь вь современны положение Карабаха. Азербейджанцыангезура войска, а ныне получено сообщение, что 7-ой день идеть кровопролитная борьба Зангезура и азербейджанскими войсками. Газета наход ить, что это приведеть лишь кь излишнему кровопролитию, ибо чею бы сторону не сниснилось боевое счастье.

## 25-26

**Зангезуртский вопрось силой оружия политически всеравно не будеть разрешень вь настоящее время. Азербейджанское провительство еще хедавно выразило согласие** харазрешение спорных сь Арменией вопросы путемь конференций и даже назначило местомь конференций Баку, но конференция невозможна, если наряду сь хей будеть присходить воорухенная завование Зангезура. Поетому Зангезурь должень быть, по мнению газеты, оставлень вь покое Султановямь и его войсками, такь какь сумели благополучено просуществовать два года. Зангезурь можеть и далее управляться силамь армянскимь советомь до разрешения спорных между Арменией и Азербейджаномь территориальбыхь вопросовь на конференций вь Баку или, вь крайнемь случае, на всемирной конференций. Вообще газета полагаеть, что нужно раз сегдя отказаться оть разрешения межнациональных распрей силой оружия, что необходимо для бйага всего Закавказья и для счастья отдельныхь его народовь.

Вь N. оть 22 ноября газета говарит опреркащений кровопролитныхь событий на армяно-азербайджанскомь пограничвь и указываеть на ту роль, которую сыграло вь этом деле миралюбие армянского правительствя, вмешательство союзныхь представителей и примерительное, благородное вмешательство Грузий.

Далее газета съ прискорбиемъ отмечареть непримеримую позицию Азербайджанского правительства, какъ ето явтуеть изъ телеграммы премьера Усуббекова. Речъ отъ 17 ноября и прибавляеть, что только отказъ отъ неправильной лзбранныхъ пытей узкаго национализма и территориальной жадности дасть возможность установить добрососедския отношения.

Въ и 16 отъ 26 ноября газета приветствуетъ состоявшесся между Азербайджаномъ и Арменией соглашение о созывъ армяно-азербайджанской конференций. Ето соглашение, по мненю газеты, должно положить начало новой ерь вотношеняхъ Закавказкихъ народовъ и ихъ государственныхъ оброзование.

Соглашение ето дасть также возможность крестьянству спокойно вернуть къ своимъ обычнымъ занятиямъ.

Газета уверена, что мирное настроение, создавшесся въ Тифлисе, передастся и прочимъ правящимъ Азербайджана, а черезъ нихъ и народнымъ массамъ, склооннымъ мирному отказъ отъ посползновений на интриги, инценировку вооруженныхъ выступлений и нападений дасть возможность армянскому и ззербайджанкомы народамъ заключить миръ и приступить созидательной работъ.

Газета «Азербайджанъ» (Азербайджанск.Офизюз.) въ N 251 отъ 20 ноября высказываясь по поводу Зангезурскпго вопроса заявляеть, что вопросъ о Зангезуре является вопросомъ внутреннего переустройства Азербайджана.

События въ Зангезуре, вызванныя действиями Зангезурского Национально-го Совета протекавшими при ближайшемъ участий Ериванского правительства, по словамъ газеты, противоречили миролюбвымъ намерениямъ Азербайджанского провительства.

Провительства Азербайджана, ответственно за благопалучие своего насилениа, не могло остаться безучастнымъ къ угнездившейся въ республике инастранной вооруженной силь.

Провительства Азербайджана согласилось приостановить свой действия лишъ ввиду своихъ миролюбивныхъ стремлений къ тому, что Провительства Армений подчеркнуло важность Зангезурского гля будущихъ армяно— азербайджанскихъ отношений.

«Но, продалжаеть газета, Провительства Азербайджана стояло и будетъ всегда стоять на той точке зрения, что Зангезурский вопросъ должень быть разсматриваемъ только въ памкахъ компетенций Провительства Азербайджана и что онъ не можетъ являться предметомъ обсуждения наконференций, призвани пешить вопросы внешне-политического характера», и далее. «Провительства Азербайджана ответственное передъ своимъ населениемъ за его благополучие и безапасность обязано принять меры къ тому, чтобы искра, тлеющая въ Зангезурь, не раздулась въ громадный пожаръ».

Газ. «Ашхатавор» въ N 249 отъ 23 нвября помещаеть статью, переведенну изъ газета «Эрто-ба»(груз. соз. дем.), въ которой газ. «Эртоба», касаясь Зангезурско-

го вопроса, говорить, что во время опасности, грозящей спокойствию Закавказья, является в роли умиротворительницы. Такую роль она играла во время армяно-татарских столкновений, во время русско-турецкой войны и теперь, когда азы за Закавказских событий обь республики готовились к беспощадной борьбе. Усилиями Правительства Грузии была приостановлена военная действия между двумя республиками и их премьеры съехались в Тифлисе для предварительных переговоров.

Газета от души приветствует эти переговоры и желает им благополучного исхода.

Газета «Слово» в N 87 от 28 ноября помещает перепечатку из газеты «Жоговурдь» (орган армянской народнопартии в Эривани). В этой газ. «Жоговурдь» говорится: что армяно-грузинское соглашение устраняет возможность враждебных столкновений между двумя этими республиками. Газета указывает на необходимость урегулирования армяно-азербейджанских отношений, что положило конец кровопролитию.

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ** — ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայ գաղթօջախների բաժնի վարիչ, Գորիսի պետական համալսարանի բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոնի դասախոս, «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, sasun-07@mail.ru

**ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ** — Վանաձորի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, vano.exiazaryan@mail.ru

**ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ** — ԵՊՀ-ի մշակութաբանության ամբիոնի դասախոս, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության և տեքստաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, tamar.hayrapetyan@gmail.com

**ՀԱՅԿԱՆՈՒԹ ՄԵՍՐՈՊՅԱՆ** — ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, haykanushm@mail.ru

**ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ** — Գորիսի պետական համալսարանի պրոռեկտոր, բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոնի դասախոս, «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, tmarutyan@mail.ru

**ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ** — ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, st.petoyan@gmail.com

**ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ** — ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, ar-mav1815@gmail.com

**ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՒՆՅ** — Գորիսի պետական համալսարանի կրթության որակի ապահովման և ուսանողների կարիերայի բաժնի ղեկավար, «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոնի դասախոս, gsabunc@gmail.com

**ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ** — Գորիսի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար, «Սյունիքի

հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, smanucharyan81@mail.ru

**ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ** — ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի ազգագրության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, sv\_ethnomuseum@yahoo.com

**ԼԻԼԻԹ ԹՈՒՆՅԱՆ** — Գորիսի պետական համալսարանի բանասիրության և պատմաիրավագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բանասիրական գիտությունների թեկնածու, lilitunyan@mail.ru

**ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ** — Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ** — Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն, «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» ծրագրի գիտաշխատող, sm-batyangrisha@gmail.com

## СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

- ГЕВОРГ СТЕПАНЯН** — Заведующий отдела истории армянских общин и диаспоры института истории НАН РА, лектор кафедры филологии и историко-правоведения Горисского государственного университета, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника” доктор исторических наук, профессор, [sasun-07@mail.ru](mailto:sasun-07@mail.ru)
- ВАНО ЕГИАЗАРЯН** — Провессор Ванадзорского государственного университета, доктор филологических наук, [vano.exiazaryan@mail.ru](mailto:vano.exiazaryan@mail.ru)
- ТАМАР АЙРАПЕТЯН** — Лектор кафедры культуры ЕГУ, заведующий отделом текстологии института археологии и этнографии НАН РА, ведущий научный сотрудник, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника”, доктор филологических наук, [tamar.hayrapetyan@gmail.com](mailto:tamar.hayrapetyan@gmail.com)
- АЙКАНУШ МЕСРОПЯН** — Ведущий научный сотрудник Института языка имени Р. Ачаряна НАН РА, доктор филологических наук, доцент, [haykanushm@mail.ru](mailto:haykanushm@mail.ru)
- ТЕЙМИНА МАРУТЯН** — Проректор Горисского государственного университета, лектор кафедры филологии и историко-правоведения Горисского государственного университета, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника”, кандидат филологических наук, доцент, [tmartutyanyan@mail.ru](mailto:tmartutyanyan@mail.ru)
- СТЁПА ПЕТОЯН** — Научный сотрудник института истории НАН РА, [st.petoyan@gmail.com](mailto:st.petoyan@gmail.com)
- АРМЕН АВАНЕСЯН** — Старший научный сотрудник института литературы имени М. Абеяна НАН РА, кандидат филологических наук, [armav1815@gmail.com](mailto:armav1815@gmail.com)
- ГАЙАНЕ ШАБУНЦ** — Заведующий отдела обеспечения качества образования и студенческой карьеры Горисского государственного университета, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника”, лектор кафедры филологии и историко-правоведения, [gsabunc@gmail.com](mailto:gsabunc@gmail.com)
- СВЕТЛАНА МАНУЧАРЯН** — Исполняющий обязанности декана факультета гуманитарных специальностей Горисского государственного университета, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника”, кандидат филологических наук, [smanucharyan81@mail.ru](mailto:smanucharyan81@mail.ru)

**СВЕТЛАНА ПОГОСЯН** — Научный сотрудник института археологии и этнографии НАН РА, заместитель директора по науке музея этнографии Армении, кандидат исторических наук, sv\_ethnomuseum@yahoo.com

**ЛИЛИТ ТУНЯН** — Исполняющий обязанности заведующего кафедрой филологии и историко-правоведения Горисского государственного университета, кандидат филологических наук, lilitunyan@mail.ru

**ГАМЛЕТ ГЕВОРГЯН** — Доктор исторических наук, профессор

**ГРИША СМБАТЯН** — Директор Капанского геологического музея, научный сотрудник проекта “Духовные и материальное наследие Сюника”, smbatyangrisha@gmail.com

## ABOUT THE AUTHORS

**GEVORG STEPANYAN**— Professor, Doctor of History, Senior Researcher and Head of the Department of the History of Diaspora and Armenian Enclaves at the Institute of History of NAS, RA, Lecturer at the Chair of Philology, History and Law of GSU, Research project Team Member of “Spiritual and Material Heritage of Syunik”, sasun-07@mail.ru

**VANO YEGHIAZARYAN**— Professor, Doctor of Philology, Vanadzor State University, vano.exiazaryan@mail.ru

**TAMAR HAIRAPETYAN**— Doctor of Philology, Lecturer at the Chair of Cultural Studies at YSU, Head and Senior Researcher at the Department of Folklore and Text Linguistics of the Institute of Archaeology and Ethnology of NAS, RA, Research Project Team member of “Spiritual and Material Heritage of Syunik”, tamar.hayrapetyan@gmail.com

**HAYKANOUSH MESROPYAN**— Doctor of Philology, Associate Professor, Senior Researcher at the Institute of Language after H. Acharian of NAS, RA, haykanushm@mail.ru

**TEHMINA MARUTYAN** – PhD in Philology, Associate Professor, Vice-rector at GSU, Lecturer at the Chair of Philology, History and Law of GSU, Research project Team Member of “Spiritual and Material Heritage of Syunik”, tmaruty@mail.ru

**STYOPA PETOYAN**—Researcher at the Institute of History of NAS, RA, st.petoyan@gmail.com

**ARMEN AVANESYAN** – PhD in Philology, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghyan of NAS, RA, armav1815@gmail.com

**GAYANE SHABUNTS**—Head of the Department of QA and Students’ Career Support at GSU, Lecturer at the Chair of Philology, History and Law of GSU, Research project Team Member of “Spiritual and Material Heritage of Syunik”, gsabunc@gmail.com

**SVETLANA MANUCHARYAN**— PhD in Philology, Acting Head of the Faculty of Humanities of GSU, Research project Team Member of “Spiritual and Material Heritage of Syunik”, smanucharyan81@mail.ru



**SVETLANA POGHOSYAN**– PhD in History, Vice Director of the National Museum of Armenian Ethnography, Researcher at the Institute of Archaeology and Ethnology of NAS, RA, sv\_ethnomuseum@yahoo.com

**LILIT TUNYAN**– Acting Head of the Chair of Philology, History and Law of GSU, lilitunyan@mail.ru

**HAMLET GEVORGYAN** – Professor, Doctor of History

**GRISHA SMBATYAN** – Director of the Geological Museum of Kapan, Research project Team Member of “Spiritual and Material Heritage of Syunik”, smbatyangrisha@gmail.com

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
GORIS STATE UNIVERSITY  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ГОРИСА

**ՍՅՈՒՆԻՔ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ**  
2020

**СЮНИК**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЕЖЕГОДНИК**  
2020

**SYUNIK**  
**ARMENOLOGICAL YEARBOOK**  
2020

Շապիկի ձևավորումը՝ Վիտալի Ասրիկի  
Էջաղումը՝ Սաթենիկ Հովհաննիսյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 12,5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում  
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am), էլ. կայքեր՝ [www.zangak.am](http://www.zangak.am), [www.book.am](http://www.book.am)  
Ֆեյսբուքյան կայքէջ՝ [www.facebook.com/zangak](http://www.facebook.com/zangak)